

Յովհ. Կրաքացեան.

ԱՅՐԵԼԻ ԼԵԶՈՒ



ՏԱՐԻ
ՏԱՐԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՎՈԼ

70
ԿՈՊԵԿ

ՅՈՎՀԵ. ԱՐԵԲԵՑԵԵՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶՈՒԴ

Հայոց եկեղեցական-ծխական եւ պետական դպրոցների բարձր
բաժինների համար:



ԱՆՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Յ. Գ. Սահականցի

1914

030230393 2000


ԱՐՑԻՎՈՒԹԵՐԻ ՏՐԱՋՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության
Հանձնաժողովի նախագահի կողմէ հանձնաժողովի աշխատանքի համար հայտապես առաջարկություն

Կըունչ
189

Հայաստանի Հանրապետության գլուխաց աշխատանքի համար հայտապես առաջարկություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1893



ԱՐԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԳՊՐՈՅ ԵՒ ԱԿՈՒԽՄՆ

ԱՇԱԿԵՐՏԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Հասա Դ. Ամիշխափ) Յով. Արարաջնեան

Այսօր նոր դպրոցական տարւայ սկիզբն է և առաջին օրը,
երբ ես պէտք է սկսեմ ուսանել բարձր բաժանմունքում։ Երբ
ես պատրաստում էի դպրոց գնալ, հայրս ասաց ինձ.

— Զաւակս, այժմ ամենքն էլ ուսանում են. բանւորներն՝
ինն ժամւայ աշխատանքից յետոյ, երեկոները գնում են դպրոց.
ով որ լի օրերը ժամանակ չունի, կիրակի օրերն է վարժարան
գնում. զինւորներն անդամ՝ զինավարժից վերադառնալով, գիրք
են փերցնում ձեռքերը։

«Այս իսկ ըսպէին, երբ դու գնում ես դպրոց, հէնց մեր
քաղաքում միքանի հազար աշակերտ նոյնպէս այնտեղ են դի-
մում։ Բացի այդ՝ բոլոր երկրների մանուկների մի անհամար
բազմութիւն ամեն առաւօտ շտապում է դպրոց—թէ խաղաղ
գիւղերում, թէ աղմկալից քաղաքներում, ծովերի և լճերի ափին,
կեզի արեգակի տակ, ցրտի և ձեան երկրներում։

«Այդ մանուկները տարբեր հագուստներ են կրում, տարբեր-
տարբեր լեզուներով են խօսում, —սակայն այդ միլիոնաւոր երե-
խաները գնում են ուսումն ստանալու։

«Նրանցից ոմանք գնում են ոտարբորիկ, ուրիշները սահնա-
կով կամ կառքով, միքանիսը մակոյկներով ջրանցքների վրայից,

շատերը ոտքի սահնակներով կամ երկաթուղով, —և այս բոլորը պրքերը ձեռքերին դպրոց են դիմում:

«Սիրիիայում դպրոցները ծածկւած են ձիւնով, Արաբիայում դրանք տեղաւորւած են ստւերաշատ արմաւենիների հովանու տակ. սակայն ամեն տեղ էլ այդ դպրոցներում ուսանում են քեզ նման մանուկներ, ուսանում են տարբեր ձեռքով, այլ և այլ եղանակներով, բայց և այնպէս այն, ինչ որ դու ես սովորում: Երևակայիր բոլոր ազգերի ուսանող մանուկներից կազմւած այս անագին բանակը: Եւ դու էլ մէկն ես այդ բանակը կազմողներից: Եթէ ուսումը չլիներ, մարդիկ կը մոռանային բոլոր զիտութիւններն ու արւեստները, նորից վայրենի դրսւթեան մէջ կընկնէին, վայրենիներ կը դառնային: Ուսան մէջ է լոյսը, նրանումն է մեր յոյսն ու երջանկութիւնը:

«Համարձակ առաջ դիմիր ուրեմն, մեծ բանակի փոքրիկ զինուոր:

Թուէք ուսման օգուտները: Ի՞նչ դպրոցներ կան ծեր քաղաքում, կամ զիտրան, Ի՞նչ լեզուներով են ավորում այդ դպրոցներում: Նկարագրեցէք ծեր լսպրացի կեանքը:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ս. Նազարեան



Ս. Նազարեան

Մայրենի լեզու, մայր ենի բարբառ,
Ախորժ, ընտանի հիմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու, սիրոյ քաղցրիկ առաջին յօդւած,
Մանկական լեզվիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ, անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու,
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր և հայրեր խոր գերեզմանից:

Հնչիր, դու հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հոռովեան փոշուց,
Դու, իմ հայ լեզու, մոռացւած վաղուց.
Բզզեցիր նոր կեանք սուբբ գրւածքներով,
Որ ամենայն սիրտ վառէի քո սիրով:

ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉԻԶԼ

(Քառ Դ Ամիչիսի)

Յովի. Արարացիան

Երբ մենք դասարան մտանք, մեր նոր ուսուցիչն արդէն
նոտած էր իր աեղում: Նրա անցեալ տարւայ աշակերտները,
մէկը միւսի յետեից, մեր մօտից անցնելով, մօտենում էին դը-
ռանը և գլուխ տալիս նրան:

Աշակերտներից միքանիսը ներս էին մտնում, բռնում նրա
ձեռքը, բարեւում և դուրս վագում: Երկում էր, որ նրանք սի-
րում էին իրանց նախկին ուսուցչին և կուզէին նրա մօտ մնալ:
Վարժապետը բոլորին «բարե» էր ասում և սեղմում նրանց մեկ-
նած ձեռքերը:

Նա ուշի-ուշով մէկ-մէկ նայեց բոլորիս, յետոյ սկսեց թե-
լաղբել մեր գտար և թելաղբելով անց ու գարձ էր անում նստա-
րանների միջով: Այդ միջոցին մանուկներից մէկը յետեից բար-
ձրացաւ նստարանի վրայ և սկսեց ծաղրածութիւններ անել: Վար-
ժապետն յանկարծ յետ նայեց և աշակերտն իսկոյն նստեց տե-
ղը, գլուխը քարշ, սպասելով, որ պատիժ է ստանալու: Ուսուցի-
չը ձեռքը դիեց նրա գլխին և ասաց.

— Ել այդպիսի բան չանես: — Ուրիշ ոչինչ:

Ապա նա մօտեցաւ սեղանին և շարունակեց թելաղբել: Թե-
լաղբութիւնը վերջացնելավ՝ նա մի բոպէ լուռ նայեց մեզ և յե-
տոյ սկսեց հանդարտ խօսել իր կոշտ, բայց բարի ձայնով:

— Խսեցէք, ինչ պէտք է ասեմ ձեզ: Մենք միասին անցկա-
ցնելու ենք մի ամբողջ տարի. եկէք, լաւ անցկացնենք այդ տա-
րին: Սովորեցէք և յաւ պահեցէք ձեզ: Ես ընտանիք չունիմ —

դուք բոլորդ իմ ընտանիքը կըկազմէք: Անցեալ տարի ունէի մի մայր, նա էլ մեռաւ: Այժմ ես, բացի ձեզանից—իմ աշակերտներից, ոչ ոք չունիմ աշխարհիս երեսին. ոչ մի կապ, ոչ մի հոգս, բացի ձեզանից: Դուք կըլինիք իմ զաւակները: Ես կըսիրեմ ձեզ, դուք էլ ինձ սիրեցէք: Ես չէի ցանկանայ պատժել որևէ մէկիդ: Յոյց տւեք, որ դուք գովելի մանուկներ էք, այն ժամանակ մեր դպրոցը կըկազմէ մի ընտանիք և դուք կըլինիք իմ միսիթարութիւնն ու պարծանքը: Ես չեմ ուզում, որ դուք բառերով խոստանաք ինձ այդ. հաւատացած եմ, որ ձեր սրտերի մէջ դուք արդէն «այս» ասացիք, բայց յետոյ գործով ցոյց կըտաք այդ:

Այդ բողէին դպրոցի ծառան զանգը տւեց: Մենք ըսկեցինք հանդարտ դուրս գալ դաստիանից, իսկ չարութիւն անող տղան մօտեցաւ վարժապետին և դողդոջիւն ձայնով ասաց.

— Ներեցէք ինձ, պարոն ուսուցիչ:

Վարժապետը համբուրեց նրա ճակատն ու ասաց.

— Գնա, խաղա, զաւակ:

Պատմեցէք, թէ ի՞նչպէս անցկացրիք դուք անցեալ տարին դպրոցում:

Ա Ն Գ Ր Ա Գ է Տ

(Սիրոկոմէեայից) Յ. Յավիտի անձնական պատմութեան մաս:

Երբէք մէկին չեմ նախանձում

Ես աշխարհիս երեսին,

Միայն, գրագէտ դուք պարոններ,

Նախանձում եմ ձեր բաղդին:

Այս, գթացէք գեղջուկ որբիս,

Մի լաւութիւն միայն արէք

Տւէք մի թերթ ինձ ձերմակ թուղթ,

Մի փետուրէ գրիչ տւէք,

Եւ ինձ գրել սովորեցրէք,

Սովորեցըրէք լաւ, շուտանվ,

Որ գրիչ կայծակից էլ

Արագ թռչէ գրելով.

Ար պատմելով թղթի վրայ
 Ես ձեզ ցոյց տամ ամեն բան —
 Մեր աշխատանք, մեր չարչարանքն
 Աւ մեր խաչը վկայութեան...
 Կըյայանէի, ինչ ցնորքներ,
 Ի՞նչ մոքեր կան իմ զլիում,
 Մի ողջ աշխարհ ցոյց կըտայի
 Ես աննման պատկերում...
 Բայց այժմ անհետ չքանում են
 Բոլոր իմ քաղցր երազներ.
 Ես անգրագէտ, ես անուս եմ...
 Սովորցըրէք, պարոններ:
 Կըգրէի ես առաջուց,
 Ի՞նչ եմ տեսնում երազում...
 Այս երազներն այնպէս շքեղ,
 Հրաշալի են...
 Ահա գեղջուկ մատաղ աղջիկն
 Հունձ է անում եռանդով,
 Նրան հրեշտակն երկնքիցը
 Ժպտում է վառ աչերով...
 Երեկ թէ կարեկցում է
 Նա հնձւորին... և նրան
 Արտուտիկը կամի սփոփել
 Իր երգովը քաղցրածայն...
 Կըգրէի, ինչպէս ամառն
 Արշալոյսն է փայլփայլում
 Եւ քարերին զարնւելով՝
 Կայտառ ջուրն է խոխոջում.
 Ինչպէս արտում ցորենի հետ
 Զբոյց է անում մեղմ քամին
 Եւ աղօթքի հրաւիրում է
 Փողքիկ զանգը մեր ժամին.
 Ես աղօթել կամենում եմ,
 Բայց չզիտեմ աղօթքներ —

Ես անգրագէտ, ես անուս եմ...
 Սովորցրէք, պարհններ:
 Ազնիւ գործ է՝ թէ մարդ գըել
 իր խօսքերը կարենայ:
 Բոլորն, ինչ որ մտածում է,
 բոլորն, ինչ որ գլուխը դայ.
 Գրչով պատմէ այն ամենը,
 ինչ դիզել է իր սրտում,
 Ճշմարտութիւն միշտ քարոզէ,
 բարի գործի մեծութիւն:
 Լաւ է նոյնպէս, թէ կարող է,
 Գրչով կծու խօսքերին
 Պատասխանէ՝ սուսերի պէս
 կը հարւածէ չարերին:
 Ես շատ անգամ ծաղը եմ լսում,
 Բայց իմ ուսեալ թշնամուն՝
 Սիրտս այրւում է, պատասխանի
 Զունիմ բնաւ զօրութիւն.
 Եւ զուր տեղը ես տանջւում եմ,
 Եւ յուզւում եմ, և դոլում,
 Եւ միմիայն թղթի վրայ
 Անմիտ կերպով խազմզում.
 Ինձ ծաղրում են, և ամօթու
 Կարմրում են իմ այտեր...
 Ես անգրագէտ, ես անուս եմ...
 Սովորցրէք, պարհններ:
 Շատ լաւ բան է զիր իմանալ:
 Գրագէտ է վաշխառուն.
 Գրագէտ են գատարանի
 Ծառայողներն անկշտում.
 Եռանգով էլ նրանք գրում են,
 Նրանց է գրախտն աշխարհի,
 Իսկ գըելն, ինչ փոյթ, որ խեղճ
 Մարդու հոգին պիտ հանի...

Շուտով, շուտով գրիչ տւէք,
 Սովորցրէք դործ ածել,
 Կամիմ զրել աղջիս համար,
 Նրա համար աշխատել,
 Եւ ևս նրան կըպաշտպանեմ
 Զարագործից, յիմարից,
 Կարտազրեմ Աւետարանն
 Ես բոլորը սկզբից...
 Այ դու, սազ իմ ճերմակ թեկի,
 Քեզ տւել եմ կերակուր,
 Քեզ սիրել եմ, փոխարէնը
 Թեկիցդ ինձ մի գրիչ տներ.
 Միլուն դու սազ, տնւր, խնդրում եմ,
 Ինձ թռչելու զոյդ թեր,
 Ուր ամենքը գրագէտ են...
 Սովորցրէք, պարոններ:

ՂԱՐԱ-ԽԱՆՈՒԹՅՈՒՆ

(Մ. Սիրիսեակ)

ա.

Աշնան սկիզբն էր, արգէն բոլոր քոչւորները իջել էին սարերից գիւղը, որ ամառը գրեթէ գատարկ էր մնացել:
 Կէսօրից շատ անց էր: Յանկարծ գիւղի ծայրին չները կատաղաբար հաշեցին ու մի քանի ըստէից բոլոր աների կտուրներից հարբւրաւոր չներ ձայնակցեցին նրանց: Ի՞նչ էր պատահել:
 Գիւղը մի կին էր եկել, սև շորերը հագին, գլուխը բաց: Ոչ ոք առհասարակ չէր մանում այդ հեռաւոր, խուլ անկիւնը. հաղարից մի անգամ մի որևէ պաշտօնեայ էր երեսում: Ողջ գիւղը դուրս թափւեց, թուրք աղաներն իսկոյն շրջապատեցին սայլը, որահեղ իրերի վրայ նստած էր այդ նորիկ կինը, ու աղաղակում էին:

— Ղարախանում, Ղարախանում:

Առաջին անգամ էին տեսնում մի քաղաքացի կին. իրանց մայրերը ման էին զալիս պայծառ չթէ շորերով կամ ցնցուիներով և գլուխը ծածկում:

Եկած կինը հարցրեց՝ ուր է տանուտերը. Մայլը կանգ առաւ ծուած, անպատուհան, երդիկին կոտրած կարաս տնկած մի տան տոջե: «Այս է տանուտերի տունը», — զարմացաւ կինը: Օտար գիւղացի սայլապանը բացատրեց թէ, «Էստեղի թուրքերը բոլորն էլ էսպիսի տներում են ապրում, խանում... Ոչ մարդավարի տուն-տեղ ունեն, ոչ էլ ուտել-խմել գիտեն»:

Աւելի զարմացաւ Ղարա-խանումը, երբ իմացաւ, որ ամբողջ գիւղում ոչ հաց կայ, ոչ ձու, կաթն էլ հաղիւ թէ ճարւի: Ամեն ինչ պէտք է մոլլայից փոխ առնէր... Բայց թուրքերն էլ պակաս չզարմացան, երբ յայտնեց, որ Ղարա-խանումը եկել է դպրոց բանալու:

Ի՞նչներին է պէտք դպրոցը: Եւ էլ ի՞նչ պիտի սովորեցնի կինարմատը: Մազը երկար, խելքը կարճ: Թուրքական դպրոցներում սովորեցնում էին մոլլաները:

Գիւղացիք խումբ-խումբ հաւաքւում էին, աղմկում, վերջապէս եկան մոլլայի մօտ ու խորհուրդ հարցրին.

— Զերին թուղթ ունի, — յայտնեց ցաւակցելով մոլլան: — Բաց է անում՝ բաց անի: Միայն թէ ոչ ոք պարտական չէ որդուն նրա մօտ աալու: Ով ուզում է՝ կըտայ, ով չէ՝ հօ չէ... Էն էլ է գրւած, որ պիտի սովորեցնի մենակ աղջկներին:

Բ.

Ղարա-խանումին տւին մի ետ ընկած, պարապ տնակի: Տասնեակ վերստ հեռւից մշակներ ապապրեց և կարողացաւ մի կերպ պատերի ծակուտիները ծեփել տալ, կտուրը ամրացնել, երդիկը ծածկել, մի պատի մէջ երկու պատուհան բաց անել, յատակը հաւասարացնել ու խսիրով փոել: Սենեակի մի կողմը, որ վարդուրով էր բաժանւած, պիտի խանումին ննջարանը լինէր, միւս մասը դասարան:

Սկզբում աշակերտ գրւեցին միայն երկու աղջիկ, որոնց բերել էին մայրերը բոլորովին մերկի: Ղարա-խանումը հազցրեց նը-

բանց և կուշտ կերակրեց ամբողջ գիւղն իրար անցաւ: Մի անգամից ընդունւեցին երեսունի չափ աղջիկներ, աւելի տեղ չըկար... Մայրերը բերում էին ծծի երեխաններին ու պահանջում, որ նրանց էլ ընդունի... Նրանց բան հասկացնել անկարելի էր լինում:

Թուրք տղաներն էլ գայրանում էին. նրանցից միմիայն Ահմեդը կարուցաւ տեղաւորւել գողոցում, այն էլ նրա համար, որ յանձն առաւ սենեակը մաքրել, ջուր բերել ու ծառայի պաշտօն կատարել: Բայց հէնց առաջին օրը Ահմեդը գողացաւ Ղարախանումից մի մկրատ: Վարժուհին ձեացրեց, թէ զլիի չի ընկնում ու ասաւ:

-- Ահմեդ, իմ մկրատը չկայ, անշուշտ մի վատ մարդ է եկել ու տարել: Եթէ մի ժամանակ իմանաս, թէ ով է այդ վատ մարդը, խնդրեմ ինձ ոչինչ չասես. ես այդ տեսակ մարդոց երեսը տեսնել չեմ ուզում:

-- Ես չէի, Ղարախանում, - պատասխանեց Ահմեդը. — Ես կը հսկեմ, որ բանեմ այդ վատ մարդուն:

Հսկիր, Ահմեդ, հսկիր:

Ահմեդը շարունակում էր իր գողութիւնը: Մի անգամ էլ տեղն ու տեղը բանւեց, գողացած իրերը ձեռքին, բայց այս անգամ Ղարախանումն էլ ոչ մի խօսք չասաւ, ուղղակի աչքերին նայեց ու մօտից անցաւ:

Ահմեդը քարացած մնաց: յետոյ գողացած իրերը ձեռքից գցեց ու դուրս դնաց:

Մի քանի օր չէր կարողանում Ղարախանումի աչքերին նայել. այնուհետեւ տանից էլ ոչինչ չէր կորչում:

գ.

Դպրոցի շինութիւնը շատ վատ էր ու Ղարախանումը յաշորդ ամառը վարպեսներ բերել տւաւ ու սկսեց նոր տուն շինել, աւելի բարձր, ընդարձակ, լայն-լայն պատուհաններով և աղիւսէ ծխնելոյզով: տանիքը կլմինտրից էր, տան մօտ էին բոլոր հարկաւոր շինութիւնները, բակը շրջապատած էր բարձր պարիս-

պով, իսկ բակից դուրս մի ընդարձակ տեղ չափերով կապած, ապագայ բոստանի համար:

— Շատ փող ունի Ղարա-խանումը, — ասում էլն գիւղացիք, նայելով այդ շինութեանը:

Մի քիչ յետոյ Ղարա-խանումը գնեց երկու կով, այծեր, ոչխարներ, հաւ, հնդուհաւ, սագ, բադ և մի բարակ առու անցկացրեց գետից մինչև բոստանը:

Յաջորդ գարնանը աշակերտուհիները նրա հետ բանում էին բոստանում: Գետինն էին փորում, մարգեր ձեռում, ցանում, արնկում, ջրում, բաղնան անում... Այս գիւղում ոչ մի բոստան չըկար, ու թուրք կանայք չգիտէին՝ ինչ բան է կարտովիլ, կադամը, բադիջանը, բաղուկը շատ-շատ երբեմն ձեռները ընկնում էր մի-մի սոխ կամ վարունդ:

— Փոքրերը որ սովորեն, յետոյ իրանց համար էլ բոստաններ կը շինեն, — մտածում էր Ղարա խանումը:

դ.

Ամբողջ գիւղը հետաքրքրութեամբ հետևում էր Ղարա-խանումի աշխատութիւններին: Երբ պատրաստում էին սարերը քոչելու, վարժուհին հազիւ հազ համոզեց մի երկու աղքատ ընտանիքների իր մօտ թողնել իրանց աղջիկներին և ամբողջ ամառը, շոգին, նրանց հետ աշխատում էր բակում և բոստանում:

Գիւղում մնացել էին մի քանի տղամարդ, որոնք ցորենը մի կերպ հնձեցին, կալսեցին, յետոյ նրանք էլ հեռացան սարերը: Միայն կատունները մնացին աներում:

Աշնանամտին, երբ գիւղը նորից կենդանացաւ, բոլորն էլ զարմանքով տեսան, որ վարժուհին ամեն ինչ ունի, — մի քանի տասնեակ հաւ, հնդուհաւ, սագ, բադ, գառներ, հորթուկ, տան առջեր ծաղկոց, բաղեղը բարձրացել էր գարոցի պատով, գրեթէ պատուհաններից վեր, իսկ բոստանը լի էր ամեն բարիքով:

Ղարա-խանումը զւարթ և ուրախ էր, կարծես աւելի ջահէլացել էր: Օգնական աղջիկների ընտանիքները բաժին ստացան նրա բակի ու բոստանի լիութիւնից:

Դպրոց մտնել ցանկացողների թիւը շատացաւ: Մի ուսուց-

չուհի ևս եկաւ քաղաքից: Այս անդամ տղաներն էլ ընդունւեցին: Իսկ երբ եկաւ ամառը, արդէն զիւղացիներից աւելի շատերը չուզեցին իրանց երեխաններին տանել սարը ու թողին Ղարա-խանումի մօտ: Դպրոցը կապալով առել էր մի քանի օրավար հող, վարել ու ցանել ցորեն, գարի ու կորեկ:

Ե.

Անցան տարիներ: Դպրոցի շուրջը տնկած պտղառու ծառերը մեծացան. տունը այժմ մի այգու մէջ էր: Բոստանը կրկնակի ընդարձակւել էր: Գիւղի այս և այն ծայրում երեացել էին աւելի լաւ շինւած տնակներ, պատուհաններով և ծխնելոյզներով, կղմինարով ծածկւած. ծառերը հովանաւորում էին նրանց բակերը և աների կողքին կանաչին էին տալիս բոստանները: Առուն մեծացրած էր և ուրախ վաղում էր փողոցներով...

Ամառայ ամիսներին զիւղն այլևս չէր ամայանում և բոստաններում ու արտերում իրար կողքի երեռում էին աշխատող կանաչը ու տղամարդիկ, առողջադէմ և աւելի լաւ հագնւած:

Դրանք մէծ մասամբ Ղարա-խանումի նախկին օգնականներն էին:

Նկարագրեցէր զիւղի դրութիւնը Ղարա-խանումի զալոց առաջ և յետոյ: Ի՞նչ միջնցներով նա բարելաւեց զիւղի դրութիւնը:

ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

Դ. Աղայեան

Երբ Օսանը եղբօրը տարաւ մօտը, սկսեց պատմել նրան, թէ ինչ են գառնում զիւղից քաղաք եկողները. թէ՝ քաղաքի ուսումնարանները լաւ են, սովորեցնում են մի քանի լեզու, թէ՝ շատ անդամ զիւղից աղքատ երեխէք են զալիս և ուսում առնելով՝ դառնում են վարժապետներ, զբագիրներ, չինովսիկներ. թէ ինչպէս նրանք հարուստի փեսայ են գառնում ու իրանք էլ հարստանում. թէ ինչպէս ահա այս և այն անձը աղա է դառել, էլ ոչովի չի հաւանում, մոռացել է իր ստոր ծագումը...

Այսպէս՝ երբ տան միւս անդամները գնացել էին իրանց գործին, քոյլ ու եղբայր առանձնացած, մտածում էին, թէ ի՞նչպէս լաւ կը լինէր Արութիւնի համար, — մնալ քաղաքումը, թէ էլի ետք առնալ դէպի գիւղ:

— Զէ, լաւ կանես, որ էլ գիւղը չգնաս,— ասաց Օսանը, — էն աեղ ի՞նչ պիտի սովորես, էդ աէրտէրն ինքն ի՞նչ գիտէ, որ քեզ ինչ սովորեցնէ ..

— Էդ մի ասիլ, — պաշտպանեց Արութիւնն իր տէրտէրին. էպէս տէրտէր էս քաղաքումը չի լինիլ, դա մէկ անյայտ փիլիսոփայ է. կաթողիկոսը որ դիտենայ, եպիսկոպոսի խաչ կըտայ . .

— Ի՞նչ ես ասում, ա տղայ, — ընդդիմախօսեց Օսանը: .. Դա մեր Ովակիմի մօրաքրոջ որդին է, ես միթէ չեմ ճանաշում դրան. մէկ օր խօսք բացւեց, ես հարցրի Ովակիմին, նա թէ «ճգնաւոր, բարեսիրտ մարդ է, գրա համար սուտն ու ճշմարիտը մէկ է, երկուսին էլ հաւատում է, միայն թէ տպւած լինի: Էստեղ գիմնազիումն էնպէս բաներ են սովորեցնում, որ դա իրան օրումը լած չի լինիլ: Մեր հարևան Սառի տղայ եագործ հիմի գիմնազիի չորրորդ դասարանն է: Նրա մէրը էնպէս բաներ է ասում նրանից, որ մարդ լսում է, մնում գարմացած:

— Ի՞նչ բաներ է ասում:

— Ասում է՝ իմ տղան հիմի գիտէ, թէ էստեղից մինչև Մակով սայլի անիւը քանի անդամ է պտոյտ գալիս. նա, ասում է, գիտէ թէ Աղամից մինչև հիմա քանի ըովէ է անցել, նա, ասում է, իմանում է, թէ մեր ողջ աշխարհը ջրով ու ցամաքով, իրանց միջի եղածովը քանի մսխալ կը լինի, ու էլի ուրիշ էսպէս բաներ: Ասա, քո տէրտէրն էդ գիտի՞, քեզ ասե՞լ է ...

— Ես որ քաղաքումը մնամ, էդ բաները կըսովորեմ:

— Իհարկէ, կըսովորես: Որ մտնես Վանքի ուսումնարանը



Դ. Աղայեան

(Ներսիսեան դպրոց), յետոյ տէրաեր կըդառնաս. ուզենաս՝ գրագիր կըդառնաս կօնսիստորումը, կամ թէ չէ՝ վարժապետութիւն կանես, ժամումն էլ տիրացութիւն: Թէ որ խելօք կըլինիս, մի հարուստի փեսայ կըդառնաս և մի հարուստ եկեղեցու վրայ էլ քահանայ կըձեռնադրւես: Կամ թէ չէ՝ կըմտնես գիմնազիա, էնտեղ լաւ ուսւերէն կըսովարես, յետոյ կըմտնես ծառայութեան, չինովիկ կըդառնաս, տարէցտաշի չինդ կըբարձրանայ, մեծ մարդ կըդառնաս:

— Ու դիմնագումը լաւ սովորեմ յետոյ մովրով էլ կըդառնամ, չէ...

— Մովրովի ինչ է. դու նրանցից էլ մեծ մարդ կըդառնաս, եներալ կըդառնաս:

— Ու անչքան մեծ մարդ կըլինիմ... Միթէ, իրաւ, էղքան կըբարձրանամ... Ես քչով էլ կըբաւականանամ: Եթէ մի հասարակ թարգման էլ գառնալու լինեմ, ես էլի կըմտնեմ գիմնազիա: Այս, մեր գեղոցիք, որ ոչ լեզու գիտեն, ոչ օրէնք, մի հասարակ եասաւուի առաջին փափախնին վեր են առնում, կշտին կուչ գալիու: Քանի անգամ եմ տեսել մովրովին մեր հօրը ծհծելիս: Նոր չէք, որ բերգումն էլ նստեցրին, ուզում էին Սիբիր ուղարկեն, թէ դու ինչ իրաւունքով ես վիճում կնեազների հետ, ինչու ես ասում էգ հողերը նրանցը չի, զուով են յափշտակել: Մէկ անգամ էլ մովրովը տարել էր մօտը, էլ բաց չէր թողնում, թէ «դու ինձ պէտք ես, լեզու գիտես, քաջ մարդ ես, ինձ պէտք է օգնես, որ բոլոր աւազակներին բոնուտենք»: Վար ու ցանքի ժամանակ էր, ամենքն իրանց բանը վերջացրել էին, իսկ մենք դեռ մի հատ ցորեն չեինք զցել հողը: Մէկ էլ տեսանք, հրէս մովրովը եկաւ մի յիսուն ձիաւորով: Եկան մեր զուանը վեր եկան: Երբ որ զնալու էին, հէրս ասեց.— Եղա, ինդրեմ ինձ ազատ թողնես. ես մենակ մարդ եմ, տանս ուրիշ աշխատող չունեմ, հիմա էլ ուրիշներին տար, թէ որ բէգեառ է, պէտք է ամենքն էլ քաշեն: Նա թէ չի կարելի, պէտք է գաս: Հէքս ուզեց ընդդիմանալ, արդարութիւն էր պահանջում: Մովրովը մի երկար չիբուխ ունէր, նրա զլուխը հանեց ու կոթովի սկսեց հօրս երեսին. զլխին... էնքան խիեց, որ արնակուր արաւ էնպէս բարկութիւնս եկաւ...

մի մեծ քար վեր առայ ու բարձրացայ կտուրը, որ տանեմ էս տեղից մովովի գլխին զցեմ, մերոնք խեցից, թէ՝ ի՞նչ ես անում գիտ, ուզում ես որ ողջ գեղը կրակ տան, էրե՞ն... Հարա, էսպէս բաներ եմ տեսել, որ սիրտս արնով լցւել է. գու շգիտես ինչեր են կատարւում, ինչեր, ինչեր... ես որ շինովնիկ դառնամ, էլ ոչով իրաւունք չի ունենալ ինձ վրայ ձեռք բարձրացնել, այնուհետև ես գիտեմ, թէ ի՞նչպէս կըվարւիմ խեղճերի տունը քանդողի հետ...

— Զէ, ես քեզ էլ չեմ տալ տէրտէրին, որ տանի. ես նրան պատասխան կըտամ: Մանւէլի հետ միասին կերթաք Վանքի ու սումնարանը, կամ թէ չէ՝ գիմնազիա, որտեղ որ ձեզ յարմար կըլինի, էստեղ կերթաք:

— Շատ լաւ, էդպէս արաւ ես էլ մի գիր կըզրեմ, որ մեր տանիցը ալիւր, բան ուղարկեն: Դու ինձ մի թուղթ ու թանաքաման տուր:

Երութիւնը դեռ չէր աւարտել իր նամակը, որ տէր-Պետրոսը ներս մտաւ:

— Արութիւն, որդի, մենք ուշանում ենք, էստեղ քաղաք տեղ է, գարին, գարմանը թանգ է, — ասեց տէր հայրը, նստելով աթոռի վրայ, որ Օսանն առաջ քաշեց:

— Տէր հայր, ինդրեմ Արութիւնին թողնէք մնայ էստեղ, — ասեց Օսանը:

— Ես հէնց երազումս տեսայ, որ գու Արութիւնին պիտի ձեռիցս խլես: Բայց քո հայրն էլ համաձայն կըլինի՞ այդ բանին:

— Ես իմ հօրը կըհամաձայնեցնեմ:

— Լաւ, որդի, ես հօ չկամութիւնն չեմ անում: Ես ինքս էլ եմ ուզում՝ որ Արութիւնը լաւ ուսում առնի, խելօք տղայ գառնայ, — ասեց տէր հայրը և գառնալով Արութիւնին, հարցրեց. — Երութիւն, որդի, ուզում ես մնալ:

— Եյն, — ասեց Արութիւնը ամաչելով:

— Լաւ, որդի... դէ, խելօք կաց, առաւօտ իրիկուն ժամ դնա, ժամ ասա, վատ տղոց հետ ընկերութիւն չանես, չգնաս Քուումը լողանալու, կամ Օթաճալայ ման գալու: Դու գիտես, ինձ չամաչացնեն, էսպէս արա, որ քեզանով պարձենանք: Ինձ շուտ-

շուշ նամակ գրիր, մի նեղութիւն ունենաս, իմաց առւր: Մնաս
խաղաղութեամբ: Տէր ընդ քեզ:

Արութիւնը համբուրեց տէր հօր աջը, տէրտէրն էլ հյուս գըլ-
իին մի պահպանիչ ասաց և բոլորին խաղաղութիւն մաղթելով՝
դուրս գնաց...

Մ Ե Ծ Ը

Գամատ-Քաթիւլա

Գնա, իմ որդիակ, աշխարքս անցիր,
Պահծալի անուն Մեծի գու ստացիր:

Ու գնաց որդին, շատ քբախնք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ գանձ ժողովեց
Ու գարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քո կարծիքով:
— Չէ, չէ. թէկ գու բորսայի ես զարդ,

Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ:
Նա գնաց, մտաւ իմաստնոց տաճար,
Եղաւ խորիմաստ գիտուն ու հանճար

Ու գարձաւ հօրը, ասաց պարծանքով.
— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քո կարծիքով:

— Չէ, չէ. թէկ գու գիտութեանց ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ:

Պահով, աղօթքով մտաւ անապատ,

Քուրձ հագաւ մարմնուն,

հրաշքներ գործեց շատ



Գամատ-Քաթիւլա

Ու գարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քո կարծիքով :

— Եղեմայ զրախտին էլ լինես դու զարդ:

Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին, գարձաւ զօրավար,

Խելքով, քաջութեամբ, տիրեց շատ աշխարհ

Ու գարձաւ հօրը, ասաց պարծարքով.

Եղաւ
182

ՀԱՅԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քո կարծիքով:

— Զէ, չէ. թէկ դու դու դաշտին ես զարդ,

Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին մի երկիր օտար,

Հրէք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ

Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

— Հայր իմ, այժմ Մեծ չեմ քո կարծիքով:

— Օտար աշխարհի թէկ եղար զարդ,

Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին զլիակոր, տրտում,

Հոգին վրդոված ցաւ ու դարդ սրտում:

Մաշւում էր խեղճը, զօռ տալով խելքին...

Հէր չարժանացաւ հօր դովանանքին...

Նրա եղբայրը գերի էր տարւած,

Թշնամու ձեռքով տունը աւերած.

Ճիգ արաւ, գլուխը վտանգի ձգեց,

Ազատեց եղբօրը ու տունը կանգնեց...

Յանկարծ... սար ու ձոր, ծով կըզբրդեցան,

Բիւրք բիւրուց բերնով

գոչեց ազգ մարդկան.

«Մեծ մարդու անուն դու այժմ ստացար —

«Եղբօրդ յիշեցիր ու քեզ մոռացար»:

Ի՞նչ գործեր կատարեց որդին և որո՞վ «Մեծ» անունն ստացու:

ՀիհընԴ ՈՒՍՈՒՅՉՉԻ ՄՕՏ

(Հաստ Դ. Ամիչիսի)

Յովհ. Արաքաջեան

Երէկ ես այցելեցի իմ հիւանդ ուսուցչին: Նա հիւանդացել էր չափից դուրս աշխատելուց: Օրական հինգ դաս պարապելուց յետոյ՝ նա դեռ երեք ժամ էլ պարապում էր երեկոյեան դպրոցում, — հեշտ է ասելլ: Նա քիչ էր քնում, ուսում էր սակաւ և շտապ-շտապ և չափից դուրս յոդնում, — և ահա գրանով էլ քայլացաց իր առողջութիւնը: Այդակա էր ասում մայրիկու: Մայրս

միաց գուրսն ինձ սպասելու, իսկ ես մեհակ բարձրացայ սահմանը կուխներով և զանգը տւի:

Ա՛խ, ինչպէս ցաւեց սիրտս, երբ աղախինն ինձ ներս տարաւ մի աղքատիկ, կիսախաւար սենեակ, որոնեղ պարկած էր իմ խեղճ ուսուցիչը: Նա պարկած էր մի նեղիկ երկաթէ մահճկալի վրայ, նրա մօրուքը չխուզելուց բաւական երկարել էր:

Ես մօտեցայ անկողնուն, վարժապետս ձեռքը դրեց ուսիս և ասաց:

— Օ՛, շնորհակալ եմ քեզանից: Լաւ աղիր, որ եկար այցելու հիւանդ ուսուցչիդ: Ինչպէս տեմնում ես, գործերս վատեն, սիրելիս: Իսկ դպրոցնում ինչ կայ: Ի՞նչ են անում ընկերներդ: Առանց ինձ էլ ամեն բան լաւ է գնում, չէ, այնպէս, ինչպէս իմ եղած ժամանակ: Դուք առանց ձեր ծեր ուսուցչին էլ եօլա էք գնում, այնպէս չէ:

Ես ուզում էի «ոչ» ասել, բայց նա ընդհատեց ինձ:

— Դէհ, լաւ, լաւ: Ես գիտեմ, որ դուք սիրում էք ինձ, և նա հառաջանք արձակեց: Ես նայեցի պատից կախ արած լուսանկարներին:

— Տեսնո՞ւմ ես, — ասաց նա: — Այս բոլորը իմ աշակերտների լուսանկարներն են: Գովելի մանուկներ էին: Դրանք իմ ամենալաւ յիշողութիւններս են: Երբ ես մեռնելու լինիմ, իմ վերջին հայեցքս կընկնի այդ տղաների վրայ, որոնց մէջ ես ամբողջ կեանքս եմ անցկացրել: Երբ դու էլ աւարտես տարրական դըպրոցը, քո լուսանկարն էլ այստեղ կըկախեմ, ուզում ես:

Ապա նա փոքրիկ սեղանից վեր առաւ մի նարինջ և ինձ տւեց:

— Վեր առ: Ուրիշ բան չունիմ քեզ հիւրասիրելու:

Ես նայում էի ուսուցչիս և սիրտս աւելի էր ճմլւում:

— Դէհ, տես, — խօսեց նա նորից, — Ես դեռ յոյս ունիմ, որ կառողանամ. իսկ եթէ չառողջացայ, ճիգ թափիր թւաբանութեան վրայ, — դա քո թոյլ կողմն է. ջանք գործ դիր, կարևոր է մի անգամ լուրջ պարապել, որովհետեւ երբեմն աշակերտը վատ է սովորում ոչ թէ այն պատճառով, որ իրօք անընդունակ է, այլ

ուղղակի ինքն իրան հաւատացնում է, թէ ընդունակութիւն չունի սովորելու:

Վարժապետը դժւարութեամբ էր շունչ քաշում. երեսում էր, որ վատ էր զգում իրան:

— Դարձեալ ջերմն սկսւեց, — ասաց նա հառաչելով: — Բանս վատ է: Դէհ, ցաեսութիւն, փոքրիկա: Այդպէս ուրեմն, աշխատիր թւաբանութեան վրայ, խնդիրներ լուծիր... Մի անգամից չի յաջողւի, քիչ հանգստացիր ու նորից: Դարձեալ չի յաջողւի, նորից հանգստացիր և էլի ձեռք առ: Այդպէս շարունակիր հանգիստ սրտով, առանց յուսահատւելու, առանց դու քեզ հաւատացնելու, թէ ընդունակութիւնից զուրկ ես: Դէհ, գնա: Բարեկիր մայրիկիդիմ կողմից: Ել նեղութիւն մի կրիր, շուտով կը տեսնենք դաստիարակում: Իսկ եթէ այլևս չենք տեսնելի, երբեմն յիշիր քո ուսուցչին, որն այդպէս սիրում էր քեզ:

Այս խօսքերի վրայ աչքերս ակամայ արտասուքով լցւեցին: Պատմեցէր, ինչ խըստներ տեց տաւցիչը աշակերտին:

ՈՒՍՈՒՄՆԱԾՍՐԱԿԻ ԲԱՆԴԱՐԿԵՑԼԸ

(Մ. Գոստոյնսկի)

Յովին. Արաբաջնան



Մ. Գոստոյնսկի

Մեր բանդում երեք դադասանցի թուրք կային, երեքն էլ հարազատ եղբայրներ: Նրանցից երկուսն արդէն հասակաւոր մարդիկ էին, իսկ երրորդը, Սլէյր, հազիւ քսաներկու տարեկան լինէր, բայց դէմքով աւելի ջաճել էր երեսում: Թալխատի վրայ մեր տեղերը իրար մօտ էին:

Նրա գեղեցիկ, բաց, խելացի և միւնոյն ժամանակ բարեսիրա ու անմեղ դէմքը մի անգամից դէպի ինքը գրաւեց իմ սիրուը, և ես չափազանց ու-

րամի էի, որ բաղզը դրան և ոչ մի ուրիշին ուղարկեց ինձ հարկան:

Ես հարց ու փորձ էի անում նրան կովկասի, նրա նախկին կետնքի մասին: Եղբայրները չէին խանգարում նրան խօսակցելու ինձ հետ, այլ ընդհակառակը, այդ բանը նրանց դիւր էր գալիս: Նրանք էլ, տեսնելով՝ որ ես հետզհետէ աւելի եմ սիրում Ալէյին, անհամեմատ սիրալիր էին դառնում գէպի ինձ:

— Լսիր, Ալէյ, — ասացի մի անգամ նրան, — ինչու դու ոռւսերէն կարդալ-գրել չես սովորում: Գիտե՞ս, յետոյ քեզ որքան պէտք կըդայ Սիրիլիայում:

— Շատ եմ ցանկանում, բայց ում մօտ սովորեմ:

— Միթէ քիչ զըագէտներ կան այստեղ: Կամենում ես, ես քեզ կըսովորեցնեմ:

Հէնց միւս երեկոյից մենք սկսեցինք: Ինձ մօտ կար Նոր կտակարանի ոռւսերէն թարգմանութիւնը: Առանց այբբենարանի, միմիայն այդ զըքով Ալէյը մի քանի շաբաթւայ ընթացքում հիանալի կարդալ սովորեց: Երեք ամիս անցած՝ նա արդէն բոլորովին հասկանում էր լեզուն: Նա սովորում էր եռանգով, մեծ յափշտակութեամբ:

Մի անգամ մենք միասին կարդացինք լեռան քարոզը: Ես նկատեցի, որ նրա մի քանի կտորները Ալէյը մի տեսակ զգացւած էր արտասանում: Ես նրան հարցըի, թէ կարդացածը դիւր գալի՞ս է: Նա մի արագ հայեացք ձգեց վրաս և երեսը շառագունեց:

— Ա՛խ, այս, — պատասխանեց Ալէյը: — Այս, իսան*) սուրբ մարգարէ է: Իսան Աստուծոյ խօսքերն էր ասում: Որքան լաւ է:

— Ի՞նչն է քեզ աւելի դիւր գալիս:

— Այ, որտեղ նա ասում է՝ «ներիր, սիրիր, մի զրկիր, թըշնամիներիդ անգամ սիրիր»: Ա՛խ, որքան լաւ է ասում նա:

Գրութեան դասերն էլ մեղանում շատ յաջող անցան: Ալէյը թուղթ, զըիչ և թանաք ձեռք բերեց (նա թոյլ չտեց, որ ես իմ փողով գնեմ) և մի երկու ամսւայ ընթացքում հրաշալի գրել սովորեց: Այս բանը նրա եղբայրներին անգամ զարմացրեց: Նրանց

*) Իսա — Յիսուս

պարծանքն ու գոհունակութիւնը չափ ու սահման չունէին: Զը-
դիտէին, ինչպէս շնորհակալ լինէին ինձանից: Եթէ աշխատելիս
միասին լինէինք, նրանք անընդհատ օգնում էին ինձ, և սա եր-
ջանկութիւն էր նրանց համար: Ալէյի մասին ասելն աւելորդ է:
Նա ինձ սիրում էր գուցէ և եղբայրներից աւելի:

Երբէք չեմ մոռանում այն օրը, երբ նա գուրս պէտք է գար
բանդից: Նա ինձ տարաւ մեր սենեակի յետեր, վաժաթւեց վը-
զովս և լաց եղաւ: Մինչև այդ՝ նա երբէք չեր համբուրել ինձ և
ոչ էլ լաց եղել:

Դու ինձ համար այնքան լաւութիւն արիր, — ասում էր նա,
— որ ոչ հայրս, ոչ մայրս են արել: Դու ինձ մարդ դարձրիր.
Ասուած վարձատրէ քեզ, իսկ ես քեզ երբէք չեմ մոռանայ:

Ո՞րտեղ ես, ո՞րտեղ գու այժմ, իմ բարի, իմ սիրելի Ալէյ:
Ինչի՞ համար էր հարկաւոր Ալէյին գրել-կարդալը:

ԳԵՐԻ ԱՐԱԳԼԻԾ

(Արանի)

Յովի. Յովիաննիսեան

Գերի արագիլն, ինչպէս բանդարկւած,
Բարձր պարսպի յետեն է փակւած.
Կուզէր նա թռչել ու անցնել ծովեր,
Բայց աւազ, խեղճի խուզած են թերը:

Իր անզօրութիւնը նա լաւ է զգում
Եւ թերի ատկ գլուխն է ծածկում.
Կըցանկար առաջ նայել նա սիրով,
Բայց փակւած է նա ամուր պատերով:

Կարող չէ տեսնել նա երկնակամար
Իր մութ, նեղ բանդից, բայց ինչո՞ւ համար.
Եյնտեղ թռչում է ազատ կարաւան,
Իսկ նա մատնւած է չար գերութեան:

Եւ նա անհամբեր սպասում է վշտով,
Որ մէջքին բուսնին թերը շուտավ.
Նա այն ժամանակ չար գերութիւնից,
Կըթոչի ազատ աշխարհ յուսալից:

Եւ ահա սառն աշունն է փշում,
Սրազիլները տաք տեղ են թաշում.
Թշւառ, ինչպէս սարուկ, նա անհամարձակ,
Վշտագին ու որբ ըրջում է մենակ:

Լուռում է ահա վերեկց կանչիւն,
Գնում է բարձրից կուռնկների չուն.

Ականջ է գնում չարատանջ գերին

Ազատ երամի ուրախ երգերին:

Կամենում է նա նորից փորձ փորձել,

Խուզած թերը բարձր տարածել

Բայց այլոց նման, աւազ, նա ազատ:

Կարող չէ ոլանալ երկիրն հարազատ:

Ոնքախտ արագիլ, լոեղձ կալանաւը,

Էլ այն յաղթական դու չես թեաւոր.

Թէ զօրանան էլ թերդ ուժգին,

Զոհ պիտի լինին անդութ դանակին:

ԿՈՅՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՎԱՐԺԱՐԱԿՆԵՐ

(Քառ. Դ. Ամիչիսի)

Կոյր: Ոչ երկնքը տեսնել, ոչ արել, ոչ հօրը, ոչ մօրը, և
ոչ մի բան ամբողջ աշխարհում: Յաւիտենական խաւար, ինչպէս
գերեզմանում: Հապա փորձեցէք աչքերդ փակել և երեսկայել, որ
յաւիտեան այլպէս պիտի մնաք: Սոսկալին, զարհուրելին բան. ձեզ
այնպէս կըթւայ, թէ գրան անկարելի է համբերել, թէ խելքներդ
կըթացնէք կամ կլմեռնէք... Եւ ապա մանուկներ,

երբ առաջին անգամ մտում էք կոյրերի դպրոցը դասամիջոցին, լսում էք նրանց ջութակ ածելլ, սրինդ նւագելլ, բարձր-բարձր խօսելլ, ծիծաղելլ, ազատ-ազատ մանգալլ, — մտքերովդ անգամ չի անցնի, թէ նրանք թշւառներ են: Այսուեղ կան տասն և վեց, տասն և ութ տարեկան երիտասարդներ ուրախ, զօրեղ, կարծես թէ բոլորավին հաշտած են իրանց կուրութեան հետ: Սակայն նրանց դէմքերի արտայայտութիւնը լուրջ է, հպարտ, իսկոյն տեսնում էք, որ շատ չարչարանք, շատ վիշտ պիտի կրած լինեն, մինչեւ որ ընդմիշտ հաշտել են իրանց դառն դժբաղդութեան հետ: Պատահում են և ուրիշ դէմքեր՝ գունատ, խոնարհ, հեղ, տխջամած:

Ոմանք գրկւել են աչքերի լոյսից մի քանի օրում, ուրիշները տանջւել են ամբողջ տարիներ. շատելն էլ կուրացել են սարսափելի վիրահատութեան պատճառով... վերջապէս կան և այնպիսիները, որոնք կոյը են ծնւել... ծնւել են անլոյս գիշերւայ մէջ, մտել են աշխարհ, իրեւ մի գերեզման, և չգիտեն ինչ ասել է մարդու պատկեր: Երեակայեցէք, թէ որքան հոգեկան ցաւ են քաշել նրանք և դեռ քաշում են, զգալով առողջների և իրանց մէջ եղած տարերութիւնը: «Մեր ո՞ր մեղքերի համար է այս տարբերութիւնը», հարցնում են նրանք:

Կոյրերը սովորում են գրել-կարգալ և հաշւել: Յառուկ նրանց համար տպւած գրքեր կան — ուսուցիկ տառերով: Կոյրերն այդ տառերի վրայ ման ածելով մասնելլ, որոշում և արտասահում են բառերը: Գրում են առանց թանաքի՝ հաստ ու կոպիտ թղթի վրայ մի բարակ երկաթէ ձողով, որ հետքեր է թողնում թղթի վրայ: Թղթի հակառակ կողմը դուրս են գալիս ուսուցիկ տառեր, և կոյրը, մատները նրանց վրայ ման ածելով՝ կարող է կարգալ իր կամ ուրիշների գրածը: Այսպէս նրանք գրում են շարադրութիւններ, նամակներ և թւարանական խնդիրներ: Մտաւոր հաշիւները կատարում են վերին աստիճանի արագ ու թեթև առանց ցրւելու իրանց միտքը որևէ ուրիշ բանի վրայ:

Կոյրերը չափազանց սիրում են լսել ուրիշների ընթերցումը: Արժէ ականջ զնել նրանց դատողութիւններին մի կարգացւած նիւթի մասին: Նրանք ճանաչում են ուսուցչին քայլւածքից,

ձայնի հնչիւնից. Նկատում են նրա հոգու տրամադրութիւնը: Նը-
րանք սիրում են, որ վարժապետը իրանց քաջալերելիս շոյէ, շօ-
շափէ ձեռքերը. իրանք էլ շնորհակալութիւն յայտնելիս բռնում
են վարժապետի ձեռքը: Պատահած չէ, որ կոյրերը սիրեն մէկին
ու յետոյ ատեն. բարեկամութիւնը նրանց սփոփանքն է: Նրանք
վերին աստիճանի արդարամիտ են և պարզ ու ճիշտ որոշում են
չարն ու բարին: Ոչ ոք այնքան չէ ոգեորւում որևէ վսեմ գործի
պատմութիւնով, որքան կոյրերը:

Կոյրերն երաժշտութեան ջերմ սիրահար են: Երաժշտութիւնը
նրանց բերկրանքն է, կեանքն է: Մինչև անգամ երեխաները
պատրաստ են մի քանի ժամ անշարժ կանգնել երաժշտութիւն
լսելու համար: Ածելը հեշտ են սովորում և ածում են աշխուժով:
Եթէ վարժապետը մէկին ասէ, թէ նա նւազածութեան շնորհը
չունի, շատ կըտիրի, բայց և այնպէս կըշարունակէ մեծ եռան-
դով սովորել:

Կոյրերի ո՞ր ընդունակութիւններն են աւելի զարգացած: Համեմա-
տութիւն որէք կոյր եւ առաղ մարդկանց մէջ:

Թ Շ Ի Ա Ռ Ի Ն

Ա. ծատուրեան

Ո՞վ ես դու, եղբայր, քեզ չեմ ճանաչում,
Բայց քո սրտամաշալ լացը տեսնելիս,
Եւ ես վշտացած արցունք եմ թափում,
Յուզում է սիրտս, տանջւում է հոգիս:

Միշտ ախուր, տրտում,

միշտ լուռ, միայնակ,
Դու չես մասնակցում կեսմքի խնձոյքին,
Զկան քեզ համար ոչ սէր, ոչ բերկրանք,
Լացն ու տանջանքն է միայն քո բաժին:
Թափառում ես դու խուլ փողոցներում,
Փախչում, ծածկում ես
մարդկանց հայեացքից.



Կարծես մարդկանցում
էլ չես հաւատում
Գոնել անկեղծ սիրտ՝
վշտիդ կարելից:

Կարծես քո աչքին
բովանդակ աշխարհ
Սացապատ ծով է
անկարելցութեան,
եւ քո արցունքը —
աշխարհիս համար
Անսպառ աղբիւր
վայրագ ինդութեան:

Ա. Ծառարիսն

Օ՛, ոչ, հաւատա, եղբայր
իմ թըշւառ,

Դու հոգուս անկեղծ, խորին զգացման.

Հաւատա, որ քո տանջանքի համար

Շատուրն են անկեղծ տանջւում ինձ նման...

Ե՞նչ է տպամ ասել բանաստեղծը:

Յ Ա Ա Ա Յ Ա

Գիծն ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Խ. Աբովիսն

Հիմիկ էլ զօռ են անում՝ թէ պիտի կարդաս: Հարամ ըլի էն
հացն էլ, էն ասլրուստն էլ, որ ինձ տալիս են: Էլ ոչ աչքս է
քուն գալիս, ոչ սիրտս է հանգստանում: Գիրքս տեսնելիս՝ հէնց
իմանում եմ՝ իմ հոգեառս է: Վարժատան անունը լսելիս՝ միսս
Ջանումս հալչում է: Երանի՝ ատան օր նախիր դրկեն, քանց կէս
սհաթ վարժատունը: Ի՞սչ անեմ, մէկ հիւանդութիւն էլայ չի
պատահում սատանի աչքը քուանայ, որ մէկ քանի օր պարկիմ
ու իմ գրքի երեսը չտեսնիմ: Թէ առում եմ, առաւօտը տանիցը

դուս դամ, գնամ, մէկ պատի տակի կուչ գամ, փորս է դադբէ-
դատ անում: Զէ, ասենք թէ ջէքս էլ հացով լցնում եմ՝ որ փո-
րիս ջուղարը տամ, իմ անաստած վարժապետն է ետեիցս մարդ
զրկում: Էն ժամանակ վայ իմ օրին, վայ իմ արևին: Մէկ մկան
ծակն էլ որ հազար թումանով ուզենամ առնեմ, չկայ, Ղորդ է՝
բազի անդամ ասում եմ՝ թէ զլուխս ցաւում էր, ես մաշիկ չու-
նէի, ու էստով գլուխս պլրծացնում եմ՝
ամա էս էլ չի օգնում: Ամեն օր գլ-
լուխս չի ցաւիլ, ես էլ լաւ գիտեմ,
ուր մնաց վարժապետով՝ որ հազար ինձ
նման սաւանի ատամին է խփել ու
ճամփու գրել:

Զեմ կարդում, չեմ կարդում, հօ
զօռի բան չի: — Կարդա, կարդա, ի՞նչ
է: Տօ, ձեր առունը չքանդկի, ախր էս
յիմար կարզալումն ի՞նչ կայ, որ էս-
պէս մեր ջանը հանում են: Շատ մարդ,
որ մէկ այբի կտոր էլայ փորսումը չու-
նի, ախ՝ չէ, չէ, զլխումը կուզէի ասել,
շակեցայ, չունքի էս զահրմար կար-
դալը փորի խարջ բան չի, ներեցէք
ինձ էս էլ կարդալու հարարաթն է, որ էսպէս լեզուս շաղեցաւ,
ծհ, ծհ... բերանս ցաւում է, թթու է, կծու է, աշքիս լիսը թր-
ռաւ, այբն էլ ջհանդամը գնա, ֆէն էլ, էս սհաթս մէկ աժան
մածուն ըլէր, լաւ կըսփշաէի, իսկ մէկ քոնճոտ այբի անունը
տալիս, լեզուս կապւում է:



Խ. Աբովիան

Ոչ աշքդ է մի բան տեսնում, ոչ բերանդ համ է առնում:
Շոր չի, որ մէկ օր կարիս, պուն չի՝ որ շուտով շինես, հար չի՝
որ խկոյն կուլ տաս, գեղ չի որ աշքդ խփես ու գիվէր քցես,
ինչ կըլի, ըլի, փորը սաղ ըլի: Զի էլ կարելի՝ որ ինչքան գրեր
կան, մէկ անդամ կամ ծամես, կուլ տաս, կամ ջուր անես, խը-
մես, կամ թէ չէ քերես, ջնջես՝ որ քուանան և աշքիդ չերեին:
Հա կաց ու ստիգ զլխիդ արա, որ գժոխիք պուճախն էլ գնաս,
էլի քեզ հանում են ու միսդ բերանդ տալով՝ ասում են՝ պիտի

կարդաս: Ի՞նչ կուզես անել. աշխարհքս բոլոր թարսւել է: Եր-
կինքն էլ թռչիս, էլի քեզ վեր են բերում, զիրքդ կոնատակը
տալիս ու ճամփու գցում, ուր. Աստւած իրանց գլուխը ոչ գիտէ:

Մէկ զիրքս կորցնում եմ, միւսն են ձեռս տալիս: Մէկ ղա-
լամս կորցնում եմ, ծեծում, թակում, սպանում են՝ թէ գնա,
միւսը բեր: Փոքր յեղի եմ գալիս, վայ իմ օրին: Դասս չգիտեմ,
քանոնը հազիր է: Զեսս չեմ դէմ անում, քամակիս են խփում.
քամակս եմ քաշում, ոտիս է դիպչում: Ի՞նչ անեմ, որ ջուրը
ընկնիմ, ուր կորչիմ, որ էս դժոխքիցը ազատւիմ: Սատանի փայ
ըլի, աչքը դուս գայ, ով որ էս կարդալը սահմանել է: Ասում են՝
կարդալով մեծ մարդ կըդառնաս, հաց կըճարես. առ տնաքանդ-
ներ՝ էս օր էլ, քանի որ մեծանում եմ, էնքան աչքից ընկնում
եմ: Մէկ կտոր հաց են տալիս, քթիցս են հանում: Էլ ի՞նչ կանեմ
ձեր հացն ու մեծութիւնը, երբ օրս ու ումբըս կըխաւարի: Երա-
նի զշերին՝ որ էսպէս ցաւ չունին, որ իրանց քէֆին թռչում,
ման են գալիս: Բոյըս էլայ շուտով երկարանում չի, որ բալքի թէ
ամաչեն ու էլ վարժատունը չուղարկեն: Բիգունն եմ զիրքս
ձեռս առնում, քունս է տանում, առաւօտն ուղում եմ դասս
սերտեմ, էլ ժամանակ չկայ: Աչքս որ բաց եմ անում, հէնց զի-
տեմ՝ իմ հոգեառ հրեշտակը բարձիս վերել կանգնած, ուզում է,
հոգիս առնի: Ի՞նչ կըլէր, որ ամեն օր կիրակի եր էլել, որ հէնց
մեր քէֆին ման գայինք:



ՄՐՁԻՒՆԵՐ ԵՒ ԽԼՈՒՐԴ

Ա. Ծատուրեան

Գարնան ջերմ օրին մայր երկրի երես
Զերմ գործի ելան արի մըջիւններ.
Վազեցին հա դէն, վազեցին հա դէս,
Որպէս ժրաշան, անխոնջ մշակներ:

Եւ կարճ միջոցում պարտիզի խորքում
Կանգնեցին մի տուն – հողաշէն թմբիկ,

Եւ առլրում էին ամենքն այդ շէմքում՝

Ասես, մի սիրով կապւած ընտանիք:

Բայց մի օր (աւազ, երկրի երեսից
Զարն է անպակաս) խղճուկ մրջիւներ
Յոզնած, ուժասպառ տուն գալով գործից,
Տեսան տունն իրանց քանդւած ու աւեր...

Ստորելը և ամբով,

թաքուն գողի պէս,

Սուսիկ փորելով սիրուն շէնքի տակ,
Լոյս արեն ատող խլուրդն էր այդպէս
Խեղճ մրջիւների աւերել վաստակ...

Լոյսի մշակներ, երբ կեանքի գարնան

Գործի էք ելնում, դուք մի մոռանաք,

Որ մեզնում նոյնպէս խլուրդներ շատ կան

Թաքուն փոս փորող ամեն գործի տակ...

Բացատրեցէք այս առակի միտքը:

ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ

Մոլոացան

ա.

Մութը կոխել էր: Հուսնի արծաթափայլ սկսւառակը յուշիկ
բարձրանում էր լեռների յետելից և աղօտ լուսով սար ու ձոր
լուսուորում: Շրջակայ զարիվայրերը հետզհետէ ծածկում էին
արօտից վերագարծող նախիրներով ու հօտերով: Կովերի բառաչը,
մաքիների մայիւնը, տաւարածի հահօնները և հովւական սրնգի
ժելամաղիկ երգը, որ հնչում էր մթարլատ ձսրամիջում, խառ-
նելով միմէանց, մի հաճելի աններդաշնակութիւն էին կազմում:
Որքան մօտենում էինք գիւղին, այնքան աղմաւկն ու շշուկը ա-
ւելանում էր: Ն. գիւղը հաօնելով, մինք իջանք տեղական քահա-
նայի տանը:

Հայոց գիւղերում՝ երկու տուն կայ, ուր ճանապարհորդը վստահութեամբ ու առանց հարց ու փորձի կալող է իշխանել: Առաջինը՝ տանուտէրի տունը, որ աւելի պաշտօնական մարդկանց է հիւրենկալում, երկրորդը քահանայի, ուր ամեն բարի հայ սիրով է ընդունւում: Թէպէտ հասարակ զիւղացին էլ իր հիւրասիրութեամբ յետ չէ մնում այդ երկուսից, այսուամենայնիւ, ճանապարհորդը միշտ չէ վստահանում մօտենալ նրան՝ զգուշանալով աւելուր նեղութիւն պատճառելուց:

Եթե ներս մտանք քահանայի տան բակը, մեզ իսկոյն դիմաւորեց մի բարձրահասակ և բարեկազմ երիտասարդ, որ ուրախ ժպիտով մեզ ողջունելուց յետոյ, մօտեցաւ ինձ օգնելու, որ ձիուց իշնեմ: Ես, իհարկէ, նեղութիւն չտւի րան և իսկոյն իշնելով սեղմեցի ձեռքը, որ նա կանխաւ ուղղել էր ինձ առանց ըսպասելու, որ ուղեկիցս յայտնէ նրան իմ ովլինելը:

Դա, ինչպէս յետոյ իմացայ, քահանայի ամուսնացած որդին էր:

Երիտասարդի հրամանով մի ծառայ սկսեց մեր ձիերը պարաեցնել, մինչև որ նրանց քրտինքը ցամաքէր և ապա ախոռը տանէր: Իսկ մենք, հիւրենկալի առաջնորդութեամբ մտանք սրահը, ուր երիտասարդի ամուսինը մի ակնթարթում արդէն ընդարձակ թախտի վրայ փռել էր մաքուր գորդ և վրան էլ օթոց:

Քահանան տանը չէր: Իմ հարցին թէ՝ ուր է նա, երիտասարդը պատասխանեց թէ՝ դեռ եկեղեցուց չէ վերադարձել:

— Միթէ այստեղ այդպէս ուշ են սկսում ժամերգութիւնը, — հարցը եւ:

— Միայն շաբաթ երեկոները, որպէսպի հանդից վերադարձող կարողանայ եկեղեցի դնալ:

«Գեղեցիկ կարգ է», մտածեցի ես և հէնց պատրաստում էի հարցնել թէ՝ արդեօք հին սովորութիւն է դա, թէ՞ աէր-հայրն ինքն է ասհմանել, մէկ էլ տեսայ, որ վերջինս բակը ժտաւ:

Դա բարձրահասակ, առողջակազմ, ալեխառն մօրուքով և քաղցրադէմ մի քահանայ էր, որ առաջին վայրկենից իսկ ախորժ տպաւորութիւն արտւ ինձ վրայ: Նրան տեսնելուն պէս ես ոտքի

ելայ և յառաջանալով, համաձայն գիւղի սովորութեան, ո՞ջը համբուրեցի:

Տէր-հայրը շատ սիրով ընդունեց ինձ և ձեռս բոնած բերաւ իմ տեղը նստացրեց: Շուտով մենք ծանօթացանք միմեանց: Ես իմ հի, որտեղացի լինելու և ինչ նպատակով իրանց գիւղը գալս յայտնեցի, իսկ ինքը մանրամասն տեղեկութիւններով ծանօթացրեց ինձ իր անձին ու ընտանիքին:

Մենք վայելում էինք տիրունու պատրաստած բարիքը և շարունակ խօսում:

Բ.

Տէր-հայրը խիստ հետաքրքրում էր ինձ իր խօսակցութեամբ և յայտնած կարծիքներով: Դրանցից մի քանիսը լսելուց յետոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ նա գոեհիկ քահանաների թւին չէ պատկանում: Իբրև գիւղական քահանայ. նա մինչեւ անգամ աւելի բան գիտէր, քան ապասելի էր:

Նա ծանօթ էր ոչ միայն ներսէս պատրիարքի, Խրիմեան Հայրիկի և Մելքիսեդեկ սրբազնի անուններին, այլ և նրանց գործերին, անձնական արժանիքներին և կենսագրութեանը: Տէր-հայրն ստանում էր Թիֆլիսում հրատարակող հայոց թերթերը: Հասկանալի է, որ լրագիրը շատ բան կը առվարդէցնէր նրան: Բայց և այնպէս այդ մեկուսացած լեռների մէջ այսպիսի մի քահանայ տեսնեն ինձ համար մի հաճելի անակնկալ էր:

Իմ հարցին, թէ այդ լրագրներից միայն ինքը տէր-հայրն է օգտառում, թէ ժողովրդին էլ մասն է հանում, նա պատասխանեց:

— Ինքս էլ շատ տարի չէ, ինչ սկսել եմ լրագիր կարդալ: Օրնեւի մեր կոյսը, նա վաղուց էր թերթ ստանում և յաճախ կարդում ինձ մօտ, աշխատելով սիրելի տնել ինձ իր կարդացածները: Եւ իրաւ, մի տարուց յետոյ ես այնքան սիրեցի լրագիրը, որ կարեռ համարեցի ինքս ստանալ և անձամբ կարդալ, որպէսզի կոյսին միշտ նեղութիւն չպատճառեմ: Փառք Աստուծոյ, ես նիւթապէս ապահով եմ և հեշտութեամբ էլ վճարում եմ լրագրի գինը: Երբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտա-

ցաւ, մեր կոյսը խորհուրդ տւաւ ինձ՝ հետաքրքրական և հեշտ հասկանալի կտորները կարդալ և հասկացնել նաև իմ ժողովրդին: Ես հետեւցի նրա խորհրդին և մի կիրակի՝ ճաշից յետոյ, երբ զիւղի գլխաւորները հաւաքւել էին ինձ մօտ, կարգացի նրանց տռաջ լրագրի մի քանի կտորներ և բացատրեցի: Այդ նորութիւնն այնքան դիւր եկաւ նրանց, որ այդ օրից սկսած ամեն կիրակի՝ ճաշից յետոյ, հաւաքւում է մեր բակը բազմաթիւ ժողովուրդ և սիրով լսում իմ ընթերցումն ու բացատրութիւնները:

4.

Տէր-հօր հաղորդածները ինձ համար հաճելի նորութիւններ էին: Այդպիսի քահանայի հովութեան յանձնւած գիւղում անկարելի էր, որ նաև դպրոց չլինէր: Ուստի ցանկացայ իմանալ՝ ունին թէ ոչ:

—Ի՞նչպէս չէ և ինչ հրաշալի դպրոց, —բացականչեց Տէր-հայրը հպարտութեամբ. —Եթէ տեսնէք, կը հաւանէք: Օրհնուի մեր կոյսը, նա է հիմնողը, ինքն էլ կառավարում է:

Այս քանիերորդ անգամն էր, որ «կոյսի» անունը լսում էի Տէր-հօրից, ուստի հետաքրքրեցայ իմանալ, թէ ով է այդ կոյսը, արդեօք վարժուհի է, թէ որևէ անսապատի հաւատաւոր կին:

—Այդ կոյսը քոյր-Աննան է, միթէ չեք ճանաչում, —հարցրեց ինձ Տէր-հայրը:

—Ոչ, չեմ ճանաչում, —պատասխանեցի ես: Կարմղ էք նրա ով լինելն ինձ յայտնել:

—Ի՞նչպէս չէ. ասացի, որ նա մեր գիւղական դպրոցի հիմնադիրն է և կառավարողը, այժմ տւելացնեմ՝ որ դասատուն էլ ինքն է: Նա մի բարի, ազնիւ և առաքինի կին է. ուզիղ տասն և ինն տարի է, որ գտնւում է մեր գիւղում: Իմ ձեռնադրութիւնից վեց տարի յետոյ եկաւ այստեղ: Այդ ժամանակ ով գիւղէր, թէ ինչ բան է գիւղական կանոնաւոր դպրոցը: Ես էի մի քանի տղաներ գլխիս հաւաքել և լսւ, վատ կարդացնում էի: Բայց երբ կոյս Աննան եկաւ, նա իր ծախքով և, ի հարկէ, նաև մեր օդնութեամբ շինեց դպրոցական տուն, որ անշուշտ կը տեսնէք: Նա հաւաքեց իր մօտ թէ տղայ և թէ աղջիկ երեխաներ և սկսու

կարդացնել։ Այժմ մեր գիւղում քիչ երիտասարդ կայ, որ հայերէն զըել, կարդալ չիմանայ։ Այս բոպէիս էլ գպրոցը մօտ հարիւր յիսուն աշակերտ և աշակերտուհի ունի՝ ժողովւած թէ մեր և թէ շրջակայ գիւղերից։ Դրանք բոլորն էլ կարդում են ձրիտարար։ Եւ դեռ պէտք է գիտենալ թէ կոյսի գպրոցը որբան գրագէտներ է տւել մեր գաւառին այսքան տարւայ ընթացքում։ Ճշմարիտն ասած՝ այդ կոյսը մեր բարերարուհին է, մենք բոլորս պաշտում ենք նրան։ Իմ ու տանուտէրի խօսքից աւել՝ նրա խօսքն ունի արժէք գիւղացու համար, բոլորը նրան լսում են, ինչպէս իրանց իմաստուն մօրը։ Եւ ի պատիւ նրա պէտք է ասել՝ որ մօր նման էլ ինամք է տանում գիւղացիների վրայ. օգնում է կարօտեալ-ներին, այցելում է հիւանդին, անգօր որբուկներին. ես ո՞ր մէկն ասեմ։

«Սկսած այն օրից, որ կոյսը մեր գիւղումն է, գրեթէ ոչ մի տան, կամ ընտանիքում խոռվութիւն ու գժտութիւն չէ պատուհել։ Հէնց որ լսում է, թէ մի տեղ անհամուձայնութիւն, վէճ կամ կոփւ կայ, իսկոյն դիմում է այնտեղ և խաղաղութեան հրեշտակի պէս ամենին հաշոեցնում, երբեմն խրատելով, երբեմն յանդիմանելով, բայց շատ անգամ էլ քաղցրութեամբ համոզելով։ Իսկ ով համարձակւում է քոյր Աննային ընդդիմանալ, կամ նրա խրատներն արհամարհել, նրա հետ այլևս ոչ ոք չէ խօսում, մինչեւ որ վերջինս համոզւելով թողութիւն չէ խնդրում։ Մեր գիւղական գործերի մէջ նոյնպէս քոյր Աննան օգնում է մեզ իր իմաստուն խորհուրդներով և առհասարակ այն գործը, որ նրա ցոյց տւած ճանապարհովն ենք սկսել և շարունակել՝ միշտ յաջողութեամբ է պատահել։ Բացի այս, գուշը մեզ մօտ կըտեսնէք գեղեցիկ կարգեր ու սովորութիւններ, որոնք միւս գիւղերում չկան. դրանք բոլորը նոյնպէս քոյր-Աննային ենք պարտական։ Միով բանիւ, այդ կոյսը մեր բարերարը և խնամակալուհին է, որին՝ կըխնդրեմ Աստղծուն՝ պարգևել երկար կեանք և առողջութիւն։



Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի

(Աղա-Նեղրի)

Յ. Յակոբիս

Օ՛, մանուկներ, մանուկներ, լսեցէք:

Վարժուհի է նա. ու հեղահամբոյք նրա հայեացքում
Ապրում է հոգին համբերողութեան ու տոկունութեան.

Նա չի սպասում ոչ զովասանքի, ոչ վարձատրութեան:


Անձնէր սիրով աշխատում է նա հեռու վայրերում,
Ու նւիրւելով մանուկ սերնդին ամբողջ էութեամբ՝
Մաշում է կեանքը, հետեւում ձայնին պարտականութեան:

Սառն ու խոնաւ, որպէս գերեզման՝ իր կացարանում,
Կեանքի հրապոյը փոխարինելով ոգերութեան,
Ապրում է մենակ, կարօտ մնալով բաղդաւորութեան:

Ու ջահը սիրոյ պատանեկական վառ ցնորքներով
Եւ ոչ մի անդամ չէ վայել նրան. և լի դառնութեամբ
Բարի ժպիտը վաստակած դէմքին կըմարի շուտով:

Մարած աչքերում կրխօսի այն ժամ զարմացքը սառած,
Դժգոյն շուրթերում կըմուի մըմունջ վերջին վայրկենում.

«Մանուկ սերնդին, օ, տարեք առաջ...»





ունաց առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
ունաց առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
ունաց առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ


ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Երեսք զայլ վահարաց զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ
զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ
զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ
զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ
զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ զայլ

ԽՈՐԹ ԵՂԲԱՅՐՄ

Ա. ԱՀԱՐՈՆԻԱՆ

Փոքր էի, հազիւ տասներեք տա-
րեկան, բայց լաւ յիշում եմ, որ այն
երեկոյ հայրս գայրացած տուն վերա-
դարձաւ այգուց։ Փոքրիկ հորթին պա-
րանից քաշ տալով յետեից և կանաչ
թարմ, խոսի մի կոյտ թեկ տակ՝ նա
բակը մտաւ խորհրդաւոր լուռթեամբ։
Ես նկատեցի, որ նրա մորթէ փափա-
խը կախւած էր ծոծրակի վրայ՝ բաց
թողնելով խմատ կնճռոտ ճակատը. շալէ
չուխայի և արխալուղի թեերը սովորա-
կանից աւելի վեր էին քաշւած, ասել
է՝ թէ նա այգում խոտ հնձելուց յե-
տոյ մոռացել էր ցած բերել, և որ տ-
մենից աւելի գլխաւորն էր ու նշանա-
կալիցը, կեռ ծայրով իր ձեռնափայտը հորթի պարանի հետ միա-
տեղ՝ շատ սպառնական ձեռվ էր պահել աջ ձեռքում։



Ա. ԱՀԱՐՈՆԻԱՆ

Հայրս խոտը ցած դրեց, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց, փայտն ու զլխարկը գնելով կողքին։ Մայրս կովկիթն էր լւանում, սպասելով կովերին, կթելու համար։ Ես աչք չեմ հեռացնում հօրիցս։ Նա անհանգիստ էր և մի քանի անգամ ճակատը շփեց ու դարձաւ մեծ քըոջս։

— Աղջի, թորոսը այս առաւօտ կովերը ո՞ր կողմով դաշտ տարաւ. այգու կողմով, թէ նախրի ճամպով։

— Զգիտեմ, հայրիկ, առաւօտը, երբ քաղհանի էինք գնում, նա մեզանից առաջ քշեց, գիւղից գուրս եկաւ, նրան չհասանիր։

— Եյգու կողմից, իհարկէ. նա միշտ այն կողմից է տանում, բացագանչեցի ես, հէնց այնպէս, առանց մտածելու, թէ իմ ասածը որեէ բանի կարող է ծառայել։

— Նա է, ուրիշ ով կարող է լինել, նզովից բարմատ, միշտ նա, — մոմոաց հայրս ու լոեց։

Թորոսը իմ խորթ եղբայրն էր, հօրս առաջին ամուսնութիւնից մնացած միակ տղան։ Ես և քոյրերս մեր ամենափոքր հասակից տեսել էինք նրան միշտ լուկեաց, մոայլ, մտածելու ու յամառ։ Նա չեր սիրել մեզ և մենք չեինք սիրել նրան։ Նա արդէն տամնը օթ-տամնը ութ տաքեկան էր այժմ, բայց դարձեալ թախծոտ ու լուակեաց, դարձեալ անմասն ընտանեկան կեանքին, դարձեալ առանց սիրոյ ու մենաւոր։ Ինչու չեինք սիրում նրան, ես չգիտեմ։ Նա մեզ երբէք վատ բան չեր արել. գուցէ հէնց այն պատճառով, որ նա միշտ լուռ էր և նրա այդ լուռթեան տակ կարծես խորին արհամարհանք կար գէպի մեզ։ Հայրս չեր սիրում նրան, որովհետեւ նա յամառ էր ու միշտ մոայլ և երբէք մարդու երեսին ուղիղ չեր նայի։ «Կախ-զլուխ տղայ է, մանկութիւնից այդպէս էր», ասում էր նա առանձին ցաւով, աւելացնելով, որ «կախ-զլուխ» մարդիկ միշտ կասկածելի են։

Եւ մենք բոլցրս առանց այդ նկատելու կամաց-կամաց նրա դահիճներն էինք դարձել։ Բոլոր մեր ծածուկ յանցանքների ու սխաների համար պատասխանատուն ու մեղաւորը միշտ նա էր։ Եթէ աման էր կոտրւած, անպատճառ թորոսն էր կոտրել. մածունի կամ կաթի սերը, թարմ կարագը՝ անպատճառ նա էր գողացել, ինչպէս և այգում կամ բոստանում հասած առաջին պը-

տուղը։ Մենք արդէն վազուց էլ չէինք նկատում, թէ որքան անողորմ ենք, և մեզ բոլորովին բնական էր թւում վերջ ի վերջոյ, որ Թորոսը մեր մեղքերը քաւի։ Զի բողոքում, միշտ լուռ է, թող կը ուրեմն։

Բ.

Բարեբախտաբար մեզ բոլորիս և Թորոսի համար, հայրս թէ իսիստ էր, բայց վերին աստիճանի գթոտ։ Նրա բոլոր գժգոհութիւնն ու զայրոյթը վերջանում էր ոռվորական անէծքով կամ մօրու առաջ անվերջ գանգատներով։

Թորոսն ամբողջ օրը գաշտումն էր լինում, մեր տաւարի յետելից։ Երբ երեկոյեան տուն էր գալիս և հայրս սկսում էր յանդիմանել որևէ յանցանքի համար, նա առանց նայելու մօտենում էր հացի տաշտին, մի՛ հաց վերցնում, փաթաթում—զնում թեկի տակ և լսութեամբ գուրս գալիս, թողնելով, որ հայրս շարունակի իր անէծքը, գանգատն ու տրտունջները։

Կովերը դաշտից վերադարձան։ Թորոսն էլ նրանց յետելից ներս մտաւ գոնից, ինչպէս միշտ, զլուխոր քաշ, դէմքն արեառ, յոգնած ու մոայլ։ Կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որոնք պիտի կթւէին։ Աղա ձեռնափայտը դրաւ մի անկիւն, նստեց իր սովորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրայ և սկսեց արեիների միջից թափ տալ աւագի հատիկները և գուլպաների վրայից հանել մանր ու մեծ փշերը։

Մայրս կովերն էր կթում, քոյրերս օգնում էին նրան։

— Թորոս, — յանկարծ լսեց հօրս ձայնը։

— Հը, — եղաւ պատասխանը։

... Չո՛ռ ու ցաւ, հրամմէ էլ չի կարողանում ասել։ Այս առաւու տաւարը ո՞ր կողմով տարար դաշտ։

Հօրս ձայնը դողգոպում էր, նա վրդովմունքից ասես ինեղդւում էր. ես նրան երբէք այդ աստիճան բարկացած չէի տեսել. վախեցայ ու կծկւեցի։

Թորոսի փոյթը չէր, նա լուռ էր։

— Եեղուդ պապանձի, խօսի, էէ, այգին մտել ես։

Թորոսը շաբունակում էր լոռոթեամբ թափ տալ տրեխները: — Սարգիս, — դարձաւ ինձ հայրս, — գնա, այն իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ:

Ես մօտեցայ, խոտը բաց արի և միջից դուրս հանեցի խաղողի որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահաս ողկոյզներ: Զեռքս առայ և քարացայ տեղումս... ես էի կոտրել. կոտրել էի ու լոել. ողկոյզը քաշքշել էի, ճիւղը կոտրւել էր և ես թողել, փախել էի:

— Ասա, — շաբունակեց հայրս աւելի և աւելի տաքացած, — Աստւած նզովի քեզ, ով է տեսել, որ հայ քըիստոնեան Աստւածածնից երկու շաբաթ առաջ խաղող ուտի, հարամ չէ, նայի, ի՞նչ ես արել, թող ձեռքդ կոտրւէր զրա փոխարէն:

Մայրս մէջ մտաւ.

— Ի՞նչ ես այդքան տաքացել, անաշէնի մարդ, դէ բան է, պատահել է, գուցէ Թորոսը չէ, գող է մտել. խօ գիտես, քաղցած գէլերի ովէս չոլերն ընկած, աւելմունք են անում:

— Խելքիդ ի՞նչ ասեմ, ախր կնիկ ես, էէ. գողը մի ձութ խաղողի համար այդի չի մտնի. բոլոր թմբերը պէտք է ոտի տակ տար, մարիկ-մարիկ վնտաէր, գտնելու համար. տանու գող է, քեզ ասում եմ, այ, այս նզովածն է, որ լկւել է: Չէ, թող ասի, որ ինքը չէ. տեսն հում ես, կարկամել է, Աստւած վերցնի որան:

— Այ որդի, — Թորոսին դարձաւ մայրս կամացուկ, — ի՞նչի ես կողքդ դէմ տւել, տեսնում ես, հէրդ թհողւել է, դէ մի ձայն տուր, ասա, որ դու չես, ասա՝ գողերն են արել խօմ բերանդ չի ցաւի, մի խօսք ասա, էլի:

Թորոսը տրեխներից պրծաւ և մէկ էլ ինձ նայեց աչքի տակով. օ, այդ հայեացքը, որքան վիշտ և որքան արհամարհանք կար նրա մէջ. ես, քիչ մնաց, հալւեմ, կամ գետինն անցնեմ, ոչնչանամ. նա կարծես շատ լաւ գիտէր, որ եռ եմ արել և ուրախ էր, որ մի զարմանալի դիմուածով հայրս իմ ձեռքն էր դրել յանցանքիս սարսափելի նշանը, այս դժոխային ոստը, որ վառում, փոթոթում էր իմ մատները:

Ես նայում էի միայն նրան, այդ հպարտ ու յամառ թոքուին, նրա թուխ ու թախծոտ աչքերին, որոնց տակ թագնւած մաքերը երբէք չէի հասկացել, իրար սղմած շրթունքներին, որոնք այնքան կամք էին արտայայտում, նրա արեառ ու խոհուն գէմքին, այդ սկայած, ճաջճած ձեռներին, նրա մաշւած թիկունքին, և այդ բոլորը, բոլորը ինձ թւում էր նոր, կարծես առաջին անգամն էի տեսնում նրան, և այդ ամբողջ արտաքինը վկայում էր շիտակութիւնն, կամք, աշխատանք ու տանջանք. կիզիչ արեկի տակ, փշերի ու քարերի միջին որքան էր վազվել խեղճ աղան, օրեր, շաբաթներ, ամիսներ ու տարիներ, և դրա հետ միասին քանիքանի անգամ հնմարկւել ճիշտ այսպիսի դառնութիւնների մեր երեսից: Եւ մի ահագին ախրութիւն սև ժայռի աէս նստեց սրբառիս. շրթունքներս դողդողացին, ուզում էի ճշաւ լաւ, զլխիս խփել... բայց էլի շրթունքներս կծեցի, երբ տեսայ, որ թորոսը պատրաստում է դուրս գնալու: Փոթոլիկը դրանով կըվերջանար, միշտ այդպէս էր լինում:

Ահա նա վեր կացաւ և առանց նոյն իսկ իր սովորական հացը վերցնելու տաշտից, շարժւեց դէպի դուռը. նա պիտի անցնէր հօրս առաջից, որ լուս հետեւում էր նրա շարժումներին: Հօրս հայեացքի մէջ կայծակ էր վայրատակում. նա գունատ էր, շունչը քթածակերից դուրս էր գալիս փնչացնելով, իսկ ձեռնափայտը դողում էր ձեռքի մէջ: Նա երբէք այսպէս սարսափելի, այսպէս անողորմ տեսք չէր ունեցել:

«Միթէ խփելու է թորոսին», մտածում էի ես. «այդ անկարելի է. նա այնպէս բարի է». և ինձ թւում էր, եթէ նրան խփի՝ ես կըմեռնեմ, չգիտեմ ինչից, բայց անպատճառ կըճշամ ու կըմեռնեմ, երեկի կըխեղպւեմ:

Էլ ոչինչ չէի տեսնում, ոչինչ չկար զլխումս, բացի այն փայտից, այն դեղնաւուն հոնի փայտից... Եւ ես տեսայ... որ նա բարձրացաւ, այն զարհուրելի փայտը, բարձրացաւ հօրս զլխից վեր, ճօճւեց օդի մէջ...

— Հայրիկ, հայրիկ... մի, մի... Բառերը խեղդւեցին իմ կոկոր-

դում. նետւեցի հօրս ու Թորոսի մէջ, բայց անօգուտ, ևս շատ փոքր և անզօր էի. ձեռնափայտն ահագին թափով իջաւ եղօրս թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ նոյնպէս թափով, նոյնպէս անողորմ:

Թորոսը չշարժւեց, կանգնած մնաց իր տեղում, գարձեալ լուս, առանց բողոքի նայեց հօրս, ապա աջ ձեռքով շօշափեց թիկունքի ցաւած տեղը և երկու կաթիլ արցունք կախւեցին նրա մռայլ, մթագնաց աչքերից, իջան, իջան և այտերի վրայ քարացան, մնացին:

Սոսկումի պէս մի բան, մութ ու ճնշող՝ իջաւ մեր տան վրայ, որ աւելի ահաւոր էր գառնում Թորոսի լուս արցունքով:

Օ՛, այդ երկու կաթիլ արցունքը. նրանք իջան իմ սրտի վրայ, քանդեցին, աւերեցին կուրծքս և խորտակեցին ինձ: Հայրս կանգնած էր գողգողալով, նայում էր ոսների տուաջ, կարծես չգիտէր, թէ ինչ պատահեց: Եւ բեռը, ահագին բեռը ճնշում էր իմ կուրծքը, խեղում էր ինձ, կուրծքս ուռել էր և ես ճշացի:

— Ե՞ս եմ, հայրիկ, ես եմ կոտրել, ես եմ գողացել, Թորոսը մեղք չունի, միշտ ես եմ: Ներիր, ներիր, Թորոս ախպէր, իմ խեղճ ախպէր:

Բոլորը քարացան. կարծես երկինքը յանկարծ փուլ եկաւ. մայրս շւարած՝ կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ, կոտրւեց և կաթը հոսեց բակում. հայրս զլուխը բարձրացրեց, ինձ նայեց չոած ու ապշած աչքերով ու յետ-յետ գնաց, կարծես ես թունաւոր օձ լինէի. ապա ճակատը բռնեց, մնաց կանգնած: Քիչ յետոյ լուս մօտեցաւ Թորոսին ու ձեռքը դրաւ նրա թիկունքին:

— Ձեռքս կոտրէր, որդի, — ասաւ հեկեկալով: — Սարգիս, Սարգիս... Թող Աստւած քեզ... դու իմ հոգին կորցրիր... Թող Աստւած քեզ... ինչ ասեմ... — Ու շարունակել չկարողացաւ, չուզեց անիծել, արցունքը թափւեց աչքերից հեղեղի պէս:

— Էլ չեմ անի, հայրիկ... Էլ չեմ անի երբէք...

Թորոսը թեով սրբեց աչքերը, նստեց թմբի վրայ, զլուխը ձեռների մէջ առաւ և մնաց լուս:

Այս գիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում. անքուն էի և
ես, այրում էի. ես էլի երկար-երկար լաց եղայ:

Ի՞նչ ընտրութեան տէր էր Թորոսը: Ի՞նչ ստիպեց փոքր եղօրը
խոստվանել իր յանցանքը: Ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ:

ՈՂՈՐՄԱԾ ԵՂԵՔ

(Վ. Հիւգո)

Ա. ԾԱՏՈՒՐԻԱՆ

Երբ ձեր հոյակապ, շքեղ աներում
Անթիւ զարդարանք ձեղ շրջապատած—
Գոհար, ադամանդ, դիպակ, ապրեշում,
Դուք ծիծաղում էք՝ կեանքից լիացած,
Եւ այդքան գանձերն առատ ու անբան
Զեն էլ շլացնում ձեր աչքը անբաւ.

Երբ դուք բաղդաւոր, «Կենաց բաժակներ»
Ուրախ պարզում էք փարթամ խնճոյքում,
Ասացէք դուք ինձ, ով մեծատուններ,
Այդ գւարթ ժամին դուրսը, փաղոցում
Դուք նկատում էք անճար աղքատին՝
Լալով նայելիս ձեր լուսամուտին:

Խղճուկը քաշւած փողոցի անկիւն,
Քաղցած նայում է նա ձեր խնճոյքին
Եւ խուլ մրմնջում. «Ահա լիութիւն,
Առատ բարիքներ, ահա խնդագին
Եւ պայծառ օրեր, և՛ վիճակ խաղաղ,
Ահա ամեն ինչ—կեանք, վայելք, ծիծաղ...

«Իսկ Ես... ես թշւառ, ես մերկ, անօթի,
Իմ օթեանը խարխուլ ու մթին,
Վայ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտւած եմ երկրիս երեսին.
Կիս թոքախտում, տանս հոգս ու ցաւ,
Խեղճ զաւակներս քաղցած ու ծարաւ...

«Եւ շատ քչերին տւած է կեանքում
վայելել օրեր լի երջանկութեան,
Անարդար բազգը կեանքի խնճոյքում
«Ապրիլ», — առում է հարուստ մեծատան,
Խոկ ինձ — «գու հեռու, զու բազգին օտար,
Սնվերջ երազիր բազգալից աշխարհ».

Օհ, նա, միայն նա կարող է զգալ
Թէ ինչ ասել են այս գաժան խօսքեր,
Որ ինքն է եղել թշւառ, տառապեալ:
Բայց գնւք, գնւք, բազգի հարուստ ընտրեալներ,
Զեղ ինչ փոյթ. ձեր կեանքն առատ է, լեցուն,
Ողորմած եղեք, Աստուծոյ սիրուն:

Ողորմութիւնն մայր է որբերին,
Մայր նրանց, որոնք իրանց սև բազգին
Խորթ մայր են կոչում: Եւ այնտեղ, ուր միշտ
Տիրում է տանջանք, ցաւ, կարիք ու վիշտ,
Այնտեղ է նա միշտ թռչում, սլանում
Եւ մարդկանց աչքից արտասուք սրբում:

ՀՅ

ԱՐՑՈՒԻՆՔԻ ԱՂԲԻՒՐ

Գ. Աստածատրեան

Մօտեցաւ արեն արեմուտ սարին ու դօշին չոքեց: «Գնում
եմ մօրս ծոց, ճամպայ տուր, թէ չէ՝ կը վառեմ ես քեզ»: Սարը
կուցաւ ու ճամպայ տւաւ: Արել ժպտաց, սարերի գլխներ, ամ-
պեր ու երկինք կարմրեցին յանկարծ:

Նախիրն է դառնում հեռու դաշտիցը, զառներն են մայում,
այծեր մկըկում, կովեր բառանչում, երեխայք ծւում, ինչու են
լալիս սրանք լեղաճաք, այս ինչ պատահեց:

— Վայ, Մարէ-մէրիկ, գոռում են նրանք, օրդ խաւարեց:
Սկզբի միջում մենք խաղում էինք ալաջա պարը, երբ վրայ
տին մեզ յանկարծ փաշայի քուրդ նոքարները: Նրանք մարակով

մեզ լաւ ծեծեցին ու տուն քշեցին, իսկ քո Անուշին ամուր կապեցին ու թամբին դրին: «Մայրիկ էր կանչում, մայրիկ ջմն, ուր ես, ինձ սպանեցին»: Բայց նրանք Անուշին ապտակ խփեցին, իսկոյն լսեցրին: Նա ձինը կարեց. քրդերը փախան. Անուշդ կորաւ: Վայ, Մարէ-մէրիկ, քեզ ու լուր բերինք, օրդ սեացաւ:

Դառն կոկիծը նրա զլուխն ընկաւ, տանել չկարաց, արցունքը ցամքեց, աչքերը պլշած ու կանգնած մնաց... Յանկարծ ծիծաղեց, խելքը կորցրած...

«Եկէք, բալաներ, էսօր Անուշիս ես հարս եմ շինել, հարսանիք արել... մեռնեմ նրա մարմար թշերին, շիշշատ մատներին, մեռնեմ փեսայիս րօյ ու բուսաթին... դէ, պար բռնեցէք, հարսնիք է, բալէք»...

Ու ինքը պարեց... բայց յանկարծ ճչաց, մազերը փետեց ու դուրս արշաւեց...

Վեր կացաւ քամին, երկինք ու երկիր իրար հետ խառնեց, ու ու մութ ամպեր իր ծոցից հանեց, մէկ մէկի զարկեց: Լոեց ամեն բան. քամին էր միայն, որ մռնչում էր, քամին էր միայն, որ սուլում, ոռնում ու շառաչում էր:

Բայց ձորի միջից մի ձայն էր գալիս: Նա էլ հեծկլտում, նա էլ է ոռնում ու վայ է տալիս: Արգեօք բորենին, թէ գայլն է սպառնում այս խուլ գիշերում. թէ բուն է՝ վախից սարսափած գիւղին ու շիւան բերում: Ոչ, ոչ. չի կարող ոչ մարդագէլը, ոչ կայլը, ոչ բուն, —ոչ մի նշաւոր չի կարող գիմնալ կատաղած քամուն: Մարէ մէրիկն է այն ձորում նստած, Անուշին կանչում, ձայնը չի լսում, նա հեծկլտում է, մազերն է փետում...

Բայց չի գաղաքում կատաղած տարրը. երկինքը ելաւ, անձը ու կարկուտ իր միջից ժայթեց, և մելամաղձոտ նրա հետ գիւղի զանգակն է հնչում, իսկ հեռու ձորից մի խուլ հեծկլտանք նրա հետ խառնում...

Անցան տարիներ: Մարէ-մէրիկը ձորը չէր թողնում. մազը զզգւած, տկլոր ու նիհար խոտ էր ճարակում, աչքերին արցունք և թափառելով Անուշ էր կանչում:

Այսչափ կոկից, այսչափ արցունքից գազան փաշայի սիլտը չկակղեց: Բայց ժայռը կակղեց, իր սիրտը պատուց թշւառ մօր

լացից և արտահոսեց Սկ-Զորի միջից պարզ ու վճիռ ջուր, որ
մինչև այսօր այսուեղ կոչում են «Արցունքի աղբիւր»:

Վ Ա Տ Հ Ն Կ Ե Ր

(Առակ)

Մի անգամ
Առիւծ արքան
Մոնչում էր կողի ցաւից.
Գազանները ամեն կողմից
եկան հիւանդ արքային տես,
Բայց մէջներին չկար աղւէս:
Էզտեղ մէկ էլ
Մի պառաւ գէլ
Ասաւ. «Արքայ,
Ախր ի՞նչ կայ,
Որ ոչ ու փուչ
Թիզ ու կէսը,
Հաջուջ - մաջուջ
Չար աղւէսը
Քեզ չէ յարգել,
Տես չէ հկել»:

Յաւը թողած
Արքան գոռաց.
- Դէ հա, թուէք,
Էն ընթոսափին
Ոտս բերէք:
Հինգ-վեց գազան
Ելան-հասան,
Էն աղւէսին
Մի կերպ գտան,

Ա. Խնկոյեան

Պատճառն ասին,
Բերին ատեան:
Արքան գոռաց.
«Ո՞ւր ես, մեռած»:
— Ասեմ ձեռաց,
Աղւէսն ասաց,
Տէր վեհափառ,
Խնդիրս առ.

Որ լսեցի, դու հիւանդ ես,
էլ ի՞նչ ասեմ, ի՞նձ հօ գիտե՞ս,
Ոնց թէ գլխիս կրակ վառած
Եւ պատանս էլ թեփս առած
Հա էս տեղը, հա էն տեղը,
Վերջը գտայ ցաւիդ գեղը.
Գայլի մորթին արա մուշտակ,
Միսը շորւայ, խմի տաք տաք.
Թրանեց կողդ,
Կանցնի դողդ:
Որ չտւեց էսպէս թելին,
Իսկոյն գետին դրին գէլին.
Արքան հագաւ գէլի կաշին...
Միթը կերաւ նախաճաշին:
Թրանեց կողը,
Անցաւ դողը,
Մէջտեղ գնաց
Զրովարտողը:

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԳԻՐԸ

(Հոստ Դ. Ամիշիսի)

Յովհ. Արարացինան

ա.

Տարբական դպրոցի բարձր բաժանման աշակերտ էր նա՝ երկաթուղու մի ծառայողի մեծ որդին։ Հօր ընտանիքը մեծ էր, ոռածիկն աննշան և այդ պատճառով նա մեծ դժւարութեամբ էր ծայրը ծայրին հասցնում։ Հայրը շատ էր սիրում իր որդուն. բարի էր և զիջող ամեն բանում. սակայն ինչ վերաբերում էր նրա դպրոցական պարապմունքներին, նա սաստիկ խստապահանջ էր. նրա ցանկութիւնն էր, որ որդին առաջնակարգ դպրոցաւարտներից մէկը լինի, որսէսզի շուտով կարողանայ պաշտօն գտնել։ Դրա համար մանուկն ստիպւած էր շատ պարապել։ Եւ թէպէտ նա ծոյլ չէր, այնուամենայնիւ հայրը դարձեալ խրատում էր աւելի ևս եռանդով պարապել։

Նրա հայրն արդէն տարիքաւոր մարդ էր, ոյժերից բարձր աշխատանքն անժամանակ ծերացրել էր նրան։ Զնայելով դրան՝ իր ընտանիքի անհրաժեշտ կարիքները հոգալու համար՝ նա պաշտօնից գուըս կողմնակի պարապմունքներ էլ էր վերցնում և գիշերւայ մեծ մասն անքուն աշխատում։ Վերջերս նա յանձն էր առել մի ինչ որ լրագրի բաժանորդների հասցէները գրել ծրագների վրայ։ Բայց այս աշխատանքն յոգնեցնում էր նրան, և նա շատ անգամ գանգատուում էր այս մասին։

Որդին ասաց նրան մի անգամ.

— Հայրիկ, տուր, ես գրեմ քո տեղը. քեզ յայտնի է, որ ես էլ քեզ պէս պարզ և գեղեցիկ եմ գրում։

Սակայն հայրը պատասխանեց.

— Զէ, դու պէտք է գասերովդ պարապես. քո դպրոցական պարապմունքներդ աւելի կարեւը են, քան այս հասցէները, — շնորհակալ եմ քեզանից, սակայն դրան համաձայնւել չեմ կարող։

Որդին չպնդեց։ Բայց տես, թէ ի՞նչ արաւ նա։ Նա գիտէր, որ ճիշտ կէս գիշերին հայրը վերջացնում էր պարապմունքը և իր գրասենեակից գնում ննջարան։ Մի անգամ, գիշերը, նա սպասեց, մինչեւ հայրը անկողին մտաւ, վեր կացաւ, հագնեց կամա-

ցուկ, խարխափելով մտաւ գրասենեակը, յամ պէ նորից վառեց, նստեց գրասեղանի առաջ և սկսեց զրել՝ աշխատելով հօր ձեռագրին նմանեցնել: Մահուկը գրում էր մեծ բաւականութեամբ, երկիւդ կրելով միայն, որ չլինի թէ բռնւի, — և գրած ծրարների կոյտը հետզհետէ բարձրանում էր. ժամանակ առ ժամանակ մանուկը վար էր գնում գրիչը, ձեռքերը արորում, ապա նորից, ականջ դնելով և ժպաղդէմ, աւելի ևս աշխուժով շարունակում գործը: Ահա արդէն հարիւր վաթսուն հաա գրւած էր... Են ժամանակ նա դադարեց գրել գրիչը կը իր տեղը, լամպը մարեց և յուշիկ քայլերով անկողին մտաւ:

Բ.

Հետեւալ օրը, ճաշին, հօր տրամադրութիւնը լաւ էր. նա ուշրախուրախ մօտեցաւ սեղանին: Ոչինչ չէր նկատել: Ռւրախուրարթ նստեց, խփեց որդու ուսին և ասաց.

— Դէ՞հ, զաւակս, հայրդ գեռ լաւ աշխատող է: Երէկ երկու ժամւայ մէջ սովորականից շատ եմ գրել. նշանակում է՝ ձեռքս դեռ արագ է գնում և աչքերիս գօրութիւնը չէ պակասել:

Մանուկը ոչինչ չպատասխանեց, սակայն գոհ սրտով մտածում էր ինքն իրան.

«Խեղճ հայրիկ ջան, բացի այն, որ իմ արածը նրա վաստակն աւելացնում է, այդ բանը դեռ հարկադրում է նրան կարծէլ, որ նրա ոյժերն իսկականից աւելի զօրեղ են, և այս բանն ուրախացնում է նրան: Ուրեմն, այդպէս էլ պէտք է շարունակել»:

Այս յաջողութեամբ քաջալերւած՝ մանուկը հետեւալ գիշերն էլ ժամը տասներկուսին զարթնեց և նստեց գործի: Եւ այսպէս շատ ու շատ գիշերներ անընդհատ: Հայրը ոչինչ չէր նկատում:

— Զաւակս, — մի անդամ ասաց նա որդուն, — ի՞նչ է նշանակում այս: Դու առաջւանը չես. — սկսել ես վատ սովորել և առնասարակ վատ ես վերաբերում դէպի քո գործը: Մի մուանար, որ դու պէտք մեր ընտանիքի նեցուկը լինեաւ: Ես դժգոհ եմ քեզանից, հասկանո՞ւմ ես:

Այս առաջին և խիստ յանդիմանութիւնը լոելով՝ մանուկը շփոթւեց:

«Այս, — մտածեց նա, — ոյսպէս շարունակել չի լինի, պէտք է մի կողմ թողնել իմ խորամանկութիւնը»:

— Դու տեսնում ես, — շարունակեց հայրը, — որ ես, իմ ընտանիքի ապրուսը հայթհայթելու համար, աշխատում եմ, որքան ոյժս պատում է: Իսկ դու չես ուզում հասկանալ, որ ինքդ էլ պարագաւոր ես լաւ սովորել, որ յետոյ ինձ օգնես: Նշանակում է կու չես սիրում ոչ ինձ, ոչ քոյրերիդ ու եղբայրներիդ, և ոչ մօրդ:

Օ՛, ոչ, հայրիկ, մի ասիր այդ, — լալագին բացագանչեց մանուկը և այն է՝ ուզում էր խոստովանել ամեն ինչ:

Բայց հայրը ընդհատեց նըան, ասելով.

— Զէ որ քեզ յայտնի է, թէ որքան զգկանքներ ենք կրում մենք, զիտես, որ ամենը, իրանց ոյժերին համեմատ, պէտք է աշխատեն ընտանիքը պահելու համար: Ես ինքս այժմ պարտաւոր եմ աւելի ևս շատ աշխատել: յոյս ունեի, թէ երկաթուղու վարչութիւնից այս ամսու նեկը պէտք է ստանամ, սակայն այսօր լսեցի, որ ոչինչ չեմ ստանալու:

Այս լուրն իմանալով՝ մանուկը վճռաբար պնդեց ինքն իրան.

«Ո՞չ, հայրիկ, ես ոչինչ չեմ ասի քեզ: Ես իմ մէջ կըպահեմ իմ գաղտնիքը, որպէսզի օգնեմ քեզ: Ես կաշխատեմ այլ կերպ փոխարինել քեզ պատճառածու վիշտը. զպոցում ես կաշխատեմ սովորել այնքան, որ կարողանամ քննութիւն տալ, իսկ քեզ օգնելու անհրաժեշտ է, եթէ ոչ դու բոլորովին կըբայքայես քո առողջութիւնը»:

գ.

Բայց մի անգամ, ընթթիքի ժամանակ, հայրը մի քանի խօսք ասաց, որոնք ստիպեցին նրան վերջնական որոշումն անելու: Ահա, թէ ինչ պատահեց: Մայրը նայեց որդուն և նրան թւաց, թէ մանուկը սովորականից թոյլ և հիւանդ է երկում:

— Զաւակս, դու հիւանդ ես, — հարցրեց նա և հօրը դանաւով՝ վրդովւած ասաց.

— Երեխան հիւանդ է. տես, ինչպէս է գունատւել։ Ո՞րտեղդ
է ցաւում, զաւակս։

Բայց հայրն հարևանցի կերպով նայեց նրան ու ասաց.

— Նրա խիղճը հանգիստ չէ, և դրա համար էլ նա իրան վատ
է զգում։ Այդպէս չէր, երբ լաւ էր սովորում դասերը և բարի
ու ջանառէր էր։

— Բայց նա հիւանդ է, — բացազանչեց մայրը։

— Է՞ն, այժմ էլ ի՞նձ ի՞նչ, — ասաց հայրը։

Այս խօսքերը դանակի նման խոցեցին խեղճ երեխայի սիր-
ար. «Ի՞նձ ի՞նչ» — ասում է հայրը, իսկ առաջ նա դողում էր,
երբ լսում էր, թէ որդին քիչ հազում է։ Նշանակում է, նա էլ
բոլորովին չի սիրում նրան, գրանում էլ կասկած չկայ...»

«Չէ, սիրելի հայր, — ասաց մանուկն ինքն իրան, զգալով,
որ վշտից սիրաը ճմլում է։ Այժմ արդէն ես կընդհատեմ գիշ-
շերւայ պարապմունքներս. առանց քո սիրոյ ես չեմ կարող ապ-
րել, ես ցանկանում եմ, որ դու առաջւայ նման սիրես ինձ, իմ
թանկագին հայրիկ։ Ո՞հ, ես այժմ արդէն վճռեցի և կարծես ան-
խախտ է իմ այս որոշումը»։

Բայց և այնպէս՝ նա դարձեալ զարթնեց կէս գիշերին և նո-
րից սկսեց զբել։ Պատրաստի ծրարները դիզում էին իրար վրայ։
Իսկ մանուկը զրում էր ու գրում...»

Իսկ հայրը կանգնած էր նրա աթոռի յետեր։ Նա նայում էր
արագ լնթացող գրչին, — և մի վայրկենում ամեն ինչ հասկա-
ցաւ... Սիրաը լցւած դառն զղջումով և բուռն սիրով գէպի իր
որդին՝ նա կանգնած էր արձանի նման։ Յանկարծ մանուկը, ըզ-
գալով՝ որ երկու ձեռք փարեցին նրա վզովը, վեր թռաւ և ճիչ
արձակեց։

— Ո՞հ, հայրիկ, սիրելի հայրիկ, ներիր ինձ, ներիր, — բացա-
զանչեց նա, տեսնելով, որ հայրն է այդ։

— Դու ներիր ինձ, զաւակս, — պատասխանեց հայրը հեկեկա-
լով և համբուրելով նրա գլուխն ու ճակատը։ Ես ամեն ինչ
հասկացայ, ամեն ինչ գիտեմ այժմ, ու ես, ես եմ ներողութիւն
խնդրում քեզանից, իմ թանկագին զաւակս։ Արի, արի ինձ
հետ։

Եւ նա քաշեց, աւելի ճիշտ՝ ձեռքերի վրայ տարաւ նրան մօր մօտ, որն աղմուկից արթնացել էր:

— Պինդ համբուրիր մեր այս սիրելի զաւակին, — ասաց նա, — առ արդէն երեք ամիս է, որ անքուն գիշերներ անցկացնելով՝ աշխատում է իմ փոխարէն, իսկ ես յանդիմանում եմ նրան, որ մեզ համար նա հաց է վաստակում:

Մայրը, անկարող լինելով մի բառ արտասանել, պինդ սեղ-
մեց նրան իր կըծքին, և քիչ յետոյ առաց:

— Գնամ, շուտ գնա, իմ զաւակս... գնա, քնիր, հանգստացիր:
Տար որպան քնելու:

Հայրը գրկած տարաւ նրան, հանեց շորերը, փափկացը եց
անկողինը, պարկեցը և ծածկեց վերմակով:

— Շնորհակալ եմ, հայրիկ, ինչ լսւ, է կըկնում էր մանու-
կը. — շնորհակալ եմ... բայց ինքդ ել գնա, պարկիր. ես այնպէս
երջանիկ եմ... գնա, հայրիկ, գնա, քնիր...

Բայց հայրը չէր ուզում հեռանալ որդու անկողնուց. նստեց
մօտը և ձեռքը բռնեց:

— Քնիր, քնիր, հոգեակս, քնիր, իմ որդեակ:

Յոզնած մանուկը, իրաւ, իսկոյն քնեց, և քնեց երկար ու
քաղցր առաջին անգամ այս երեք ամսւայ անքուն գիշերներից
յետոյ, նա երջանիկ էր, քունն անուշ, երազներն հրաշալի...

Մանուկն ինչ միջոցով սկսեց օգնել հօրի. Ինչո՞ւ նրա դասերն ըս-
կնեցին վատ զնալ Ի՞նչպէս բացւեց զաղտնիքը. Ինչո՞ւ էր մանուկն
իրան երջանիկ զգում.

ԵՐԱԿ

Մ. Շահազիզ

Ես լսեցի մի անուշ ձայն —

իմ ծերացած մօր մօտ էր, —

Փայլեց նշոյլ ուրախութեան,

Բայց ափսան, որ երազ էր:



Սմբատ Շահազիզ

Կարկաչանոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յատակ էր, որպէս բիւրեղ.
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի
Ցիշեց մանկութեան օրեր,
Մօքս համբոյըն ես զգացի.
Ա՛խ, ափսառ, որ երազ էր:

Վուրծքին սեղմեց կարօտագին
Աշքերս սրբեց—շատ թաց էր,
Բայց արտասուքս գնում էին...
Ա՛խ, այդ ինչու երազ էր:

ՀՆՏԱՆԻՔԻՑ ՀԵՌՈՒԻ

(Ա. Զելյով)

Յովհ. Արաբաջեան

Իննը տարեկան Վանին պապը քողաքում կօշկակար Ալէքօփ
մօտ տւել էր արհեստ սովորելու: Ծննդեան երեկոն էր: Վանին՝ իր սո-
վորութեան հակառակ, վաղ չպարկեց քնելու: Նա սպասեց, մինչև
վարպետի ընտանիքը և միւս բանւորները ժամ գնացին, ապա
պահարանից հանեց թանաքամանն ու ժանդուած գրիչը, ճմբու-
տած թղթի մի կտոր հանեց ծոցից ու նստեց զրելու: Բայց գիրը
դեռ չսկսած՝ Վանին վախվըսիլով նայեց դռանն ու պատուհան-
ներին և խորը հառաչեց: Թուղթը գրել էր նստարանին, իսկ ինչ-
քը չոքել առաջը՝ գետնի վրայ:

«Իմ սիրելի Դազար-պապի ջան, ---սկսեց զրել Վանին.--- Էս
նամակը քեզ գրում է քո Վանի թոռը: Ծնորհաւոր Քրիստոսի
Ծնունդն ու Մկրտութիւնը, խնդրում եմ Աստածանից, որ Նա
քեզ ամեն բարիք ու երկար կեանք տայ: Ոչ ճէր ունիմ ես,
ոչ մէր, մենակ դռւ ես մնացել ինձ համար էս աշխարքում:

Վանին աչքը դցեց մութ պատռհանին. Նրա ապակու մէջ արտացոլում էր մսմի լոյսը, և մանուկի առաջ պատկերացաւ նրա սիրելի Հազար-պապը, որ իրանց գիւղացի հարուստ Աթոյենց տանը պահապահութիւն էր անում. Դա մի կարճիկ, նիհար, բայց առոյդ ու ժիր ծերունի էր, մօտ 65 տարեկան, միշտ ուրախ, ծիծաղերես: Յերեկներն առնառարակ նա քնում էր, իսկ գիշերները՝ ծանր քուրքը հագին, ման էր գալիս տան չորս կողմը, տիրոջ բարիքը պահպանում չար ձեռքերից:

Ահա նա, քուրքը հագին կանգնած է վողոցում, ուրախուրախ զրոյց է անում դրացիների հետ ու բարձր ծիծաղում. Նրա մօտ, պոչը թափ տալով, կանգնած է սիրելի Զալօն, Վանի ընկերը:

Վանին ծանր միս քաշեց, թաթախեց գրել:

«Թանկապին պապի ջան, Աստծու սիրուն, արի, վերցրու ինձ այստեղից ու մեր գիւղը տար... Ել չեմ կարող դիմանալ... Աղաչում, ոտքդ եմ պաշում, տար ինձ այստեղից... Պապի, ես էլ միշտ քեզ համար աղօթք կանեմ, որ երկար կեանք ունենաս»:

Վանիի շրթունքները ծուեցին. Կեղտից սևացած բռունցքով նա սրբեց աչքերից արտասուքն ու հեկեկաց:

«Ես մեր տանը ամեն ծառայութիւն կանեմ, — շարունակեց նա գրել, — Աստծուն աղօթք կանեմ միշտ... Իսկ եթէ կրվախենաս, թէ անզործ կըմամ, մի վախիր, պապի ջան. Եթէ ուրիշ գործ չճարւի էլ, թաթօի տեղ ոչխար կարածացնեմ: Պապի ջան, պապի, էլ էստեղ դիմանալ չի լինի, մահն աւելի լաւ է ինձ համար: Ուզում էի ոտքով գեղ վախչել այստեղից, բայց ոտնաման չունեմ, ցըտից եմ վախում: Իսկ երբ մեծանամ, հասակս առնեմ, չեմ թողնի, որ մէկը դիպչի քեզ, կամ մի խօսք ասի, ու



Ա. Զեխով

թէ մեռար, փառքով կըթաղեմ և հոգուդ համար աղօթք կանեմ, ինչպէս Խաթուն-նանիս համար եմ աղօթում միշտ...

«Էս քաղաքը շատ մեծ քաղաք է։ Տները մեծ-մեծ, հարուստ էստեղ ձի ասես, շատ կայ, իսկ կով, ոչխար չկան, շներն էլ մերոնց պէս կծան չեն։ Էս քաղաքի տղէրքը կտնուիս չեն վեր կենում, ու ժամի դասն էլ չեն թողնում երգելու։ Վայ, պապի, թէ գիտենաս, ինչ տեսակ-տեսակ զարմանալի բաներ կան էս անտէր քաղաքում... Ոչ գըշով գրել կըլինի, ոչ բերանով պատմել...»

Վանին խորը հառաչեց, աչքը կրկին դարձրեց պատուհանին ու մտածմունքի մէջ ընկաւ։ Նրա յիշողութեան մէջ սկսեցին մէկ-մէկ պատկերանալ գիւղում անցկացրած քաղցր օրերը... Երկար նստած էր նա՝ ծնօտը ձեռքին դրած։ բայց յանկարծ ըսթափւեց, նորից վեր առաւ գրիչն ու շարունակեց.

«Արի, պապի ջան, շուտով արի։ Քրիստոսի սիրուն, արի, տարինձ այստեղից։ Խղճա խեղճ որբիս, սիրտս արագւում է, ողջ օրը լաց եմ լինում։ Բարես յիշիր Մանան-հօրքուրիս, Աղիկ Սլոին, նախրջի Պետանին ու իմ սիրելի Զալօին։ Դունչը պաչ արա, ասա քու ընկեր Վանիի կողմից է։ Հա, պապի ջան, շւիս մարդու չտաս, լաւ պահիր։ Մնամ քեզ սիրող թոռդ՝ Վանի։ Պապի ջան, մի ուշանար»։

Վանին չորս տակ ծալեց գրած թուղթն ու գրեց ծրարի մէջ, որ անցեալ օրը մի կոպէկի էր գնել։ Մի քիչ մտածելով՝ նա գրիչը թաթախեց և գրեց հասցէն.

«Մեր գեղը՝ պապիս»։

Ապա դարձեալ մտածեց ու աւելացրեց.

«Զալօինց Ղազարին»։

Վանին շատ գոհ էր, որ ոչ ոք չխանգարեց նամակը գրելիս։ Նա վեր կացաւ, զլխարկը դրեց և շաղկանց դուրս վագեց փողոց։

Վանին վազէվագ հասաւ առաջին փոստարկուին և թանկագիր նամակը գցեց ձեղքից ներս։

Քաղցր յոյսերով լցւած՝ մի ժամ անցած նա խոր քուն էր մտել։ Երազում տեսնում էր քուրսին։ Պապը նստած է քուրսու

տակին ու նամակը կարդում։ Քուրսում մօտ, պոչը թափ տալով,
կանգնած է Զալօն ու ականջ է դնում։

Ինչից ստիպած Վանին այդպիսի նամակ զբեց իր պապին։ Պա-
պը կարո՞ղ էր ստանալ Վանիի նամակը և նրա հնովիրը կատարել եւ
ինչո՞ւ։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Յովի. Թումանեան

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Երանց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քէփ են անում
Եւ ուրախանում
Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը
Գիւղի տէրեր:

Մենք, առոյդ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաբաց կանգնած,
Զեռքերս խոնահ սրաներիս դրած,
Զիլ, ուժեղ ձայնով նրանց սպասում,
Տաղ էինք ասում։

Ելք գւարթաձայն մեր երգը լոեց,
Մոայլ թամադէն բեկներն ոլորեց,
Նրա հետ վերցրին լիք բաժակները
Քոլոր մեծերը
Ու մեզ օքնեցին. — Ապրէք, երկխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զւարթ երգերը վշտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

Խաղաղութիւն ձեզ, մեր անբաղդ պապեր,
Զեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել.
Այժմ տխրութեան, թէ քէփի ժամին
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Զեր խօսքն ենք ասում.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

Բացատրեցէք ինչո՞ւմն է կայանում հին օրհնութեան միտքը.

ՓՈՔՐԻԿ ՀԻՒԾՆԴԱՊԱՀԼ

(Համ Դ. Ամիչիսի)

Յովհ. Արաբաջեան

ա.

Անձրևային մի օր՝ մի գիւղացի տղայ, թրջւած ու ցեխոտած, մօտեցաւ քաղաքային հիւանդանոցի գոնապանին և մի նամակ տւեց։ Մանուկը ոտքով եկել էր մի ինչ որ հեռաւոր գիւղց։ Նրա հայրը, մի տարի առաջ զնացած լինելով հեռու երկիր աշխատելու վերադարձել էր հայրենիք, բայց այս քաղաքը հասնելուն պէս՝ յանկարծակի հիւանդացել էր։ Նա հագիւ կարողացել էր մի երկու տող գրել տուն՝ հազորդելով իր վերադարձի և հիւանդանոց մտնելու մասին։ Այս լուրը սաստիկ վշտացրեց նրա կողը, սակայն ինքն անձամբ չկարողանալով գալ ամուսնուն տեսնելու, իր մեծ որդուն ուղարկեց հօրը ինսամբ տանելու։

Նամակն աչքից անցկացնելով գոնապանը կանչեց հիւանդանոցի ծառայողներից մէկին և ասաց, որ մանուկին հօր մօտ տանի։

— Ավ է հայրդ, — հարցը եց ծառայողը:
 Մանուկը երկիւղից դողողալով, թէ չլինի հօր մասին մի
 շատ տխուր լուր լուէ, յայտնեց նրա անունը:
 Ծառայողն այդպիսի անուն չէր յիշում:
 — Հեռւից եկած մի ծեր բանւո՞ր է, — հարցը եց նա նորից:
 — Այն, բանւոր է, — պատասխանեց մանուկն աւելի ևս յուզուծ
 ձայնով, — բայց այնքան էլ ծեր չէ: Հեռւից էլ եկած է:
 — Երբ է հիւանդանոց մտել:
 Մանուկը նայեց նամակին:
 — Կարծեմ, հինգ օր առաջ:
 Ծառայողը քիչ մտածեց, ապա, կարծես մտարերելով՝ ասաց
 յանկարծ.
 — Հա, հա, յիշեցի. չորրորդ սրահումն է պարկած. արի յե-
 տեիցս:

P.

Այն սենեակը, որտեղ պարկած էր հիւանդը, կիսախաւար էր
 և գեղեցի ծանր հոտով լցւած:
 Սենեակի ամենավերջին ծայրը համնելով՝ ծառայողը կանգ
 առաւ հիւանդներից մէկի մօտ և առաց.
 — Ահա քո հայրը:
 Մանուկն հեկեկալով գլուխը դրեց հիւանդի ուսին և բռնեց
 վերմակի վրայ անշարժ ընկած ձեռքը: Բայց հիւանդը տեղից
 չշարժւեց:

Տղան վեր կացաւ, նայեց հօրը և նորից արտասւեց:

Այն ժամանակ հիւանդը բաց արաւ աչքերը և մի երկար հայ-
 եացը զցեց մանուկի վրայ, կարծես ճանաշեց նրան. սակայն
 շրթունքները չշարժւեցին: Խեղճ հայրիկ, ինչպէս փոխւել էր նա:
 Դժւար էր ճանաշել անդամ: Մազերը բոլորովին ճերմակել էին,
 մօրուքը չափից դուրս երկարել, երեսն ուռել ու մուգ-կարմիք
 գոյն ստացել, կաշին ձգւել, աչքերը խորն ընկել և շրթունքները
 հաստացել, այնպէս որ դէմքը բոլորովին անճանաչելի էր դար-
 ձել. ճակատն ու յօնքերն էին միայն, որ մնացել էին անփոփոխ:

— Հայրիկ, սիրելի հայրիկ, — կանչում էր մանուկը, — ես եմ, քո որդին: Միթէ ինձ չես ճանաչում: Գիւղից եմ գալիս. մայրիկն ուղարկեց ինձ: Լաւ նայիր: Միթէ չես ճանաչում ինձ, դոնէ մի խօսք ասա:

Հիւանդը բաց արաւ աչքերը, լուռ նայեց նրան ու նորից փակեց:

— Հայրիկ, ի՞նչ եղաւ քեզ: Ես եմ, ես, քո որդին:

Հիւանդը շշարժւեց անդամ և դժւարութեամբ էր շունչ քաշում:

Այն ժամանակ տղան դառն հեկեկալով վերցրեց մի աթոռ ու նստեց հօր մօտ, աչքը չեռացնելով նրա դէմքից:

Տխուր մտքերը պատեցին նրան: Մանուկը մտաբերում էր, թէ ինչպէս ճանապարհ գցեցին հօրը, ինչպէս մնաս բարե ասաց նա ամենքին, ինչպէս բոլորը յոյս ունէին, որ բաղդը կրժպայ նրան օտար երկրում. յետոյ, թէ ինչպիսի յուսահատութեան մէջ գցեց հօր նամակը իր խեղճ մայրիկին:

Յանկարծ նա զգաց, որ մի ձեռք թեթև դիպաւ ուսին: Մանուկը ցնցւեց. նրա առաջ կանգնած էր գթութեան քոյրը:

— Ի՞նչպէս է հայրս, — հարցրեց նա իսկոյն:

— Քաջ եղիր, զաւակս, — ասաց քոյրը, — իսկոյն բժիշկը կը գայ:

Ուրիշ ոչինչ չասաց և հեռացաւ:

Կէս ժամից յետոյ զանգակը հնչեց և սենեակը մտաւ գլխաւոր բժիշկն իր օգնականի հետ:

Հէնց որ բժիշկը մօտեցաւ, մանուկը ոտքի կանգնեց ու սկսեց լաց լինել:

Բժիշկը նայեց նրան:

— Սա հիւանդի որդին է, — բացատրեց գթութեան քոյրը, — այսօր առաւօտ է եկել գիւղից:

Այն ժամանակ մանուկը սիրա առաւ և լալագին ձայնով հարցրեց.

— Ի՞նչպէս է հօրս գրութիւնը:

— Մի վախենար, տղաս, — պատասխանեց բժիշկը, ձեռքը նրա ուսին գնելով: — Հօրդ հիւանդութիւնը լուրջ է, բայց դեռ

յոյս կայ: Լաւ խնամիր նրան: Գուցէ քո ներկայութիւնը կօդնէ
հիւանդին:

Դ.

Եւ ահա մանուկի համար սկսեց մի նոր կեանք: Նա դարձաւ իր հօր հիւանդապահը:

Հիւանդը երբեմն հայեցքը դարձնում էր նրան, նայում երկար, բայց երբէք չէր նկատում, թէ ճանաչում էր որդուն: Միայն թէ՝ ծերունին հետզհետէ շուտշուտ և աւելի երկար էր նայում մանուկին: Յուսալով, թէ հայրը լսում է իրան, նա գըգւանքով խօսում էր հետը, պատմում մօր, փոքրիկ քոյրերի մասին. յոյս էր տալիս, որ շուտով միասին կը վերադառնան տուն և իր քնքոյշ ու բիլալիր պատմութիւններով աշխատում էր քաջալերել հիւանդին:

Այսպիսով անցաւ երկրորդ օրը, երրորդը, չորրորդը...

Օրեն անցնում էին, իսկ նա շարունակ նստած էր իր հիւանդ հայրիկի մօտ՝ ուշաղիք և զգայուն դէպի նրա ամեն մի շարժմունքը, աչք չհեռացնելով նրանից:

Հինգերորդ օրն յանկարծ հիւանդի գրութիւնը վատացաւ: Բժիշկը եկաւ, նայեց և միայն շարժեց գլուխը, կարծես ուզում էր ասել, թէ ամեն ինչ վերջացել է: Մանուկն ընկաւ աթոռին և հեկեկաց: Սակայն մի բան միմիթարում էր նրան. թւում էր, թէ հիւանդի գիտակցութիւնը վերադառնում է: Նա այժմ ուշիւշով և քնքշաբար էր նայում մանուկին և նրանից էր միայն խմիչք կամ դեղ ընդունում. այժմ յաճախ շարժում էր շրթունքները, կարծես մի բան էր ուզում ասել: Այն ժամանակ որդին, իվ յուսով, բռնում էր նրա ձեռքը և ուրախ շշնչում.

Մի քիչ էլ համբերիր, հայրիկ ջան, դու կառողջանաս և մենք կը գնանք տուն, մայրիկի մօտ: Դու կառողջանաս, անշուշտ կառողջանաս...

Դ.

Երեկոյեան ժամը չորսն էր:

Մանուկն, ինչպէս միշտ, նստած էր հիւանդի մօտ, երբ

դուան յետեկից ինչ որ քայլեր լսւեցին և նրա ականջին հասաւ տղամարդու մի ձայն.

— Յաեսութիւն, բարի քոյրիկ:

Այս ձայնը լսելուն պէս՝ մանուկը վեր թռաւ տեղից և անշուշտ կաղաղակէր, բայց մի ինչ որ բան սաստիկ սեղմեց նրա կոկորդը:

Այդ իսկ բոպէին զթութեան քրոջ հետ սեհեակը մտաւ մի մարդ, ահազին կապոցը կռնատակին:

Մանուկը ճչաց, բայց քարացածի նման մնաց իր տեղում:

Տղամարդը շուռ եկաւ, մի վայրկեան նայեց նրան և բացագանչեց.

— Վայ, զաւակս, — ու վազեց դէպի որդին:

Մանուկը գժւածի նման ընկաւ հօր գիրկը:

Գթութեան քոյրերը, ծառայողները, բժիշկը հաւաքւեցան այստեղ և ապշած նայում էին:

Մանուկն յուզմունքից դեռ ոչ մի խօսք արտասանել չէր կարող:

— Հոգեակս, — բացագանչեց նայրը, համբուրելով որդուն. Ի՞նչպէս է պատահել, որ սխալւել են, — ուրիշ հիւանդի մօտ են բերել քեզ: Մայրիկդ ինձ գրել էր, որ քեզ ուղարկել է ինձ մօտ և ես սաստիկ անհանգիստ էի: Խեղճ զաւակս, վաղմւց է, որ այստեղ ես: Փառք Սատուծոյ, ես արդէն լաւ եմ և հիւանդանցից դուրս եմ գալիս: Ի՞նչպէս է մայրիկդ: Դէհ, գնանք, Ո՞հ, Պատւած իմ, ո՞վ կարող էր կարծել, թէ այսպիսի բան կըպատահի:

Մանուկը գժւարութեամբ մի քանի խօսք շնչաց մօր և քոյրերի մասին:

— Օ՛, որքան ուրախ եմ, — մըմնջաց նա, — որքան երջանիկ: Այս ինչ սարսափելի օրեր էին...

Եւ նա աւելի պինդ փարեց հօրեա՝ ջերմագին համբուրելով նրան, սակայն տեղից չէր շարժում:

— Դէհ, գնանք, — կրկնեց նայրը, — երեկոյեան մենք արդէն տանը կը լինինք: Գնանք:

Մանուկը շուռ եկաւ և հիւանդին նայեց:

— Զե՞ս ուզում գալ, ի՞նչ է, — հայրցրեց հայրը զարմացած։
Մանուկը նորից մի հայեացք գցեց հիւանդի վրայ, որ այդ
բոպէին բաց արաւ աչքերը և նոյնպէս նայեց նրան։

— Ո՞չ, հայրիկ, սպասիր... գիտես... չեմ կարող... Այս ծե-
րունին... արդէն հինգ օր է, որ ես խնամում եմ սրան։ Ես մին-
չև այժմ համոզւած էի, որ այդ գու ես և սիրում էի նրան։
Խեղճը միշտ ինձ է նայում։ Միշտ ես եմ նրան դեղ տալիս, և
այժմ նա չի ուզում, որ ես հեռանամ։ Նրա զրութիւնը շատ
վատ է, քիչ սպասիր, — ես չեմ կարող թողնել նրան։ Զգիտեմ
ինչու, միայն թէ շատ գժւարանում եմ թողնել, հեռանալ... Հայ-
րիկ, թող մնամ այստեղ քիչ էլ։ Տես, ինչպէս է նայում նա ինձ։
Ինձ յայտնի չէ, թէ ով է նա, միայն ուզում է, որ ես մօտենամ։
Տեսնում ես։ Նրան շատ վատ կատ կը լինի մենակ։ Հայրիկ, թող,
մնամ նրա մօտ։

— Այս, քեզ աղայ, — բացագանչեց բժիշկը։
Հայրն հիացմունքով էր նայում որդուն, ապա շուռ եկաւ
դէպի հիւանդը։

— Ի՞վ է սա, — հարցրեց։

— Զեզ նման մի գիւղացի, — պատասխանեց բժիշկը, — նոյնպէս
գիւղից էր եկել և ձեզ հետ միևնուն օրը մտել հիւանդանոց։ Ուշ-
ըը վրան չէր, երբ բերին, և մենք գեռ չգիտենք, թէ ով է. գու-
ցէ նա էլ մի տեղ ընտանիք, զաւակներ ունի։ Շատ կարելի է,
ձեր որդուն իր որդիներից մէկի տեղ է դրել։

Հիւանդը աչքը չէր հեռացնում մանուկից։

Այն ժամանակ հայրն ասաց։

— Կաց այստեղ։ Դու բարի սիրտ ունիս, զաւակս։ Իսկ ես
կըշտապեմ տուն, որ մայրիկդ անհանգիստ չլինի։ Ահա քեզ մի
քիչ էլ փող, կըհարկաւորւի։ Մնաս բարեաւ, թանկագին զաւակս։
Յտեսութիւն։

Ե.

Մանուկը վերադարձաւ հիւանդի մօտ, և երեսում
էր, որ հիւանդը շատ գոհ մնաց դրանից։ Նա նորից սկսեց խնա-
մել ծերունուն առաջւայ պէս. այժմ նա էլ այնպէս լաց չէր լի-

նում, սակայն նոյն խնամքով ու հոգատարութեամբ էր վերաբեր-
ւում դէպի հիւանդը: Այդ գիշեր մանուկը բոլորովին անքուն անց-
կացրեց անկողնի մօտ մինչև լուսաբաց, երբ զթութեան քոյրը
ներս մտաւ սենեակ: Մի հայեացք զցելով հիւանդի վրայ, քոյրն
շտապով դուրս գնաց և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ
հերթափաճ բժշկի և մի ծառայողի հետ:

— Հոգեաբքի մէջ է, — ասաց բժիշկը:

Մանուկը բանեց մահամերձի ձեռքը:

Սա բաց արաւ աչքերը, նայեց մանուկին և նորից փակեց:
Եւ մանուկին այնպէս թւաց, թէ ձեռքը սեղմեց:

— Ձեռքս սեղմեց, — բացագանչեց նա:

Բժիշկը թեքւեց դէպի հիւանդը և ապա ուղղւեց:

— Մեռաւ, — բացագանչեց մանուկը:

— Գնա այժմ, որդիս, — ասաց բժիշկը: — Թո սուրբ գործը
վերջացաւ: Գնա և երջանիկ եղիր, դու աշխանի ևս բաղդաւոր
լինելու: Թող Աստուծոյ աչքը պահապան լինի քեզ: Գնաս բա-
րեաւ:

Սենեակից դուրս գնալիս՝ մանուկը շուռ եկաւ դէպի ծերու-
նու անկողինը և ասաց.

— Մնաս բարե...

Եւ մինչև մի յարմար անուն կըգտնէր նրան տալու, տղան
յիշեց այն քնքուշ անունը, որ տալիս էր ծերունուն հինգ օր շա-
րունակ՝ և աւելացրեց.

— Մնաս բարե, սիրելի հայրեկ:

Ինչի՞ց ստիպած մանուկը չգնաց հօր հետ: Լա՞ւ վարւեց մանուկը
և ինչո՞ւ ի՞նչպէս կըվարւէիր դուք:

Մ Ա Յ Ի Կ Ս

Ա. Խանակեան

Հայրենիքէս հեռացել եմ,

Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ.

Ազիզ մօրէս բաժանւել եմ,

Տիսուր, տրտում, քուն չունիմ:



Ա. Իսահակիսան

ԼԱՅ, ՊԱՌԱՒԻ, ԼԱՅ...

Ա. Անարքոնեան

Նրա որդուն տանում են այսօր։ Հեռու, հեռու տեղ են տանում պառաւի որդուն։

Յանցաւնը է արգեօք այդ որդին, թէ ոչ, մօր ի՞նչ պէտքն է. դատապարտւածը՝ այն ջանէլ, սիրուն, թիկնաւէտ տղամարդը՝ իր որդին է, իր արգանդի ծնունդը և նրան տանում են այսօր, տանում են ընդմիշտ, անդաբձ։

Եւ մայրը զնում է որդուն տհանելու վերջին անգամ. զնում է նրա պատկերը մի յետին փորձով իր աղօտ, մթագնած երեակայութեան մէջ պարփակելու, որպէսզի նրա հետ միասին շուտով

Սարէն կուգաք, հախշուն հաւքեր,
Ա՛խ, իմ մօրս տեսէլ էք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Արդեօք բարև բերէլ էք։

Հաւք ու հովեր եկան, կշտիս
Անձէն դիպան ու անցան,
Պապակ սրտիս, փափագ սրտիս
Անխօս դիպան ու անցան։

Ա՛խ, քու տեսքին, անուշ լեզւին
կարօտցել եմ, մայրիկ ջան.
Երնէկ, երնէկ երազ լինիմ,
Թռչիմ մօտդ, մայրիկ ջան։

Երբ քունդ գայ՝ լուռ գիշերով
Հոգիդ գրկեմ, համբոյը տամ,
Սրտիդ կպնեմ վառ կարօտով,
Լամ ու ինդամ, մայրիկ ջան։

հող մանի: Բանդը հեռու է, ոտքով գնալ չի կարող. կառքը թանկ արժէ, բայց նա սեղմած ունի իր ոսկրացրած, դողոչիւն ձեռքում կեղտոտ շորի մի հանդոյց, որի մէջը հինդ կոպէկ կայ, ուղիղ ինչ: Այդքանով նա կարող է բանդի դուռը հասնել, միայն հարկաւոր է քայլել մինչեւ ձիաքտրշը:

Քայլելու համար ռարածութիւնը մեծ չէ, բայց վշտից ու տարիների ծանրութիւնից փշրւած կնոջ համար անհուն է: Երկուտակ ծալւած այն ոսկրակոյտը ահազին բեռ է նրա մաշւած, դողոջիւն ոտների համար: Եւ յետոյ աշքերը լաւ չեն տեսնում և փողոցը ազատ չէ, անցուղարձը անվերջ. քանի կառքերից պէտք է խոյս տալ, քանի տեղ պատերից պէտք է բռնել, քարերը, աղիւսները չանգուելով՝ վայր ընկնելու համար:

Քաղաքային տան վրայ ժամացոյցը խփեց. կինը կանգնեց մայթի վրայ, յենւեց պատին, լայն շունչ առաւ և համարում է զարկերը՝ մէկ, երկու, երեք, չորս... զարկերը համր են, զօղանջը որոշ ու երկար, նա կարողանում է հետեւ, թիւն իմանալ. խփեց ուղիղ տասն անգամ. ժամը տասն է: Տասն է... նրան տանում են տասնըմէկին: Զիաքարշին դեռ չի հասել: Ե՞րբ կըհանի... Նա ոյժ տւեց իր ոտներին, խղճուկ, անոյժ ոտներին: Նա այժմ աւելի արագ է երերջնում իր գլուխը, զարկւում է սրան նրան, օրհնում է մեղմիւ, երբ արգելում են առաջ գնալ: Զէ որ նա մայր է, գնում է հարազատ որդուն տեսնելու և այն... վերջին անգամ. ինչպէս չեն հասկանում անողորմները, մտածում է դառնութեամբ,

Ժամը խփեց տասն ու կէս: Մհաց միայն կէս ժամ: Նրա սիրտը ճմլւեց ցաւով. — Տէր Ասուած, կըհաննեմ արգեօք, չտանեն... նրան...

Հինդ կոպէկն աւելի պինդ սղմւեց չորացած մատների մէջ, ձեռնափայտն աւելի արագ դողոջողաց, խղճուկ ոտներին էլի ոյժ տւեց, վերջին ոյժը. շարժւում, թպրաւում է վիրաւոր թոչնի պէս. պէտք է հասնել: Երկու անգամ նրա քաշ ընկած գլխին այնպէս դիպան, որ նա գուրս ընկաւ մայթ'ց քարերի վրայ, բայց էլի գնաց:

Ահա և հրապարակը վերջապէս... ձիաքարշին սպասող բազ-

մութիւնը շատ մեծ է. ուր են գնում, միթէ ամենքն էլ բան-
գում որդի ունին, որին տանում են այսօր։ Ո՞վ գիտէ, թէ ով
ուր և ինչու է գնում. երկնքի պէս մռայլ են որտերը, թէ բա-
նաս՝ մի անդունդ, խորքը նայեա սարսափի... Սպասում են,
պէտք է գնան, տեղ կը լիլինի... Բայց նա մայր է. գնում է որ-
դուն տեսնելու, տարագլւող որդուն, և այն վերջին անդամ.
տեղ պէտք է լինի... Պառաւը երերալով հասաւ ու կանգնեց
գծին մօտ, բոլորովին մօտ։ Թէ կուզ տասը տակ տրորեն, նա չի
հեռանայ, չի կարող հեռանալ, պէտք է տեղ բռնէ, որտեղից է
եկել և ուր է գնում։

Լուեց զանգակի ձայնը. ձիաքարշը հասաւ։ Ծեր կինը որտա-
րուի, գողգողակով տուաջ շարժւեց. բայց բազմութիւնը նոյն-
պէս իրար անցաւ. Նոյն տենդու, չարացած ամքոխը, որ իր
տեկն է ուզում։ Հրճում, տրորում են իրար, ջլուտ, հուժկու-
ման կան, որոնք պինդ բռնել են կառքի սիւներից, ուժեղ ոտներ
կան, որոնք հաստատ յենել են աստիճաններին, խառնւել, գա-
լարւել են միմիկեանց բոլոր ձգւած բազուկները, բոլոր մեկնւած
ոտները։ Մարմինների այդ ժխորի մէջ պառաւ կինը մի վայր-
կենում կորաւ, ոչ ոք չլսեց ամբոխի այլանգակ զանգւածի
տակից հնչւող ցաւոս նըլոցները, ոչ ոք չնկատեց այն սե,
կենդանի կոյտը, որ կարծես յանկարծ լուծւեց ոտների տակ,
շաղախւեց գետնի թանձը ցեխին։

Զանգը հնչեց կրկին. կառքը շարժւեց, հրապարակը բաց-
ւեց և նրա գորշ մակերեսոյթի վրայ ընկած էր պառաւ կինը՝ աջ
ձեռքով բարձր բռնած իր հինգ կոպէկը, ձախով յենւած ցեխոս
կառքին, նայում էր նրա վրայ տարւող բազմութեանը, այն հաստ
բռունցքներին, այն անողորմ, կատաղի դէմքերին, ւժեղ թի-
կունքներին։

— Գնաց... տարան... էլ չեմ տեսնի... տարան, մըմնջում էր
նա ցաւագնօրէն։

— Ի՞նչը տարան, անխելք պառաւ, — ձայն տւին նրան այս ու
այն կողմից, կարծելով, թէ նրա բացագանչութիւնը ուղղւած է
հեռացող ձիաքարշին։

— Վեր կաց, — ասաց մօտեցու ոստիկանը. — շուտով միւսը կը-
դայ՝ կերթաս:

Ծեր կինը դրդողալով վեր կացաւ, քաշւեց մի սլատի տակ,
ընկաւ թուլացած և լուռ լալիս էր իր ծերութիւնը, խեղճութիւնն
ու անզօրութիւնը, լալիս էր իր անարգւած, բիրտ բռունչքների
ու ոսների տակ արորւած վիշտը, որ էլ ոյժ չունէր:

— Տուրան... տարան..., մըմնջում էր նա և ամբոխը նայում
էր քարասիրտ ու անտարբեր...

Միւնոյն ժամին բանդի բակում գունատ ու մռայլ երխա-
սարդը իր շուրջը նայեց, այցելուների մէջ փնտրում էր մէկին.
իզնը, դէմքերն օտար էին... մայրը չկար: Յուսահատ ու խոր-
տակւած՝ նա զլուխը քաշ ձգեց կրծքին և երկու կաթիլ արցունք
կախւեցին արտևանունքներից և սողացին մաշւած այտերից վար:
Երիտասարդը շղթայւած դոյգ դաստակները մի փոքր բարձրա-
ցրեց, դէմքը կռացրեց ու սրբեց արցունքը և էլ վեր չնայեց:
Շղթաները շառաչեցին՝ զըրընդ, զըրընդ, և տարագրւող խում-
բը թաղման թափօրով դուրս եկաւ երկաթէ դռնից ու լուծւեց
մշտւշի մէջ... հեռու, հեռու տեղ էին գնում և այն հրապա-
րակում, պատի տակ կծկւած՝ դեռ լալիս է պառաւ մայրը. ձիա-
քարչները գալիս, անցնում էին իրար յետեկից, բայց նա անշարժ
էր իր տեղում, նրանցից և ոչ մէկը չէր կարող նրան հասցնել
իր զաւակին:

Լալիս էր դժբաղդ մայրը իր որդու համար միայն. բայց
չկար մէկը, որ լաց լինէր այն բիրտ բռունքների, այն քար
սրտերի, այն խեղող, անլոյս երկնքի համար, որ խղճերի վրայ
ձգել էր մահու ստեր:

Լաց, պառաւ, լաց այդ ամենի համար:

Նկարագրեցէր մօր եւ որդու հոգեկան դրութիւնը.

ԲԼԲՈՒԵԼԻՆ ասեաբ-քանոյ ամ դա և առ զա բազայ մազմա
զա չո շըյս ըցիկըն վրայ դո սիրակ պՇ Կորղինեան յու^Շ
լիմանդ զայդ աշի զգմատապայտ ըցիկու նունիթաց դէ
և առանա դէ իս Արի, բլբնւլ, մէկ տեղ նստենք, իստ միջ նազմա
մզմի և ով Զէն-ձէնի տանք ու երգենք. նուսաբրան մամերաց
շափ նրան իս օրւանից դառնանք ընկեր, այ վճառ ըմբեն և
իրար խառնենք մեր ցաւերտ մժմնենա դո առանու
միմ առյանա

Անցաւ գարուն, աշուն կուգայ, և լու զայրան
Շատ հեռու չէ և ձմեռ,
Լաց, ընկեր ջան, էլ վարդ չկայ,
Թուփը մնաց կիսամեռ:

Երդենք, ընկեր, ցաւը երգենք — լոյց ոմք
Դու՝ քո մեռած ալ վարդի, մատ հայ սատ է զայր
Երգենք, ընկեր, ցաւը երգենք — մամերաց
Ես՝ իմ աւեր վաթանի...

Անցաւ գարուն, արնոտ գարուն, զույ ոան
Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ,
Ախ, ախպերս մնաց անտուն,
Քոյրս քաղցից կիսամեռ...

Սրի, բլբնւլ ցաւը երգենք
վարդի, աւեր վաթանի.
Սրի, ընկեր, իրար խառնենք
Մըմուռ ցաւը մեր սրտի...

Սրմուռ ցաւը մեր սրտի ամ
այս և պացուսի պայրաց զամ պայդաց միջի
և բաց ըսպաւաց ամ պայքան պայտաց զաման
ԽՈԼԻՑԻ ԴԱՏԱՍՑԱՆ

Հարուն-ալ-Ռաշիդի թագաւորութեան ժամանակ Բաղդատում
ապրում էր մի անւանի ասիրիչ Ալի Սաղկալ անունով: Բաղդա-
տում մարդ չկար, որ նրա մուշտարին չինէր, և նրա գործն

այնքան յաջող էր գնում, որ նա կամաց-կամաց սկսեց հպարտա-նալ ու գոռոզանալ, այնպէս որ բացի բէգերից, ուրիշ ոչ ոքի չէր ցանկանում սափրել։ Փայտահատները միշտ իրանց բեռները բերում էին ծախելու այս սափրիչին, որ լաւ գնով էր առնում, որովհետև Բաղդատում փայտը շատ սակաւ և թանգ էր, և ինքն էլ ամենից աւելի կարիք ունէր փայտի։ Մի օր մի խեղճ փայտահատ, որ ամենին ծանօթ չէր Ալի Սաղկալի բնաւորութեանը, իր էջի վրայ բարձած մի բեռը փայտ բերեց նրան ծախելու։ Ալի Սաղկալը մի գին նշանակեց հետևեալ խօսքերով։

— Այս գինը տալիս եմ էջի վրայի բոլոր փայտի համար։

Փայտահատը համաձայնեց, բեռը վայր ձգեց և պահանջեց խոստացած ռինը։

— Դեռ բոլոր փայտը վայր չես ձգել, — ասաց սափրիչը. — դու պէտք է տաս ինձ նաև համետը (համետը շինւած է լինում փայտից), որովհետև մենք այդպէս պայմանաւորւեցինք։

— Այդ ինչ ես ասում, — ասաց փայտահատը շւարած։ — Ե՞րբ է տեսնել այսպիսի առետուր։ Ոչ, այդ անկարելի բան է։

Շատ խօսքերի փոխանակութիւնից յետոյ սափրիչը բռնի կերպով վերցրեց համետը էջի վրայից և հեռացրեց խեղճ գիւղացի փայտահատին։

Անձարացած՝ գիւղացին ունաց դատաւորի մօտ և գանգատեց սափրիչի դէմ. սակայն գժբաղդաբար այդ դատաւորը Ալի Սաղկալի մուշտարիներից մէկը լինելով՝ չուզեց լսել նրա գանգատը։ Նա դիմեց բարձրագոյն դատարանին, սակայն այնտեղի դատաւորն էլ պաշտպանեց սափրիչին։ Գիւղացին չյուսահատւեց։ Նա իսկոյն գնաց գըագըի մօտ և գըել տեղ մի խնդրագիր խալիֆին ներկայացնելու համար։ Խնդրագիրը մատուցւեց, և փայտահատը կանչւեց խալիֆի մօտ։ Երբ նա ներկայացաւ, չորեց և համբուրեց գետինը. յետոյ կանգնեց, ուսները զոյգ, ձեռները մեկնած դէպի խալիֆը, ամբողջ մարմինը ծածկւած իր վերարկուի տակ, անհամբեր սպասեց նրանից վճիռ ստամալու։

— Բարեկամ, — ասաց խալիֆը, — պայմանները պէտք է անպատճառ պահւեն։ Դու համաձայնել ես սափրիչին տալ էջի վրայի

ամբողջ փայտը, և նա յանցաւոր չէ, եթէ վերցրել է համետը, բայց...

Խալիֆը խօսքն ընդհատեց և գիւղացուն իր մօտ կանչելով՝ մի ինչ որ բան փափսաց նրա ականջին և հեռացրեց նրան:

Գիտէք, ինչ ասաց խալիֆը փայտահատի ականջին: Նա յայտնեց նրան, թէ ինչ միջոցով կարելի կըլինէր պատժել սափրիչին և բաւարարել իրան:

Մի քանի օրից յետոյ գիւղացին, գնալով Ալի Սաղկալի խանութը իր էշի երասանից բռնած՝ խնդրեց նրանից սափրել իրան և իր ընկերին: Սափրիչը որոշեց մի վճար, և գիւղացին համաձայնեց: Նա սկսեց սափրել նրան: Երբ վերջացրեց, ասաց գիւղացուն:

— Շնուտ արա, ուր է ընկերդ, դէ, ասա, շուտ ներս գայ:

— Ընկերու դուրսն է, — ասաց գիւղացին, — այս ըոպէիս ես ներս կըբերեմ նրան:

Նա դուրս գնաց և իր էշի երասանից բռնած ներս մտաւ՝ ասելով.

— Ահա իմ ընկերը. դու պիտի սափրես սրան էլ:

— Սափրեմ դրան էլ, — դուռաց սափրիչը, — բաւական չէ, որ ես զիջել եմ քեզ պէս մի մարդու սափրել, դու համարձակուում ես խնդրել ինձանից սափրել և քո էշին: Կորիք, կորիք, եթէ ոչ, երկուսիդ էլ ջհանդամը կուղարկեմ:

Եւ նա դուրս հրեց երկուսին էլ:

Խեղճ փայտահատն անմիջապէս գնաց խալիֆի մօտ և պատմեց եղելութիւնը:

— Շատ լաւ, — ասաց հաւատացեալների պետը: — Այս ըոպէիս ինձ մօտ ըերէք Ալի Սաղկալին իր ածելիներով հանդերձ, — հրամայեց նա իր ծառաներին:

Տասը ըոպէից յետոյ սափրիչը ներկայացաւ:

— Ինչու դու չես սափրում այդ մարդու ընկերին, — հարցրեց խալիֆը. — չէ որ դու համաձայնել ես նրան էլ սափրել:

Ալի Սաղկալը, համբուրելով զետինը՝ ասաց.

— Ո՞վ խալիֆ, ճշմարիտ է, որ ես համաձայնել եմ, սակայն ով կարող էր երևակայել, թէ սրա ընկերը մի էշ է:

— Դու լաւ ես ասում, — ասաց խալիքը — բայց ես էլ ողիսի
քեզանից հարցնեմ, թէ երբ է լաւել կամ տեսնել, որ փայտ
գնողը իրաւունք ունի էշի համետն էլ վերցնել, որպէս զնած
փայտի մի մասը։ Ոչ, ոչ, աղա սափրիչ, այժմ այս խեղճ գիւ-
ղացու հերթն է, և ես հրամայում եմ քեզ անմիջապէս սափրել
էշին, եթէ ոչ, դու գիտես՝ ինչ կըդայ զիմիդ։

Սափրիչը պարտաւորեց պատրաստել մի մեծ ամանով օճա-
ռի փրփուր, որով նա տրուեց էշի ամբողջ մարմինը և սկսեց
սափրել նրան խալիքի և ամբողջ դատորանի տուն՝ յարուցանհ-
լով բոլորի ծիծաղը։

Փայտահատը հեռացաւ մի մեծ ընծայ ստահալով, և ամբողջ
Բաղդատում տարածեց հաւատացեաների պետի արդարագատու-
թեան լուրը։

Ի՞նչ պատճառով Ալի Սաղկալն ոկանց զնուզանալ։ Ի՞նչն էր սափ-
րիչի եւ փայտահատի մէջ ծազած վէճի պատճառը։ Ի՞նչ կերպով
Վրէժինդիր նղաւ փայտահատը։

ԵՐԿՆՔԻՑ ԿԱԽԻԱԾ ՔԱՐ

Աթ. Խնկվանեան



Աթ. Խնկվանեան

Մի օր գոչից հայը Արամագդ.
«Կեսդանիներ, կազմ ու պարաստ,
Ով որ ունի դէմքին արատ
Կամ թէ մի քիչ պակաս-պոատ,
Թող գայ, ասի, իսկոյն ուղիեմ,
Իր ուզածի պէս փոփոխեմ»։

Ներկայացաւ նախ կապիկը,
Մինչի բուկը իր շապիկը։
— Բարի Աստեած, ասու, մի հատ
Գոնէ չունեմ վրան արատ.
Ինձ տեւլ ես համ ձեռ, համ ու,
Չորբուտանի արջին ամօթ։
Գունդ ու կծիկ մաղէ պարլէ,
Խոսի խրձիկ, շատ անկարգ է։

Եկաւ արջը, իրա հանդին
Մի լաւ բօթեց էն կապիկին.

— Այ կարճ շապիկ,
Անխելք կապիկ,

Խօսքը կրասեն իրա տեղին.

Այ, ինչ ասեմ ես այս փղին...
Ականջները լոշտակ-լոշտակ,
Երկու հատը երեք մուշտակ,
Կնձիթն անչափ, պոշը մի մատ,

Աչքերը նեղ՝ կորեկի հատ:

Փիղն էլ եկաւ ծանրավարի,

Կանգնեց, խօսեց փղավարի.

— Կորչի, ասաւ, երկար լոլոզ,

Հաստ ու պոլոզ

Էն կետ ձուկը,

Զրի մուկը:

Հանդէս եկաւ և մի մրջիւն,

Ասաւ. — Ինչ է էն լուն շըջուն,

Պատիկ-մատիկ, վրստ ու վատիկ.

Չափիս ձազն է ու քեսին էլ մուն-մոծակն է,

Ու տեսնելով հայրն Արամազդ,

Որ մի գին է բարակ ու հաստ,

Երկնքից քար կախ արեց,

Ապա դարձաւ յայտարարեց.

— Ով որ իրան չհաւանի,

Քո մեծ բարը գլխին ընկնի:

ԱՐԱՄԱՅԱ ԱՅՆՅՑ

(որո՞ք ա)



ՏԱՐԱՆԱ ԲՈՒԼՎԱՐ

(Ն. Գօգօլ)

Մ. ՌՅԱՆԱՆ

— Հապա մի շուռ արի, որդիս: Պահ, քո տունը շինւի, համա մասնաւրա ևս կառել: Այդ ի՞նչ տէրաէրի կապա է հագներիդ: Տօ, ամենքն էլ այդպէս են հագնում ձեմարանում:

Սյալիսի խօսքերով դիմաւորեց ծերունի Բուլվար իր երկու որդոցը, որոնք սովորում էին Կիևի հոգեոր դըպոցում և եկել էին հօրանց տուն:

Որդիքը նոր էին ձիուց վեր եկել: Նրանք երկու ուժեղ, յաղթանդամ աղէրք էին, որոնք, իբրև նորաւարտ սեմինարիստներ, դեռ ևս անվստահութեամբ՝ աչքի տակով էին մտիկ տալիս: Նրանց առոյգ երեսներին քուսել էր առաջին աղւամազը, որին ածելի դեռ չէր զիպած: Որդիքը խիստ շփոթւեցին հօր այսպիսի ընդունելութիւնից և, աչքերը գետին գցած, անշարժ կանգնած մնացին:

— Կացէք, կացէք, որդիք, թողէք մի լաւ մտիկ տամ ձեզ, — շարունակեց հայրը դէս ու դէն շուռ տալով նրանց. — ի՞նչ երկայն վերարկու է հագներիդ, տօ: Վերարկու եմ ասում, է: Պահ, պահ, աշխարհիս երեսին այդպիսի վերարկու իսկի չի եղել դեռ: Հապա, մէկդ ու մէկդ մի վագէք, տեսնեմ՝ փէշերիդ մէջ չէք փաթաթւիլ ու գետին թրմփալ:

— Մի ծիծաղիր, մի, ափու, — ասաց վերջապէս մեծ որդին:

— Բա, սրան տես ի՞նչ մեծ-սրտանին է եղել. ի՞նչի՞ չպիտի ծիծաղեմ որ...

— Հենց այնպէս: Շատ էլ հայր ես, բայց որ վրաս ծիծաղես, Աստւած վկայ, կըթակեմ...

— Այ քո ըսենց-ընենցը, ի՞նչպէս, հօրդ, — ասաց Տարասը, ապշած մի քանի քայլ յետ յետ գնալով:



Ն. ԳՕԳՕԼ
ՏԵՂԻ

— Հա, թէկուզ հէնց հօրս, Որ ինձ վիրաւորեն, էլ մտիկ չեմ
տալ, ոչոքի խաթրը չեմ պահիլ:

— Լաւ, հիմի ինչպէս ես ուղում կռւել հետս, բռունցքով, համ:
— Դէ, ինչով կռւզի լինի:

— Լաւ, արի դէ բռնցքակոիւ տանք, — ասաց Բուլքան, թևե-
րը քշտելով. — ահեսնեմ ինչ մարդ ես բռնցքակուի մէջ:

Եւ հայր ու որդի, երկար ժամանակ իրար երես չտեսած՝
փոխանակ միմեսնց ողջունելու, բռունցքներ էր, որ սկսեցին
հասցնել իրար...

— Հա, շատ լաւ է կռւում, — ասաց Բուլքան, կանգ առնելով,
ես ու իմ հոգին, որ լաւ... Այ այդպէս, — շարունակեց նա, մի քիչ
ուղղելով. — Էլ խօսք չի ուզիլ: Լաւ կազակ դուրս կըդայ: Դէն,
քարով ես եկել, որդիս. հիմա արի՝ մի հանբուրւենք: — Եւ հայր
ու որդի սկսեցին համբուրւել:

— Ապրիս, որդիս, այ հէնց այդպէս պիտի սալջարդ անես
ամեն մարդու, ինչպէս ինձ դնքսեցիր: Զլինի մէկին ձեռքիցդ
բաց թողնես...

Ի՞նչպէս ընդունեց հայրը իր որդոցը: Ի՞նչ նպատակ ունէր հայրը
իր այդ վարժունքով:



ԹԵՒԱԹՎԱՓ ԲԱՌՁԵՆ

(Ուռա. ժողով.)

Աթ. Խնկոյեան

Հուր-կըակն էր, որ հրեղէն բոցով

Այրեց ու մըկեց խոտը լայն դաշտի,

Այրեց ու հասաւ սպիտակ քարին.

Էն քարի վրայ նստած էր բազէն.

Հասաւ, բազէի թերը խանձեց:

Ոտով է շըջում ընդարձակ դաշտով

Էն ջահէլ բազէն, էն ազատ բազէն:

Բազէի շուրջը ագռաւներն եկան,

Ասին. «Բազէ չես, մեզ պէս ազռաւ ես,

Այ ազռաւ, այստեղ ի՞նչու ես եկել:»

Պատասխան տևաւ էն ազատ բաղեն.

— Դուք ի՞նչ էք կոռում, այսկ ազատաներ,

Հերիք կռաւէք, ինձ հերիք ծաղրէք:

Ես կըբուսցնեմ խանձած թերս,

Վեր կըհամբառնամ ես՝ ջահէլ բաղես,

Վեր կըպահնամ ես՝ ջիւան բաղես,

Ու ցած կընետւեմ երկնքից երկիր,

Ցիր ու ցան կանեմ ես՝ ջահէլ բաղես,

Զեր ու երտմը, այսկ ազատաներ:

Ինչի կարելի է նմանեցնել թերաթափ բազէին եւ ազատաների խումբը:



ԿՈՅՐ ՄԱՆՈՒԿԸ

(Վ. Կոբոլենկօ)

Յովհ. Արաբաջեան

ա.

Մի անգամ տասը տարեկան կոյր Պետրոսը, գետակից նչ հեռու, բլրակի վրայ նստած՝ իր շւին էր ածում: Արել մայր մտնելու վրայ էր. օդի մէջ լոռութիւն էր տիրում. արօտից տուն վերադարձող կովերի բառաչն էր միայն, որ հեռւից հանում էր այստեղ: Մանուկը մի կողմ դրեց շւին և թիկն տւեց կանաչապատ բլրին: Նա մի ըոպէ մոռացութեան մէջ ընկաւ, երբ յանկարծ ինչ որ թեթև քայլեր դուրս բերին նրան թմրած զրութիւնից: Պետրոսը դժգոհութեամբ բարձրացաւ տեղից և սկսեց ականջ դնել: Անձանօթ քայլերը կանգ առան բլրակի ներքեր:

— Այ աղայ, — լսեց նա մի փոքրիկ աղջկայ ձայն, — չզիտե՛ս, ով էր շւի ածում այստեղ:

Կոյրը չէր սիրում, երբ խանդարում էին իր առանձնութիւնը: Այդ պատճառով ակնյայտնի դժգոհ ձայնով պատասխանեց:

— Այդ ես էի...

— Ի՞նչ լաւ ես ածում, — ասաց աղջիկը:

Կոյրը չպատասխանեց:

— Ինչու չես հեռանում, — հարցրեց նա յետոյ, համոզւելով՝
որ աղջիկը կանգնած մնում է իր տեղում:

— Ինչու ես վճնտում ինձ, — զարմացած հարցրեց աղջիկը
իր մաքուր և անմեղ ձայնով:

Մանկական այս մեղմ և խաղաղ ձայնի հնչիւնները հաճելի
տպաւորութիւն թողին կոյրի լառութեան վրայ, բայց և այնպէս
առաջւայ նման նա կոսկիտ պատասխանեց.

— Ես չեմ սիրում, երբ մօտո մարդ է գալիս...

Աղջիկը ծիծաղեց:

— Օհօ, տեսէք .. Միթէ ամբողջ աշխարհը քոնն է, և գու կա-

րող ես մարդկանց արգելել, որ ման չգան երկրի երեսին:

— Մայրիկս բոլորին հրամայել է, որ այստեղ ինձ մօտ
չգան...

— Մայրիկդ, — նորից մտախոհ հարցրեց աղջիկը: — Իսկ իմ
մայրիկը թոյլ է տւել ինձ զբօսնել գետակի ափին:

Մանուկն այդպիսի հակածառութիւններ տանել չէր կարող:
Սաստիկ զայրոյթէ խաղաց նրա երեսին: Նա վեր ցատկեց տե-
ղից և արագ ու յուղւած գոչեց.

— Գնա, գնա, կորիր այստեղից:

Յայտնի չէ, թէ ինչով կը վերջանար այս բոլորը, եթէ այդ
միջոցին տանից շլուէր ծտոսյի ձայնը, որ մանուկին թէյի էր
կանչում: Նա արագ արագ իջաւ բլրակից:

— Օհ, ինչ գարշելի տղայ է, — լսեց նա իր յետեկից աղջկայ
զայրացկոտ ձայնը:

Բ.

Յաջորդ օրը, նոյն աեղում նստած՝ Պետրոսը մտաքերեց
երեկուայ դէպքը: Եւ նա յիշեց այդ դէպքն առևէ զայրոյթի:
Ընդհակառակը, մանուկը մինչև անգամ ցանկանում էր, որ այն
մեղմ, դուրեկան ձայնով աղջիկը գայ գարձեալ: Պետրոսն այն-
պիսի գեղեցիկ ձայն գեռ լսած չէր ոչ ոքից: Նրան ծանօթ երե-
պիսի գեղեցիկ ձայն գեռ լսած չէր ոչ ոքից: Նրան ծանօթ երե-
պիսի գեղեցիկ ձայն գեռ լսած չէր ոչ ոքից:

խօսում։ Նա շատ ափսոսաց, որ վշտացը էր այն անծանօթ աղջկան և հաւատացած էր, որ նա էլ երբէք չի կայ մօտը։

Իրաւ, երեք օր աղջիկը չերևաց։ Բայց չորրորդ օրը Պետրոսը լսեց նրա քայլերի ձայնը գետի եզերքին։ Աղջիկը հանդարտ քայլում էր, մեղմիկ ինչ որ երդ երգելով և, ինչպէս երևում էր, առանց ուշադրութիւն գարձնելու նրա վրայ։

— Լսիր, — ձայն տւեց Պետրոսը նրան, զգալով, որ անցնում է մօտից։ — այդ գույն ես։

Սկզբում աղջիկը ոչինչ չպատասխանեց, որովհետեւ նեղացած էր նրա առաջին անսիրալիք հանդիպումից։ Բայց, յանկարծ, կարծես մանուկի հարցի մէջ մի ինչ որ տարօրինակ բան նկատելով՝ նա կանգ առաւ։

— Միթէ ինձ չես տեսնում, որ հարցնում ես, թէ ես եմ, — հարցը նա հպատութեամբ՝ ձեռքի ծաղկեփունջն ուղղելով։

Այդ խօսքերից խեղճ մանուկի սիրտը ճմլւեց։ Առանց պատասխան տալու՝ նա թիկն տւեց կանաչապատ թումբին։ Բայց խօսակցութիւնն արդէն սկսւել էր և աղջիկը, միշտ նոյն տեղում կանգնած՝ իր փնջի հետ խաղալով, հարցը նորից։

— Ո՞վ է քեզ այդպէս լաւ շէի ածել սովորեցը ել։

— Մեր ծառայ Յովանն է սովորեցը ել։

— Հրաշալի ես ածում։ Միայն ինչու դու այդպէս բարկաց-կոտ ես։

— Ես... քեզ վրայ էլ չեմ բարկանում, — հանդարտ խօսեց մանուկը։

— Ե՞ն, դէն, ես էլ նեղացած չեմ քեզանից... Արի, խաղանքի միասին։

— Ես քեզ հետ խաղալ չեմ կարող, — ասաց մանուկը շփոթ-ւած։

— Զես կարող խաղալ... պատճառը։

— Այնպէս։

— Զէ, ախր ինչու։

— Այնպէս, — կը կնեց նա հազիւ լոելի ձայնով և աւելի շե-փոթւած։

Պետրոսը դեռ ոչ ոքի հետ իր կուրութեան մասին խօսած չէր և նրա համար շատ ծանր էր լսել այդ հարցը:

Իսկ աղջիկը դեռ չէր հասկացել, որ նա կոյր է:

— Ի՞նչ ծիծաղելին ես դու, — բացագանչեց նա, նստելով մասուկի մօտ, կանաչի վրայ, — Երկի ինձ հետ չես ուզում խաղալ, քանի որ անծանօթ ես: Այ, կը ճանաչես ինձ և էլ չես վախինայ: Իսկ ես ոչ ոքից չեմ վախենում:

Աղջիկը խօսում էր ուրախ, ժպտադէմ, բոլոր ժամանակ խաղալով իր սիրուն փնջի ծաղիկների հետ:

Գ.

Այդ միջոցին Պետրոսը կամեցաւ ծանօթանալ աղջկայ արտաքինի հետ: Եւ որովհետև այդ բանը նա շօշափելով միայն կարող էր անել, ուստի ձախ ձեռքով բոնելով աղջկայ ուսը՝ աջով սկսեց շօշափել նրա մազերը, ապա աչքերը, երեսը՝ տեղ-տեղ կանգ առնելով և ուշադիր ուսումնասիրելով դէմքի անծանօթ գծերը:

Այս բոլորն այնպէս արագ և անսպասելի կատարւեց, որ զարմացած աղջիկը ոչինչ չկարողացաւ ասել. նա միայն ապշած նայում էր իր լայն բաց արած աչքերով, որոնց մէջ երկիւղ էր նշմարւում: Այժմ միայն նկատեց նա, որ մանուկի երեսին մի ինչ որ արտասովոր բան է նկատւում: Նրա դէմքը լարւած էր, ինչ որ արտաքըրութեամբ, այն ինչ հայեացքը բոլորովին անշարժ ի հետաքըրութեամբ, այն ինչ հայեացքը բայց ոչինչ չէին արէր: Մանուկի աչքերը նայում էին հեռուն, բայց ոչինչ չէին արտայայտում և մայր մանող արեկի փայլը մի տեսուկ անսովոր կերպով ցոլցում էր նրանց մէջ: Աղջիկը վախեցաւ: Իր ուսը աղայի ձեռքից աղատելով՝ նա յանկարծ վեր թռաւ տեղից և ըսկանեց լաց լինել:

— Ի՞նչ ես անում, գարշելի տղայ, — գոչեց նա զայրացած՝ արտասւախառն ձայնով:

Կոյր մանուկը, խորասուզւած իր մտքերի մէջ, գլուխը կախ նստած էր նոյն տեղում: Վշտի և վիրաւորանքի դառն զգացումով լցւած էր նրա սիրաը: Իր կեանքում նա առաջին անդամն էր զգում հաշմանդամի անմիթար վիճակը. առաջին անդամ նա հասկացաւ, որ իր մարմնի պակասութիւնը ոչ միայն կարեկցուած էր:

թիւն, այլ և երկիւղ կարող է ազգել մարդկանց։ Եւ նա չափազանց տանջուռմ էր... Սրաի այրող ցաւից և վիրաւորանքից ընկճւած՝ զգաց նա, որ մի՛ բան սաստիկ սեղմում է կոկորդը և դրժբաղդ մանուկը փուեց գետնին ու լաց եղաւ դառնապէս։ Այդ լացը հետզհետէ սաստկանում էր և ջղային հեկեկանքները ամբողջովին ցնցում էին նրա փոքրիկ մարմինը։

Աղջիկը, որ արդէն արագ քայլերով ցած էր իջել բլրակից, լսեց այդ խոռվ հեծկտանքը և զարմացած շուռ եկաւ. երբ նկատեց, որ այն տարօրինակ տղան երեսնիվալ լնկած՝ զառն արտասուրք է թափում, սաստիկ խղճահարւեց և հանդարտ քայլերով բարձրացաւ բլուրն ու կանգնեց լաց եղող կոյրի հանդէպ։

— Լսիր, — մեղմիկ խօսեց նա, — ինչո՞ւ ես լալիս։ Գուցէ կարծում ես, թէ ես կը գանգատւեմ։ Դէհ, մի լար, ես ոչ ոքի չեմ ասի։

Սակայն նրա այս կարեկից ձայնը լսելով՝ մանուկն աւելի ևս սաստիկ սկսեց լաց լինել։ Այն ժամանակ աղջիկը նստեց նրա կողքին և սկսեց քիչ-քիչ հանգստացնել նրան՝ ձեռքով մազերը շոյելով։ Յետոյ բարձրացրեց նրա գլուխը և իր թաշկինակով բակսեց սրբել արտասուրքները, ինչպէս մի մայր, որ աշխատում է հանգստացնել իր վշացած զաւակին։

— Դէհ, հերիք է, հերիք, — ասում էր նա։ — Ես էլ չեմ բարկանում, տես... Գիտեմ, ո՞ւ էլ ես զգում, որ վախեցրիր ինձ...»

— Ես չէի ուզում քեզ վախեցնել, — ասաց մանուկը խորը հառաչելով, որ հեկեկանքը դադարի։

— Դէհ, լաւ, լաւ։ Ես ներում եմ քեզ, չէ՞ որ էլ չես անի, — ասում էր նա, բարձրացնելով նրան գետնից և աշխատելով իր մօտ նստեցնել։

Մանուկն այժմ նստած էր առաջւայ պէս դէմքը դարձրած դէպի արեր, և երբ աղջիկը նայեց կրկին արեի վարդագոյն ճառագայթներով լուսաւորւած նրա այդ դէմքին, դարձեալ մի ինչ որ արտասովոր բան նկատեց նրա մէջ։ Մանուկի աշքերում դեռ արտասուրքի կաթիւներ էին երկում, բայց այդ աշքերն առաջւայ պէս անշարժ էին. դէմքը շարունակ ցնցում էր մանկական լա-

ցից, բայց միենոյն ժամանակ նրա մէջ նկատելի էր մի ոչ-ման-կական, խորին ու ծանր վիշտ:

— Իրաւ, զրքան ապօրինակն ես զու, — առաց աղջիկը մտա-խոն կարեկցութեամբ:

— Ես ապօրինակ չեմ, — վշտագին պատասխանեց մանուկը:

— Ո՞չ ես ապօրինակ չեմ, ես... ես..., կոյր եմ...

— Կոյր ես... երկարացնելով բացադանչեց աղջիկը և նրա ձայնը դողաց, կարծես մանուկի ասած այդ վշտալի խօսքը մի անբուժելի հարւած իջեցրեց նրա մաստաղ սրակն... — Կոյր ես...

— Կրկնեց նա աւելի ես գողդոջիւն ձայնով և սաստիկ կարեկցու-թիւնից ամբողջովին ցնցւելով՝ նա յանկարծ փարւեց մանուկի պարանոցով և երեսը նրան մօտեցնելով՝ ինքն էլ սկսեց դան ու անմխիթար հեկեկալ...

Բնորդությունը և անունը անդամանության մեջ առաջակացնելու մասին պատճենը անդամանության մեջ առաջակացնելու մասին պատճենը

Սրեն արդէն մայր էր մտնում: Մի վերջին անգամ ես փայ-էց նրա հրեղէն գնդի ոսկեգոյն եզրը, ապա շողաց մի երկու շերմ կայծ, — և նա բոլորովին ծածկւեց հորիզոնի յետեր: Գետա-կի կողմից մի բարակ, սառը զեփիւռ փչեց:

Աղջիկը գաղարեց լաց լինելուց և միայն ժամանակ առ ժա-մանակ խորը հեծեծում էր: Պետրոսը նստած էր գրուխը կախ և կարծես զարմացած փոքրիկ աղջկայ այս սրտագին կարեկցու-թիւնից:

— Ես... խղճում եմ քեզ... հեկեկալով շշնջաց նու վերջապէս:

Քետոյ, քիչ հանգարտւելով՝ աւելացրեց.

— Սրեր մայր մտաւ:

— Ես չփիտեմ, թէ ինչ բան է արեը, — տխուլ պատասխանեց մանուկը: — Ես միայն զգում եմ...

— Զգիտես, ինչ բան է արել?

— Այս:

— Իսկ քո մայրիկին... նո՞յնպէս չփիտես:

— Մայրիկիս զիտեմ: Ես միշտ հեռւից ճանաչում եմ նրա քայլերը:

— Այս, այն, ճշմարիտ ես ասում: Ես էլ փակտած աչքերով
ձանաչում եմ մայրիկիս:

Երեխաներն արդէն սկսել էին հանդարտ խօսակցել:

— Գիտե՞ս, — ասաց կոյրը, — ես զգում եմ արեգակը և գի-
տեմ, թէ երբ մայր մտաւ նա:

— Ինչից գիտես:

— Նրանից որ...այ... ես ինքս էլ չգիտեմ, թէ ինչից:

— Աա, — ձայնեց աղջիկը:

— Ես կարող եմ և կարդալ, — նորից սկսեց Պետրոսը, — և
շուտով գրչով գրել էլ կըսովորեմ:

— Բայց այդ ի՞նչպէս. չէ որ դու... — սկսեց աղջիկը և յան-
կարծ ամաչկոտութեամբ կանգ առաւ, չցանկանալով յիշեցնել
նրան կուրութեան մասին: Բայց մասնուկը հասկացաւ նրա միտքը:

— Ես իմ գրքով եմ կարդում, — բացատրեց նա, — մատներով:

— Մասներով: Ես երբէք մատներով կարդալ չէի կարողանայ:
Ես աչքերով էլ վատ եմ կարդում:

— Ես մինչև անգամ Փրանսերէն էլ կարող եմ կարդալ, —
ասաց կոյրը:

— Որքան խելացի ես դու, — գովեց աղջիկը: — Բայց ես վախե-
նում եմ, թէ դու մըսես: Այ, գետն արդէն մշուշով ծածկեց:

— Հապա գոււ:

— Ես չեմ վախենում: Ինձ ի՞նչ պիտի լինի:

— Ուրեմն ես էլ չեմ վախենում:

— Ո՞վ է քեզ դասեր տալիս, — հարցըրեց աղջիկը:

— Միսաք հօրեղբայրս:

— Գիտեմ, գիտեմ, ես նրան տեսել եմ: Նա քեզ չի խփում:

— Ո՞չ, նա շատ բարեսիրտ մարդ է: Ո՞չ միայն չի խփում,
այլ և չի բղաւում ինձ վրայ:

— Ի՞նչ լաւ է: Միթէ կարելի է խփել կոյր մանուկին: Դա
մեծ մեղք է:

Պետրոսի զգայուն լսողութեանը հասաւ իրանց ծառայի քայ-
լերի ձայնը:

Եւ իրաւ, բլրակի վրայ երևաց ծառան:

— Պարո՞ն, — ձայն տւեց նա:

— Քեզ են կանչում, — ասաց աղջիկը վեր կենալով:
 — Այս, բայց ես չէի ցանկանայ գնալ:
 — Գնա, գնա, ես վաղը դարձեալ կըգամ քեզ մօտ: Քեզ սպա-
 սում են տանը, ինձ էլ նոյնպէս:

Ե.

Աղջիկը ճշտութեամբ կատարեց իր խոստումը: Նա եկաւ
 աւելի վաղ, քան Պետրոսն սպասում էր նրան:
 Հետեւեալ առաւօտ, երբ դեռ Միսաք հօրեղբօր հետ դասերով
 էր զբաղւած, Պետրոսն յանկարծ զլուխը բարձրացրեց, լարեց
 լսողութիւնը և ասաց աշխուժով:

— Թոյլ տւէք մի ըոպէ դուրս գնամ: Այնտեղ մի աղջիկ է
 ինձ հարցնում:
 — Այդ ինչ աղջիկ է, — զարմացաւ հօրեղբայրը և նրա յե-
 տեից դուրս գնայ:

Եւ իրաւ, Պետրոսի երէկւայ ծանօթ աղջիկն այդ իսկ ըոպէ-
 ին ներս մտաւ բագը և տղայի մօրը տեսնելով՝ ուղիղ դիմեց դէ-
 պի նրա կողմը:

— Ի՞նչ ես ուզում, սիրուն աղջիկ, — հարցըց տիկին Աննան,
 կարծելով, թէ մի որևէ զործով նրան ուզարկել են մօտը:

Աղջիկը մեծի պէս ձեռք տւեց նրան և հարցըց:

— Դուք էք այն կոյր մանուկի մայրը, այս:

— Ես եմ սիրելիս, ես, — պատասխանեց տիկին Աննան, հիա-
 ցած նրա սլայծառ աշիկներով և սիրալիր դէմքով:

— Գիտէք ինչ... Մայրիկս ինձ թոյլ տւեց, որ նրա մօտ
 գամ, կարելի է տեսնել նրան:

Այդ ըոպէին Պետրոսն ինքը շտապեց նրա մօտ, իսկ դուն
 մօտ երևաց Միսաք հօրեղբայրը:

— Սա է երէկւայ աղջիկը, մայրիկ, որի մասին քեզ պատ-
 մեցի, — ասաց մանուկը բարեկելով: — Բայց ես դասերով եմ զբաղ-
 ւած:

— Ոչինչ, զաւակս, Միսաք հօրեղբայրդ այսօր քեզ թոյլ կը-
 տայ, — ասաց տիկին Աննան. — Ես ինքս կըխնդրեմ նրան:
 Եւ այդ օրը երեխաները միասին անցկացրին:

Այն օրւամնից այդ փոքրիկ աղջիկը, որի անունն էւելինա էր, շաբունակ գալիս էր Պետրոսի մօտ։ Նրանք զբօնում ու խաղում էին միասին։ Եւ այդ մտերմութիւնը որպիսի միխթարութիւն էր կոյրի համար, և ինչ ուրախութիւն նրա մօրը... Շտառվ էւելինան սկսեց պարապել ծերունի Միսաք։ մօտ Պետրոսի հետ միասին։ Այնուհետև կոյրի գասերն անցնում էին ուրախ և աւելի յաջող։ Կոյրը և նրա բնկերունին ամեն բանսամ օգնում էին իրար և այն ժամանակից ընդմիշա սերա բարեկամներ զարձնեց։

Ի՞նչպէս ծանօթացան կոյր մանուկն ու աղջիկը։ Ի՞նչ տպանը թիւն թողեց աղջկայ վրայ կոյր մանուկի վիճակը։ Ի՞նչպէս էր զանի իրան կոյր մանուկը այդ ծանօթութիւնից յնտոյ եւ ինչո՞ւ։



Ա Շ Ո Ւ Ղ

Յովհ. Յովհաննիսեան

Ասի՞ աշնուղ, առ չունդուրդ,

մեզ բան ասա սրտալի։

Կարօտ ենք քու անուշ ձէնին,

մի բան ասա սրտալի։

Սրտի խօսք ենք ուզում քեզնից,

որ գեր հանի մեր հողին։

Առ չունդուրդ, դարդոտ աշուղ,

մեզ բան ասա սրտալի։

Գիտենք, որ դու միշտ տանջւում ես

հազար ու մի ցաւերով,

Հայրենիքիդ խոր խոցերը

համարում են գարերով։

Չես լւանայ էդ խոցերը

արտասունքի ծովերով։

Առ չունդուրդ, ցաւնտ աշուղ,

մեզ բան ասա վրտալի։

Լուս մնարով մեր գէրքերին

դու չես անիլ գեղ, դարման։



Յ. Յովհաննիսեան

Արար-աշխարք գիտի՝ չկայ
մեր դարդերին չափ, սահման.

Մնջութիւնն էլ նշան հօ չի
մի գովելի յատկութեան:

Առ չունգուրդ, մեզ բան ասա,
թող խօսքդ ըլի ցաւալի:

Եղագէս խօսքեր շատ ենք լսել,
էլ, կըլսենք անտրտունջ:

Մեր չխօսկան ընելուցն է՝
մատել ենք անտէրունջ,

Լաւ է ազատ լաց ընիլլ,
քանց դարդ տանին անմոռունջ.

Ասա՝ լսենք ի՞նչ անհնք որ՝
խօսքդ կընի ողբալի:

Տեսնում ես, որ մենք թմրած ենք,
քունն անուշ է մեզ թւում,

է՞ր ես զու էլ մեզ բոլորիս
մաշող քնիցն յաղթւում:

Առ չունգուրդ, առնըր լարերին,
կըակ վառիք մեր սրտում.

Մեր ամենիս նոր շունչ տւող
մի բան ասա սրտալի:



ԵՐԿՆՔԻ ԶԱՆԳԱԿԱԼ

ին, շատ հին ժամանակներում, երբ ոչ թագաւորներ կային,
ոչ իշխաններ և ոչ դատաւորներ, մարդկանց գործերը քննւում
էին մի մեծ զանգակով, որ կախւած էր երկնքից:

Մարդկի իրանց վէճերի համար գիմում էին այդ զանգակին:
Վկաներ կանչելու սպառութիւնը չկար այն ժամանակներում և

Նար-Դու

զօրութիւն ունէր, որ առանց վկաների ցուցմունքի ինքն էր ամենաճիշտ և ամենաանաշառ կերպով ցոյց տալիս, թէ ով է արդարը, ով մեղաւորը:

Զանգակը կախւած էր մի բնդարձակ դաշտի վրայ: Նրա տակ, գեանից բաւական բարձր, շինւած էր մի բեմ, որի վրայ բարձրանում էին սանդուխքով: Գանգատաւորները միայն իրաւունք ունէին բարձրանալու այդ բեմը, իսկ հանդիսատես ամբոխը կանգնում էր ներքել դաշտի վրայ: Եւ ոչ մի ձայն, ոչ մի շուկ չէր լսում ահազին ամբոխի միջից. զանգակը համարում էր մի սրբութիւն, որ Աստեծ ինքն էր կախել երկնքից՝ չարամիտ մարդկանց անօրէն գործերը քննելու համար:

Գանգատաւորները բարձրանում էին բեմը և փոխնէփոխ բըռնում էին զանգակի լեզւակի թոկից: Նա, ով մեղաւոր էր, բնաւ չէր կարողանում շարժել լեզւակը, իսկ նա, ով արդար էր, հէնց որ բռնում էր թոկից, լեզւակն իսկոյն շարժւում էր և զանգակը զընգընգում էր:

Խօսք չկայ, իհարկէ, որ մարդիկ այդ ժամանակներում շատ սիրով և հաշտ էին ապրում իրար հետ և շատ հազիւ էր պատահում, որ մէկը միւսի հետ որևէ տարածայնութիւն ունենար, որովհետեւ ամենքին էլ յայտնի էր զանգակի հրաշալի զօրութիւնը. ամեքն էլ գիտէին, որ ոչ մի դէպքում մեղաւորն արդար չի դուրս գալ, արդարը—մեղաւոր:

Բայց ինչպէս եղաւ, որ այդ զանգակն այժմ՝ այլ ևս չկայ, ինչպէս եղաւ, որ մարդիկ զրկւեցին մի այդպիսի անաշառ դատաւորից:

Մի անգամ մէկն իր հարեանին փող էր փոխ աւել: Նշանակած ժամանակից յետոյ, երբ նա պահանջեց իր փողը, պարտապանն ասաց, թէ տւել է: Սա թէ՝ «չես տւել», նա թէ՝ «տւել եմ»: — Իէ որ տւել ես, արի, գնանք զանգակի դատաստանին,— ասաց պարտատէրը:

— Գնանք, — ասաց պարտապանը:

Գնացին:

Հետաքրքիր ամբոխը շրջապատել էր զանգակի բեմը: Ամենքըն անհամբեր սպասում էին զանգակի դատաստանին:

Գանգատաւորները բարձրացան բեմը:

Որովհետեւ մեղադրւողը պարտապանն էր, այդ պատճառով առաջ նա պէտք է բոնէր զանգակի թոկից; Նա ձեռքին մի հաստ գաւազան ունէր, զանգակի թոկից բռնելուց առաջ այդ գաւազանը տւեց պարտափրոջը և դարձաւ զանգակին.
— Այ զանգակ, այ անաշառ դատաւոր, դու ասա՝ պարտքս տւել եմ, թէ ոչ:

Եսաց ու բոնեց զանգակի թոկից:

Ու բոնեց թէ չէ, զանգակը զընգղընգաց: Դա նշան էր, որ պարտքը տւած էր:

Պարտատէրը մնաց տեղնուտեղը ցամաքած:

— Դէ, հիմի էլ կասես, թէ չեմ տւել, — ասաց նրան պարտապանը, գաւազանն առաւ նրա ձեռքից և յաղթական կերպով իջաւ բեմից:

Ամբոխը դիմաւորեց նրան ծափերով, իսկ պարտատիրոջն ակուց թքել ու մրել, որ պարտքը ստանալուց յետոյ չէր ամաչել զանգակի դատաստանին դիմելու:

Բայց այստեղ մի հրաշք կատարւեց. զանգակը լեզու առաւ և սկսեց խօսել ահաւոր ձայնով:

— Դուք, մարդիկ, — ասաց նա, — լսեցէք ինձ: Այսքան ժամանակ ես ձեր դատաւորն եմ և երբէք չի պատահել, որ անարդար դատաստան անեմ: Բայց իմ այսօրւայ դատաստանն անարդար էր, որովհետև ձեզանից մէկն յանդգնեց խարել ինձ: Նա իր պարտքը չէր վճարել, բայց որպէսզի իմ առաջ արդար դուրս գայ, տեսէք՝ թէ ինչ խորամանկութեան էր դիմել. փորել էր ձեռքի գաւազանը, փորւածքի մէջ լցրել էր պարտք վեցրած փողերը և երբ եկաւ, որ լեզւակիս թոկից բռնի՝ գաւազանը տւեց պարտատիրոջ ձեռքը: Այդ բոպէին յիրաւի որ պարտք վեցրած փողերը տւել էր պարտատիրոջը, և ես չէի կարող իմ զանգահարումով շյայտարարել, որ պարտքը տւել է: Բայց յետոյ ինչ արաւ նա, — պարտատիրոջից յետ առաւ իր գաւազանը մէջն ածած փողերով և դեռ ձեզնից ծափեր էլ ստացաւ, իսկ խեղա արդար պարտատէրը ձեր կողմից թուք ու մրի արժանացաւ: Դուք, մարդիկ, լսեցէք ինձ: Օրինակը վարակիչ է. այսօր ձեզանից մէկը խարեց ինձ, վաղը նրան հետեւելով՝ միւսը կըխարի, երբորդ

օրը՝ մի ուրիշը և այսպէս անկերջ։ Որ այդպէս է, դուք արժանի չէք ինձ պէս անաշառ գատաւորի. գնացէք, այսուհետեւ գատեցէք դուք ինքնելող ձեզ, և թող ձեր մարդկային գատաստանը միշտ անարդար լինի։

Սաաց զանգակն ու ահագին դզրդիւնով թռաւ երկինք։

Ինչո՞ւ մարդիկ զանգի դատաստանին էին դիմում. Ի՞նչն ստիւլեց զանգին դադարել դատաւոր լինելուց։

Հ Բ Ե Շ Տ Ա Կ

(Մ. Լերմոնտով)

Ա. Շատուրեան

Կէս գիշերին անհուն երկնքում
Հրեշտակ էր թռչում և մեղմիկ երգում.
Եւ լուսին, աստղեր, ամպեր, խմբովին
Սրբազն այդ երգը լուռ լսում էին:

Երգում էր նա բաղդ և երջանկութիւն
Եղեմում ապրող սուրբ ողիների.

Երգում էր գովեստ նա Տէր-Աստրծուն,
Եւ այդ գովեստն էր անկեղծ, սրտալի։

Մատաղ էակ էր նա գրկին տանում
Երկրային վշտի, արցունքի համար.
Եւ երգն հրեշտակի այդ մատաղ սրտում
Մնաց կենդանի, թէպէտ անբարբառ։



Եւ երկրիս վրայ, լեցուն փափագով,
Երկար տառապեց այն մատաղ հոգին.
Բայց նրան երկիրն իր տիտուր երգով
Զփոխարինեց երգը երկնային։

ԿՈՐՍԻԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Վ. Փափազեան

Մի անգամ Արդարութիւնը անհետացաւ յանկարծ:

Ասենք, նա յաճախ էր կորսում:

Խուսափելով իրան ծիւրող, պատն ի պատ խփող, Ակող անձերից, յաճախ նա փախչում էր լեռները, պահուում աշխարհիս հեռաւոր անիլիւններում: Բայց ամեն անգամ, այսպէս կամ այնպէս, յաջողուում էր նրան գտնել, բռնել, վանդակի կամ սնդուկի մէջ գնել, ուզածին պէս գործածել... չարչարել:

Այս անգամ սակայն, չգիտեմ ի՞նչ հարքով, Արդարութեանը յաջողեց լաւ անհետանալ, այնպէս լաւ թագուեց, որ մարդիկ աղօթքով, եզւիտութեամբ, ուժով կամ ոսկով իսկ անկարող եղան նրան գտնելու:

Սկսեց մի իրարանցում: Առանց Արդարութեան դժւար էր ապրել. մասաւանդ, որ նրա անհետանալով, բազմանում էին մարդկութեան «օգտակար» շատ հաստատութիւններ և շատ աղտոտութիւններ, որպիսիք են, կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խարեւութիւն, արիւնհեղութիւն և այդպիսի շատ այլ թոյներ, որոնց այնքան լաւ

գիմակաւորում էր Արդարութիւնը:

Եւ ահա Արդարութեանը փնտուելու ելաւ մի պատերազմիկ ազնւական: Շատ զօրք ժողովեց, վաշտ ու գունդ կազմեց և երդւեց, որ Արդարութիւնը որ ծակը մտած լինէր, պիտի հանէր, ձեռքն ու ոտքը կապած պիտի մէջ տեղ բերէր:

Այդ պատճառով իսկ, ոտնակոխ տալով նա գիւղ ու քաղաք, արիւն սփռելով գաշտ ու ձոր, տակն ու վրայ արեց ամեն բնակութիւն, և այդպէս առաջ էր գնում, յուսալով բռնել Արդարութիւնը:



Նրանից յետոյ ճանապարհ ընկաւ Արդարութիւնը որոնելու մի շատ հարուստ մեծատուն: Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարանք բարձեց ուղտերի և վստահ իր ոսկու վրայ, անից գուրս եկաւ: Ասում են, որ մի քանի հատ էլ սիրուն կանայք վերցրեց, որ ոսկու փայլի վրայ գեղեցկութեան հրապոյրն էլ աւելացնի:

— Կըտեսնէք, պնդում էր նա. Արդարութիւնը ոսկովս պիտի գնեմ, կանանցով պիտի գրաւեմ, և մնդուկիս մէջ դրած՝ պիտի մէջ տեղ բերեմ:

Այդպէս էր ահա, որ բռունցքն ու ոսկին գնացին Արդարութիւնը որոնելու...

Թոռդ գնան:

Տեսնենք այժմ, թէ ով էր այն երրորդ անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիք հազին, ճակատը վշտերով խոր-խոր ակօսած, մտածեց երնել Արդարութիւնը որոնելու:

Ասէնք՝ ազնւականը սուր ունէր, հարուստը՝ ոսկի, իսկ սա բնչ ունէր, ինչով պիտի գտնէր Արդարութիւնը:

Թշւառն էր դա: Բոլոր ընծաների փոխարէն էլ տարածն էր մի չնչին սրւակ, որ ամուր կերպով սեղմել էր կրծքին և յամառութեամբ ճանապարհ ընկել: Բանն այն է, որ սրւակը լցրել էր մի չլսւած հեղուկով: Որբից մի արցունք, ընկածից մի հառաչ, գործաւորից մի դառը քրաինք... Մի խօսքով՝ վշտերի արցունքներից մի մի կաթիլ ժողոված, լցրել էր շիշը, պինդ փակել և կարծում էր, թէ տարածը անշուշտ պիտի գրաւէր Արդարութիւնը:

Ու քայլում էր: Անցնելով մեծ-մեծ քաղաքներից, խուլ հեռաւոր գիւղերից, քայլում էր անխոնջ, ձորեր ցած իջնում, լեռների վեր ենում, ամեն քայլափոխին էլ կանգ առնելով կանչում:

— Ո՞ւր ես, Արդարութիւն:

Արդարութիւնը չկար: Ոչ երկում էր, ոչ էլ ձայն տալիս:

Անօթի, ծարա, յոգնած, վշտալից՝ երկար թափառեց թշւառը ամեն ուղղութեամբ, սրտի վրայ սեղմած ունենալով ոըր-

ւակը, սրի հեղուկը սկսել էր եռալ ու տաքանալ: Արդարութիւնը
սակայն չխզճաց նրան էլ. ոչ երևաց, ոչ էլ գոյութիւնը յայտնեց:
Վերջապէս, երբ յուսաբեկ, ուժասպառ հասել էր լեռան կա-
տարին, նստեց մի ժայռի վրայ և սկսեց մտածել, թէ իզուր էր
Արդարութիւն որոնելը, քանի որ խուսափում էր նա թշւառից
անգամ:

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցից արւակն
ու խփեց ժայռին,

— Գնա, ոչնչացիր, գոչեց նա. իզուր են բոլոր վշտերն ու
արցունքները: Արդարութիւնը թշւառին չի սիրում:
Բայց հազիւ թէ սրւակը փշրւել էր, լսեց մի ահեղ որո-
տում, հոսած արցունքներից թանձր ծուխ բարձրացաւ, փրփրաց,
ոլորւեց և նրա միջից ահաբեկ թշւառի առաջ գուրս ցցւեց մի
ահեղ հսկայ:

Սարսափած թշւառը ընկաւ երեսի վրայ:

— Ելիր, կանչեց հսկան մեծաձայն, ելիր և մի վախենար:

— Ո՞վ ես դու, ահեղ ուի, հարցրեց թշւառը:

— Ե՞ս, գոչեց հսկան, — ես Բողոքն եմ, որ ծնայ այդ թափած
արցունքներից և որ պիտի աշխարհ բերեմ անհետացած Արդա-
րութիւնը... Նայիր...

Ապա արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ ցցւեց հսկայի վեհ
հասակը, գարձած դէպի բարձրութիւնները, ուր սկսել էր մի
փոթորիկ և ուր գետինն ամբողջ գողում էր գղրդիւնով:
Եւ հեռուն, հսկայի պարզած ձեռքերի կողմը, մի կոյտ մա-
քուր ամպերի բացւածքից երեան եկաւ թագնւած Արդարու-
թուր համպերի, խորունկ, տիսուր հայեացքով, առանց կշեռքի, առանց
մեծ որի*):

— Ե՞կ, Արդարութիւն, կանչեց Բողոքը, ես ծնւել եմ և իմ
ձայնը թող քեզ համար կշեռք ու սուր դառնայ, Եկ, Արդա-
րութիւն:

Արդարութիւնը անշարժ ու տիսուր նայեց նրան, նայեց
թշւառին և ասաց.

*.) Հնում Արդարութիւնը հկարտում էր, որպէս մի զիցուհի, աչքերը
կապած, մի ձեռքին սուր և միւսին կշեռք:

— Դեռ ոչ... դեռ դու փոքր ես. գնա, քայլիր, կուտակիր
արցունք, կուտակիր վշտեր. մեծացիր, որպէս ովկեան, կատա-
ղիր, որպէս հեղեղատ, և այն ժամանակ միայն ես կըդամ իմ
սրով և իմ կշխով...

Ապա ամպը սահեց և Արդարութիւնը նորից անհետացաւ իր
անմատչելի բարձրութեան մէջ:

Այդ օրւանից ահա՝ պատերազմիկ զօրեղն արիւնի մէջ է
որոնում Արդարութիւնը, հարուստը ոսկու և թշւառը, նստած
իր վշտերի մօտ, արցունքներովը մեծացնում է Բողոքին, որ հա
վերակոչէ աշխարհում կորսւած Արդարութիւնը...

Ո՞վ եւ ինչով դուրս եկաւ Արդարութիւնը որոնելու եւ ի՞նչ հե-
տեանք ունեցան նրանց ջանքերը: Ի՞նչ իմաստ կայ Արդարութեան խօս-
քերի մէջ:

ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ

Վ. Փափազեան

Այնտեղ, Սե-Ջրի չքնաղ եզերքներին է, որ ապրում էր
Հասօն:

Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա: Ոչ մի մարդ նրան
չէր կարող զինաթափ անել: Արեգակը սիրտ չունէր նրա հօտի
շուրջը ման գալ և ոչ իսկ գայլը ոչխարի կողքին քարշ գալ: Հա-
սօն որքան բարի էր դէպի լաւը, այնքան էլ անգութ էր դէպի
չարը:

Սիրուն էր Հասօն, նոր ծագող արեի պէս չքնաղ: Երկրի
աղջկների խելքը գնում էր նրան տեսնելու: Հապա նրա նւա-
գելը: Նրա սրնգից հանած ձայները կարելի էր, որ հրեշտակներն
ունենային, այնքան գրաւիչ, այնքան սիրայոյց: Զայներ, որոնք
հոսում էին մելամաղձիկ, քչքչում էին, որպէս հեղիկ վտակ,
դայլայլում՝ որպէս սիրահար սոխակ:

Մարդ, թէ անասուն, այդ ձայնը լսելիս, ակամայ մօտ էին

գալիս, քարանում և աշխատում էին չկորցնել ոչ մի գեղգեց-
ղանքը:

Նստում էր Հասօն ժայռերի վլխին, աչքերը ուղղած լայն
հորիզոնին, Սև-ջուրը դալարապոյտ ոտքերի տակին, զղղղուն
զեփիւոր խաղում ճակատին...

Եւ նա նւագում էր:

Պէտք էր տեսնել, թէ ինչպէս ոչխարներն այն անմիտ մո-
ռացել էին ուտելը, մօտ էին գալիս:

Հասօն քարերին էր դողացնում, Սև-ջրի ալիքները յուզում,
բնութիւնն էր քարացնում, զեփիւորն ողբացնում, ամեն ինչ
շարժում, հրեշտակների նախանձը դրդում:

Այդպէս էր Հասօն:

Էլ ինչպէս ոչխարները չնազանդէին նրա երգի ձայնին:
Ինքը չէր շարժում, ոչխարներին նւագով կանչում էր մօտը:

Արածացնելու համար՝ «Բէրիկը», ջրելու համար՝ «Խօզաթը»
և հեզ անսառններին շուրջը ժողովելու համար՝ ածում էր «Ոչ-
խարի կոչը»:

Ոչխարները, լսելուն պէս՝ թողնում էին ամեն ինչ, անց-
նում ամեն բան, գալիս, Հասօնի շուրջը հաւաքւում:

Ազրում էր Հասօն այդպէս երջանիկ, հեռու մարդկանցից,
բնութեան զրկում, լեռների կրծքին: Երջանիկ էր նա, որպէս մի
իշխան՝ սիրուած հօտից, նսիրուած իր երգին:

Բայց մի օր Հասօն տեսաւ աղայի միակ աղջկան: Տեսաւ ու
սիրեց:

Սիրուն էր Զալխին: Կախարդիչ՝ աչքերը, սալուի էր բօյը,
կամար՝ ունքերը, գողտրիկ՝ թշերը:

Զալխին էլ տեսաւ Հասօնին, Զալխին էլ սիրեց Հասօնին: Տըխ-
րեց խիստ Հասօն: Կորցրեց աշխուժութիւն, կորցրեց զւարթու-
թիւն, Օրենքով պառյա էր գործում պալատի շուրջը, մինչեւ իսկ
եթէ ոչխարն այստեղ ուտելու խոտ չդանէր: Աչքը աշտարակին,
նւագում էր տիրապին, սիրտը սրնզի մէջ դնում ու արտասում:
Զալխին էլ տանջում էր: Թագնւած վարագոյրի յետեւում,

աչքը Հասօից չէր հեռանում, ոչ էլ ականջը նրա նւազից: Ոչ ուտում էր և ոչ էլ խմում—տանջում՝ էր միայն:

Երկուսն էլ գիտէին, որ շատ հեռու են միմեանցից, որ աղաւի աղջիկը հովկի կին չի լինիլ:

Բայց սէրը Պատծոյ կրակն է, շատ զօրեղ կրակի: Նա կտրում, անցնում է ամեն հեռաւրութիւն, թուփանցում է ամեն խորութիւն:

Մէրը ոչ հեռաւրութիւն է ճանաչում, ոչ էլ խտրութիւն:

Հեռատես էր աղան ու խիստ խորամանկ: Շուտով նկատեց Հասօի սէրը: Բարկացաւ, կատաղեց, ուզեց սպանել յանդուզն հովկին, բայց խոնեմ էր. չուզեց իր տան անունը կոտրել յաւիտեան և մի հովկի արիւն մտնել ընդունայն:

Բայց ինչ կասէին՝ եթէ իմանային, որ մի չոբան նրա աղջկայ յետեկիցն է ընկել: Պէտք էր Հասօին հեռացնել, հեռացնել ինքնակամ, զո՞ն խորամանկութեան: Պէտք էր այնպէս մի խաղ սարքել, որ Հասօն ինքը թողնէր հեռանար և մէկ էլ այդ կողմերը չվերադառնար:

Մտածեց աղան, երկար մտածեց ու գտաւ հնարք:

Մարդ ուղարկեց, կանչեց Հասօին և ասաց նրան.

—Գիտեմ, Հասօ, ասաց շար աղան. գիտեմ, որ սիրում ես դու իմ աղջկան: Քաջ տղայ ես ինքդ, լսել եմ, լաւ ես ածում սրինգ: Աղջիկս քեզ կըտամ, միայն կըգնեմ մի պայման:

«Լսել, եմ որ ոչխարները քեզ հսազանդում են և սրնդի ձայնից գրաււած՝ քեզ մօտ գալիս են:

«Գետնից մինչեւ այդ բարձր աշտարակը, տեսնմամ ես նըան, գնել կըտամ փայտեայ սանդուխքը, դու կընստես այնտեղ, բարձրում, ոչխարները կըժողովւեն ցածրում: Ահա պայմանը՝ եթէ դու բարձրից սրինգ հնչեցնելով կարողացար ոչխարներին սանդուխքի վրայով քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր:

«Ապա թէ ոչ խայտառակ եղիր, ինչ ունիս-չունիս հաւաքիր և քանի շուտ է՝ այս կողմերից հեռացիր: Մի հովիւ աղայի փեսայ չի լինիլ, այդ էլ խելքիցդ հանիր»...

Հասօն ժպտեց, խոր գլուխ աւեց: Տէր ես, աղա, ասաց. ասածիդ համաձայն եմ:

Եւ շինել տւեց աղան փայտեայ սանդուխքը: Իննառուն և ինն աստիճան ունէր: Հասօից ծածուկ կոտրեց նրա մէջտեղի մի աստիճանը. կոտրածը նոյն կերպով դրեց իր տեզը, այնպէս որ ոչինչ չէր երևում. բայց մի թոյլ սեղմում հերիք կըլինէր փայտը ձգելու և մի աստիճանից դէպի միւսը՝ մի գագաչափ տեղ բաց թողնելու: Այսպիսով էլ ոչխարների անցնելը անհնար դարձնելու:

Օ՛, չար էր աղան, հպարտ էր, հպարտ...
Այդ խայտառակութիւնն արեց չար աղան: Հասօին աշտարակի ծայրը հանեց, Զալիսէին պատշգամբի վրայ՝ ու ասաց հովհին.

—Ահա Զալիսէն, խրախուսւիր, հալալ է քեզ նա, թէ ասածըս արիր:
Զալիսէն տեսաւ Հասօին, ժպտաց նրան, կարմրեց և նշան արաւ: Իմացաւ հովիւր, որ Զալիսէն էլ սիրում էր նրան: Սիրոն ուրախութիւնով լցւեց: Առաւ սրինդը, բերնին դրեց, քեօլօզը ծուեց, նւագն սկսեց:

Թոնդաց սար ու ձոր, շարժւեցին ծառեր, դողացին քարեր: Յուղուեց չար աղան, խելայեղ՝ Զալիսէն. քիչ մնաց թոնէր ու ցած գնար, ոչխարի պէս ընկնէր Հասօի ոտքերը:

Շարժւեցին ոչխարները, մօտեցան սանդուխքին ու սկսեցին միմեանց յետեից բարձրանալ աշտարակն ի վեր:

—Լօ, լօ, լօ, Սկ-ջրի չոբան, սար ու ձոր մղկտացնող ջիւան, գազան մեղմացնող, քար ու ծառ յուզող չոբան: Ինչու յիմարի պէս հաւատացիր աղային, ինչու բարձրացար ծայրն աշտարակին: Զուր դառնայիր մօրդ փորում, Հասօ: Երանի չմտնէիր այս աշ-խարհը՝ որ լի է աղաներով: Երանի չտեսնէիր արևի փայլը՝ որ քեզ այրեց-խորովեց, Սկ-ջրի ալիքները՝ որ քեզ արորեց, շամբի օրօրւելը՝ որ քեզ կախարդեց:

— Լօ, լօ, լօ... Միթէ քիւրդն այնքան անազնիւ եղաւ, որ
սէրը ծաղրեց: Միթէ նրա խիղճը կորաւ, Աստւածը մոռացաւ:
Խեղձ Հասօին ինչո՞ւ շէյթանի բաժին արաւ, աշխարհը լաց
ու սուզի մէջ դրաւ... Լօ, լօ...

Հա բարձրանում էին ոչխարները, հրում միմեանց, սրնդի
ձայնից դիւթւած՝ մոռանում էին տակի անդունդը: Աչքերը Հա-
սօին ուղղած՝ բարձրանում էին:

Աշխարհը զմայլած՝ դիտում էր: Չար աղան քար էր կտրել: Զալիսէն մինչև կէս մէջքը կուացել, ձեռները Հասօին պարզել՝
գոչում էր.

— Ես քոնն եմ, Հասօ, քոնը յաւիտեան: Ես քեզ սիրում եմ,
այնքան եմ սիրում, որքան չէր սիրում Լէյլանը Մէջլունին: Ես
քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը
ճրագին, սոխակը վարդին, աշխարհն արեին և բոյսը հողին:

« Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը, դու իմ արևն ու դու
իմ հողը... »

Կում էր Հասօն, սիրտը խշխշում: Ածում էր, ածում, նւա-
զը ուժովցնում:

Հասաւ նէրի*) այծը կոտրած աստիճանին, զգաց որ մահը
աչքի առաջն է, բայց դիւթւած էր, ոտքը դրեց փայտի վրայ:

Շարժւեց փայտը, լսեց մի մայիսն և սիրուն նէրին պտոյտ
գործելով օդի մէջ, գնաց ջախջախւելու անդունդի քարերի վրայ:
Մղկտաց Հասօն: — Հէյ վախ, իմ սիրուն նէրի, կանչեց սրտա-
բուղի: Բայց աշքը երբ Զալիսէին ընկաւ, մոռացաւ նէրիին:
Սրինդը դրեց բերնին և սկսեց ածել:

Ոչխարները տեսան նէրիի վիճակը, կանգ առան, մտածեցին
յետ գնալ, բայց դիւթւած էին, առաջ գնացին:

Փորձեց առաջին ոչխարը յետ-յետ բաշւել, առջնի ոտքերը
բարձրացրեց և ուզեց թոնել: — Մի մայիսն արձակեց և գնաց
այծի յետկից:

*) Առաջնորդ այծ:

— վախ, վախ, իմ անմեղ ոչխար, մղկտաց Հասօն:

Նայեց Զալլսէխն, մոռացաւ ոչխարին, ոյժ տւաւ նւագին:

Փորձեց երրորդ ոչխարը. մինչև իսկ թռաւ, բայց կպաւ աստիճանին, մի պտոյտ գործեց, խղճուկ կերպով մայեց և գնաց դէպի խոր անդունդը:

— թռէք, անցէք, իմ սիրուն ոչխարներ, երգում էր Հասօն. թռէք, իմ թաւամազ գառնուկներ, եկէք ձեր տիրոջ մօտ:

Ոչխարներն էլ չէին շարժւում. յետ-յետ էին գնում:

Կատաղեց Հասօն—բացւածքը չէր տեսնում: Որքան սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնգին. գեղգեղանքներով քարացրեց բնութիւնը... բայց ոչխարները յետ-յետ էին գնում:

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղաւ Զալլսէն յուսահատութիւնից:

Փոխեց Հասօն եղանակը:

Այժմ ինքն էլ չգիտէր՝ ինչ է նւագածը:

Դադրել էր քամին, կանգնել էր ջուրը, լոել ամեն ինչ:

Ո՞վ չի լսել «Լուր-դա-լուրը», որին չի դիմանալ ոչ մի քար սիրա: Որին լսելով, կըթբթուայ սիրող սիրտը, կըմարի: Որին լսելով, կըգժւի սիրող աղջիկը, կըգժւի դէպի սիրածը կըսլանայ:

Սքանչելի է նա. երգերի փառքն է նա:

Հըեշտակների մրմունջը, Հասօնի հոգին է նա:

Շարժւեցին ոչխարները, գլորւեցին շատերը:

Շարժւեց Հասօն, կուցաւ, տեսաւ բացւածքը:

Հասկացաւ ամեն ինչ, նայեց աղային:

Զգաց, որ Զալլսէն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար:

Շարժւեց Զալլսէն, նայեց աղային, նայեց Հասօնին:

Զգաց, որ Հասօն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի

համար:

Եւ լոեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուրը» դադարեց, նրա խաղի վերջին թրթուումը


Յետոյ... լուեց մի ճիչ:

Ու երկու մարմիններ արագ պտոյտ գործելով օղի մէջ,
դնացին միասին ջախջախւելու անդունդի խորքում... և միմեանց
զմկում...

Հասօն ու Զալիսէն էին գրանք:

Ի՞նչը լրդեց տղային այդպէս վարել Հասօն ու Զալիսէի հետ:

Դժ նորդ ողձայիշ մայդա ոչ զիբան զիթի
ուսի հոդի զին զիթ ողձայնուր բանաւոն ոչ շնոր
հետմար միշ ամի-ունի Առանց միշ լը ողձայնուր
ու դժ մայդ հետմար զի զին զադ-օսուն զերտուր
այս խողմացարձրքը ամրից զեմայիւմ զերտուրը ու դժ
հետմար միշ ամի-ունի ողձայնուր պատ ... զարդինուն զեզ
առուն օմայուն առ ուսունդ պատնոր զի մուս զեմայիւմ



ուսունդ մուս զեմայիւմ
ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ

ուսունդ մերմացք ողձայնուր միշ այսան
ուսունդ ուսունդ ուսունդ մուս զեմայիւմ
ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ մուս առանց
մուս ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ

ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ
մուս ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ
ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ ուսունդ



ԵՐԲՈՐԴ ԲԱԺԻՆ

U.S. NAVY AIR SERVICE

ով մաս ոգիլառայի կրողն բառապարագ քև մ ով ո աօշ

Ա. ԾԱՌՈՒԹԵԱՆ
Աշխատիր դու, մշակ, քրտինք թափիր դու անվերջ,
Թող քրտինքով մայր-երկիրը կշանայ.

Զուր չի անցնել քո տաճախնքը. այստեղ երկրի կրծքի մէջ

Քո քրտինքը նոր ոյժ, նոր կեանք կլստանայ:

Աշխատիր դու, ուրախ սըտով. քո տանչանքը քըտնալից

Սուրբ է. եղբայր, Երկնքից օրնուած

Քրտինք թափիր, և փոխարէնն մայրերկերը եր կրծքից

Քեզ լիտուատ կըսկարգեմի արդար հաց։

կա ամենալուս հայ պղծիքից լուսնան պղծուածաւ ուն



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԿՐՈՒՄ

(Վախտերովից)

Թարգ. Յովհ. Արարաջնան

Ֆինլանդիայի ժայռերի վրայ մագլցելուց սաստիկ յոդնած՝
ես քայլերս ուղղեցի դէպի այն փոքրիկ գիւղը, որ երկում էր
բլլակի վրայ, լճակի ափին: գիւղը մեծ չէր, ընդամենը հինգ-
վեց տուն: Տները մաքուր, ցանկապատով շրջապատած: Ես
ներս մտայ այդ տներից մէկը, որն, ըստ երկութին, ամենից
աղքատիկն էր: Տան ներսը մաքուր էր և յստակ: Պատուհանները
զարդարւած էին վարագուրներով և ծաղկամաններով: Նստարան-
ները, աթոռներն ու ամանները - բոլորը փայլում էին: Ցատակը
ծածկւած էր եղևնու ճիւղերով ու ծաղկիկներով, որոնք օդը
լցրել էին խէժի և մեղքի հոտով. պատերին կախւած էին պատ-
կերներ, դարակների վրայ դրքերի շարքեր էին երկում:

Տօն օր էր, և այդ պատճառով ամբողջ ընտանիքը տանն էր:
Տան տէրը, որ մի ծերունի ֆինն էր, կարմիր ժիլետը հագին,
ակնոցները ճակատին բարձրացրած և ծխափողը բերանին, բաղ-
կաթոռին նստած՝ լրագիր էր կարգում. նրա երկու շիկաներ, կապ-
տաչեայ, կարմրաթուշ աղջիկները լսում էին նրա կարդացածը:
Ես ֆիններէն քիչ գիտէի և թոյլտութիւն ինդրեցի հանդստա-
նալու: Յայտնեցի, որ ճանապարհորդ եմ:

Տան տէրն իսկոյն հրամայեց աղջիկներին հիւրասիրել ինձ:
Նրանք շտապով ծածկեցին սեղանը մաքուր սփռոցով, բերին
կաթ, սուրճ (ֆինները շատ են սիրում այս խմիչքը) և աղը դրած
ձուկ: Ապա աղջիկներից մէկը ցած բերեց առաստաղից կախ-
արած ձողի վրայից մի քանի լոււաշ հաց, որը սովորաբար գործ
են ածում ֆինները: Ինձ համար, որպէս հիւրի, բերին նաև իւղ
և ձուկ: Նախաճաշիկի ժամանակ աղջիկներն ինձ պատմեցին, որ
մայր չունին, ուստի և իրանք են տնտեսութեամբ պարապում և
քաղաքում վաճառում իւղ, պանիր ու կաթ: Նրանք ինձ յայտ-
նեցին նոյնպէս, որ երկումն էլ աւարտել են գիւղական գալրոցը
և թէ առհասարակ իրանց երկրում անգրագէտներ շատ հազիւ են
պատահում:

— Իսկ ձեզահում էլ կանայք բոլորը գրագէտ են, — հարցրին
նրանք:

— Ո՞չ — պատասխանեցի ես, — և նրանք այդ բանին շատ
զարմացան:

Մեզանում այդ բանը մեծ դժբաղգութիւն կը համարէց, —
ասացին նրանք: — Մենք բոլորս կարգում ենք գրքեր, իւրաքան-
չիւր ընտանիք լրագիր է ստանում: Մեզանում շատ աղջիկներ,
գիւղական գպլոցն աւարտելուց յետոյ, գնում են քաղաք ուսու-
մը շարունակելու, կատարելագործելու: Անա այս ձմեռ մեր
գիւղն է գալու գիւղանտեսութեան մի վարժուհի և մենք նրա
մօտ սովորելու ենք անսանապահութեան, անսանաբուծութեան
և կաթնատնեսութեան վերաբերեալ գիտելիքներ:

Մեր կասակցութեանն սկսեց մասնակցել նաև տան տէլը:

— Այս, ասաց նա, — մեզանում ոչ ոք ձեռքերը ծալած չի
նստում, ամեն ոք պարտաւոր է ինքը հայթայթել իր ապրուս-
տը: Ես և իմ մեծ որդին քրտինք ենք թափում արտում ու
արօտում, աղջիկներս անտեսութեամբ են պարապում, միջնակ
որդիս ձկնորսութիւն է անում, նոյն իոկ վոռքրիկս նա էլ կո-
ղովներ ու արեխներ է գործում ու վաճառքի հանում: Մեր եր-
կիրը ցուրտ է, քիչ ծուլացար թէ չէ, առանց հացի կրմաս.
մեր հայրենիքը մեզ վարժեցնում է աշխատանքի, դարդ է դար-
ձնում մեզ: Եւ մենք սիրում ենք նրան, չափազանց սիրում:

Ես ասացի, որ ինձ շատ է դիւր գալիս Թինլանդիան. Նրա
անտառներն ու լճերը իրանց գեղեցկութեամբ հիացրին ինձ:

— Զեր Թինլանդիան մի կատարեալ գեղեցկուհի է, — աւելա-
ցրի ես:

Ծերունուն, ըստ երկութիւն, շատ դիւր եկան իմ խօսքերը և
նա հրամայեց աղջիկներին, որ ինձ համար երգեն իր սիրած եր-
գը: Աղջիկներն իրանց գուրեկան, մատաղ ձայնով երգել սկսե-
ցին, իսկ հայրը մեղմ ձայնակցում էր նրանց:

« Մենք, բոլոր ֆիններս, — երգում էին նրանք, —
հրճանքով նւիրում ենք քեզ մեր ծանր աշխատանքը, օ Թին-
լանդիա, մեր մայրը ցանկալի: Զափել քո ջրերի խորութիւնը, քո
արտերը վարել, քեզ համար լինել ժիր կաստակաւոր, անձնւի-
արտերը վարել, քեզ համար լինել ժիր կաստակաւոր, անձնւի-

ըութեամբ և պատւով ծառայիլ քեզ, որ դու խաղաղ զարգանաս, քո զաւակներին ջերմ սիրով սիրես, որ դու, մայր, վիշտ, կարիք չզգաս և փառք ու պատւով զաւակներիդ վաստակը վայելես: Մենք, բոլոր ֆիններս, հրճւանքով նւիրում ենք քեզ մեր ծանր աշխատանքը, Ֆինլանդիա, մեր մայր ցանկալի»:

Հրաժեշտ տալով հիւրասէր տանտէրերին, ես պինդ սեղմեցի հօր և աղջիկների ձեռքը: Գիւղում վարձեցի մի սայլակ և քառորդ ժամից կուշտ, թաւամազ ձին յատակի նման հարթ ճանապարհով սրաբշաւ տանում էր ինձ դէպի քաղաք: Ճանապարհի երկու կողմերով արագ-արագ անցնում էին հեռազբասիւները, որոնք իրանց լարերով միացնում էին մի գիւղ միւսի և գիւղերը քաղաքի հետ: Բոլոր գիւղերում կան գպրոցներ, գրադարաններ, ամեն տեղ գրքեր, լրագրներ, գրագէտ մարդիկ... Ես յիշեցի մեր խուլ գիւղերը և խորը հառաչեցի: Վիշտը պատեց ինձ. Այս այն մի բոպէից յետոյ ես ամաչեցի իմ վշտից: Շուտով, շուտով մեր գիւղն էլ կըսկսի ապրել մարդկային կեանքով:

Համեմատութիւն որէք մեր եւ Ֆինլանդիայի գիւղացիների տնտեսական ոլութեամ մէջ:

ՀԱԼԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

(Հեքիաթ)

Զուլումնան

ա.

Զգիտեմ Երբ էր և որ աշխարհում,
Մի ծեր, իմաստուն արքայ էր ապրում:
Այսքան զթառատ, այսքան ողորմած,
Որ ժողովուրդը երբէք չէր տեսած
Այդպիսի արքայ գեռ իրան օրում.
Նրա խելքը, ուժը, փառքը փառահեղ՝
Երգերի սիրթ էր գանել ամեն տեղ:
Թէև ծեր արքան շատ գանձեր ունէր՝
Հարուստ քաղաքներ, ճոխ ագարակներ,

Բայց նա զգում էր իրան երջանիկ
 իր մեն-մինուճար որդով գեղեցիկ:
 Խորագէտ արքան միշտ միտք էր անում,
 թէ մահից յետոյ իրան աշխարհում
 Արդեօք իր որդին նոյնպէս կըլինի
 լոհեմ, իմաստուն և առաքինի:
 Հենց այս պատճառով՝ ծերունի արքան
 Փորձում է որդուն, խրատներ տալիս:
 Սյապէս մի անդամ որդուն փորձելիս՝
 Ահա այս գէպքը առաջ է գալիս:

Բ.

Մեր արքայորդուն թագուհին նոյնպէս
 Սիրում է որտանց իր զոյդ աչքի պէս
 Ու չէ իմանում, էլ ինչպէս պահի,
 Որ փորձանքների նա չպատահի.
 Մի բուռ ոսկի է տալիս ամեն օր,
 Որ առնէ՝ ինչ որ լինի հարկաւոր:
 Էլ ի՞նչն է պակաս մեր արքայազնի,
 Որ ոսկիներով նա լրացնի.
 Ճաշը փառաւոր իր արքայական,
 Իր հագուստները ճոխ ու պատւական,
 Թէ հանդէսները, ճոխ, գւարճալի:
 Ու այս պատճառով ոսկի փողերը
 Տանում է որդին, տալիս է հօրը:
 Հայրը նայում է, նայում փողերին
 Ու իակոյն և եթ ջրի մէջ նետում...
 Մի օր էլ էսպէս մեր արքայորդին,
 Երբ հօրն է տալիս մի բուռը ոսկին,
 Նետում է արքան ջրի մէջ կրկին
 Ու այսպէս ասում թաղաժառանդին.
 Լսիր, որդեակս, և գու այս անդամ
 Շորերդ փոխած, մշակի նման,
 Գնամ ու բանիր վաղ առաւօտեան:

Ու արքայորդին վաղ ծէզը ծէզին
Արքայավայել ազնիւ, թանկագին
Արդ ու զարդերի, կերպասի տեղակ՝
Հագաւ մշակի շորեր հասարակ.

Ապա շտապով ընկաւ նա ճամպայ
Ու գնաց, բանեց շինութեան վրայ:
Բանում, հա բանում արեի տակին,
Քրտինքն երեսից ծորում է գետին,
Իսկ երբ նրան իր վարձն են տալիս,
Նա ուրախ-ուրախ հօր մօտ է գալիս:

— Հայր, կատարեցի պատէրդ ահա,
Այս է, հայրիկ, վաստակս օրւայ:
Արքան առնում է, նայում փողերին,
Նայում է, ուզում հէնց ջուրը նետել,
Իսկոյն հօր ձեռից բռնում է որդին.

— Այդ ինչ ես անում, հայր իմ թանկագին,
Զէ՞ որ ողջ օրը արեի տակին
Քրտինք թափեցի առւակի նման,
Մինչև որ տւին վարձս օրական:
Հայրը ժպտալով ասում է նրան.

Տեսար, իմացար, որդեակ, այժմ դու,
Թէ որքան բաղցը է վաստակը մարդու...
Ապա գու ինչո՞ւ լուռ էիր կենում,
Երբ բռով ոսկին ջուրն էի նետում...
Դէ՞ լսիր, որդեակ, խրատս հայրական.
Հասել է արդէն ժամը իմ մահւան.
Ինչպէս սիրում ես քրտինքդ յատակ,
Այնպէս էլ սիրիր ուրիշի վաստակ:



ՀՐԴԵՀ ՆԱԽԹԱՀԱՆՔՈՒՄ

Շիրանզաղէ

III.

Միքայելը զարթնեց, նստեց անկողնի մէջ, աչքերը տրորեց։ Այդ ի՞նչ է, միթէ այդպէս շուտ լուսացաւ. այդ ի՞նչ բոսորագոյն լոյս է, որ հեղեղել է նրա աենեակը։ Մոնխիւնները շարունակւում են։ Բա, այդ հանքային մեքենաների շտիկներն են։ Նրանք արձակում են անհանդիստ, անկանոն սուլոցներ։ Այդպէս սուլում են միայն հրդեհի ժամանակ։

Նա արագութեամբ դուրս թռաւ անկողնից և մօտեցաւ լուսամուտին։ Սկզբում նրան թւաց, թէ այրւում է այն տունը, ուր գտնւում է ինքը։ Նա այնքան շփոթւեց, որ չիմացաւ հագնելի, թէ մերկ դուրս վագի։ Միթէ ճշմարիտ հրդեհ է, թէ երեակայութիւնը խաբում է։ Բաց արաւ լուսամուտի փեղկերը, նայեց կրակի կողմը, ընցւեց։

Սարսափին անցաւ ուղեղին, խելքը մթագնեց։ Բայց զգում էր, որ այդպիսի դէպքերում անհրաժեշտ է սառնասրտութիւն պահել։ Նա շտապով հագնւեց և դուրս վագեց։ Իսկ շտիկները



Շիրվանզաղէ

շարունակ սուլում էին։ Եւ ի՞նչ սուլոցներ. դրանք, կարծես, մարդկային աղերսանքներ էին՝ մէկը միւսից աւելի յուսահատական և մէկը միւսից աւելի ահարկու։ Դա մի աեսակ դժոխային համերգ էր, որի ոյքը հէնց աններդաշնակութեան մէջ էր կայանում։ Աններդաշնակութիւն, որ կարատում էր մարդու նեարդերը...

Մշակներն արդէն զարթնել էին և շփոթւած վագում էին

դէս ու դէն, ինչպէս մըջիւններ, որոնց բնի վրայ մի չար ձեռք ջուր էր թափել:

—Մեզ մօտ է, —հարցը Եղ Միքայէլը բարձրաձայն:

—Նոմեր հինգերորդն է այրւում, —պատասխանեցին միքանի ձայներ:

Բակը լցւել էր մթին ուրւականներով: Նրանք նկուղներից դուրս էին բերում բահեր, դոյլեր, թիեր, երկաթէ ձողեր և այլ հրշէջ գործիքներ:

Մի միջոց Միքայէլը միմեանց հակասող, նոյն իսկ անմիտ կարգադրութիւններ էր անում: Յետոյ շտապեց հրդեհի տեղը: Իսկ սուլոցներն աւելի ու աւելի էին սաստկանում: Արդէն սուլում էին բոլոր հանքերը: Եւ այդ սոսկալի «ույ-վույ»-ները բռնում էին մօտ տասը քառակուսի վերստ տարածութիւն: Կարծես այդ չայները գալիս էին ամպամած, մթին երկնքից, կարծես դա քաղցած գիշակերների արշաւանք լինէր: Այսպէս էր ընդունւած. երբ ի շուկ սուլում էր իբրև հրդեհի ազդ, միւսները պիտի հետեւէին որան, որպէսզի հանքային բնակչութիւնը զգուշանար վտանգից:

Հրդեհն արդէն բաւական ընդարձակւել էր, Այրւում էր ամեւ-ասարդիւնաբեր հորերից մինը: Կրակը բուրգի ստորին մասից որնթաց դուրս գալով, շտապում էր ընդգրկել ամբողջ աշտարակ: Հորիզոնի վրայ ձգւել էր մթին ծխի մի լայն ժապաւէն, որ ամու ընթացքով տարածւում էր հեռու ու հեռու:

Մշակները շրջապատել էին վիթխարի խարոյկը և կազմել ենդանի օղակ սարսափած գէմքերի, ապշած աչքերի: Մի խումբ՝ տեղ էր ասպալէզ և աշխատում էր դուրս բերել բուրգի տակից եքենան, —միակ բանը, որ կարելի էր կրակից ազատել:

Բ.

Նաւթային հրդեհը նման չէ սովորական հրդեհներին: Հաներում ու գործարաններում կրակը երեմն տարածւում է հողմի դրագութեամբ: Այստեղ այրւում է ամեն ինչ, նոյն իսկ օդն ու ռկիրը, ամենուրեք տարածւած նաւթի ու դազի շնորհով: Շատ նդամ մարդիկ հազիւ լսում են շւիկների սուլոցները, և արդէն որանց կեանքը վտանգի մէջ է: Թեռ լաւ է, եթէ կրակը սկսւում

է բուրգից կամ որևէ շենքից, իսկ եթէ սկսւել է նաւթամբարից, փանդն անխուսափելի է, Ամբարի ազատ տարածութեան մէջ կուտակւած գազը, ընդհարւելով կրակի հետ, պայթում է հա- միւրաւոր թնդանօթների ուժով և կրակի հեղեղը սփռում է չորս կողմ:

Դիւրավառ հեղուկով առգործած փայտաշէն բուրգը ներկա- յացնում էր մի հսկայական ջահ, վառւած ծայրէ ի ծայր: Կրակն արագ-արագ լսկում էր բուրգի տախտակները, ինչպէս սոված կենդանին լավում է ծառի չոր տերեները Բիւրաւոր խոշոր կայ- ծերը հրթիռների պէս բարձրանում էին վեր, ծխի ալիքների մէջ կատաղի պտոյտներ գործում և թափում ներքեւ: Գոյացել էր մի սքանչելի հրեղէն անձրեւ: Քամին կայծերը հաւաքում էր ու տանում, կիտում պատերի տակ, անկիւններում ու երկրի խոռոշ- ութում, այնպէս հնչպէս կիտում է ձիւնը:

Կային միամիտ մշակներ, որ ճգնում էին ջրով հանգնել բուրգը, մի բան, որ անհսարին էր: Կրակը ծիծաղում էր ջրի մի բաղկաչափ հոսանքի վրայ, որ ըրթչըթալով գուրս էր գալիս ոե- ալիսի խողովակից, ձեռաշարժ ջրմուղի միջոցով: Բոցի ահաելի լե- զուները, ընդհարւելով հակառակ տարրի հետ, արձակում էին դիւական քրքիջներ: Զուրը, մի վայրկեանում շոգի գառնալով, ուելի ոյժ էր տալիս կրակին, քան կուռում նրա դէմ:

Փորձւած բանւորներն աշխատում էին նաւթամբարներն ապահովիլ հրեղէն անձրելից: Այրւող բուրգից ոչ այնքան հեռու նաւթով լի մի գետնափոլ շտեմարան: Մօտ քառասուն շակ, մոռանալով ամեն վտանգ, հաւաքւել էին նրա հողային լուսուրի վրայ և թրջւած թաղիքներով ծածկում էին բաց տեղերը, որտեղից դուրս էր գալիս նաւթային գուղը: Մի թեթև ընդհա- ռում բոցի հետ, և նաւթամբարը պիտի պայթէր, իր հետ օդը նղեցնելով մշակներին: Մի ուրիշ խորմբ զբաղւած էր երկաթէ պբարների շուրջը:

Բուրգն արդէն մերկացել էր, ընկաւ նրա գագաթին տեղա- բուրած անիւր, ընկան կողերի այրւած տախտակները: Օդի մէջ նշեցին չորս երկայն ու հաստ հրեղէն սիւներ: Ամբոխն այժմ կատում էր, արդեօք ո՞ր կողմ պիտի ընկնեն այդ սիւները: Մէկը

փոքը ինչ թեքւել էր դէպի ստորերկրեայ նաւթամբարի կողմը։ Ռի քանի մշակներ կամեցան սիւները տակից սղոցել այնպէս, որ նրանք հակառակ կողմն ընկնեն։ Բայց դիւրին բան չէր մօտենալ հրեղէն աշտարակին։

Կրակի ճարճատիւնը, խորտակւող ու վիշող շինութիւնների դղրդիւնը, կայծերի հեղեղը, ամբոխի աղաղակները, ծուխը, մուրը, արիւնագոյն լոյսը, երկնքի խաւարը, երկրի խուժանը գոյացրել էին մի զարհուրելի քաօս։ Քաօս, ուր միայն մի բան էր պարզ, զօրաւոր, յաղթող - կոյը տարերքը։ Նա ոչինչ չէր խնայում, տարածւում էր չորս կողմ՝ լափում ամեն ինչ, որ գտնում էր իր ճանապարհի վրայ։ Ճահիճը ներկայացնում էր մի հսկայական թոնիր, որից բոցի ալիքները բարձրանում էին վեր, խուլ թընդիւններ արձակելով և կորչում, անհետանում ծխի թուխպերի մէջ։

գ.

Որքան հրդեհը լայնանում էր, այնքան ամբոխի կենդանի, շարժուն օղակը մեծանում էր, որպէս ծովի ալիքները պտտող մըրկի բերանն ընկած նաւի շուրջը։ Հրդեհի և ամբոխի մէջ բացւած տարածութիւնը ծածկւել էր հողի, մուրի, նաւթի լպրծուն գանգւածով։ Մարդիկ սահում էին, ընկնում, երբեմն ծիծաղելով, որպէս դիւնարներ, երբեմն բարձրածայն գոռալով երկիւղից, որ մի գուցէ հարիւրաւոր ոտների տակ ջարդւեն, սպանւեն։

Հինգերորդ բուրգի սիւներն ընկան մէկը միւսի յետեկից։ Ամբոխը ցըւեց փոշու պէս։ Նաւթի մուզ-մեխակագոյն ծխին փոխարինեց փայտի կապտագոյն ծուխը։ Լուր տարածւեց, թէ երկու մշակ—մէկը ծերունի, միւսը երիտասարդ և խուլ մնացին սիւների տակ և սպանւեցին։ Մարսափը տիրեց բոլորին։ Այն ինչ, այնտեղ, քսան երեսուն քայլ հեռու, արդէն մերկանում էր մի ուրիշ բուրգ, իսկ մի երրորդը նոր էր վառւել։

Սակայն հրդեհի կենդրոնն այլևս բուրգերը չեն։ Երկաթեայ ամբարները մէկը միւսի յետեկից պայթել են։ Վիթխարի զմբէթներն ընկել են իրանց կողքերի վրայ։ Բոցավառած նաւթը գոյացրել է մի հրեղէն հեղեղ, որի առաջն առնելու ոչ մի հնար

չկայ: Բարեբաղդաբար, գետնի թեք դիմքի շնորհով, հեղեղն ստացել է այնպիսի ուղղութիւն, որ նրա կործանիչ ընթացքը մարդկակ չի կանում: Նա դիմում է դէպի մի մեծ ջրային ճահիճ, որ գոյացել էր վերջին յորդառատ անձրևներից: Սկզբում կրակն էր յաղթում ջրին: Բայց պաշարողն աւելի զօրեղ է, քան արշաւողը: Ճահիճը կլանում է բոցի ալիքները, թէն ինքն էլ արագ արագ շողիանում է:

Գիշերն անցել էր. արեգակը գուրս էր գալիս, հրդեհի լոյսն աղօտանում էր: Ամբոխը, ցեխոս, նաւթոս, թրջւած, գեռ շարունակում էր, գոռգոռալ, վազվզել, քանդել, խորտակել, այս ու այն կողմ տեղափոխել ջարդւած կահկարասին, մեքենաները, ջրը մուզները, և այլն, և այլն: Օդի մէջ պտրաւում էին հարիւրաւոր թիեր, բահեր, լինսեր, ծողեր: Զրմուներից ջուրը բարձրանում էր արդէն ծուլօրէն. մշակները չէին հոգում, թէ որ կողմն են ուղղում ջրերը, այնքան յոգնել էին: Արեգակն այս ջրերէն կամարներին տալիս էր ծիածանի երանգներ, և դա աւելի մի տեսակ գեղեցիկ տալիս էր ծիածանի երանգներ, և ոչինչ չէին անում: Քերը գոռում էին. «Եա, Ալլահ, Եա Ալլահ» և ոչինչ չէին անում: Լեզգիներն արձակում էին ինչ-որ կոկորդային հնչիւններ, նման աղուաւների կոնչիւններին: Ռուսների դէմքերն արտայայտում էին մոայլ լրջութիւն, մէջ տեղ դրւած երկու դիակների ազդեցութեամբ: Հայերը միմեանց վրայ գոռում էին, միմեանց հրամայում, և ոչ մէկը չէր հապատակւում միւսին: Կային և շւէդներ, գերմանացիներ, հրէաներ: Քաղաքից եկել էին երեք երկայնագերմանացիներ, սիկարները բերաններին և հասակ, սիհար անզլիացիներ, որ, սիկարները բերաններին և ձեռները վարտիկների գրպանները դրած, սառնարիւն դիտում էին սքանչելի և հաղւագիւտ տեսարանը:



Կ Ա Թ Ս Ա Վ Ա Ր

Յ. Յակովիքնան

Որպէս գող բռնած, զայրացած առիւծ,
Շոգեկաթսան է եռում, մռնչում.
Հսկայ, հրեղէն լեզուներ հանած՝
Դժոխքի նման հնոցն է փչում:

Վիթիարի, գազան հնոցի առաջ
Բոց ու կըակի տապից թառամած՝
Մեր կաթսավարը հսկում է նրան
Ուշըն ու միտքը ջրչափին յառած:

Ամառ ու ձմեռ նա զովի կարօտ—
Քրտինք է ծորում գալուկ ճակատից,
Որ ակօմներով երեսը մրոտ,
Սև հացի գին է պահանջում բաղդից:

Եւ մի սկ օր էլ կաթսան՝ պայթելով,
Խեղճ կաթսավարին կըզրկի կեանքից.
Հալալ էն հացը, որ արեան գնով
Կըխլի նա այն հնոցի կրծքից:

ԱՅԹԻՒՆ ՀԱՆՔՈՒՄ

Յ. Մելիք-Հայկազնան

ա.

Ես բանում էի հանքի խորքում. գործիքովս քանդում էի ա-
պառաժը: Բնկերս ծալապատիկ նստած՝ ճրագը ձեռքին լոյս էր
բնում:

Յանկարծ մեր ականջին հասաւ մի խուլ, հեռաւոր դղրդիւն:
— Ի՞նչ էր, — բացականչեց ընկերս, ոտքի կանգնելով վախե-
ած:

Մեր մօտից մի մարդ անցաւ վազէվազ. նա հեռում էր:
— Ի՞նչ էք կանգնել անշարժ, — գոչեց նա առանց կանգ առա-
կլու, — չլսեցիք... զազի պայթիւնը... Շուտա փախէք դուրս: — Եւ
նահետացաւ: Նոյն բողէին մեր ճրագները հանգան և մենք թաղ-
եցինք թանձը խաւարի մէջ: Օդը սաստիկ խեղդող դարձաւ:
Գլխավատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափո-
խն:

Բայց մւր ենք վաղում: Մեր աջ ու ձախից ձգւում են ան-
աշխ ոլորուն անցքեր, որոնք նոյնպէս թաղւած են խաւարի
էջ: Նրանց վրայ գտնում է նոյն տեսակ մութ անցքերի մի
որիշ շարք, ապա երրորդը, չորրորդը: Ի՞նչպէս գտնենք մեր
անապարհը այդ ահազին լաբիրինտոսի մէջ, այս սոսկալի ստոր-
ովկեայ աշխարհում, երբ զրկել էինք մեր անբաժան ընկեր
ապտերի լոյսից: Սովորական ժամանակ այդտեղ դէս ու դէնից
ուստոր կետեր են երկում, բանտորների լապտերները, իսկ
ոչմ... Մարել են մեր այդ կենսատու աստղիկները, իրանց հե-
տու տանելով մեր կեանքն ու մեր յոյսերը:

Վազում ենք սակայն: Յանկարծ մեր առաջ թանձը ծուխի
պատ է բարձրանում: Մոռայլ, գարշելի հոտ ունեցող խաւարը
տատել է մեզ չորս կողմից, այրում է մեր դէմքերը: Գլուխ
ուսոյտ է գալիս: Խեղդւելու վրայ ենք: Եւ խելազարի պէս յետ
ու վազում այս դժոխքից:

Բայց ուր էլ որ գնում ենք, այդ անիծած գազերը անան-
անելի պատնէշի հման մեր ճանապարհը կտրում են ու յետ
ում:

Միանոյն տեղում չենք կարողանում մնալ, դէս ու դէն ենք
հատում, շըջում, պտտում այդ մութը հանգում, որը չի ու-
ռում մեզ բաց թողնել ու պինդ բռնած պահում է մեզ իր մը-
այլ ճիրաններում:

Բ.

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իջ-
ում, մազցում, սահում:

Սրահի վերի մասում մի ինչ որ պատճէշի ենք հանդիպում, ձեռքերով շօշափում ենք և ամբողջ մարմարվ ցնցւում: Դա դիակների մի ամբողջ դէզ է՝ կուտակւած և դէս ու դէն ցրւած:

Դիակները դեռ սառած չեն: Պարզ էր, որ մեր գալուց քիչ առաջ էին մտել իրանց յաւիտենական քունը: Խեղճէր, երկի նրանց բանելու տեղը շատ մօտիկ է եղել պայթիւնի տեղից և մեզանից շուտ են ենթարկւել վատ գաղերի ազդեցութեանը: «Անշուշտ մեզ էլ նոյն վիճակն է սպասում մօտիկ ապագայում», մտածում եմ ես ու գարձեալ ցնցւում:

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և գնում: — ան-
վերջ գնում:

Ուսներս տանում են ինձ բոլորովին մեքենաբար. Էլ չգիշեմ, թէ որտեղ ենք գտնւում մենք, ուր ենք գնում: Մտքերս չեմ կարողանում կենարոնացնել մեր գրութեան վրայ: որ որոշեմ անելիքս: Շարունակ մտածում եմ իմ սիրելիների մասին. արդեօք բաղդ կունենամ նրանց տեսնելու: Ի՞նչքան լաց է լինում երկի կինո՝ փոքրիկիս զրկած, ինձ անշուշտ կորած համարելով:

Բոլորս լուռ ենք, տխուր մտածմունքների մէջ խորասուզ-
ւած:

Յանկարծ մեր առաջ մի բան է շարժւում մթութեան մէջ: Եւ լսում է մի ձայն, մի մարդկային ձայն, որի մէջ մի անսահման ուրախութիւն էր հնչում:

— Ահա, ահա, գալիս են մեզ ազատելու:

Այդ մի ձայնից յետոյ լսում է երկրորդը, երրորդը: Նրանք հնագ հոգի էին: Տեղներիցը վեր են կենում և վագում դէպի մեզ:

Մթութեան մէջ վնարում ենք իրար, ձեռներս պարզած, աշքակապուկ խաղացող երեխաների նման: Տալիս ենք մեր անունները և յայտնում, որ մենք էլ նրանց նման հանքի գժբաղդ բանդարկեալներն ենք: Դժւար է նկարագրել խեղճերի յուսախա-
բութիւնը:

Առաջարկեցինք, որ մեզ միանան ու գնանք միասին հանքի ելքը վնարելու: Եւ գտանք... քսան օր գետնի տակ խաւարի մէջ անտանելի տառապելուց յետոյ:

ԱՇԽԱՏԱՀՈՐԻ ՄԱՀԸՆ

(Ադա Նեղըի)

Յակովիքնան

Հսկայ շինութեան բարձր տանիքին
վաղ առաւօտից նա աշխատում էր,
կարիքն ու հոգաը իր ընտանիքի
Նրա եռանդը կրկնապատկում էր:

Երկար աշխատեց... և արեգակը
Մօտ էր կէսօրին՝ ճաշելու ժամին.
«Շտապիր, ճաշի է ժամանակը»,
Ասաց նա ուրախ իր հարեանին:

Յանկարծ սայթաքեց բարձր տանիքից,
Տապակւեց գեաին ջարդւած դիակով.
Մարդիկ, սարսափած այս դժբաղդ դէպքից,
Կանգնել դիտում են ապուշ հայեացքով:

Նըտնք համակւած կեղծ ցաւակցութեամբ,
Հետաքրքրւած հոսող արիւնով,
«Ափսոս» են ասում անամօթութեամբ
Ու անցնում, դէպքը մոռացման տալով:

Եւ միայն կինը ու քաղցած որդիք
Չեն մոռանալու աշխատաւորին.
Թոյն՝ ատելութեամբ պիտի անիծեն
Բիրտ ու քարացած խիղճը մարդկային:

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Վախտերով)


Թարգ. Յովհ. Արաբաջնան

ա.

Գործարանի առաջին զիլ սուլուցը խանգարեց վաղ առաւօտեան հանգիստը: Իբրև արձագանդ դրան, քաղաքի զանազան կողմերից, անկարգ և աղմկալի, սկսեցին հնչել ուրիշ բազմաթիւ

սուլոցներ, չորս կողմը տարածելով իրանց խռպոտ և վայրեն աղաղակները, կարծես հրէշաւոր աքաղաղների մի գաս իրանց մետաղէ կոկորդներով հրաւիրում էին ջնջաւորներին աշխատանքի: Հսկայական գործարանները, որոնց երկար ու բարակ ծինելոյզները հազիւ նշմարւում էին առաւօտեան աղջամուղջի մէջ սկսում էին գանդաղ արթնանալ, չորս կողմը տարածելով կրակեզրուների և ծխի քուլաներ:

Բանւորների անընդհատ շարքերը երեք կողմից սկսեցին գմել դէպի գործարան և բաց դռները կարծես դէպի իրանց էլ ձգում մարդկանց այդ կենդանի հեղեղները:



Կտակի գործարանի ներսը:

Ամեն կողմ մտատանջ, մռայլ դէմքեր... Ջայն, ծպտուն շլստում: Օրը երկուշաբթի է, հանգստից յետոյ՝ վաստակի առաջին օրը—ոչ ոքի դէմքին ժպիտ անդամ յես տեսնիլ այսօր...

Բանւորները գալիս են, հա գալիս, մի 10—12 ըոպէի մէկ երկու հազարից աւելի մարդ արդէն շարւած են մեքենաներ շուրջը, որոնք գրաւում են գործարանի հսկայական հինգ յարկանց շինութիւնը:

Մանենք ջուրհականոցի բաժանմունքներից մէկը:

Սա մի ահագին դահլիճ է, որի տանիքը պաշտպանւում է

միքանի շարք չուզունի սիւներով։ Զնայելով չափազանց մեծ-մեծ պատուհաններին, ցերեկն անգամ՝ սենեակի լայնութեան շնորհիւ բաւական մութն է լինում։ Դահլիճում խիտ-առ-խիտ շարւած են բազմաթիւ մեքենաներ, իսկ առաստաղի մօտից անցնում են երկաթէ ճախարակաւոր գլաններ. իւրաքանչիւր ճախարակից դէպի ամեն մի մեքենայ ձգւած է անծայր փոկը։ Յատակն անմաքուր է և տեղ—տեղ ջարգւած. սպիտակացրած պատերը փոշուց ու մըից գորշ գոյն են ստացել։

Բ.

Ներսը ոչ խօսակցութիւն, ոչ ծիծաղ է լաւում. ամենքն զբաղւած են իրանց գործով—մաքրում են մեքենաները, ուղղում մակոյկները և այլն։ Համարեա բոլորը բռնել են իրանց տեղերը, սակայն կեանքը չի եռում դեռևս, շոգեմեքենան դեռ անշարժ է։

Հսկայական գործարանն ունի իր սիրու—շոգեմեքենան, որ տեղաւորւած է առանձին շինութեան մէջ։ Այստեղ ամեն ինչ փայլում է արտասովոր մաքրութեամբ։ Այս պողպատէ սրտի ամենաշխատը մասերից սկսած մինչև ամենամանրիկ մասնիկները, բոլորը բոլորը մաքուր ապակու նման փայլ են արձակում։ Սենեակի յատակը գեղեցիկ է և մաքուր, պատերը ներկած իւղաներկով, սանդուխները յարմարւոր ճաղերով պաշտպանւած։

Պողպատէ հրէշը լուռ է և անշարժ. հանդարտ կախ են ընկած մետաղէ պարաները, որոնք միացնում են նրա ահագին անիւր իւրաքանչիւր յարկի գլխաւոր գլանների հետ,—և ամբողջ գործարանը սուլոցներ, թէ իսկոյն շոգեմեքենան կըշարժէի։ Անցագլարար սուլոցներ, մի երկու բողէ... կուռմ է երկլորդ սուլոցը և դրանից անմիջապէս յետոյ, անիւր առաջին իսկ պտոյտի հետ մեր ջուլհանակների մի շարժումով՝ աւելի քան երկու հարիւր մեքենայ պարունակող դահլիճն իր երկու երեք հարիւր բանւորներով սկսեց աղմկել և կեսդանութիւն ստացաւ։ Անիւների վըզգոցը, մակոյկների

չըխկչըխկոցը, գանազան մետաղէ մասերի ճընկճընկոցը, բանւոր-ների աղաղակը, այս բոլորն իրար խառնւած՝ արհեստանոցը լըց-նում են մի անպատմելի աղմուկով:

գ.

Պտըտւում են անիւները, աղմկալի շարժւում մէքենաները, մակոյկներն արագ-արագ անցնում հենքերի միջով, աչքերն անթարթ հետեւում թելերի շարժումներին, իսկ ձեռքերն անդադար աշխատում են ու աշխատում... Քրտինքը կաթիլ-կաթիլ թափւում է երեսներից, կրծքերում սիրան է ուժգին բարախում... Իսկ թելերը սողում են ու սողում անվերջ, անպատմելի աղմուկի տակ՝ գործն է եռում։ Բայց այնտեղ, գուրսը, հեռու-հեռու, փուած են անտառները, ընդարձակ զաշտերը. աղատ է չնչւու և այնտեղ, գուրեկան է կանաչ ճնների հովանու տակ... Զով է անտառում, այն-պէս հանդարտ, այնպէս լուռ է չորս կողմը։ Տառանւում է ցորենի արտը մեղմիկ զեփիւսից։ Հանդարտ լուրում են սպիտակ ամպերը կապոյտ երկնքում։ Իսկ այստեղ... Խեղդող փոշու ամպերը բռնել են օդը, շարժւում, տարածւում... Պտըտւում են անիւները, աղմկում մեքենաները, սողում, անբնդհատ սողում են թելերը...

Համեմատութիւն դրէք գործարանական եւ դաշտային կեսնիք մէջ։

Ա Ն Ի Ի Ի Տ Ա Կ

(Աղա Նեղբի)

Յ. Յակովիան

Օ՛, անմեղ տեղից քանի զուր տանջանք
Բերում ես դու, անողոք սև կեանք.
Զէ, էլ չենք տեսնիլ միսիթարութիւն,
Զէ, չի պակասելու մեղ թշւառութիւն։

Տեսայ ես մի օր—թել աղջկան
Զարդել էր, կտրել արագ մեքենան,

Ասես՝ թէ կոկիծ, խուլ հառաջանքներ,
Եւ արիւնալից սև տեսարաններ

Եին պահանջում մեռած ոգիներ.
Օ՛, երանի թէ իմանաք դուք էլ
Քանի՛ տառապանք, վշտե՛ր անհամար
Տանում է մարդը սև հացի համար:

Խեղճ հաշմանդամը այժմ ի՞նչ անի,
Կարեքի հոգաը արդեօք կըտանի՛...
Հարուստը նրան հօ չի մօտ գալու,
Այս կրակ ցաւին լուծումն տալու:

Ազնիւ աղջիկը, ով Աստւած բարի,
Էլ հնց աշխատի առանց ձեռների,
Եւ այն՝ մի օտար, անյայտ աշխարհում,
Որը խեղդւում է հեկեկանքներում:

Ու պիտի մուրայ... ուրիշ ելք չկայ,
Խեղճ հաշմանդամը անտուն ու անտէր.
Եւ այս վիճակւեց այն որբ աղջկան,
Որը ուխտել էր ցմահ աշխատել:


ԱՆՎՃԱԾ ՎԱՍՏԱԿԱԽՈՐԾ

Թարգ. Յովհ. Արարաջեսն

ա.

Մեղանից աւելի քան հարիւր տարի առաջ՝ մի օր Ամերիկայի Նիւ-Նօրկ քաղաքի գրեթէ բոլոր բնակիչները խռնւել էին նաւահանգստում տեսներու, թէ ինչպէս են ջուրն իջեցնում մի ինչ որ նոր, չտեսնած նաւ. Ափի մօտ երևում էր այդ տարօրինակ նաւը՝ առանց կայմի և առագաստի. մի երկաթէ ծխնելոյզ միայն տնկւած էր տախտակամածի մէջտեղում: Սա առաջին շոգենաւն էր, որ հսարել էր մեքենագէտ Ֆուլ'տոնը: Ամբոխի աղմուկն ու հոհոոցը բռնել էին օդը. յաճախակի լուռում էր Ֆուլ'տոնի անունը և ապա հնչում բարձրաձայն քրքիջ...

— Ահա կըտեսնէք, — խոփոտ ձայնով ասում էր մի ինչ որ ծերունի, գառնողով ընկերներին. — այս նաւը ջուրն իջեցնեն թէ չէ, իսկոյն իրան մեքենայով ու անիւներով ջրի տակը կանցնի: Ես ինքս ծովագնաց եմ, — շարունակում էր ծերունին, — ամբողջ կեանքս նաւերի վրայ եմ անցկացրել: Խուած բան է, որ մեքենան մի ահազին նաւ շարժէ ջրի երեսին:



— Նայեցէք, նայեցէք, — գոռում էին միւսները, — իջեցնում են:

Եւ ճիշտ որ, կամաց-կամաց նաւն իջեցրին ջուրը. Ծխնելոյզ-զից սկսեց ծուխը քուլա-քուլա բարձրանալ, անիւները շարժեցին և շոգենաւը, ինչպէս մի ջնչաւոր, տնքալով ու վշշալով ըսկուեց պայուս գործել: Տախտակամածի վրայ երևաց նրա հնաըլողը՝ Ռոբերտ Ֆուլտոնը:

— Մի անգամ էլ եմ առաջարկում ձեզ, պարոնայք, ով է ցանկանում գալ ինձ հետ, — բարձր ձայնով առաց ֆուլտոնը դառնալով դէպի ամբոխը:

Բայց փոխանակ պատասխանի, չորս կրզմից հօճոռ ու սուլոցներ լսեցին: Ապշած և խորապէս վշտացած, նայում էր Ֆուլտոնը ամբոխին. անվատահութիւն և արհամարհանք — սահանրա վարձատրութիւնը իր երկարամեայ ծանր աշխատանքի փոխարէն:

Ծանր անքալով՝ շոգենաւն սկսեց՝ հետզհետէ հեռանալ ականատեսների աչքից։ Աբմոխը ցրւեց, անընդհատ ծաղրանքներ ուղարկելով շոգենաւը հսարողի հասցէին։

— Տեսաք, ինչ էր ուզում, — ասում էր մէկը։

— Ցնդել է խեղճը։ Գնա նրա նաւով... Զգիտեմ, ով է ձեռք վերցրել իր կեանքից։

Բոլոր բան նամակ դաքանական պահում է։

Շօգենաւն առաջաց էր շարժում գետն ի վեր։ Գլուխը քարշակած տիսուր գէմքով կանգնած էր ֆուլտօնը ատախտակամածին։ Նաւը լողում էր, գեղեցիկ տեսարանները, մէկը միւսի յետեւց, տեղի էին տալիս իրար, սակայն, ֆուլտօնը ոչինչ չէր նկատում... Նա խորասուզւած էր իր մտքերի մէջ։ Նրա յիշաղութեան մէջ պատահացաւ իր ամբողջ անցեալը, զրկանքներով ու դառնութիւններով լի կեանքը։ Ահա նա, զրքենու ու տեարակները կանատակին, գնում է դպրոց, կարգում է ու գրում, աշխատում է գիշեր-ցերեկ. Ազատ ժամանակ վագում է այս կամ այն ար-է գիշեր-ցերեկ. Ազատ ժամանակ վագում է այս կամ այն ամեն բան ուշի ուշով դիտում, սովորում, նորանոր հետանոցը, ամեն բան ուշի ուշով դիտում, սովորում, ամեն պաշար հաւաքում, երբեմն երեքմն նկարչութեամբ էլ է պարապում. և նկարները—սրբերի պատկերներ կամ տեսարաններ, — վաճառքի հանում. և փողերը մօրը տալիս։ Ի՞նչ մեծ ուրախութիւն էր նրա համար, երբ իր հաւաքած փողերով նրան յաջողւեց մի ադարտկ գնել մօր համար։ Ապահովելով մօրը, ինքը դիւեց մեց Սնգլիա կապարելագործելուց երկու տարի շարունակ ամենայն սիրով ու եռանդով աշխատում է նա զանազան մեքենաց գէտների արհեստանոցներում։ Յանկարծ նրա գլխում միտք է ծագում մի այնպիսի նաւ շինել, որ շոգու միջոցով, առանց առագաստների, անիւններով ման գայ ջրի երկախն թէ հանդարտ կիթէ փոթորկալից եղանակին, քամ ու ուղղութեամբ և նրան հակառակ եւ ֆուլտօնը երկար տարիներ գլուխ է կոտրում իր միտքըն իրագործելու վրայ... Եւ ահա այսօր նա հասաւ իր նպատակին, սակայն ինչ... Հրապարակաւ ծաղրի և սուլոցների առարկայ դարձած՝ մենակ լողում է նա իր շոգենաւով։

Այդ միջոցին շոգենաւը մօտեցաւ մի փոքրիկ բաղաքի և կանգ առաւ նաւահանգստում։ Հետաքրքիրների մի խումբ հաւաքւեց ափին։ Այստեղ էլ Թուլ'տօնն առաջարկում էր ճանապարհորդներին իրան հետ Նիւ-Եօրկ վերադառնալ, սակայն իզնւր, —դարձեալ ոչ ոք չընդունեց նրա առաջարկը։

Երկար կանգնած մնաց շոգենաւը։

Վերջապէս ամբոխի միջից նաւը բարձրացաւ մի ճանապարհորդ։ Համարեա գրկաբաց ընդունեց նրան Թուլ'տօնը և քիչ մնաց արտասւէր, երբ նորեկը վճարեց նրան ճանապարհավարձր։ Մի քանի ըստէ շարունակ Թուլ'տօնը նայում էր փողերին, կարծես չէր հաւատում աչքերին…

—Սխալւած չեմ արդեօք. գուցէ աւելի՞ է հարկաւոր տալ, —ասաց ճանապարհորդը, նկատելով, որ Թուլ'տօնը երկար և անթարթ նայում է փողերին։

—Ոչ, ոչ, ճիշտ է, —պատասխանեց Թուլ'տօնը։ —Հէսց այսքան էլ ես նշանակել եմ։ Բայց գիտէք ինչ. դուք առաջինն էք, որ համաձայնեցիք փորձել իմ գիւտի օգտակարութիւնը և այս փողը իմ երկարամեայ աշխատանքի առաջին վարձն է…

Եւ Թուլ'տօնն անկեղծօրէն բաց արաւ անծանօթի առաջ իր վշացած սիրաը. նա պատմեց, թէ ինչ արդեկքների էր պատահել նա իւրաքանչիւր քայլափոխին՝ սկսած այն օրից, երբ նրա մէջ միտք ծագեց շոգենաւ շինել։

—Այժմ, —այսպէս վերջացրեց Թուլտօնն իր ճառը, —ինչպէս տեմնում էք, շոգենաւն արդէն պատրաստ է և շրջում է քաղաքից-քաղաք՝ իր ծառայութիւնն առաջարկելով բնակիչներին։ Եւ ինչ…

—Մի վհատէք, —ընդհատեց նրան ուղեկիցը. —միքանի տարուց յետոյ ձեր շոգենաւերով կըլցւեն ծովերն ու գետերը ամեն ուղղութեամբ։ Ապագան ձերն է.. .

Ճանապարհորդի գուշակութիւնն իրականացաւ։ Ում ճանօթ չէ այժմ շոգենաւը իր տւած օգուտներով։

1815 թ. վետրւարին Նիւ-Եօրգի համարեա բոլոր բնակիչն

Ները գնում էին մեքենագէտ Ֆուլ, տօնի դադաղի յետեից՝ մաս-
նակցելով նրա թաղման տխուր, բայց փառաւոր հանդիսին։
Շոգենաւերից որոտացող թնդանօթներն իրանց ձայնով կարծես
ասում լինէին, թէ մեծ մարդը չէ մեռել բոլորովին, այլ իր գիւ-
տի շնորհիւ նրա յիշատակն անմահ կըմնայ սերնդից-սերունդ։

Սկզբում՝ ինչո՞ւ էին բոլորը ծաղրում ֆուլ տօնին։ Ի՞նչ օգուտներ
են ստանում՝ մարդիկ շոգենափց։

Մ Ի Վ Հ Ա Տ Ի Բ

Ա. Ծատուրեան

Դարերով անբաղդ, դարերով թշւան,
Իմ խելճնեւկ եղբայր, դու մի վհատիր,
Որ կարծես ոսոխ, անգութ, անարդար
Քեզ հալածում է սև ճակատագիր։

Գիտեմ, չարութեան ծանր լծի տակ
Գու շատ ես տանջւել ու շատ համբերել.
Շատ ես փափաղել դու մի այլ վիճակ,
Երկար յուսացել, երկար սպասել...

Բայց մի վհատիր... Թող խորին հաւատ
Դեռ ալեկոծէ քո տանջւած հոգին.
Շատերն են քեզ պէս մնում յուսահատ
Աղատիչ գարնան քաջ յաղթանակին...

Եւ ինչ կըլինէր, թէ դառն օրերին
Մարդկային կեանքում, փոթորկի նման,
Ոսկեզօծ յոյսեր սիրտ չյուղէին.
Հաւատը զոհւէր յուսահատութեան...

Վաղուց մարդկութիւնն անյօյս, ցաւագար
Վշտերի ծովում կըգտնէր վախճան.
Չոր անսապատի կըփոխւէր աշխարհ,
Կեանքը կդառնար մթին գերեզման...

ԱՄԵՆԱՄԵԾ ԱՇԽԱՏԱԽՈՐԾ

ամենամեծ պատուի բայց պատճեն մանրակ այս խորհըշտառ ամենայ խոհան ըստի օգտագործարն առանողություն ունի ամենամեծ

Սարասրուրդ քաղաքի մօտակայքում, մի էին, կիսաւեր վանքի սենեակում, լարւած աշխատաւմ էր մի մարդ, Յովհան Գուտենբերգ անունով։ Մեծ ու մանր զանակներով, սրածայր փորիչներով և բգերով նա ջղաձգօրէն կտրատում, փորագրում, ծակծկում էր փայտի կտորները, երեքմն միայն գլուխը թափ տալով ճակատին իջած խիտ մագերը յետ գցելու համար, նրա շարժումները արագ էին և ոգեսրածած։ Քունն ու քաղցը մոռացած՝ ճարպիկ ու ամուր մատներով շտապ շտապ բանում էր. փայտի մանրուքն ու տաշեղը թափթ փւում էին նրա երկար մօրուքի վրայ, որ անկարգ ցըիւ էր եկել լայն կրծքին։ Դուռը ամուր փակւած էր, լուսամուտի վարագոյրները իջեցրած։



Զարմանալի բաներ էին պատմում Գուտենբերգի և նրա ծածուկ պարապմունքների մասին։ Ասում էին՝ թէ կախարդ է, գործ ունի գերբնական ուժերի հետ Վաղուց է՝ որ տեղափոխւել է Սարասրուրդ, փախչելով հայրենի Մայնցից քաղաքային խոռվութիւնների ժամանակի, Հակառակորդները նրան զրկել էին հայրական ժառանգութիւնից, բայց նա չէր ընկածում և յափշտակւած պարապում էր գիտութեամբ և արհեստներով։ Նա սովորել էր ոսկերչութիւն, ինքը հնարել էր թանկագին քարեր ողորկելու մի նոր

միջոց, գեղեցիկ հայելիներ էր շինում, մետաղէ չը ջանակներ էր ձուլում, նախշերով զարդարում։ Ամբողջ հոգով սիրել էր ձեռարւեստը. ինքը ազնւական էր և ուզում էր իր դասակարգի մարդկանց հետ միացած մի գործ սկսել. բայց աղնւականներից ոչ ոք չուզեց միանալ նրան՝ արհամարելով՝ արհեստն ու ձեռքի աշխատանքը։

Այն ժամանակ նա ոտնատակ տւեց նախապաշտումն զլրը, անդամ գրւեց ոսկերիչների համքարութեան և հասարակ արհեստաւորների հետ ընկերակցութիւն կազմեց՝ ակնեղէն և հայելիներ շինելու համար:

Բ.

Այն օրից, երբ Գուտեհնբերգը մօտեցել էր ամբոխին, մի ծածուկ արտմութիւն համակել էր նրա հոգին: Շուրջը տեսնում էր անթափանց տգիտութիւն և կոպտութիւն, չէր կարողանում հաշտել այդ ամենի հետ: Նոյն իսկ այն հազւագիւտ մաշղիկ, որոնք մի կերպ կարդալ էին սովորել և կուզենային դուրս գալ իրանց մտակերպ կարգալ էին սովորել և կուզենային դուրս գալ իրանց մտակերպ կարդարից, ոչինչ չէին կարողանում անել, որովհետեւ ուսումնական ընթացիկ շատ դժւար էր, ձեռագիր գրքերը թանկ էին և սակաւաթիւ:

Գուտեհնբերգը գիշեր-ցերեկ մի բանի մասին էր մտածում — ի՞նչ-պէս մի ճնորդ գտնի, որ գրքերը ամենքի համար մատչելի գտնենան: Դրա համար էր, որ նա փակւում էր մենակ իր սենեակում:

Դրա համար էր, որ նա փակւում էր, թէ ճնաբը գտել է: Աշխատում: Եւ այժմ ճնան թւում էր, թէ ճնաբը գտել է: Փայտից կարատել էր հաւասար քառակուսի ձողիկներ, քսան և չորս հատ, լատինական այբուբենի տառերի թւով. ամեն մէկի գլուխին փորագրել էր մի-մի տառ բարձրաքանդակ և թարս, իսկ ձողիկների տակերը ծակել էր, իրար կողքի շարել այբբենական կարգով, ծակերով թել անցկացրել, ամբողջ շարքը իրար հետ կարգով, ծակերով թել այժմ թաթախում էր մի ու հեղուկի մէջ ամուր կապել և այժմ թաթախում մի իտոր մագաղաթի վրայ ու ձողիկների զլուխները, ապա դնում մի իտոր մագաղաթի վրայ ու ամբողջ մարմնով ընկնում վրան:

Մագաղաթի վրայ գրոշմւում էր լատինական այբուբենը: Յուղ-ւած գուտեհնբերգը նորից է կնքում իր շարւածքը, կրկին նոյն այբուբենը, երրորդ, չորրորդ անգամ: Հիացած նա քանդում է շարւածքն ու նորից շարւում ձողիկները, այս անգամ իբրև մի շարւածք ամուսնու ու ամուսինի կամաց գալու մագաղաթի վրայ: Տապւում է մի բառ...

Բազմաթիւ տարիների երազանքը իրականացած էր. գաել էր վերջապէս գրքերը բազմացնելու և էժանացնելու միջոցը:

ի՞նչքան պարզ բան, ի՞նչքան հասարակ։ Աստւած իմ, ի՞նչպէս
էր, որ մինչև այժմ զլխի չէր ընկել։

Բայց փայտը փափուկ է, շուտով է ծուռում, մաշտում կամ
կոտրում. և միշտ ձեռքով դրոշմելն էլ դժւար է։

Գուտեհնբերգը նորից անխոնջ աշխատում է իր սենեակում,
մարդկանց աչքից հեռու։ Նոյն իսկ ընկերակիցները կարծում էին,
թէ նա հայելիների նկարներն ու քանդակներն է գծագրում, որ
այդչափ երկար նստած է գիշերները և ազատ րոպէներին անգամ
դուրս չի գալիս իր առանձնութիւնից։ Մինչև այժմ իր բոլոր
ուժերն ու շահած փողերը նա գործ էր գնում իր գիւտը կատա-
րելագործելու համար։

Նա մտածեց մետաղից ձուլել տառերը. կաղապարներ ոլատ-
րաստեց՝ տառերը մէջը շարելու համար, որ բառեր կազմւեն, բա-
ռերից տողեր, տողերից երեսներ. շինեց տախտակներ և շշա-
նակներ, որ շարւածքը ամուր սեղմւի ու կապւի, որ ոչ մի տառ
միջից չթափւի. հնար գտաւ շարւածքի մէջ սպրուծ սխալներն
իսկոյն բաղկելու. հնարեց զանազան գոյնի շուտ չորացող թանաք-
ներ, հնարեց բարձեր, որ թանաքը տառերի երեսին հաւասար
քսւի։

Ապա սկսեց մտածել մի այնպիսի մեքենայի մասին, որ շար-
ւածքի վրայ թուղթը գնելիս՝ հաւասարապէս ճնշի և թուղթը չը-
պատուի։

Դ.

1440 թւի մի գեղեցիկ օր Գուտեհնբերգը արագ քայլերով
գնում էր Սարասբուրգի նեղ փողոցներով դէպի իր ծանօթ ճա-
խարակագործ վարպետի արհեստանոցը, թիկնոցի քղանցքի տակ
մի մեքենայի փոքրիկ օրինակ պահած։ Ուզում էր նոյն մեքե-
նան աւելի մեծ շափերով պատւիրել։

Վարպետը օրինակը ձեռքին շուռ ու մուռ տւառ և մի տեսակ
արհամարհանքով և ծաղրական եղանակով ասու։

—Ձեր ուզածը մի նոր ձեի ճգմիչ է, մի նոր ձեի մամուլ,
պարոն Յովհան։

—Այն, —պատասխանեց Գուտեհնբերգը ոգեսրութեամբ. —իս-
կապէս դա մի ճգմիչ է, մի մամուլ. Բայց մի մամուլ, որից շու-

առվ հոսելու է անսպառ հոսանքով ամենահրաշալի ըմպելիքը, որ
երբեք յագեցրել է մարդու ծարաւը։ Այդ մամուլի միջից վեհ
ճշմարտութեան աղբիւրն է բղիւրու, այն լոյսն է հոսելու, որ
պիտի ցըւէ տղիտութեան խաւարը և չտեսնւած ճաճանչներով
պիտի փայլէ մարդկանց հոգիներում։


Երբ մի փոքր ժամանակից յետոյ վարպետը յանձնեց Գուտեն-
բերգին պատրաստի մեքենան, կարծես հասկանալով՝ որ այդտեղ
մի մեծ գաղտնիք է ծածկւած, բացականչեց։

— Ես տեսնում եմ, պարոն Յովիան, որ դուք հաղորդակից էք
երկնային հոգիներին։

Անշուշտ նա ինքն էլ լաւ չէր հասկանում, թէ ինչ էր ասում,
բայց նրա բերանով ճշմարտութիւնն էր խօսում։

Նրա բերած մեքենան առաջին տպազրական մամուլն էր։





Առ Առաջ Եկամուտահան

ՀՈՐԻՇՈՅ ԲԱԺԻՆ

ԲԵՐԻԹԵՑՆ ՏԵՍՔԵՐՆՆԵՐ ՃԵՆԵՊԱՐՀԱՐՄԱՆԹԻՒՆ

Ս Ա Ր Ի Ո Ր

Դ. Միքարեան

III.

Արել չելած՝ սարւորն արթնացաւ,
Նորից ձորերում աղմուկ՝ բարձրացաւ.
Նորից սայլի տակ ճռռում է ճամուն,
Փռիռում հարսի քօղն ու զաթիքան.
Դալար իւրդերը ամպերի տակին
Ոչքերը գցած քոչւորի ճամպին՝
Ժպտալով յակինթ ցօղերով առատ,
Կանչում են կարծես բոյրով անարատ:
Կանաչի վրան աւթաւան՝) ձեռքին՝
Կրօնասէր թուրքը չոքեց նամազի,
Զենները զգոյշ տանելով միրքին՝
Աղօթք է անում Աստծուն մեկուսի:

IV.

Կէսօր է արդէն. կանաչ լալւարից
Իշնում է հանգիստ ոչխարը կթի.

1) Զբամանի մի տեսակը:

կթւելով մաս-մաս անցնում է բերից¹⁾), զոված
Լուռում է անուշ վիշտով կաթի:
Հովիւ, հովունի նստատած շարքով
կթում են ուրախ և անհոգ խնդում.
Երբեմն էլ այրւած անուշիկ երգով
Սէր են զարթեցնում մէկ-մէկի սրառ մ:
Վերջացաւ արդէն ոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մէկն էլ գտակը շարժելով օդում,
Դեռ գտոնարածին՝ «Եկ, հէյ» է կանչում:

Պ.

Երկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հօտը երևաց.
Խառնելով նրանք մայրերի հօտին,
Բերկրանքի յոյզով մայում են ցրւած.
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայնելով փնտրում են միմեանց.
Որը գտնելով իրա գառնուկին,
Ծծել է ատիս փայելով սրտանց,
Որը խաղում է մօր հետ կուշով փորով,
Որն էլ մնում տիսուր մայելով.
Եւ ամեն անզամ գառը մէր տալիս²⁾),
Կարծես թէ անուշ համերգ են տալիս:
Բայց շուտ ջոկելով մայրերը գառնից,
Հովիւը քշեց նրանց դէպ արօտ,
Մահակն էլ ուսին գառները բինից
Տարաւ գտոնարած սառն աղբիւրի մօտ:

Պ.

Հովիւ, գառնարած, մի տեղ խմբւելով,
Լախտի են խաղում, առոյգ թռչկոտում.
Հրճում են նրանց կայտառ խաղերով

¹⁾ Ոչխար կթելու տեղը: ²⁾ Գառներին իրանց մայրերի մօտ թողնելիս:

Ծերերը, ծածկւած գառան մուշտակում,
Ամեն մի նրանց ճարպիկ թռիչքով
Յիշում են վաղուց կորած մանկութիւն,
Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,
Կանչելով «նամարդ, նամարդ ծերութիւն»:
Մէկն իր մուշտակը մի կողմն է դցում
Եւ դիտմամբ խառնուում տղերանց խաղին.
Մի լախտ է խլում, ոլորում ձեռքում
Եւ ասիթ տալիս անվերջ ծիծաղին.
Կանչում են՝ «Աթօ, լախտը թոցընւ,
Մեր պապի մէջքը մի լաւ տաքցընւ»...

ե.

Մի տեղ ճիերը տըրտընդի տալով,
Փըռուացնում են, սարերը փախչում,
Զահէլ տղերը քամանդ¹⁾ առնելով,
Նրանց յետկից սիւրաղ²⁾ են թռչում,
Մի խամ, չնատած վայրի քուռակի
Ամեն կողմից էլ կալմէջ են անում.
Ով նրան մենակ բռնի ու թամքի,
Նա մի քալաղի նամառ է տանում.
Բայց տաքացել է, կատաղել խամ ճին,
Տղերանց վրայ ծառս-ծառս է³⁾ լինում.
Երկար քամանդը քաշելով զզին,
Խեղդում են նրան և թամքը գնում:
Զուռնան էլ՝ թողած մի կողմը լախտին,
Փչում է արդէն տաք-տաք ջիրիդին.
Տղերքը միմեանց առաջ են քշում,
Ծերերը դարձեալ խոր ախ են քաշում:
Իսկ հարս ու աղջիկ սափորը ուսին՝
Գնում են խումբ-խումբ աղբիւքը ջրի,
Դողում են նրանց ժպտուն երեսին

1) Զի բռնելու պարան։ 2) Զիարշաւ՝ առաջ ընկնելու նպատակով,

3) Յետին ոտների վրայ կանգնում, ծառանում։

Բոլոր գոյները Գուգարք լեռների,

Եւ բիւր ծաղկանիշ նաշխուն շորերով

Անցնում են նրանք ուղին հոտաւէտ

Եւ թարմ կուսական հմայիչ բոյրով

Մըցնում են սարի ծաղիկների հետ:

ԳՅՐՆԱՆ ԱՌԱԽՈՏ

Յ. Ք. ԾՈՂՈՎՐԵԱՆ

Աննման և սքանչելի էին գարնան խորհրդաւոր և կենսատու տեսարաններն այն անմեղ վայրերում, ուր ամեն մի երևոյթ կարծես աստւածային շունչ, աստւածային անմահութիւն ու մեծութիւն էր իր մէջ բովանդակում: Երկինքը յստակ, ինչպէս հայելի, անտառը գուգւած, որպէս փեսայ, գաշտերը նորահարս, հօտաղները, հովիւները, առուներն ու թռչուններն էլ իբրև մի մեծ հարսանիքի փողհարներ, բնական և աննկարագրելի քաղցր ներդաշնակութեամբ ձայնակցած իրար, աար, ձոր բլուր ու հովիտ և լեառն ու այր մի-մի նւազարան դարձրած՝ երգում ու վառում էին իրար և դիւթում, կախարդում մարդու հոգին ու միտքը:

Արեւ հեռուում դէպի երկինք ցցւած բարձունքների վրայ դեռ էլի ամբարւած՝ ձիւները փայլեցնելով ու հետզհետէ ողջունելով նորականաչ անտառներին և լանջերին, հազար ու մի գոյնով միլիօնաւոր բիւրեղներ էր ձեացրել ամենուրեք, մանաւանդ ցօղաշատ դաշտերում, ուր կարծես թէ մարգարտի փոշիներ լինէին ցանւած: Առւակները, դուրս գալով իրանց մայր—աւազան կոյս անտառներից, խորհրդաւոր մրմունջներով սահելով դէպի վայր, միախառնելով իրար, ասլա վտակ առ վտակ, մի տեղ հանդարտ ու խաղաղ, միւսում յորդանալով ու խաղս ելնելով, վազում էին առաջ և ցրում տափարակներում ու մարգագետիններում:

Բայց յարութիւն առած բնութեան ծոցում միթէ կարելի է միմիայն մի հրաշալիքով զբաւել ու կախարդւել. այնտեղ ամեն մի շունչ յանկարծ քեզ իր կողմն է քաշում, ուշի ու միտքէ

տանում և դու զմայլում ես ու աչքդ անդադար ուզում ես մի տեղից դէպի միւսը թռցնել և ականջդի այս ու այն կողմը դարձնել։ Տաւարների բառանչիւնը, հովիւների սրնզի անոյշ մեղեդիները, մեղուների բզզոցը, արտոյտի գեղեղումն, խոտերի, թփերի միջով շների առաջ ահաբեկւած ոստիւններով փախչող նապաստակները, ժայռերի վրայ կաքաւների անմեղ կղկղոցն թփից թուփ, լանջից լանջ, աջ ու ձախ՝ թերը պըտպըտրիկ, երգերն ու ծլւրցները քաղցրիկ, կտուցները սիրուն թռչունների պտոյտները, կռունկների բարձր-բարձր շարանները, գարնան բացումն ու բուրումն արագ-արագ յայտարարող յոպոտների «յոպ-յոպներ», գառների և ուլերի մայիւնն ու մկնոցը, պատանի հովիւնների անմեղ խտերն ու վագիլը և վերջապէս վարուցանք անող աշխատաւորների պարզ խօսակցութիւններն անհուն բերկրանք ու ցնծութիւն էին պատճառում բնութեանք կարօտած մարդուն և կարծել տալիս, թէ ճէնց այն է զրախտ կոչւած այգեստանն ու բուրաստանը։

Նկարագրեցէք ծեր քնարարի կամ զիւղի զարում։ Եղանակութիւն պարագաներ և մասնաց զանցաւրոյ վայձանուած նմետին ու զայդ զանցայ զայդամաս զամանելուամարդն եւ զանի ու նորդ հայնաց մայզորամ մնացի զայ ու մամայ և ուղարկուած արքան հայրապէտ, հանգույք և զայդ միլ

Գ Ա Ր Ո Ւ Խ Ն հայր հայր զայդից պար նուռնե զայդ ուիր աւերուն ու խոյնութիւնի զգմունք Մ. Պէշիկթաշինան լուր մի ու զայդ զանցայ զայդամաս զամանացն խոյ բանամաս Պէ, ինչ անուշ և ինչպէս զով զայտօնցին խոյ մի զայդամաս Առաւօտոց վիշես, հովիկ, Առաւօտոց ուաշարոց մարսաւ Ծաղկանց վրայ գուրգուրալով մաս համաց միջն կրծք իրացն կուսին վափկիկ, Բայց չես հովիկ իմ հայրենեաց, մաս անցիր սրտէս ի բաց։ Բայց ի հայրապէտի ուարութ ու ուղարկուած միջնորարդն

Ո՞հ, ինչ աղու և սրտագին Ծառոց մէջէն երգես, թռչնիկ, Տ պահանջ Սիրոյ ժամերն ի յանտարին Սիրոյ ժամերն ի յանտարին Հզմայլեցան ի բո ձայնիկ։

Բայց չես թռչնակ իմ հայրենեաց,

Գնա, երգէ սրտէս ի բաց:

Ո՞չ, բնչ մրմոնջ հանես, վտակ,

Ականակիտ և հանդարտիկ.

Քո հայելոյը մէջ անտպակ

Նայեն զիրենք՝ վարդն ու աղջիկ.

Բայց չես վտակ իմ հայրենեաց,

Գնա, հոսէ սրտէս ի բաց:

Ի զօր մաս գոյն պատամ բարձր

Հոն գրծք թէպէտ թռչնիկն ու հովի Հայոց և բարձր

Աւերակաց շրջին վրայ,

թէպէտ պղտոր վտակն Հայոց

Շուշին ու Նոճիներու մէջ կրոսպայ,

Կառաւաց զրոյ նառաշք են իմ հայրենեաց,

Արքա պայ Նոքա չերթան սրտէս ի բաց:

Մ Ա Ս Ի Մ Ը

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Ա Վ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

չելի պահել։ Ամառային կիզիչ շոգերին անդամ արևի ամենաբուռն ջանքերը հազիւ են կարողանում ձեան շերտի ստորին փէշերը փոքր ինչ քամել, կարկաչուն, անշան վտակներ կազմել դէպի վայր գլորելու համար։ Բայց ագահ, յամառ ծերունին անմիջապէս այն էլ է խափանում. նա ներս է ծծում այդ ջրերն իր անյատակ անդունդների մէջ և կրկին ժպտում արևի երեսին, կրկին ծաղրում նրա թուլութիւնը։

Սակայն կոփւը վերջ չէ առնում այդքանով. որքան հզօր է ալեզարդ Մասիսը, նոյնքան էլ յամառ է արեգակը։ Սա առժամանակ կուլ է տալիս իր անարդանքը, շարժւում է դէպի առաջ և միջօրէին իր բոլոր կատաղութիւնը թափում է Մասիսի մերկ կրծքի, կողերի, ոտների վրայ և այրում, խանձում է ամեն ինչ ժայռերը ճարճատում են սարսափելի տաքից, գետինը մրկում, թրծում է և ճաքճաքում. ծլած խոտերն ու ծաղկիները խանձում են ու փշրում. կենդանութիւնը մեռնում է կամ խոյս տալիս սարսափով, ուշացած բղեզները կոտորուում են. լոռում է նրանց միակերպ տաղտկալի բղզոցը։ Քաշւում են նաև վայրի գաղանաները, մնում են միայն ահազին, թունաւոր օձերը, որոնք շտապով ծածկում են ժայռերի տակ, որքան կարելի է խոր. ողջ ցերեկը հեռում են այնտեղ, գալարուում են տօթից ու ծարաւից, խսկ գիշերները դուրս են թափուում խմբերով, տափակ, զգւելի գլուխները վեր ցցում, կարծես նզովում են արեն ու ջերմութիւնը և լիզում են գիշերային ցողով խոնաւացած չոր խոտերի ցողունները։ Թիթեռնիկը չէ համարձակուում Մասիսի կրծքին հիւթ փնտոել, թոչունը չէ շինում այնտեղ իր բոյնը, հովիւր չէ քշում այնտեղից իր հօտը, արօն ու գութանը չեն գալիս պատառելու նրա տոչորւած կուրծքը։ Ժայռեր լուռ ու մոայլ, ինչպէս խորհերով պաշարւած գլուխներ, և մեծ կատաղի օձեր, թոյն և ամայութիւն—ահա թէ ինչ է բաժին մնում Մասիսին։

Դարեր են գլորուում դարերի յետեկից և երկու հակառակորդների կոփւը շարունակուում է անընդհատ։ Մասիսը վաղուց է, որ պատմութիւն չունի. տիեզերական օրէնքները նրա ճակատին սառել, մնացել են արշարժ, ժամանակից գուրաւ։

Այսպէս չէ սակայն Մասիսի ներսը, կատարից վայր հոսող

վտակները կորչում են նրա հսկայական փորի մէջ։ Դրսի աշխարհի բամբերներ լինեն կարծես, որոնք գնում են անդունդներում բազմած հոկաներին իրանց տեսած ու լսածները պատմելու։ Եւ այդ ժամկին անդունդներն աղմկում, որոտում են խուլ, հոկայական դղրդիւնով, երկիրը դողում է, ինչպէս ուռի տերև։ լեռան այրերը ձայնակցում են ներսից հնչւող այդ որոտմունքին, նրանք էլ են թնդում հազար ու մի ձայներով, կարծես գևերի երկու ահազին բանակներ զարնւում են իրար։ Ի՞նչ անհասկանալի կեանք է, որով ապրում է դարաւոր հոկան։ Իին աստւածներն են արդեօք հաւաքւած այնտեղ և իրանց անզօր զայրոյթն յայտնում այն բոլորի համար, ինչ որ կատարւում է աշխարհում, որտեղից իրանք հալածւած են ընդմիշտ, թէ դժոխքն է այնտեղ, ուր գևերն իրանց պետերի հետ խորհրդի նստած՝ ցնծում են։ Միայն ուրախ կարկաչով դէպի անդունդները վազող վտակներն իրար գրկած դուրս են ժայթքում Մասիսի ստորոտից, բայց սեւացած, մոայլ, գանդաղ ու ծեծւած, աւանց աղմուկի, լուռ ինչպէս սգաւոր, կամ ինչպէս գերեզմանից հրաշքով դուրս եկած մեռել։ Ալիքներն էլ քնքշութեամբ չեն փարում իրար, նրանք էլ սիրով չեն շոյում իրանց ափերը, չեն կարկաչում, այլ մեղմիւ փսփսում են, ինչպէս դաւադիրներ, կամ ինչպէս զարհուրելի գաղտնիքների գիտակ անձեր։ Նրանք շտապում են խոյս տալ արկի լոյսից, շտապում են ցցել իրանց Մայր Արաքսի գիրկը։ Ի՞նչ տեսել այդ վտակները սև անդունդներում։ Ինչու են սեւեն տեսել այդ վտակները սև անդունդներում։ Ինչու են սեւեն աշխարհ գալով, այդ դժւար է իմանալ։ Բայց իին դարերից մարդիկ սովորել են Աւ-Զուր կոչել Մասիսի փորից դուրս ժայթքող այդ տարօրինակ գետակը։

Ա.ՄՊԵՐԻ ՔԱՐԱԽԱՆԸ

Դ. Դեմիրճնան

ՏԵս, հեռւիցն ահա շարան ու շարան, իւս ու շարանը
Տըսկ, հա տըսկ, եկաւ քարաւանն ամպերի, ու ու ու
Ու սար ու քարաւան իրարով դիտան։

Դաշտական է մենք մասնաւուն առաջ ու նույզով դրձմանով
Բարնվ ձեզ, աարեր, տէրեր աշխարհի:

«Այ, բարով, բարով,

Ես ո՞ր ծովերով»:

—Պոնտիցն ենք գալիս մենք շարւէ շարան,
Գնում ենք, անցնենք հարթերը կասպեան,
Դէպի Հիմալայ...

*
Այսպէս մի կարճ իշեան
Գալիս է հիւր ամեն օր եւացաւու զօնքու ու
Ամպերի ձիգ քարաւան պարու միա եռու
Եւ ճամպայ է ընկնում նոր:

Ու գնում են լողալով
Հորիզոններն հեռաւոր,

Արևելեան աստղերին,
Որպէս կարօտ ուխտաւոր:

Ի՞նչից են շարժում ամպերը:

Ա. Անարոնեան

Մեր առջևն է Շիրակի ալեծածան հարթութիւնը և լայնա-
նիստ Արագածը, որ մի մօր պէս բազմել է շրջակայքի բլուրների
մէջ: Նա ոչ Մասիսի երկնասլաց ու խրոխտ վեհութիւնն ունի,
ոչ էլ նրա խիստ տեսքը: Արարատեան աշխարհի երկու հակաները
ոչնչով նման չեն իրար. մինչդեռ մէկը վիրաւորւած, դաժան
ծեր իշխանի է նման, որ, սակայն, չի ուզում գլուխ ծոել բաղ-
դի առաջ և իր զայրոյթի մէջ ատում է աշխարհը, ապրում է
հոյակապ մենաւորութեան մէջ ու ժլատ է բարիքով, միւսը՝
Արագածը մի անյիշաչար մայր է, բարի ու գթոտ, որի ձեռները
բաց են բարիքի համար, որի ճակատի խորշումները միշտ ժպիտ
ունին իր հովանու տակ ծւարած բլուրների, իր կուրծքին թա-
ռած զիւղերի համար:

Անոյշ Արագած... ի խօսքու մաղպար զարութ և լավ ի ամեն ինչ մեղմ է նրա արտաքինի մէջ, և՝ կատարները, որոնք շուրջանակի բլուրներ են և թագ են կազմել նրա գլխին, և՛ ձորերը, ուր իջւածքները կախւում են զգուշութեամբ, որ վերելքն անկարելի չդառնայ, և՛ ժայռերը, որոնք պինդ նստել են նրա կրծքին, որպէսզի վայր չընկնեն. չէ որ նրանց ստորոտներում չարքաշ մարդն է տնքում: Եւ յետոյ նու հովիտներ ունի ջրաշատ ու հարուստ, սիրուն դարաւանդներ, կանաչ պուրակներ, վասպարներ, խոխոջուն ջրեր, որոնք քարերի տակից ծորում են կաթնի պէս և ցօղում նրա գեղուն կուրծքը: Ոչ ոք դժոնի չէ նրանից, և՛ թափառական թաթարները իրանց հօտերով, և՛ աւազակ քիւրդերը, և՛ մանաւանդ շինարար, վաստակաւոր հայ գիւղացին, որ կպել է նրա կրծքին, վարում է և ցանում, նրա լայն հոգուն խառնել է իր հոգին և պաշտում է իր լեռը, այդ հինաւուրց մօրը:

Սիրուն Արագած...

Վազորդեան թափառնցիկ մշուշը իջնում է նրա կատարից մինչև ստորոտները, ինչպէս մի հսկայական քող և նրա տակից լեռը, կարծես յօրանջում է մեղմիւ ու զարթնում: Եւ այն քողը բազմերանգ է, նուրբ. հազիւ նկատելի՝ գոյների մի սքանչելի բազմերանգ է, նուրբ. հազիւ նկատելի՝ գոյների մի սքանչելի իջսաղ կայ վերից վար, ձիւնափայլ, սպիտակ կտաարին. նա իջսաղ կայ վերից վար, ձիւնափայլ, սպիտակ կտաարին, նուրբ է վար մուգ-կապոյտ, թոյլ մանուշակագոյն, ոսկեգոյն և ստորոտում հողագոյն երանգներով: Ամենից բարձր՝ հէնց կատարի թագի վրայ, ճերմակ ամպերի մի շարան կայ, եթերային, սպիտակազգեստ աղջիկների մի խումբ, որոնք իրար յետեկից կռացած՝ ասես, արտ են քաղհանում: Արագածից աջ ու ձախ գնացած՝ ասես, արտ են քաղհանում: Արիւնոտ բարձրունքները, նոյնպէս ցող բոլոր լեռները, Ալաջայի արիւնոտ բարձրունքները, նոյնպէս ճերմակ ամպեր ունեն կատարներին, Ամենքը, կարծես նախընճերմակ ամպեր ունեն կատարներին, այժմ հազիւ թաց գիշերը սպիտակ շղարշով գլուխները փաթթած են քնել թեթև անձրեկի տակ հարբուխ չստանալու համար և այժմ հազիւ զարթնած, դեռ չեն բացել ճակատները ծագող արկի շողերի առաջ:

Ներքեռում, լեռնալանջերի վրայ, ծուխ է բարձրանում ոլորմօլոր: Գիւղերն են զարթներ և թոնիրների առաջին հեքն է այն:

Հով չկայ և ծիսի պտոյտը ոլորուն սիւնով երկար ժամանակ իշխում է դաշտի վրայ. նա ճգնում է էլիք բարձրանալ, բայց ծայրը երերում է, լայնանում ու փունջ կազմում և, ի վերջոյ, մեղմիւ լուծում է մշուշի հետ առանց կարողանալու հասնել լեռնակատարներին: Եւ ճերմակ ամպերը և նրանց տակի կատարները նայում են վար, արևի շողերի առաջ և ժամում մեղմիւ. ծիսի անզօրութիւնը տեսնելով, նրանք հպարտ են, որ առ կեանքից, խեղճ ու կը աշխարհից խօսող այդ ծուխը չի հասնում եթերային բարձունքին և նրա մուրը վերստին մաղեռմ է նոյն տնքացող երկը վրայ:

Կ Ո Վ Կ Ա Ս

(Ա. Պուշկին)

Ա. Շատովին



Ա. Պուշկին

Ահա կովկասն իմ ուղեի տակ:
Ես մեն-մենակ վերեռում
Սպիտակափառ լեռան լանջին
լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պէս բարձր արծիւն հեռուում,
գէպի եթեր վերացած,
Օդում հանգիստ սաւառնում է
թևերն հզօր տարածած.
Եւ տեսնում եմ ես այնտեղից
հեղեղաներ փրփրալից,
Ինչպէս ծնուռմ, ինչպէս ձիւնի
հիւսեր փլչում սարերից:

Այստեղ ահա շար-շար ամպեր
մեղմ սահում են իմ զիմայ,
Գոռ ջրվէժներ նոցա ճեղքում ու սլանում դէպի ցած
Եւ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կոյտերին.
Խսկ քիչ ներքեւ—չոր մացառ է, մամուռ՝ կպած քարերին.
Քիչ էլ այն կողմ, ես տեսնում եմ կանաչ, թաւուտ անտառներ,
Ուր վխտում են եղջերուներ և ծլւում թռչուններ:

Այստեղ արգէն և մարդիկ բուն են դրած սարերում,
Եւ խաշները մեղմ մայռում են դալարախիտ վայրերում,
Եւ խաշնաբածն իջնում է ցած դէպի ուրախ հովիտներ,
Դէպի խաղուն Արագւայի կանաչագեղ, զով ափեր.
Եւ չքաւոր ասպատակն է դարան մտնում կիրճի մէջ,
Ուր թերեքի կատաղալից, գւարճ խաղին չկայ վերջ։
Խաղում է նա ու մոնչում, որպէս վայրագ մի կորիւն,
Որ վանդակից որս է տեսել, աչքը կոխել սև արիւն.
Եւ խփուում է նա ափերին, և ապարդիւն կոխւ տալիս,
Եւ իր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու լալիս...
Սակայն իզնուր, Նրա համար չկայ ուրախ ոչ մի օր.
Նրան ճնշում ու խեղդում են լուռ քարափներն ահաւոր։

ԴԱՐԻԱԼԻ ԶՈՐՈՒՄ

Գ. Բաշինջաղեան

ш.

Վլադիկաւկազից դուրս գտլով, միքանի ժամից յետոյ արգէն
գտնուում եմ Դարիալի ձորի մէջ։ Օդը մոայլ է, խոնաւ և ցուրտ։ Աջ
կողմ ապառաժներ, ձախ կողմ ապա-
ռաժներ, վերջապէս շուրջն ապառաժ-
ներ, որոնցից մէկի ստորոտով գնում
եմ և շարունակ նայում եմ վեր, բար-
ձըր, որտեղից կիսաքանդ կտմարների
ձեռվ դիմիվայր կախւել են ահազին
ժայռեր։ Նրանք նայում են ցած և
սարսափ ներշշում ինձ եթէ մի կտոր,
թէկուզ մի չնչին մաս պոկւի իր տե-
ղից՝ ինձ սայլակիս հետ միասին փոշու
հետ կըհաւասարեցնէ։ Բնութիւնը
մտադիր չէ եղել այստեղ ճանապարհ
բանալու, բայց յանդունզն մարդը ին-
չեր չի արել։
Ընթանում եմ դէպի առաջ և



Գ. Բաշինջաղեան

Գ. Բաշինջաղեան

բարձր։ Մեր ուղին սկսւում է ժայռերի ստորին փէշերից և ոլոր-
 մոլոր պտոյտներով բարձրանում դրանց կրծքի վրայով ու գի-
 մում ձիւնապատ գագաթների կողմը, որոնք այս միջոցին ծած-
 կել են սպիտակ և մոխրագոյն ամպերով, այն երկնային սաւա-
 նով, որի միջից երբեմն-երբեմն դուրս են ցայտում հա-
 տիկ-հատիկ մշտականաչ եղնիներն ու մայրիները և դարձեալ ան-
 հետանում։ Ապառաժներն անընդհատ միմեանց են յաջորդում։ Նը-
 րանք բազմաթիւ և բազմաձև ծալքերով ձգւում են անդնդային մոռյլ
 ձորի միջով և միախառնւում անթափանց թանձր կապուտակի հետ,
 ուր վարագուրւած է գարնան քնքոյց երկնակամարք։ Ամեն տեղ
 տիրում է խլացուցիչ աղմուկ, որ յարմար կերպով ներդաշնա-
 կում է վայրենի բնութեանը։ Այս աղմուկը, գոռում-գոչումը կա-
 տաղի թերեքին է պատկանում։ Գետը գլխիվայր վագելով քարքա-
 րու յատակի վրայով և ամեն ինչ քարուքանդ անելով, անինայ
 շպրտում է այն կողմ ժայռերի միջից պոկած ահագին բեկորներ։
 Դա նման չէ սովորական արագահոս գետերի, դու կատաղի է և
 իր կատաղութիւնը հասցըել է գագաթնակէտին։ Կորցըել է իր
 գոյնը, կորցըել է բոլորովին իրան։ Հազարաւոր պտոյտներ անե-
 լով քարի է զարկւում, ամեն ինչ գջլում, արմատախիլ անում,
 ջարգում ու փշրում։ Շրջապատում է կղղիացած ամրապինդ ժայ-
 ռերը և անէծք ու սպառնալիք ուղղում՝ «չնչին արարած, եթէ
 ոչ այսօր, գոնէ զաղն անշուշտ կըպոկեմ տեղիցդ, կըզարնեմ ափիդ
 և փշրելով կըոչնչացնեմ ըստ գոյութիւնը»։ Եռում է ամբողջապէս,
 բլուրներ ու անդունդներ կազմում, նորից շուռ է զալիս և ջըն-
 ջում ու իր հետ տանում։ Այստեղ ծափ է տալիս, այնտեղ ապակում-
 ծեծում, երբորդ տեղ խփում՝ գլուխը գետնին և մի ակնթարթում
 թոչկոտում բարձր, շատ բարձր՝ թուքեր արձակելով ամեն կողմ։
 Նա անգութ է, գոռող և հպարտ։ Զի ուզում ջրի նմանւել, ամ-
 բողջապէս փրփուրի է փոխւել։ Մանր ու խոշոր սիրուն առ-
 ւակներ ամեն մի քայլափոխում ծնունդ են առնում ժայռերի
 կրծքի միջից, կարկաչելով ուրախ-ուրախ վազում են ներքե,
 ձորի մէջ կատարւող աղմկալից տեսարանը տեսնելու, բայց
 անողորմ հրէշը կլանում, խեղդամահ է անում այդ ծաղկահասակ
 անմեղ արարածներին։

Բ.

Ըսթանում եմ դարձեալ դէպի առաջ և բարձր։ Ճանապարհը՝
իր անթիւ պտոյաներով, դիմում է գտղաթների կողմբ։ Նա ոլոր-
ւելով՝ պատրաժների վրայ առաջինաբար նւազում է, իսկ բարձր
ամպերի մօտ մոխրագոյն թելի է նմանում և վերջապէս
անյատանում։ Ճանապարհի վրայ, միքանի հեռու աեղեք
շարժական կէտեր են նշմարւում, նրանք անշուշտ մարդիկ՝ լեռ-
լնցիք են իրանց բեռնակիր սայլակներով կամ հարուստ քաղա-
քացիք՝ շքեղ կառքերի մէջ բաղմած։ «Ահա որտեղ է երկում
մարդու ոչնչութիւնը բնութեան դէմ», ակամայ անցնում է մըտ-
քով։ Այս տեսարանը յիշեցնում է ինձ շատ անգամ տեղած
մրջիւնների արշաւանքը գարեսր կաղնիների և ընկուզենիների
վրայ։ Մտարերում եմ այս միջոցին մարդկային հանճարի զանա-
գան վսեմ արտադրութիւնները՝ կոթողներ, տաճարներ, ամրոց-
ներ, ստքով տեղափոխում եմ նրանց այստեղ, համեմատում
բնութեան այս ահարկու ստեղծագործութիւնների հետ և հիաս-
թափուում։ Ահա նշմարւում են հեռաւորութեան մէջ սպի-
տակ բծեր, որոնք կամաց կամաց աճում են։ Փոքր
առ փոքր մօտենում ենք նրանց, դա «Կազբէկ» կայա-
րանն է։

Գ.

Անցնում է քսան բողէ։ Ես դարձեալ շարունակում եմ ճա-
նապարհս։ Զարագոյժ սեսկ ամպերն իրանց դաժան դէմքերով
անշտապ սողում են երկնքի վրայով և շփւելով բուսազուրկ
լեռներին՝ տալիս անցնում են։ Կապուտակ երկինքն ամբողջապէս
քօղարկւած է, միայն երբեմն երբեմն դուրս են ցայտում արեգա-
քուարկւած է։ միայն երբեմն երբեմն դուրս են ցայտում արեգա-
քուարկւած է։ մասագայթները, բողէապէս շտմանգաղ են տարածում
կի նւազ ճառագայթները, բողէապէս շտմանգաղ են տարածում
ձորի այս ու այն տեղի վրայ և արագութեամբ չքանում։

— Փոթորիկ է լինելու, — հարցնում եմ ձիավարին։

— Այս՝ պատասխանում է նա անհանգստութեամբ ու թափ-

տալիս դլուխը։

Ամպերը հետզհետէ թանձրանում, իջնում են աստիճանաբար

գէպի երկիր, ձորը լցւում է աղջամուղջով, խաւարում է ամեն ինչ և օդի մէջ տիրում է մի առանձին հոտ, որ յիշեցնում է ծովային խոնաւութիւն: Բարձրից նայում եմ ցածր, գէպի անդունդ, ուր թերեքը շարունակ ընթանում է իր գոռում-գոչումով, բայց այս գոռում-գոչումն այս անգամ միրտ ճնշող ողբի է նմանում, որով կարծես բնուվթեան խռովութիւնն ու արհաւիրքն է գուշակում: Լեռնցիները սայլերը կանգնեցրել են ճանապարհի ապահով անկիւնում, նեցուկներ են տւել անիւներին և պատրաստում են սայլերի տակ մտնելու: Ստէպ-ստէպ պլանում են մօտովս վախեցած թռչուններ և շտապում իրանց բները:

Իմ ձիավարը մերթ իրախուսում է իր ձիերին, մերթ սպառնում. ստիպում է ամեն կերպ իրանց քայլերն արագացնել: Խելացի անսատունները կարծես նոյնպէս զգում են անխուսափելի վտանգը: Նրանք ամենայն հաւատարմութեամբ աշխատում են, ճիգ են թափում շուտով տեղ հասնելու, բայց այս անողորմ զառիվայրն ուժասպառ է անում նրանց:

Յանկարծ հրեղէն փայլը մի ակնթարթում փուռում է բնոււթեան մէջ և հանգում. նրան յաջորդում է մի խուլ ու հեռաւոր որոտումն, և դարձեալ լրում է ամեն ինչ: Միմիայն ներքե, ձորի մէջ թերեքը շարունակում է իր ողբը: Դա այլևս կատաղի գազանչէ, այժմ արտասւալից աղաղակներ է արձակում: Փայլակը նուրից դուրս է պրծնում ամպերի միջից, միքանի կրակոտ ցնցումներ է գործում ու դարձեալ տեղի տալիս խաւարին. դրան հետեւում է որոտումն, և անձրկի խոշոր կաթիներն ուժգին զարնը-ռում են գետնին, որի վրայ գրոշմում են ու կէտեր:

Անոելի ժայռեր, անդնդային ձոր, անողորմ գետ, գժոխային ամպեր, տալօրինակ խաւար — այս բոլորը կարծես դաշն են կապել իրար հետ խաղ խաղալու, բոլորովին չնկատելով իրանց գրկում սրանեղւած կենդանի արարածների գոյութիւնը: Նորից հրեղէն շանթեր, նորից սարսափելի ճայթումն: Դրդգում է երկիրն, ու արձագանգը միքանի անգամ կրկնւում է խառնաշփոթ ձորերի մէջ: Անձրեն սկսում է առատութեամբ թափել լեռնային յատուկ շխշխոցով և միախառնուում է արդէն ձորի խորքերում անհետացած թերեքի ճայնին: Այս վայրենի համերգը շարունակ-

ւում է: Երբեմն ընդհատում է ամպերի որոտումից, երբեմն խանգարում ձիավարի դժոն ձայնից, բայց գարձեալ շարունակում:

— Զի՞ որ առաջարկեցին ձեզ մի երկու ժամ սպասել կայրանում, — նկատեց ինձ ձիավարը, — երեի ձեզ հաճելի է այսպիսի բանը:

— Դու հանգիստ կաց, ինչ լինելու է՝ թող լինի, ես չեմ վախենում:

— Երեսում է, որ դուք դեռ ևս չեք տեսել այստեղի «զաւալներ»... Նույն, վասկա, — նկատեց ձիավարը՝ զգուշութեամբ մարակելով ձիուն:

Ես նստած եմ սայլակի մէջ անշարժ, կուցած և աչքերս կիսաբաց, որովհետեւ անձրեի ուժեղ շիթերը թեք ուղղութեամբ ուղղակի երեսիս են զարնում: Աչք եմ դարձնում աջ կողմ և տեսնում, որ ժայռի միջից ամեն մի քայլափոխում քարեր են պոկւում ու վլորւում ցած, բայց բարեբաղդաբար ոչ շատ խոշոր: Փայլակ, կայծակ, որոտումն անդադար յաջորդում են միմեանց կարծես սպառնում են կործանել աշխարհը և երկինք ու երկիր իրար խառնել:

Դ.

Ճանապարհը շարունակ բարձրանում է: Անձրեի կաթիլներն առ զգակի կերպով մանրանում են ու բազմանում: Ես փոքր առ փոքր ընկղմում եմ թուխ զոլորշու մէջ, որ աստիճանաբար կաթանձրանում է: Դարձեալ քառորդ ժամ, և ես պատաժ եմ կատարեալ խաւարով. բայց սա գիշերային խաւար չէ, այլ լեռնատարեալ խաւարով. բայց սա գիշերային խամեմատել մի այլ բանի հետյին մի մոմենտ, որն անկարող եմ համեմատել մի այլ բանի հետյին միտքս պարզելու, ցանկացածս արտայայտելու համար: Այլևս միտքս պարզելու, ցանկացածս արտայայտելու համար: Այլևս բան չեմ տեսնում, նոյն իսկ ձիանները միրաժի նման աղօտ կերպով են նըշմարւում:

Զգում եմ, թէ ինչպէս մի տեսակ թաց փոշի է մաղւում եռ բեսիս: Գոռում գոչումը, աղաղակն ու ճայթիւնը դարձեալ շարունակում են, սակայն, օ զարմանք, այս բոլորը կարծես ներքեւ, ստորերկրեայ աշխարհումն է կատարւում: «Գուցէ ամպերի քե, ստորերկրեայ աշխարհումն է կատարւում: «Գուցէ ամպերի մէջ եմ գտնուում», անցնում է մտքովս: Երբեմն մօտիկից են մէջ եմ գտնուում»:

տկանջիս համուռմ մարդկանց ձայներ ու անիւների ճռնչիւն։ «Քաշւիր աջ կողմ»; լսելի է լինում ձիավարիս միակերպ ձայնը։ Ճանկարծ ցնցւում է մեր սայլակն ու կանգ առնում։

— Խոր ես, որ չես լսում «քաշւիր» խօսքը, — կանչեց ձիավարս Ղազանի թաթարի բառբառով, հայհոյելով և մտրակի հարւած հաւցնելով մէկին։ Նա էլ փոխակարծ միքանի յիշոցներ ուղղեց սրա հասցէին օսերէն, մինոյն ժամանակ աշխատելով ազատել իր երկանիւ աայլը։ Անցնում է դարձեալ քառորդ ժամ, և այլս անձրկի նշոյլն անդամ չի նկատւում, բայց զգում եմ, թէ ինչպէս կրկին թրջւում եմ։ Օդը ցուրտ է և վերին աստիճանի խոնաւ։ Հագուստաս սաստիկ ծանրացել է, ուսերս, մէջքս ցաւում են։

Խաւարն անհետացել է։ Արկի մեզմ ճառագայթները թափանցում են նոսր մառախուղի միջով ու ախորժելի ջերմութիւն պարգևում բնութեան։ Ահա լեռների գագաթները, ահա նորից հսկայական ապառաժները. որքան արցունքներ են թափում նրանք, բայց այդ ուրախութեան արցունքներ են։ Բնութիւնն սկսում է ժպտալ։ Թերեքն անդամ, որ անյայտացել է անտառների մէջ, այս միջոցին պարելով ու ծիծաղելով է մեզ յիշեցնում իր գոյութիւնը։ Ահա երկում են լեռների գագաթներին կպած ինչ որ կէտեր, որոնք նման են ծիծեռնակների բների. այնտեղ անշուշտ մարդիկ հն ապրում։ Թռչուններն ուրախ-ուրախ սլանում են մաքուր օդի մէջ զանազան ուղղութեամբ։ Զիանները նոյնպէս աշխոյժ ու զւարթութիւն են ստացել։ Ճանապարհի վրայ անձրեից գոյացած ջրերը պլազմում են արկի ճառագայթների տակ։ Որքան գուրեկան է շունչ առնել այս մաքուր օդի մէջ։ որքան ախորժելի է այս րոպէն։ Այլս չեմ ցանկանում յետ նայել, ուր անգունդների մէջ գարձեալ շարունակւում է հոգեմաշ տեսարանը։ Մօտեցել ենք կորի կայարանին. դա հեռափ փայլում է սպիտակ գոյներով։

Որքան ուրախ եմ, որ շուտով հանգիստ եմ առնելու այնտեղ։

Փ Ա Ր Ի Ա Ն Ա



3. Թումանեան

Բարձրագահ Աբովյն ու Մթին սարեր
Մէջք մէջքի տւած կանգնել վեհափառ,
Իրանց ուսերին, Զաւախքից էլ վեր՝
Բոհած պշհում են մի ուրիշ աշխարհ։

Ասում են՝ այնտեղ, արծւի նման,
Ծիծղուն, կապուտակ երկնքի ծոցում,
Նստում էր էն սէդ ուսրերի արքան
Իրան Փարւանայ ճերմակ ամբոցում։

Փարւանայ արքան մի աղջիկ ունէր:
Ու ոչ մի որսկան դեռ իրան օրում,
Այնքան դեղեցիկ եղնիկ չէր տեսել,
Իր ըրսն անելիս Մթին սարերում։

Աշոյժ մանկութեամբ զարդարում էր նա
Ծերութեան օրերն և սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարւանայ
Իրան այն քնքուշ ծաղկով բաղկաւոր։

Մեծ բաղդը սակայն առջևն էր դեռ.
Եկաւ, այն օրն էլ հասաւ երջանիկ,
Ու զրկեց արքան ուրախ դեսպաններ
Այն մի ամբոց, ամեն արքունիք։

— Ո՞րտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ չնաշխարհիկ դատերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զէնքն ու զրան,
Գայ, ցոյց տայ իրան, իր բաղդը տանի...
Բ.

Հագած, կապած զէնք ու զրան,
Չիանք հեծոծ ամենի,

Ահա եկել հաւաքւել են
Կտրիճները կովկասի.
Ծեր Փարւանայ թագաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ սպասում են
Մօտիկ ժամին մըցութեան:
Սպասում է ողջ աշխարքը՝
Եկած, կիտած Փարւանա,
Թէ ո՞ր կտրիճն արդեօք պիտի
Են սիրունին տիրանայ:

Հնչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագաւորն ալեհեր:
Հայրը, ինչպէս մոայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարւած՝
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարքը.
Կտրիճները քարացած՝
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարքից վերացած:

—Նայիր, դատրիկ, իշխանագուն
Այս քաջերն լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս գուրս գան,
Պայքար մտնեն բո առաջ.
Մէկը իրան ոյժը ցոյց տայ,
Միւսը շնորհքն իր բազկի,
Որը ճարպիկ ձիարշաւը,
Որն էլ թափը իր վազքի.

Իսկ երբ կոփւն առնի գտնար,
Յայտնի լինի քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջեից զնով
Կարիճները պայտագատ,
Հնտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մնայ
Անզուգական քո բաղդին:

Ասաւ արքան, ձեռքը ձգեց,
Նշան տւաւ պայքարին,
Եյն ինչ աղջիկն առաջ եկաւ
Կարմիր խնձորն իր ձեռին:
— Գուցէ, հայրիկ, տկար լաւին
Յաղթէ մի վէս տմարդի,
Բայց չի կարող լինել երբէք
Նա սիրելի իմ սրտի...
— Եյ, Փարվանայ չքնաղ փէրի,
Ի՞նչն է հաւան քո սրտին,—
Խոնւում են կարիճները,
Խոզըում կըկին ու կըկին:—
Գանձ ուզում, ոսկի, արծաթ,
Սնգին քարեր ու զոհար,
Աստղ ես ուզում, էլ երկնքից
Վեր կըբերեն քեզ համար:
— Ի՞նչիս են սկտք ոսկի, արծաթ
Եւ կամ աստղը երկնքի,
Ոչ էլ զոհար եմ պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի.
Ես նրանից հուը եմ ուզում,
Անշէջ հուը պըբազան,
Ով կըբերի անշէջ հուը
Նա է ընտրած իմ փեսան...

Ասաւ աղջիկը, իրար անցան
Կարիճները քաջարի,
Զիանք հեծած թռան հաղճեպ
Դէպի չորս կողմն աշխարհի,
Թռան, շուտով գտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջկան,
Բայց... տարիք են գալիս, գնում,
Նրանք չկան ու չկան:

Պ.

—Հայրիկ, ինչու յետ չփարձան
Էն քաջերը սիրատենչ.
Միթէ, հայրիկ, ինձ մոռացան,
Ել չեն բերիլ հուրն անշէջ:

—Ոչ, իմ դստրիկ, կըդան անշուշտ
Ու կըբերեն էս տարի,
Կոիւններով արիւնըուշտ
Լիքն է ճամպէն քաջերի:

Ո՞վ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարքից, ու ջրից.
Ո՞վ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթ գլխանի դմերից:

Անց է կենում դարձեալ տարին,
Նայում է կոյսն ամեն օր.
—Ո՞ւր է, հայրիկ, երբ կըդայ նա,
Սարից թռած ձիաւոր:

Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ,
Հուր կարօտով թռած իմ դէմ,
Լուսանում է... ու չկայ:

Կըգայ, դստրիկ իմ թանկագին,
Հեշտ չի բերւում հուրն անշէջ.
Շատ-շատ անգամ բերող հոգին
Ինքն է այրւում նրա մէջ...

Անց է կենում դարձեալ տարին,
Նայում է կոյսն ամեն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամպում
Չի երևում ձիաւոր:

Հայրիկ, հայրիկ, միթէ չկայ
Էս աշխարհում անշէջ հուր,
Թառամում է սիրաս ահա,
Պաղ է այս կեանքն ու տիսուր...

Ել չի խօսում. մոայլ, արտում,
Լուռ է արքան ալևոր,
Սեռն ցաւերն իրան սրտում՝
Միտք է անում գլխակոր:

Դ.

Այսպէս անցան շատ տարիներ:
Տիսուր աղջիկն արքայի
Նայեց, նայեց սարերն ի վեր,
Ճամպաներին ամայի,
Յոյսը հատաւ... ու լաց եղաւ.

Այնքան արաւ լաց ու կոծ,
Որ լիճ կտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկեց, կորան, ինքն էլ հետք...
Այժմ այստեղ տրտմաշուք
Խոր Փարւանայ լիճն է ծփում,
Ցատակ, ինչպէս արտասուք,
Ու այն վճիտ ջրերի տակ

Ցոյց են առալի մինչ այսօր
Ծեր արքայի ճերմակ ամբոցն
Ու շէնքերը փառաւոր:

* *

Ասում են, այն թիթեռնիկները,
Որ գիշերւայ խաւարում,
Որտեղ ճրագ, որտեղ կրակ,
Որտեղ լոյս հէնց վառում,
Հաւաքւում են, շուրջը պատում,
Մէջն են ընկնում խելագար:
Ասում են, թէ՝ այն Փարւանայ
Զահիլներն են սիրավառ.
Հշտապելուց թե են առել
Դարձել թեթև թիթեռներ,
Ու տակաւին հուր տեսնելիս՝
Մէջն են ընկնում անհամբեր.
Զահը է անում ամեն մինը
Շուտով տանի, տիրանայ...
Ու այրւում են, այրւում անվերջ
Կտրիճները Փարւանայ:

Ա. Բ. Ք. Ս


Հաջող

Հին Արաքսը... զարմանալի քմահաճոյքներ ունէր: Անյիշելի
ժամանակներից յամառութեամբ կուում էր իր անհաւասար եղեր-
քի հետ և, կարծես, դժգոհ էր այն նեղ շաւզից, որ գծել էր նրա
ընթացքի համար նոյնքան քմահաճ բնութիւնը: Նա սիրում է ազա-
տութիւն: Նեղ շաւիղը վրդովում էր նրան:

Երբեմն լեռնային երկու գուգահեռ գօտիներ միաբանում
էին և սեղմում նրան իրանց շատ նեղ, անձուկ և խորին
ձորակի մէջ: Այդ միջոցին նրա կտրաղութիւնը չափ չու-

Նէր: Ահոելի յորձանքներով զարկւում էր իր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մէջ այս ճակատագրական խօսքերը. «Նեղ է... խեղդւում եմ»...

Երբեմն լեռնային գոտիների միաբանութիւնը խախտում էր, բաժանեում էին միմեանցից, հեռանում և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածութիւն:



Ռաֆֆի

Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չուներ: Ազատուելով իր նեղ կիրճից, մի չար վիշտապի նման՝ անխնայ ողողում, յեղյեղում էր իր ուղիղ, կանաչազարդ ափերը, և կամ մի արբած հսկայի աման, երբեմն գէպի աջ էր թեքւում, երբեմն գէպի ահեակ խոտորում և երբէք ուղիղ ճանապարհով չէր գնում:

Նա ազատութիւնը խելացի կերպով վայելել չգիտէր: Յանկարծ վիթխարի թեկերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով իր հով գրկի մէջ, կղզիացնում էր նրան: Սոժամանակ երեխայական սիրելութեամբ՝ սկսում էր փայփայել և ինա-

մել իր խաղալիքը: Կղզին աճում էր, կանաչազարդւում էր, աճում էին թուփերը, վառում էին ծաղիկները: Երկնքի թռչունը հիւէին սում էր այստեղ իր բոյնը, վայրի անասունը սնուցմում էր այստեղ իր ձագուկներին: Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով գւարճանում էր նա և, պնձասէր երիտասարդի նման, զարդարում էր իր հպարտ կուրծքը: Բայց, յանկարծ, կարծես ձանձրանում էր նա. ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին և մի քանի ըսպէի մէջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը և նրա հետքն անգամ չէր երեւմ:

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Գամբառ-Քաթիւկ

Մայր-Արաքսի ափերով

Քայլամոլոր գնում եմ,

Հին-հին դարուց յիշատակ

Ալեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,

Պղտոր ջրով եղերքին

Դարիւ դարիւ խփելով,

Փախչում էին լալագին:

—Արաքս, ինչու ձկանց հետ

Պար չես բռնում մանկական,

Դու դեռ ծովը չհսսած,

Ագաւոր ես ինձ նման:

Ինչու արցունիք ցայտում են

Քո սէզ, հպարտ աշերից.

Ինչու արագ փախչում ես

Այդ հարազատ ափերից:

Մի պղտորիլ յատակդ,

Հանդաբար հոսէ խայտալով.

Մանկութիւնը քո կարճ է,

Շատ կըհամիս դէպի ծով:

Վարդի թփեր թող բուսնին

Քո հիւրընկալ ափի մօտ,

Սոխակները նոցա մէջ

Երգեն մինչև առաւօտ:

Մշտադալար ուռիներ

Սառ ծոցի մէջ քո ջրին,

Ճկուն ոստն ու տերեւ

Թնդ թաց անեն տաղ օրին:

Ափերիդ մօտ երգելու

Հովիւք թող գան համարձակ,

Գառն ու ուլը քո վճիտ

Զուրը մտնեն միշտ արձակ:

Մէջը ուղցուց Արաքսը,

Փրփուր հանեց իր տակից,

Ամպի նման գոռալով

Այսպէս խօսեց յատակից:

«Խիզախ, անմիտ պատանի,

Նիրհս ինչու դարեւոր

Վրդովում ես, նորոգում

Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից յետ

Ե՞րբ ես տեսել, որ այրին

Ոտքից զլուխ պճնւի

Իր զարդերով թանկագին:

«Որի համար զարդարեմ,

Որի աչքն հրապուրեմ.

Շատերն ինձ են ատելի,

Շատերին ես օտար եմ:

«Կար ժամանակ, որ ես էլ

Շքեղազարդ հարսի պէս

Հազար ու բիւր պչըանքով

Փախչում էի ափերէս:

«Յատակս պլարդ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Զրիս միջին էր լողում:

«Ի՞նչս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գիւղերս,
Ո՞րը իմ շեն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս:

«Տուրքը ջրի ամեն օր
իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ-Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտօրմյը
իմ ատելի օտարին:

«Կամ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կը կըզած,
Իր նամազը կատարէ
Թուրք կամ Պարսիկը հոտած,

«Մինչ իմ որդիք - ովկ գիտէ,
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով, կիսաշունչ:

«Հեռու, հեռու քշեցին
Բնիկ ազգն իմ հայկեան,
Նրա տեղը ինձ տւին
Ազգ անկրօն, մոլեկան:

«Դոցմ համար զարգարեմ
իմ հիւրընկալ ափերը
Եւ կամ գոցմ հրապուրեմ
Ճպուտ, պլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կը մնան պանդուխտ
ինձ միշտ սգւոր կըտեսնէք,
Այս է անխախտ իմ սուրբ ուխտ»,

Էլ չխօսեց Արաքսը՝
Ցողձանք տւեց ահազին,
Օղակ-օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

ԵՐԱՄԽԻ ՎՐԱՅՈՎ

Վ. Փափազեան

Ամեքս նստել, տեղ էինք բռնել մեծ ֆուրդօնի մէջ, տախտա-
կէ կամարի տակ կծկըւած:
Գնում էինք, ամբողջ ընտանիքով և ընդմիշտ, գաղթում էինք
գիւղից,
Շարժւեց ֆուրդօնը, հեռացրեց մեզ գիւղի տեսքից, նրա

դաշտ ու լեռներից, մօտը հոսող և այժմ այնպէս ուրախ վիայ-
լող գետակից...»

Պէտք է որ տասը - տասներկու տարեկան լինէի մեր այդ
գաղթականութեան ժամանակ:

Իհարկէ, ես էլ ընկերներ ունէի, ունէի և իմ սիրած անկիւն-
ները. բայց տխուր չէի և ոչ էլ ցաւում էի գիւղից հեռանալու
համար:

Զգիտեմ՝ ինչու էր այդպէս. Արդեօք լաւ ընկերներ չունէի,
թէ մանկական թեթևամտութիւն էր այդ:

Ընդհակառակը, այդ ճամպորդութիւնը զւարճ անցում էր
ինձ: Առաջս փուած էին ընդարձակ, ժպառն զաշտեր՝ լի բազ-
մատեսակ և գոյնզգոյն ծաղիկներով. կարկաչում էին առւակնե-
րը, ճլւում էին թռչունները և մեր ֆուրգօնը վաղում, գլորում
էր այդ ամենի միջով:

Մի քանի անգամ ցած թռայ ֆուրգօնից, ծաղիկների փնջեր
զցեցի ներս, ծառերից ճիւղեր կտրտեցի, յետոյ նորից հեծայ
ֆուրգօնի յետեռում մի տոպքակի վրայ ու կանչեցի եղբայրներիս.

— Դէ՞ն, տղերք, մի բան երգենք...

Զայնակցեցին, ես մի երգ սկսեցի, բայց շուտով ստիպւե-
ցանք լուռ կենալու, որովհետե ֆուրգօնի ցնցումները խայտառակ
կերպով փշրտում ու ջարդում էին թէ մեր կողերը և թէ մեր
երգը:

Այդպէս էր ահա, որ դուրս ելանք իմ հայբենի գիւղից և գաղ-
թեցինք դէպի հեռու աշխարհներ:

Բ.

Մութին հասանք մի գիւղ. իսկ միւս առաւօտ շուտով դար-
ձեալ լցւեցինք մեր արկղի մէջ և սկսեցինք իջնել դէպի մի աւա-
զոտ ու ընդարձակ դաշտ՝ անցնելով կոյտ-կոյտ բլուրներից:

Օհ, դաշտ եմ ասում, բայց աւելի ճիշտ կըլինէր ասէի՝ անա-
պատ:

Ոչ մի ծառ: Նոյն իսկ խոան այդտեղ քիչ էր դեղնած ու չո-
րացած: Շուրջդ ամբողջ աւազ է, բայց աւելի հող ու անտանելի
փոշի:

էլ ու ոչինչ չմնաց. փոշին շերտ կապեց մեր շորերի ու մա-
զերի վրայ. քամին սուրաց ու սուրաց, մի տաք, խեղդող քամի,
մինչև որ վերջապէս հասանք աւագների և կարողացանք բանալ
աչքներս ու բան տեսնել:

Եւ առաջին բանը որ տեսանք՝ զարմանքից կանչեցինք ա-
մենքս:

Ուղիղ մեր դիմաց, ծանր ու մեծ սահում, գնում էր վերելից
ներքն մի լայն, շատ լայն գետ, պղտոր ու կարմիր ջրերով:

Օ՛, ինչպէս ծանր էր գնում նա և ինչպէս շքեղ էր:
— Երասխ, — կանչեց հայրս, — Երասխ գետն է:

Քիչ յետոյ մեր փուրգօնը կանդ առաւ ուզիղ գետափին: Յած
իջանք: Բեռները բոլորը իջեցրինք, մի մեծ կարպետ փուցինք
գետին. մայրս սփռոցը բացաւ և նստանք ճաշի:

Գետեղըն այդտեղ ամայի էր: Մի հողաշեն խրձիթ միայն կար,
մէջը զինւորներ, որոնք ներս ու դուրս էին անում. հօրիցս ինչ
որ թղթեր ուղեցին, ներս տարան և յետ բերին, աւին, յետոյ,
երբ քիչ մեզ զննել էին՝ թողին հեռացան:

Հայրս բացատրեց մեզ, որ գետի միւս ափը պարսկական հող
էր, և մեզնից այստեղ, ոռւսաց հողում, անցագիր հարցըն ու
թուլատրեցին սահմանն անցնելու: Անցագրի պաշտօնատունը և
մաքսատունը գտնւում էին մեզնից բաւական հեռու, ցածում:

Ճաշը վերջացնելուց յետոյ, մենք, երեխաներս, գետափ իջանք
և զննել սկսեցինք եզերքին կպած մի մեծ նաւ:

Այդպէս նաև երբէք տեսած չէի պատկերի վրայ, իսկ մեր
թղթէ նաւակները բոլորովին ուրիշ տեսակ էին: Սա մի խոշոր
արկղ էր, ուղղակի մնդուկ, չորս կողմը փայտէ վանդակ շինած:
Մի երկար ձող էլ, որ թիակը պէտք է լինէր, արկղի միջից պար-
գևում, գնում էր և խրւում ջուրը:

— Լաստ է, հասկացընք մեզ հայրս, որ մօտ էր եկել:

Դրանով էինք միթէ անցնելու: Այդ ջրոտ, ցեխոտ ու լարձուն
յատակի գրայ էինք հաւաքւելու: Իսկ մեր փուրգօնը, ապրանքը,

ձիթը:

— Կըտեսնէք, — ժպտաց, հայրս, — բոլորն էլ կանցնեն: Գնացէք
առ այժմ գետափից հեռու: Մի մօտենաք ջրին: Այստեղ ափերը
փլում են յանկարծ: Իսկ եթէ ընկաք, էլ պրծնելիք չի լինի:

— Կըմեղդւենք:

— Եւ ինչպէս... — ասաւ մեծ եղբարս, — այ, այսպէս կըխրւես ջրի մէջ, յետոյ, դօլ-դօլ-դօլ... ջուրն ու ցեղը կըլցւեն փորդ ու վրզգ... ջրի տակը: Մէկ էլ էն կը տեսնես, որ ծովս ես հասել...

— Իրաւ, ինչ ցեխառա է:

— Կարմիր ցեխ է:

— Կասես արիւն լինի... Լիրդացած ու հողախառն արիւն: Հայրս, որ հեռացրել էր մեզ գետից, նայեց ջրերին և ասաւ տխուր.

— Օ՛, Երասմիը շատ ու շատ արիւն է խմել, անթիւ դիակներ քշել տարել ու այս երկրի բնակիչներից հազարաւորների խեղդուտել... Արիւնախում գետ է դա:

Ու լոեց: Սպասում էինք, որ էլ խօսէր. պատմէր՝ թէ դա ի՞նչ արիւն էր, ի՞նչ դիակներ, երբ և ինչնու:

— Հայրիկ, — ասի ես, — պատմէր՝ ի՞նդրեմ. Ի՞նչ դիակներ են. գետն է մեծացել, թէ կոիւ է եղել այսաեղ:

գ.

Եւ հայրս մի քիչ լոելուց յետոյ, գնաց, նստեց մի քարի վրայ ու սկսեց պատմել.

— Սրանից շատ և շատ տարիներ առաջ, — կըլինի մօտ 300 տարի, այս կողմէրը լիքն էին շէն ու մեծ դիւղերով: Սկսած այդ գետից մինչև շատ հեռու քաղաքները, լիքն էին հայերով. ծաղկած դաշտեր, հարուստ բնակիչներ...

Բայց ահա պարսիկները կոիւ սկսեցին օսմանցիների դէմ և գնացին քարուքանդ անելու միմիանց երկրները:

Կոիւը կատարւում էր հայերի բնակած տեղերում: Երկու կուռղ աղգերի հազարաւոր զօրքերը մորեխների նման ընկնում էին արտերը, ոտնատակ տալիս, փչացնում էին գիւղ ու քաղաք, այրում էին ու քանդում ամեն բան: Սշխատում էին այնպէս դատարկել երկիրը, որ գէմից եկող թշնամին ոչ ուտելու բան գտնէր, ոչ էլ բնակւելու տեղ:

Առաջ պարսիկները յաղթեցին ու գնացին առաջ: Բայց յետոյ

սկսեցին յաղթւել ու յետ քաշւել, որ գնան, իրանց երկիրը մտնեն, դետի այն միւս ափիք:

Յետ էին քաշւում, բայց անցած տեղերում ինչ գիւղ ու քաղաք որ կար՝ քարուքանդ էին անում, հայ բնակիչներին էլ զօռով դուրս քշում իրանց տուն ու տեղից, ոչխարների նման առաջ անում ու մղկացնելով բերում, հաւաքում այսաեղ:

Էլ մարդ չթողին—տղայ, աղջիկ, կին ու տղամարդ՝ անխնայ տւին մտրակների առաջ, շտապով դուրս արին ու հազար հազար ներով առան և բերին, որ գետը անցկացնեն, որ չթողնեն օսմանցիներին էլ օդնելու, տուն ու հաց տալու:

Շտապեցնում էին, որովհետեւ թշնամին գալիս, հասնում էր: Էլ չթողին, որ գոնէ իրանց հետ շոր կամ ուտելիք վերցնեն: Ով ինչ կարողացաւ՝ շուտով կապեց մէջքին, եթէ ձի կամ էշ ունէր՝ նրանց վրայ, մեծ մասը ոտքով, մարտակի ու փայտի հարւածների տակ գնում էին փոշոտ, յոզնած:

Եւ զօրքերը անգութ կերպով սպանում էին նրան, ով յոգնում, յետ էր մնում, ով չէր կարող դալ... Սպանում էին հիւանդներին, թոյլերին:

Մայրերի ձեռքերից երեխաներին խլելով շպրտում էին, ծերերին մորթոտում, քարերից ցած գցում, և երբ այլևս շունչ մնում գիւղերում, կրակ էին տալիս տներն ու խոտի գեղերը, արտ ու ամբար...

Այդպէս ահա, հազար-հազար կին, աղջիկ, տղամարդ ու մանուկ բերին, կիսեցին այս պղտոր ջրերի մօտ և սկսեցին անցկացնել գետից:

Անցկացնել, բայց ինչնվ: Հազիւ մի քանի լաստ ու նաւակ կար: Քիչ քիչ անցկացնելը երկար կըքաշէր, թշնամին հասնում էր, պէտք էր շտապել...

Եւ ահա թագաւորը հրամայեց, որ քշեն ու ջուրը լցնեն ամենքին՝ հազարաւոր կին, տղամարդ ու մանուկներ:

Սկսեց մի զարհումելի տեսարան: Թագաւորի զօրքերը, ձի հեծած, սրերի և մտրակների, փայտաւորի զօրքերը, ձի հեծած, սրերի և մտրակների, փայտաւորի և հրացանների հարւածներով ժողովեցին այդ հազարաւոր թշնամին ու քշեցին ջաւրը...

Ճիշ, աղաղմակ, լաց ու կոճ...

Գետը սևացաւ մէջը լցւածներով։ Խեղդւում էին, օգնութիւն կանչում... Զուրը տակովն էր անում մանուկներին, կանաց, լողալ չփխտեցողներին։ Լողալն էլ օգուտ չտւնէր. ով կարող է դէմ դնել այս ալիքներին, որ ազատւի... Խեղդւում էին, ոչ ոք չկար օգնող։

Ընդհակառակը, զինւորները իրանց ձիերով ջուրն էին մտել և ծեծում ու առաջ էին մղում յետ մնացողներին, սպանում էին չգնացողներին...

Կէսից աւելին խեղդուեց, ջուրը ծածկուեց զլուխներով, իսկ ափերի վրայ դիվեցին դուրս ընկած դիակները, հարիւրաւոր, հազարաւոր դիակներ...

Պղասր ալիքները տակովն արին խեղճերին։ Երասխը կարմրեց, և այս բոլոր սարերն ու ձորերը լցւեցին մեռնողների ձիչ ու լացով, յուսահատ աղաղմակներով...»

Հայրս լոեց և տիսուր ու մտածկոտ զլուխը կախեց կրծքին...

Դ.

Կէսօրից յետոյ, ամենից առաջ բեռները անցկացրին։

Չորս, հինգ թուրք մշակներ արագութեամբ լաստի վրայ դիվեցին ամեն ինչ, իրանք էլ նստեցին և ափին կանգնած մի մարդ արձակեց պարտնը։

Երբ ամենքը նստել էին, լաստավարը մի ձող դէմ տւառ ափին, յետ մղեց լաստը, ընկաւ երկար թիակի վրայ և դէպի ջուրը սահեց։

Կարծում էինք, թէ ուղղակի դիմացի ափն էր գնալու։ Բայց որքան զարմացանք, երբ տեսանք, որ ջուրը քշում էր լաստը միշտ դէպի ցած։

— Այգպէս է,— բացատրեց հայրս, — հոսանքի հետ կիշնեն, կամաց-կամաց կծուեն դէպի միւս ափը և այս մեր կանգնած տեղից շատ հեռու, դիմացը կելնեն։ Նայեցէք, տեսնում էք հեռում, միւս ափի վրայի այն շէնքերը. այնտեղ է կայարանը։

Լաստավարը միշտ իր թիակի վրայ էր ընկած։ Ճգնում էր ծոել և տանել դէպի միւս ափը։

Աչքով երկար հետևեցինք, բայց յետոյ յոզնեցինք: Մինչև
վերադարձը մի ժամից աւելի տեսց: Ահա այդ ժամանակ էր, որ մեզ մօտ, ափի վրայ եկան նոր
հիւրեր:

Երեսուն-քառասուն ոչխարներ էին գրանք, փոշոտ, աղտոտ,
յոգնած ու զլուխները կախ. խեղճ անասունները կիտւեցին եղեր-
քին, կպան միմեանց ու սպասեցին: Կային նրանց հետ նաև երկու խոշոր շներ: Բայց ինչպիսի
շներ, Մանաւանդ մէկը, ահագին, ուղիղ մի հորթի չափ. բրդոտ,
արիւնոտ աչքերով և սե, մեծ մռութով: Նրանք էլ յոզներ էին, կախ՝ հասան թէ չէ, շը-
թուկեցին և աչքերը փակ՝ մնացին:

Երկու թուրք հովհեւներ էին հօար բերողները: Երկու, ահա-
գին շէկ փափախներով, սևագէմ մարդիկ, որ երկար ցուպերով
մի կետի վրայ ժողովեցին ոչխարներին և իրանք էլ նրանց կող-
քին՝ փուեցին գետին:

Ե.

Վերջաղէս լաստը վերադարձաւ: Հիմի հերթը մերն էր:
Նստեցինք բաւական վախվիւլով: Մշակներն ու լաստավարը
ներս տարան մեզ ու մի որոշ տեղ նստեցը կարպետի վրայ:
Հայրս ու մայրս խստիւ պատիլում էին, որ տեղներիցս շշար-
ժւենք:

Այնուհետև լաստավարը հօրիցս իրաւունք ինդրեց ոչխար-
ների հօան էլ մեզ հետ անցկացնելու:

Տեղ կար: Ոչխարներին ու շներին քշեցին ներս և ժողովե-
ցին մեր կողքին:

Ոչխարները խրանում էին, առաջնորդ երկու այծերը պողե-
րով փորձեցին դէմ զնել: Երբ լաստը շարժւեց, ոչխարները կանգ-
նած մնացին և մինչեւ անգամ վախից սկսեցին գողալ:

Այծերը միայն հանդարտ չէին մնում: Տեղները նեղ էր: Այս
ու այն ոչխարին էին հրում:

Բայց երբ լաստը հոսանքի մէջ մտաւ ու սկսեց պատռել ու

անցնել և երբ ջրերն ելան ու խփել սկսեցին լաստի կողերին, այդերը աւելի գժւեցին:

Մենք ասես վախից կծկւել՝ իրար էինք կպել: Ոչ միայն յիշեցի, այլ մի բոպէ անդամ մտքիցս չէին հեռանում հօրս պատմածները:

Աչքիս առջև էին գալիս կատաղի ջրերը՝ ծածկւած զլուխներով՝ մանուկ, կին ու տղամարդ խեղդւում էին, ձեռները յուսահատ կերպով շարժում, օգնութիւն կանչում...

Մօրս աչքերի մէջ էլ սարսափ էր նկարւած: Գրկել էր մեզ ու նստել:

—Մի նայէք, ջրին մի նայէք... —մռմռում էր նա:

Հանգիստ ու անվրդով էին միայն թիակի վրայ ընկած լաստավարը, հովիւները, այլև շները:

Ովն իջանք: Լաստը յետ դարձաւ ֆուրգօնն ու ձիերը բերելու, իսկ մենք ջրի եղերքին՝ սպասում էինք:

Մի քանի ժամից յետոյ մեր ֆուրգօնը պատրաստ էր նորից մեզ տանելու մեր նոր հայրենիքը:

ՀՅՅ ՈՒԽՏԱՒՈՐԻՆ

Յովի. Թրւմանեան

Գնաս բարով, այ ուխտաւոր,
Երանի քեզ, հայ ուխտաւոր,
Որ կարօտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դէպ Արարատ:
Զեփիւներով, ծաղկանց բոյրով,
Ինչպէս ծնող սիրագորով,
Քեզ կողջունեն զմրուխտ հագած:
Գեղամ սարերն ու Արագած,
Եւ հարագատ աչքի նման
Քեզ կըժպտայ վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վէտ-վէտ.

Փայլվլում է ծփանքներով,
Յօրինում է յոյսերի ծով
Եւ մերթ վշտով ու տիսրութեամբ
Սկանում է, ինչպէս մութ ամպ...

Հապա էն սարն, էն սար հական,
Էն սարերի սարն ու արքան,
Լազուր երկնի ծոցը մտած,
Ճերմակ գլուխը ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում...
Քո առջևն ու քո սրտում...

Է՞ս, նա արդէն քանի սև դար
Պիրճ գանգուրովն իր ծիւնափառ
Շողշողում է, փայլատակում,

Եւ ուխտաւոր հայի հոգում
Հպարտութեան ծնում թունդեր
Եւ սիրելի երազ՝ թէ դեռ
Էն երկնանոս Մասսեաց կատար,
Ուր հին տապանն առաւ դադար,
Գաղար կունեն փառքերն մեր հին,
Որ նորափայլ իշնեն կրկին...

Հէնց խոնարհես աչքերդ ցած,
Լայն դաշտի մէջ, առջեղ յանկարծ
Մառախուղից իր խաչի հետ
Կըրարձրանայ մի սուր գմբէթ,
Որ կըխօսի մարդու հոգուն՝
—«Խաղաղութիւն ամենեցուն»...

Այնտեղ էն հին դարերից վեր
Երկնաքարող, հուժկու ձայներ
Սահակ Պարթե, Ներսէս Մեծին
Խաղաղութիւն քարոզեցին:
Այնտեղ լցւած ահեղ հոգրվ

Աստւածային իր տեսիլքով
 «Եջ Միածինն ի Հօրէ»,
 Որ Հայաստան լուսաւորէ:
 Ու լոյսն առատ ծաւալեցին
 Լուսաւորիչն ու սէդ Տրդատ,
 Որ տակաւին այնտեղ կեցած
 Կըսաւառնեն հոգիացած:

Ա Ն Ի

Ա. Ահարոնիան

ա.

Անին է իմ առաջը, այդ պառաւ ու հիւանդ մայրը, որի չոռացած կրծքի վրայ գնում եմ սգալու այնքան թանկազին կորուստները և անցնող մեծութիւնների սև վախճանը:

Պարիսպների երկար կարաւանն է մեր առաջը, մի յոգնած կարաւան՝ որ կարծես հեռւից, շատ հեռւից եկել է, հասել այստեղ, բայց վիրաւոր ու կողոպտւած ծունկ է չոքել հարթութեան վրայ այլևս երբէք չբարձրանալու համար: Զգիտեօ՛ինչ կայ ներսում, այդ պարիսպների յետեռում, ինչ են ծածկում նրանք իրանց ծոմուած, չարչարւած թիկունքների տակ. կուգէիր թե առնել, սլանալ և մի ակնթարթում դիտել այդ խորհրդաւոր շնչքերը, բայց առաջդ է Հովկի եկեղեցին, աւերակների սեւոր կարապետը, որ հասկանում է քո հետաքրքրութիւնը և շտապում է քեղ ասել, թէ ինչ կայ այնտեղ, պարիսպներից այն կողմը:

Հովկի եկեղեցին աւերակ Անիի պատկերն է:

Մենակ, անտէր ու վիրաւոր:

Սարսափի և մահերի մի անիծւած օրում, երբ ամեն ինչ պղծւում էր ու կործանւում, այդ խոճուկ եկեղեցին մոռացւած որբի պէս, կարծես, փախել է քաղաքից դուրս փրկութիւն որունելու և այստեղ հարթութեան վրայ ընկել է թշնամիների հարւածների տակ: Կանգ ենք առնում նրա առաջը: Ժողովրդական

երկողայութիւնը, որ միշտ սիրում է ոսկեզօծել գունատ իրակա-
թիւնը և անփայլ պատմութիւնը, այս եկեղեցու հիմնարկութեան
հետ կապել է մի սիրուն աւանդութիւն։ Հաւատացնում են, թէ
Բագրատունիների մայրաքաղաքն այնքան հարուստ է եղել, որ
մինչև իսկ հովիւը մեն-մենակ իր ծախքով է կառուցել այս
եկեղեցին իր կողջ սիրուն, որին մի հանդիսաւոր օր Մայր եկե-
ղեցում տեղ չեն տաել գոռող տիկինները։ «Հազար» եկեղեցուց
յետոյ այսպէս է շինւել մի եկեղեցին։ Իրօք, եկեղեցի չէ աս, այլ
մի մատուռ, ճիշտ այնքան մեծ՝ որպան հարկաւոր է պերճ քա-
ղաքի հովին և իր հպարտ կնոջը ազօթելու համար։ Բազմանկիւ-
նի ու գողարիկ այս շէնքն այնքան թեթև ոճ ունի, որ անգամ
իր անփառունակ վիճակում յիշեցնում է գեղանի մի կոյս, ճկուն,
բարեձև իրանով, համաշափ ու նուրբ կազմւածքով։ Առանձին
մասերի ներդաշնակութիւնն ամբողջի հետ այն աստիճան կատա-
րեալ է, որ մարդ ճաշակում է շէնքի ճարտարապետական պոէ-
զիան և սրտի կոկիծով դիտում գեղեցկութեան այս անդարձ
աւերակը։

Հովի եկեղեցին մեզ երկար պահել չի կարողանում։ Պա-
րիսպները մօտ են, բոլորովին մօտ, նրանք կանչում, թարթում
են մեզ։ Աւերակ են, այդ երկում է նաև հեռւից, բայց և այն-
պէս մեզ թուում է, թէ նրանց յետեւում շէնութիւն և բնակու-
թին, կեանք ու շարժում կայ։ Ներդաշնակութեան հետամուտ-
ու ծանօթ մարդկային հոգին հրաժարում է հաւատալ, թէ այդ
գոռող բուրդերը հսկայ քաղաքի գամբուրանի յուշարձաններն են,
որոնք կանգուն են միայն նրա համար, որ աշխարհն իմանայ,
թէ այնտեղ անդարձ կերպով թաղւած է մի փառաւոր կեանք, մի
ամբողջ ազգի մեծութիւն։

Եւ շտապում ենք...

Բ.

Պարիսպների մայր գոնից բացւում է զարհուրելի իրակա-
նութիւնը... մահւան, ոչնչութեան մի մռայլ հեռանկար, որի
վրայ սաւառնում է սոսկումը անգամ օրը ցերեկով։ Քարեր ու
քարեր կոյտ-կոյտ, անկարգ ու այլանդակ թմբեր, տեղ-տեղ կի-

սաւեր, կանգուն շէնքեր, որոնք ջարդւած բանակի վերջին ուղղ-միկների պէս կարծես գերագոյն պայքարն են մղում անդարձ անլումից առաջ: Կառքը ներս է մտնում պարսպի լայն, խրոխտ կամարի տակից. մի սառն, մեռելային շունչ է փչում՝ մարդու երեսին և սարսուցնում մարմինը. աւերակների հեքն է այն, որ խուսափում է մեռած քաղաքի վրայից, Զիերը քայլում են դանդաղութեամբ և նրանց ոտների տակ գետինը դղրդում է խուլ կերպով թաղւած կեանքն է այն, որ տնքում է ցաւով ամեն անգամ, երբ մի նոր ստք գալիս է նրան ճիշելու:

Անիումն ենք...

Վերջալոյսի յետին շողերը դեռ դողդողում են Ալաճայի կատարների վրայ. մինչև գիշեր դեռ ժամանակ կայ, և շտամում ենք դէպի միջնաբերդը: Սրբատաշ քարերի շեղակոյտի տակ ծածկած մի բարձր բլուզ է այն՝ ուր հին շէնքերից լոկ յիշողութիւններն են մնացել: Երկում են միայն բազմաթիւ շինութիւնների հիմքեր, փշրւած, քանդակազարդ քարեր ցաք ու ցրիւ փըռւած՝ ինչպէս մըրկի թափով և այդ բոլոր աւերածի վրայ դեռ կանգուն է հոյակապ պալատի մի անկիւն, որ արթուն պահապանի պէս այս բարձրութիւնից նայում է առաջը փուած աւեր քաղաքին: Այսաեղ կայ նաև մի փոքրիկ եկեղեցի, պատերի կէսը ներքեց սկ և վերը՝ կարմիր բարերով շինւած մի սիրուն շէնք, որ սեղանի կողմի այլանդակ բացւածքով նայում է Ախուրեանին: Ահա բոլորն՝ ինչ մնացել է Բագրատուննեաց մայրաքաղաքի Ալբուղութից: Ո՛չ պալատականներ, ոչ զօրանոցներ, ոչ տաճարներ. այս բոլորի փոխարէն միայն քարեր:

Միջնաբերդը բնականից աննման դիբք ունի. մի կողմից Ախուրեանն է հոսում անդնդախոր ձորի մէջ, միւս կողմից նրան գրկում է Ծաղկաձորը, որի մէջ հեծեծում է մի փոքրիկ վտակ: Ամբողջ քաղաքն իր շրջակայքով, որքան աչքը կարող է կտրել, բացւում է հայեացքի առաջ: Ալեզարդ Մասիսը և պառաւ Արագածը նայում են այստեղ: Ալաճայի բարձունքները և կողքայ սարերը եթերային համբոյը են ուղարկում այս աւերակներին: Լայն, ակնապարար հորիզոն. տեսարանը վեհ է և տխուր:

Պ.

Այստեղից երկում են աջ ու ձախ ընկած ձորերի կրծքին բազմաթիւ արհեստական երկարկանի կամ եռայարկ քարայրներ շարան-շարան: Ինչի են ծառայել դրանք. արգեօք արհեստանոցներ են, թէ բնակարաններ, ուր ապաստան է գտել բազմամարդ քաղաքի չքառորներ... ով գիտէ. գոնէ մեր հնաբազմամարդ քաղաքի չքառորներ... ով գիտէ. գոնէ մեր հնաբէտներից և ոչ մէկը վճռակսն ձեռվ մինչև այժմ այդ չսասց: Շուկայ, արհեստանոց, թէ բնականութեան տեղ, այդ միենոյն է. մի բան հաստատ է, որ այդ այրերը՝ մի օր մի ամբողջ կախւած քաղաք են կազմել, ուր եռացել է աշխատաւորների կամ առեքաղաք են կազմել, ուր եռացել է նրանց աղաղակներից և արականների կեանքը: Չորր թնդացել է նրանց աղաղակներից և ուրախ քրքիջներից, քարեայ կամ այլ սանդուխներն անշուշտ կախուած են եղել այրի շրթունքներից, և օձապտոյտ, սիրուն շափեւած են եղել այրի շրթունքներից, և օձապտոյտ, սիրուն շափեւած են եղել ամեն ինչ, սըսել է ձորերի կրծքին դէպի վեր: Դիւթական քաները գալարւել են ժայռերի կրծքին՝ դէպի վեր: Դիւթական քաների բոյնի պէս: Ժամանակը՝ դանդաղ ու յամառ աւերել է ամեն ինչ, սըսել է ձորերի կուրծքը, հեղեղները լւացել են. ու լիզել ճանապարհները, այժմ մնացել են միայն քարայրների ների պէս նայում են աւել քաղաքին՝ ոչինչ չտեսնելու համար:

Միջնաբերդի դէմ ու դէմ, մի այլ բլրի վրայ կանգնել է Աղջկաբերդը (Ղըզ-ղալա), գոռող ապաստանը գեղեցիկ արքայադըստեր, որ, ինչպէս ասում է աւանդութիւնը, խոյս է տւել քաղաքի ժխորից ու աղմուկից և իր ճոխ ապարանքը, քաշւել այն ժայռոտ, զժւարամատչելի բարձունքների վրայ միայնութեան հանգիստը դժւարամատչելի բարձունքների վրայ միայնութեան հանգիստը զայելելու համար: Ո՞վ էր այն արքայադըստերը, ինչեր են անվայելելու համար: Ո՞վ էր այն արքայադըստերը, ինչեր են անցել-դարձել խրոխտ դղեակում, մենաւոր ժայռը եղը է ամայի դարձել, ում ձեռքով, այդ բոլորը չգիտէ ժողովուրդը:

Ախուրեանը մի լայն պտոյտով գրկել է քառաժայռն ու դղեակը, ինչպէս մի հսկայական վիշապ, որ օր ու գիշեր հսկում է այնաւեղ ապրող գեղանի աղջկայ վրայ: Հինաւուրց ապարանքն ու բերդը վաղուց են խրոտակւել, մոխիր դարձել. եկեղեցու միայն կէսն է կանգուն երեսում հեռակաց, բայց հնազանդ գետը գեռ շարունակում է ծեծել քարաժայոի հիմքը, հինաւուրց վիշապը դեռ հսկում է:

Անին գիշեր ժամանակ... Ո՞վ է թափառել գերեզմաններում և ականջ գըել լացող խաւարի հեծկլտանքներին։ Մէկը խօսում է, փսփսում, անքում։ մի մութ խոսոչում ճանկեր կան, որոնք քարն են չանդռում։ մեռել է արդեօք, որ փորձում է դուրս սողակ դամբարամից։ Մի փլածքի տակ մի ուրիշը մրմնջում է ցաւով ու տանջանքով։ մվ, մում է խեղդում, ովքեր են կրծոտում իրար խաւարի մէջ։ Ահա մի ոտնաձայն, էլի մէկը, էլի մէկը, քայլում են շտապ-շտապ, փախչում են գանազան կողմեր, կանգ առան, ականջ են դնում արդեօք, մեղանից փախան... Նայում ես շուրջդ, գէպի յետ, հեռուն և... ոչինչ. այդ բոլորը քամին է, աւերակների խենթ քամին և խաւարից շփոթւած երևակայալութիւնը։

Պարիսպների մօտ ենք։ Գիշերով սրանք էլ զարհուրելի են։ Թեատարած ու վիրաւոր հսկաներ, որոնք անիծում են և կատաղաբար բուռնցք ցոյց տալիս երկնքին՝ նրա անգթութեան, անկարեկից հայեցքի համար։ Բացւածքներ ունին նրանք, որոնց միջից մի հատիկ աստղ կաթեցնում է իր գունատ շողերը, առանց փայլ տալու մոայլ պատկերին։ Քամին հեծեծում է նրանց խոցերի մէջ և մութ տեղերում կարծես։ վիրաւոր դազաններ են կաղկանձում։

Աննկատելի կերպով պտոտ ենք գործում, քայլում գէպի հարաւ։ Վերստին մեր առաջն է Սխուրեանը։ Նրա վրայ խաւարն առես աւելի թանձը է, աւելի սկ, ու սողում է գաղտագողի կերպով, հրէշի պէս, սողում է անձայն, իւկ նրա տակ ալիքներն են հեծեծում։ Այժմ նրանց ձայնն աւելի ուժգին է և աւելի յուղի։ Շրջակայքում ամեն ինչ կարծես այդ գշշացող գետին է ականջ գնում և պատմում է, պատմում է, պատմում։ Ի՞նչ ես հեկեկում լալկան ու հիւանդ երեխայի պէս, որբացած գետ, ինչեր ես տեսել հին օրերում, արդեօք ինչո՞ւ ես այլպէս գիշերցերեկ մոմուռ քամում...»






ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻԾՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՍԱՐԴԱ

Փոխ. Յովհ. Արաբաշեան

ա. յըրագան կետիք



Հսկայ բլրի լանջին՝ արագավազ, կատաւի գետակի եղերքից ոչ հեռու, մի մթին խորշ է երեւում։ Այդ խորշում նստած է մի մանուկ. Նրա հազին ոչինչ չկայ, ուսին ձգած ունի միայն գաղանի մորթի։ Այս էր նրա ամբողջ հսկուստը։ Մանուկը տասը տարեկան հազիւ լինէր։

Այն խորշը, որտեղ նստած էր նա, մի քարայրի անցք էր, որտեղ ապրում էին նրա ծնողները, ազգականները։ Այս անցքը ծառայում էր ոչ միայն իրեն մուտք դէպի նրանց բնակարանը, այլև որպէս պատուհան ու ծխնելոյզ։ Այս անցքի միջով կէսօրին արեգակը ներս էր ձգում իր պայծառ ճառագայթները։ Այդ նոյն


անցքով էլ դուրս է գալիս քարայրից մշտապէս վառ կրակի ծուխը։ Ներսը ոչ ոք չկայ. բոլորը զնացել են որսի, իսկ մանուկին յանձնւած էր կրակը պահպանելու։ Մի բողէ անգամ նա կրակի մօտից հեռանալ չի կարող։ Նա պարտաւոր է շարունակ փայտ, ցախ աւելացնել, որ կրակը չնանգչի։ Եթէ հանգչի, նորից կրակ ստանալ չի լինի։ Նրա ազգականներից ոչ մէկը չգիտէ, թէ ինչ բան է լուցկին, կայծաբարը։ Այս կրակն էլ ստացել են կայծակից այրւող ծառից և խռամքով պահում են, հոկում հերթով—այսօր՝ մէկը, վաղը՝ միւսը, գիշեր ու ցերեկ։

Կրակը տաքացնում է նրանց. կրակով եփում, խորովում են իրանց կերակուրը. կրակի շուրջն են հաւաքւում միշտ բոլորը և նա է պահպանում այդ մարդկանց մէջ լինկերական կապը։ Բացի այդ՝ կրակը պաշտպանում է նրանց բնակարանը կատաղի գագաններից։ Առիւծները, արջերն ու միւս գաղանները վախենում են կրակից։ Այդ մարդկի համոզւած էին, որ իրանց բաղդը կախւած է այդ կրակից։ Կար ժամանակ, որ այս քարանձաւում էլ վայրենի կենդանիներ էին ապրում։ Բայց դա շուտ վաղուց էր։ Մարդիկ թակարդներով որսում էին գաղաններին, քարէ զէնքերով սպանում նրանց, կուռում նրանց դէմ։ Այս մարդիկ չգիտէին, ինչ է երկաթը և միւս մետաղները։ Նրանց բոլոր զէնքերն ու գործիքները քարից էին և ոսկորից։ Բայց և այսէս նրանց յաջողւեց դուրս քշել գաղաններին քարայրից և բնակւել այնտեղ, եւ ահա նրանք արգէն միքանի սերունդ ապրել են այս քարանձաւում։ Այստեղ են ծնւել և մեծացել մանուկի պապերն ու ծնողները։ Այստեղ է ծնւել և ինքը, մանուկը։ Այս քարանձաւը նրա մէջ բնակւողների համար եղել է ամենալաւ ապաստան։ Այստեղ նրանք հանգստանում էին որսից յետոյ. ցուրտ եղանակին միշտ այստեղ էին հաւաքւում՝ խարոյկի շուրջը տաքանալու։ Այս բնակարանն ունի շատ միծ յարմարութիւններ—նրա պատերը ամուր են, այստեղ կարելի է գիշերները ապահով պաշտպանել գիշատիչ գաղանների հալածանքներից։

Մեր մանուկն այսօր շատ զոհ է ու հպարտ, որ իրան մի այսպիսի կարեոր գործ, ինչպիսին սրբազն կրակի հսկողութիւնն է, յանձնւած է իրան։ Կրակի ծուխը կծում է աչքերը, բայց մա-

Նուկը վաղուց արդէն սովորել է գրան: Մի բան միայն վատ է — նա շատ քաղցած է: Բոլոր հասակաւոր տղամարդիկ արդէն չորս օր է, որ գնացել են որսի: Տանն են մնացել միայն կանայք ու երեխաները: Մի ժամ առաջ սրանք էլ, բացի մեր այս մանուկից, զնացին անտառ կաղին ժողովելու: Ինչ որ ուտելու բան կար, բոլորը պատուել է: Ոչինչ, ոչինչ չկայ: Քաղցը տանը զամը է մանուկին, բայց նա սովորել է համբերել: Այս ժամանակւայ զամը չէ, որ նա օրերով քաղցած է մնում: Այս ժամանակւայ մարդիկ չգիտէին, ինչ բան է երկրագործութիւնը, նրանցից ոչ մարդիկ չգիտէին, ինչ բան է երկրագործութիւնը, նրանցից ոչ գաղտնէր չունէր հացի մասին: Զգիտէին, ինչ բան է ընտառը կենդանին և նրանցից ոչ ոք կովի կաթ բերանն առած չէր: Այդ մարդկանց ծանօթ էին միայն վայրենի կովերն ու այլ խոտակեր կենդանիները և որսում էին նրանց, նրանք ուտում էին միայն որսի միս, ծուկ և ծառերի ու թփերի պտուղներ:

Յանկարծ մանուկը մի զարհուրելի մոնչիւն լսեց: Նա վախակուներից չէր — իսկոյն վեր առաւ իր փոքրիկ քարէ կացինն ու կոտներից չէր — կուսակար վազեց այրից: Նրա առաջ բացւեց մի սարսափետէքը և գուրու վազեց այրից: Նրա առաջ բացւեց մի սարսափետէքը և տեսարան: Մանուկը տեսաւ, որ գետի եղերքին, մի ահագին սառոյցի վրայ կռւում են երկու փիթիարի գաղան: Նրանցից մէ՛ կը մամօնա էր, որը երեք սաշտէն երկարութիւն ունէր, իսկ բարձրութիւնը փոփոք շատ աւելի: Այս հրէշաւոր զազանն յաղթել, գետին էր տապալել մի ուրիշ ահուելի գաղտնի — ոնդեղիւրին. սակայն, նախքան շունչը փշելը, ոնդեղիւրն իր սուր եղջիւրով ծակել էր մամօնատի փորը: Արիւնն աղբիւրի նման խփում էր ծակել էր մամօնատի փորը: Յանկարծ մամօնատը մի սարսափելի մոնչիւն արձակեց վերքից: Յանկարծ մամօնատը մի սարսափելի մոնչիւն արձակեց և ընկաւ մեռած: Նրա մոնչիւնից երկիրը դողաց: Երբ մանուկը ինքն իրան մի փոքր հաւաքեց, տեսաւ, որ մամօնատի դիակի էին իրան մի փոքր հաւաքեց, տեսաւ, որ մամօնատի դիակի էին առել:



Երբ մանուկը վերադարձաւ այրը, իսկոյն զլխի ընկաւ, որ մեծ դժբաղդութիւն է պատահել: Կրակը հանգել էր: Մոխիրը գեռ տաք էր, բայց խեղճ մանուկն իզուր բոլոր ոյժով փչում էր՝ աշխատելով նորից վառել կրակը: Ոչ մի կայծ չէր երկում: Մանուկը լաւ էր հասկանում, թէ ինչ մեծ դժբաղդութիւն էր այդ: Այժմ ձմեռ է: Առանց կրակի մարդիկ ցըտից կըսառեն: Առանց կրակի վայրենի գաղաններն ամեն բոլէ կարող են յարձակւել նրանց վրայ և պատառտել: Մանուկը համոզւած էր, որ սարսափելի խիստ պատիժ է սպասում իրան - նրան մահւան կրդատապարտեն և կըսպանեն: Նրա ազգակիցները խղճահարութիւն առւածը չգիտեն: Նրանք որսորդ մարդիկ են - որսի ժամանակ սովորել են առանց խղճահարութեան խիել, սպանել իրանց զոհին: Այդ մարդիկ բոլորն էլ այդպէս են սովորած և ոչ ոք չէր պաշտպանի յանցաւոր մանուկին:

Եւ մանուկը որոշեց փախչել: Բայց նախքան այրից գուրս գալը, նա վեր առաւ իր քարէ գործիքները, որոնք այն ժամանակւայ մարդկանց զլխաւոր հարստութիւնն էին կազմում: Քարէ գործիքներով մարդը գաղանների դէմ էր գուրս դալիս. քարէ կացինով նա կտրատում էր միսը, ջարդուաւմ ոսկորները՝ նրանցից ծուծը հանելու համար. միենոյն կացինով մարդը կտրատում էր ծառերի ճիւղերը, փայտ ջարդում, փորում բոյսերի արմատներ և այլն:

Համելով մի խիտ անտառի, մանուկը տեսաւ, որ իր ճնողներն ու ցեղակիցները ծառերի տակ նստուած՝ որսի միս են ուտում. նրանց մօտ գետնի վրայ ընկած են մի մի սպանւած եղջերու և վայրենի խոզ: Որսորդներն այստեղ պատահել էին իրանց կանանց ու զաւակներին և բոլորը միասին նստել խնձոյթի: Քարէ գանակներով միսը կտրատել էին և քաղցած մարդիկ արտասովոր ազահութեամբ համարեա առանց ծամելու կուլ էին տալիս համեղ պատառները: Միքանիսը ջարդում էին ոսկորները և ծծում նրանց ծուծը: Նրանց մարմինները կեղտոտ էին, որովհետեւ սովորութիւն չունէին լւացւելու, մազերը գգգուած էին, բոլորի ճակատները սաստիկ նեղ էին և թեք: Նրանք, ըստ երեւութիւն, շատ ուժեղ էին: Մարդկանց խմբի մէջ մանուկի աչ-

Քո՞վս ընկաւ մի ինչ որ օտար, սպիտակահեր ծերունի: Մանուկն առաջին անգամն էր տեսնում նրան: Այդ ծերունին ճանապարհին ընկերացել էր որսորդներին, յայտնելով, որ ոչ մի ազգական չունի, - նրանցից միքանիսը մեռել էին, միւսներն սպանւել կամ գերի ընկել թշնամիների ձեռքը: Եւ նա մենակ էր մնացել աշխարհի երեսին. իսկ միայնակ մարդուն դժւար էր ապրել - նրան կամ առաջին իսկ պատահած առիւծը կըպատառուտէր կամ արջը կըտրորէր:

Այս նորեկ ծերունին կեանքի մեծ փորձառութիւն ունէր - նա շատ բան էր տեսած, շատ բան լսած և սովորած: Նա իր գիտեցածով շատ օգտաւէտ կարող էր լինել մեր որսորդներին, ուստի և նրանք սիրով ընդունեցին այդ անծանօթին իրանց խմբի մէջ: Քաղցած մանուկն աղահութեամբ նայում էր, թէ ինչպէս իր ազգականներն ուտում են համեղ պատառները, և քաղցը նրան մոռացնել տւեց սպառնացող վտանգը: Նա մօտեցաւ որսորդներին և մի կտոր միս խնդրեց:

- Իսկ կրամկը... - հարցցրին նրանք:

- Կրակը հանգաւ, - պատասխանեց մանուկը:

Զարագուշակ լուութիւն տիրեց, բոլորը խոր մտածմունքի մէջ ընկան: « Կրակը հանգաւ, ուրեմն կրած ենք մենք», - մտածում էին նրանք: Եւ յանկարծ բոլորը գոչեցին միաբերան.

- Սպանենք, սպանենք այդ անհնապանդ մանուկին, - և յարձակւեցան նրա վրայ:

Նորեկ ծերունին միայն անվրոգով կանգնած էր: Բայց երբ տեսաւ, որ մանուկին վտանգ է սպառնում, նա ասաց.

- Մի սպանեք մանուկին, ես կարող եմ կրակ վառել, Գնանք: - Եւ բոլորը գիմեցին դէպի քարայրը: Ծերը վեր առաւ մի ծակ կոճղ, մի փայտի կտոր անցկացրեց ծակի մէջ և սկսեց ուժեղ ու արագ պտըտացնել: Զօրեղ շփումից փայտը ծխաց և կրակ երևաց: Ուրախութեան աղաղակներ լսեցան չորս կողմից. ոչ ոք չէր սպառնում, թէ դա այդպէս հեշտ բան էր:

Մանուկը կենդանի մնաց և սիրեց ծերունուն, սա էլ նրան սիրեց: Ծերը զիտէր զանազան կենդանիների նկարներ անել: Նա մանուկի համար մածոնախ ոսկորի վրայ նկարեց մի արջի պատ-

կեր. սովորեցնում էր նրան նետ-աղեղ գործածել, կարծը քարից նետերի և տէղերի ծայրեր շինել, քարէ մուրճեր ու կացիներ պատրաստել, ձուկ որսալ, թրթուրներ ու օձեր բռնել, որոնք իրակ կերակուր էին գործածում: Նրանք միասին կերակուր էին եփում կաշւէ պարկի մէջ: Եւ դա այնքան էլ հեշտ չէր: Եթէ պարկը շատ մօտիկ բռնւէր կրակին՝ կայրէր. հեռացնէիր՝ ջուրը չէր տաքանայ և միսը չէր եփու: Բայց տես, ինչ էին անում նրանք. հաւաքում էին քարեր և, կրակի մէջ ձգելով, շիկացնում, ապա այդ քարերը ձգով ու մսով լի պարկը: Զուրբ եռում էր և միսը եփում: Այս կերպով պատրաստւած կերակուրն, իհարկէ, մաքուր ինել չէր կարող, բայց գա նշանակութիւն չունիէր այն ժամանակւայ մարդկանց համար:



զ. Երբ եւ ուսեղ է այս ամենը սեղի ունեցելու

Դուք երեխ կըկարծէք, թէ այս ամենը կարող է պատահած նել մի որևէ հեռաւոր, անմարդաբնակ հրկրում: Ոչ, այս ամենը կատարել է դուցէ և հէնց այն երկրում, որտեղ այժմ ապում ենք, միայն թէ եղել է շատ, շատ հին ժամանակաշրում: Այդ այն ժամանակներն է եղել, երբ երկրի վրայ գեռ դել են մամօնտներ, երբ ոչ ոք կարդալ-գրել չգիտէր, երբ մարդկանց ծանօթ չէին ոչ երկաթ, ոչ բրօնզ և ոչ մի ուրիշ մետաղ, և երբ կացինները, մուրճերն ու միւս գործիքները շինուում էին կարծը քարից: Այդ ժամանակները մարդիկ գեռ գաղափար չունէին երկրագործութեան և ընտանի կենցանիների մասին, գեռ իրանց համար սներ կառուցանել չէին սովորած:

Սակայն ինչպէս կարելի էր իմանալ, թէ ինչ կերպ էին ապում մարդիկ այն հեռաւոր ժամանակներում, երբ ոչ ոք ոչ դրել գիտէր, ոչ կարդալ... Այդ ժամանակները կըշւում էին նախապատմական: Միթէ կարելի էր իմանալ, թէ ինչպիսի բնակարաններում էին ապրում նախապատմական մարդիկ, ինչ զէնքեր

ու գործիքներ գործածում, ինչով էին կերակրում, ինչ հագուստ-ներ հագնում, և թէ ինչպիսի կերպանիներ կային այն ժամանակ-ները երկրի վրայ:

Ահա թէ ինչպէս է իմացւել այդ ամենը:

Մեր երկրի զանազան կողմերում գտնուում են բազմաթիւ հին գերեզմաններ, իսկ լեռների մէջ և գետերի ու ծովերի ափերին պատահում են շատ հինաւուրց այրեր: Գիտնականները փո-լում են այդ գերեզմաններն ու այրերը, պեղումներ անում և մարդկանց ոսկորների հետ միասին գտնում այնտեղ նրա գործիք-ները, կերակրի, հագուստաների ու զարդերի մնացորդները: Գըա-նւած իրերից գիտնականներն իմանում են, թէ ինչպիսի կեանք էին վարում նախնական մարդիկ, - նրանց գործիքները, հագուստը զարդերը... Պեղումների ժամանակ գտնուում են նաև զանազան կենդանիների ու թոչունների ոսկորներ, որոնց մսով կերակրուու-էր համար մարդը: Այդ ոսկորներից իմացւում է, թէ ինչ կեն-դանիներ են եղել զրանք: Առանձնապէս լաւ յայտնի էին մամօն-տի ոսկորները: Հին ժամանակները տպէտ մարդիկ համոզւած էին, թէ զրանք հսկաների ոսկորներ են և հոգեհանգիստ էին կա-տարում: Իսկ այժմ, գիտնականների շնորհիւ, մեզ լաւ յայտնի է, թէ ուժն էին պատկանում այդ ոսկորները: Կենդանիների ոս-կորների մէջ ելքեմն գտնուում են նետերի քարէ ծայրեր, նշա-նակում է՝ նախապատմական մարդիկ օգտառում էին նետաղեղով: Պեղումները ցոյց են տւել, որ զանազան երկիրների կլիման հին ժամանակներում ստէպ փոփոխութեան է ենթարկելիս եղել: Այն տեղերում, ուր այժմ գալուն-ձմեռ ձեան ու սառոյցի թաղա-ւորութիւնն է տիրում, այն ժամանակները եղանակը տաք է եղել: Այդ աեղերում աճում էին տաք կլիմայի բոյսեր, որոնց մնացորդներն այժմ գտնուում են զետնի մէջ: Եւ զրանցով կարելի է եղրակացնել, թէ ինչպիսի կլիմայի և ինչպիսի շրջապատի մէջ էր ապրում նախապատմական մարդը: Տեղադրութեան համեմատ էլ գտնուում էին նախնական մարդու բնակարանները: Դրանցից մի քանիուը շինուում էին մշտնշենական ձեան երկրում, որտեղ այժմ հիւսիսի բնակիչներն են կառուցանում իրանց սառցէ տները. բոլորովին տարբեր բնակարաններ են գտնուում կուսական ան-

տառների երկրում։ Այսաեղ կարելի էր պատոպարւել ծառերի կատարներին, ինչպէս անում են այժմ կապիկները։ Լեռնոտ տեղերում մարդն աւելի յարմար է գտնում այրերի մէջ բնակւել։ Գետերի ու լճերի վրայ և ճահճային տեղերում նա իր բնակարանը շինում էր փայտէ սիւների վրայ,

Երբ այրերում գիտնականները գտնում են մոխիր և ածուխ, գալիս են այն եզրակացութեան, որ այն ժամանակները մարդիկ օգտուելիս են եղել կրակից։ Այսաեղ գտնում են նաև տեսակտեսակ զարդարանքներ՝ մեր հուլունքերի և մատանիների նմանութեամբ։ Սակայն դրանք շինուամ էին ոչ թէ ոռկուց ու արծաթից, այլ ոսկերներից, կաւիճից, այլ և այլ տեսակ քարերից և խեցիներից։ Ներկայումս էլ դեռ կան վայրենիների ցեղեր, որոնք՝ չնայելով որ հագուստի մասին գաղափար չունին, սակայն իրանց մարմնի վրայ կրում են այլ և այլ զարդարանքներ։ Նրանցից շատերը ծակում, կտրատում են իրանց կաշին, ներկում ու զանազան նկարներ անում մարմնի վրայ՝ գեղեցիկ երևալու համար։

Այս և ուրիշ շատ բաներ հարկադրում են կարծել, որ ճիշտ այդպէս էր վարւում նաև նախնական մարզը։ Գտնուած իրերից միքանիսը, օրինակ՝ խեցիները, տեղական առարկաներ չէին։ Ակներե է, որ դրանք հեռու երկիրներից էին բերւած։ Ուստի գիտնականները կարծում են, որ այդ վաղեմի ժամանակներում էլ գոյութիւն ունէր փոխավաճառութիւնը։ Մէկն ունենում էր մի գեղեցիկ խեցի, մի ուրիշն էլ, օրինակ, գազանի մորթեր, և նրանք իրար հետ փոխում էին իրանց ապրանքները։ Շատ հաւանական է, որ փողի տեղ գործածւում էին խեցիներ կամ ուրիշ որևէ ապրանք։ Հաւանական է՝ առեսուրով պարապում։ Էին գլխաւորապէս թափառաշրջիկ վաճառականները, նրանք, այժմեան բօշանների նման, թափառում էին երկրից-երկիր։ Ներկայումս դժւար է նոյնիսկ երեակայել, թէ ինչ դեր էին խաղում հին ժամանակներն այդ թափառական առեսորականները։ Նրանք նոյնն էին, ինչ որ այժմեան խանութիւնները, Բացի այդ՝ պատմում էին զանազան նորութիւններ և մեր լրագրների ու ամսաթերթերի դեր կատարում։ բարեներ էին բերւում հեռաւոր ծանօթներից և կատարում գանազան յանձնարարութիւններ, —այն՝ ինչ որ անում

Են այժմ համակներն ու հեռագիրները։ Եւ շատ հաւանական է, որ ամեն տեղ մի այդպիսի առևտուկանի գրկաբաց, մի առանձին ուրախութեամբ էին դիմաւորում։ Այսուեղից ծագում էր հիւրասիրութիւն և անցորդներին, օտարներին պատսպարելու, կերակրելու և պատւելու սովորութիւն։

Միենոյն գերեզմաններում և այրերում գտնւում են նոյն պէս այն ժամանակւայ գաղանների և մարդկանց նկարներ։ Սըրանք ցոյց էին տալիս, թէ ինչպէս էին հագնւում այն ժամանակւայ մարդիկ, ինչպէս որս անում, պատերազմում և այն ջանազան տեղերի և զանազան ժամանակների մարդկանց հագուստին էլ տարբեր էին իրարից։ Մի քանի տեղերում, որտեղ մարդիկ որսորդական կեանք էին վարում, գաղանների մորթն էր հագուստի տեղ ծառայում։ ուրիշ տեղերում՝ տերենները, խոտը և այլն։ Աւելի ևս մեծ տարբերութիւն կար որսորդութեան և պատերազմելու ձեւերի մէջ։ Ինչպէս առացինք, պեղումների ժամանակ գտնւում են նաև կերակուրների մնացորդներ։ Դրանցից պարզ երեսում է, թէ ինչով էին կերակրում մարդիկ այն ժամանակները։ Այդ մնացորդների մէջ գտնւում են շատ կենդանիների ջարդւած ոսկորներ, և ջարդւածքի ձեփից երեսում է, որ մարդիկ այդ բանն արել են ծուծը ծծելու նողատակով։ Կենդանիների ոսկորների հետ միասին երբեմն գտնւում են նոյն ձեռվ ջարդւած մարդկանց ոսկորներ։ Նշանակում է, նախնի մարդկանց մէջ էլ կային արիւնաբրու մարդակերներ, ինչպէս և այժմ պատահում են վայրենի ցեղերի մէջ։ Սակայն կային և ցեղեր, որոնք կերակրում էին միմիայն բոյսերով, սլուղներով, արմատներով և այլն։ Առհասարակ նախապատմական մարդու սնունդը կախւած էր կլիմայից, հողից, նրա պարապմունքից և այլն։

Պ. Սոսազ եւ այժմ

Այն ժամանակամիջոցը, որի նկարագրութիւնն արւեց այս տեղ, պատմութեան մէջ կոչւում է քարէ շրջան, որովհետեւ այն ժամանակւայ բոլոր գործիքները քարից էին շինւած։ Շատ զրժւար էր նախնական մարդուն իր գոյութիւնը պաշտպանել այս

սարսափներով լի շրջանում, երբ ամեն կողմից նրա կեանքին վտանգ էր սպառնում. ասկայն նրա խելքն ու հնարագիտութիւնն աւելի բարձր էին, քան ժամանակակից մամօնտներինն ու այլ կենդանիներինը. նրան յաջողւեց ձեռք բերել կրակը. նրա նախորդները կարողանում էին միայն անորոշ ձայներ արձակել, մոնչալ, իսկ նա սկսեց խօսել: Եւ այս ամենը՝ խօսելու ընդունակութիւնն ու կրակը նրան աւելի ևս զօրեղ գարձրին: Ուստի դեռ այն ժամանակ կարելի էր ասել, թէ այս խղճուկ և ողորմելի արարածի սերունդը ժամանակին կրդառնայ երկրի տէրն ու թագաւորը: Նրա զարհուրելի թշնամիները – կենդանական աշխարհի հսկաները, ինչպիսին, օրինակ, մամօնտն էր, անհետացան երկրի երեսից, իսկ մարդը մնաց: Նրա յաջորդներն յաղթեցին մամօնախն, անգեղջիւրին, փողին և միւս կենդանիներին:

Բայցի այդ՝ մարդն ստիպեց մի քանի կենդանիների ծառայել իրան: Սկզբում նա ընտելացրեց շանը, իր հաւատարիմ ընկերը, օգնականը, ուղեկիցը, պահապանը և ծառան դարձնելով նրան: Այս սահածարեց վայրենի ձիուն և ստիպեց կրել իր մէջքին իրան և իր բարիքը ու ոայլերի լծեց. ընաելացրեց վայրենի կովին, ոչխարին, խողին և այն: Նա ուսումնասիրեց վայրենի գաղանների ոսկորութիւնները և նրանց որսալու համար թակարգներ հնարեց: Այդպիսով մարդն անսահման տէր գարձաւ ոչ միայն չօրքոտանի կենդանիներից, այլև թռչուններին ու ձկներին: Նրա առաջ խոնարհեց ամեն մի կենդանի արարած:



Անցան շատ-շատ դարեր, և մարդիկ սովորեցին իրանց գէնքերն ու գործիքները, քարի փոխարէն, բրօնզից շինել. սրանք անհամեմատ սուր և յարմար էին, կարծեած մարդն աւելի բարձրացաւ և զօրեղացաւ: Սա կոչւում է բրօնզէ շրջան: Դարձեալ դարեր անցան, և մարդիկ սովորեցին երկաթից գործիքներ ցի:

նել: Ի՞նչը կարող էր աւելի լաւ լինել, քան երկաթէ կացինը՝ ծառերը կտրատելու և փայտ ջարդելու համար: Երկաթէ սղոցը՝ սղոցելու համար, երկաթէ մուրճը՝ մեխեր խփելու և քարեր տաշելու համար: Երկաթէ գութանն ու արօրը՝ երկիրը մշակելու համար: Հասաւ երկաթէ շրջանը, մեր ներկայ շրջանը: Քարանձաւների, հողաշնորհների և վրանների փոխարէն մարդիկ ակսեցին շինել փայտէ և քարէ տներ: Նախնական մարդը մի ապահով, յարմար բնակարան չունէր և նա չէր կարող հաւատալ, թէ իր յաջորդները կրցինեն ահազին քաղաքներ քսան և աւելի յարկանի տներով, բարձր տաճարներով, աշտարակներով և այլն, կը հիմնեն բազմաթիւ գործարաններ .. Նա չէր հաւատայ, թէ իր թուները կը ծածկեն ամբողջ երկիրը երկաթուղու գծերով և ոչ մի այն եղջերուից կամ վայրի այծից, այլև թռչնից ու քամուց ել արագ կը կարեն ճանապարհը:

Մարդը միայնակ որս էր անում ահազին տարածութեան վրայ և շատ անգամ քաղցից մեանում էր, իսկ այժմ այդ նոյն հողամասը իր տւած բերքով սնունդ և հագուստ է տալիս հազարաւոր մարդկանց, որովհետեւ նրանք սկսեցին մշակել այն: Նախնական մարդը վախենում էր ջրից, ծովից, իսկ այժմ նրա սերունդը իշխում է ծովին, նրա նաւերն ու շոգենաւերը շրջում են ովկիանոսի երեսին, իսկ գետերի ջուրը պտղացնում է ջրաղացի անիւները: Մարդը հպատակեցրեց իրան ջրերի գոլորշին և ստիպեց բեռներ կը ել ծովիրի և ցամաքի վրայով, աշխատել գործարաններում: Նախնական մարդը գողում, սարսափում էր քամու, մըրկի շաշիւնից, սակայն հասաւ ժամանակը, երբ այժմեան մարդիկ սահնահարեցին քամին, ստիպեցին աշխատել իրանց համար: Նրանք համարձակւեցին նոյն իսկ օդագնաց նաւեր շինել և երկնքի թռչունների նման թռչել: Կայծակը սարսափի, անասելի երկիւղի մէջ էր ձգում մեր պատերին, իսկ այժմ մարդիկ խլեցին երկնքից օդային մըրիկների մայր—ելէքտրական ոյժը և նրա միջոցով սկսեցին հեռագիրներ տալ և հեռախօսով ահազին տարածութեան վրայ խօսել միմեանց հետ, այդ ոյժն այժմ ելէքտրական երկաթուղիներով մարդկանց և ապրանքներ է տեղափոխում, սլաքացնում է մեքենաներ, լուսաւորում տներն ու փողոցները:

Նախնական մարդը մինչև երեքը հաշւել չգիտէր, իսկ այժմ մարդիկ ստոյգ կերպով գիտեն, թէ մեզանից բանի միլիօն վերստ հեռու է գտնւում արեգակը և մի աստղը միւսից:

Նախնական մարդը կարդալ—գրել չգիտէր, այնինչ այժմ գիտնական մարդիկ լուծել են երկնքի և երկրի բազմաթիւ գաղտնիքներ: Մարդն այժմ շատ բարձր է կանգնած իր խելքով և հնարագիտութեամբ: Խօսք չկայ, որ գեռ մինչև օրս էլ բազմաթիւ չարիքներ, պատուհամներ գոյութիւն ունին երկրիս երեսին,—մարդիկ մեռնում են ցրտից, սովից, պատերազմները շարունակւում են, կատարում են անթիւ յանցագործութիւններ, սակայն ներկայումս անհամեմատ լաւ է, քան թէ այն ժամանակ, երբ գոյութիւն ունէին մարդակերութիւն, սարկութիւն և սսկալի տանջանքներ...

Մի հայեացք ձգելով դէպի անցեալը, մենք կըտեսնենք, որ կեանքն արագ քայլերով առաջ է գնում: Երբ նկատում ենք, որ մարդը ոչնչութիւնից դարձաւ աշխարհի տէրը, նրա պարծանքն ու փառքը, բնութեան թագն ու հրաշալիքը, մենք վստահ կարող ենք նայել դէպի ապագան: Մենք իրաւունք ունինք յուսալու, որ մեր կեանքն աւելի ևս կըլաւանայ, կառաջադիմէ: Իզուր չէ ասել բանաստեղծներից մէկը, թէ՝ «բազմաթիւ են աշխարհիս մեծամեծ ուժերը, սակայն մարդուց զօրեղ ոչինչ չկայ բնութեան մէջ»...



ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՒՄԲՈՍ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԸԸ

ա.

Արանից հինգ հարիւր տարի առաջ Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ երկներից մէկն էր. այստեղից արտահանում էին թանկագին ապրանքներ՝ մարդարիտ, սատափ, մետաքսեղէն, ոսկեթել մանւածքներ, թէյ, սուրճ, դարչին, բրինձ, Վաճառականները հակեր էին կապում, ուղարկին բարձում, կարաւաններ կազմում ու ճամպայ ընկնում: Կարաւանները անց-

նում էին լեռների կիրճերով, աւազոտ անապատներով, ովազեսից
ովազիս, քաղաքից քաղաք, ուղարքը կոտորւում էին արևածը՝
աւազից ու ծարաւից, մարգիկ հիւանդանում էին, աւազակները
կողոպտում էին կարաւաններն ու գերի էին վարում կամ սպա-
նում մարդկանց: Ամեն տեսակ վտանգների ենթարկելով, մէկ-
երկու տարուց, վերջապէս, վաճառականները հասնում էին Մի-
ջերկրական ծովի ափերին, որտեղից ապրանքները նաւերով փո-
խադրում էին Եւրոպա:

Շատերն արդէն որոնում էին մի այլ ճանապարհ գէպի
Հնդկաստան, աւելի կարճ ու աւելի ապահով: Զէնովացի Քրիս-
տափոր Կոլումբոսն էլ ամբողջովին տարւած էր այդ մտքով:

Բաղդը նրան գցել էր Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լի-
սաբոն: Նա գիտէր, որ երկիրը կլոր է, և համոզւած էր, որ Պոր-
տուգալիայից շարունակ գէպի արևմուտքը գնալով՝ անպատճառ
պիտի համի Հնդկաստան: Նա դիմեց Պորտուգալիայի թագաւո-
րին, բայց կոսուր: Կոլումբոսը դիմեց իր հայրենի Զենովա: Գը-
նում էր Սպանիայով: Այստեղ մի վանահայր, ոգեորւած նրա
ծրագրով, խորհուրդ տւաւ դիմել Սպանիայի թագաւորին: Գիտ-
նականները նրա առաջարկը անմիտ էին անւանում, պալատա-
կանները ծաղրում էին. երկար տարիներ թագաւորը խօսք չէր
տալիս. վերջապէս, ամեն խոչընդոտի գէմ կուելով՝ Կոլումբոսն ու
վանահայրը հասան իրանց նպատակին: Թագաւորը խոստացաւ
օգնել, եթէ Կոլումբոսը բոլոր գանձ երկրները կընպատակեցնէ
Սպանիային:

Պալոս նաւահանգստում պատրաստւած էին հին քայլայւած
երեք նաւ. նաւաստիներն ընտրւած էին ամեն տեսակ ոճրա-
գործներից ու յանցաւորներից: Կոլումբոսը, տեսնելով այդ՝ սաս-
տիկ մտատանջութեան մէջ էր – ճամպայ ընկնի, թէ՞ հրաժարւի:
Տասնեւոթը տարիների ջանքերից ու չարքաշութիւնից յետոյ
հրաժարւէր այս առիթից: Ուրիշ անդամ կըյաջողւէր արդեօք:
Կոլումբոսը որոշեց ապաւինել իր ճակատագրին:

Հէնց որ փշեց յաջողակ քամին, Կոլումբոսը նաւը ելաւ, հրա-
մայեց խարիսխները քաշել և առագաստները բանալ:

Այդ օրը 1492 թւի օգոստոսի 20-ն էր:

Նաւեցին դէպի Կանարեան կղզիները, Ղեկավարներից մէկը դիտմամբ կոտրեց դեկը, որ նաւերը ստիպւած լինին յետ դառնալ. բոլորն էլ շփոթւեցին և վատ նշան համարելով, պահանջում էին վերադառնալ: Կոլումբոսը մի կերպ ուղղել տւեց դեկը և հրամայեց առաջ գնալ: Ամենքը տրտնջում էին. «Իր յիմար քմահաճոյքին է ուզում մեզ զոհել. բոլորիս կորցնելու է»:

Վերջապէս հասան Կանարեան կղզիներին, Ալիներե էր, որ այդ նաւերով անկարելի էր ճամպորդութիւնը շարունակել անձանօթ ովկիանոսով. նորոգելու համար մի ամբողջ ամիս պէտք եկաւ:

Ղեկերը նորոգեցին, բոլոր փթած մասերը փոխեցին, թարմ շուր, միս, փայտ վերցրին ու մի կէսգիշերից յետոյ Կոլումբոսը ճամպայ ընկաւ դէպի արևմուտք, երբ լոյսը բացւեց, էլ ցանքը չէր երևում. շուրջը միայն ծով էր ու երկինք, անսահման ուրածութիւն: Նաւաստիներին երկիւղը տիրեց.

«Ո՞ւր է տանում մեզ. չորս բոլորը միայն ծով է ու ծով. որէցօր աւելի հեռանում ենք ցանքաքից: Զենք ուղում նոր երկիրներ, թող յետ տանի մեզ մեր հայրենիքը»:

Մի քանիսը զգուշացնում էին, թէ ծովային օրէնքները խիստ են և մահի ու կեանքի իրաւունք են տալիս նաւապետին:

«Մեզ ի՞նչ, — կանչում էին նաւաստիները. — նա մենակ է, մենք շատ ի՞նչից ենք վախենում. էլ ի՞նչ ենք նայում»:

Կոլումբոսը լսում էր այս տրտունջները, յորդորում, համոզում, իսկ հարկ եղած տեղը և սաստում, սպառնում: Վեցելորդ օրը տեսան ջրի երեսին լողացող մի մեծ գերան և ուրախացան, կարծելով՝ որ ցամաքը մօտիկ է: հեռաւոր ամպերը ընդունել էին ցամաքի աել:

Շարունակում էին նաւել: Հասան մի տեղ, ուր ջուրը ծածկւած էր խիտ խոտով, որ խանգարում էր նաւարկութեանը: Բոլորն էլ վախենում էին՝ չինի, թէ ծովի վերջն է ու խոտի տակ խութեր են ծածկւած: «Նաւերը այս է՝ ժայռերին կըդիպչեն ու կըփշրւեն. ամենքս կըսեղդւենք», — մտածում էին նրանք: Բայց Կոլումբոսը սիրտ էր տալիս՝ «Զենք խեղդի, ջրխոտ է, տակը

քարեր չկան»։ Լողում էին խոտի միջով՝ կարծես մի կանաչ դաշտով։ Վերջապէս դուրս եկան այդ խոտերից էլ կըկին միևնոյն կապոյտ ծռվը, միշտ միենոյն երկինքը։

Էլի մի քանի օր անցաւ, երևացին բազմաթիւ թռչուններ։ Գիշերները նստում էին կայմերի վրայ, բայց արևի ծագելուն պէս թռչում, հեռանում էին։ «Եթէ թռչուններ են թռչում, անշուշտ ցամաքը մօտիկ է», — ուրախանում էին նաւաստիները։ Յաջորդ օրը տեսան թռչող ձկներ, մի քանի հատ էլ նաւերի վրայ բնկան։ Երբէք այսպիսի ձկներ չեն տեսել։

Բայց դուր յոյսեր. օրեր էին անցնում, ցամաքը չէր նըշմարում։ Նաւաստիները բացէ ի բաց հրաժարում էին աւելլ հեռանալ։ Կոլումբոսը կանգնեց ապստամբների մէջտեղ ու կտրուկ յայտարարեց։ «Այսքան ժամանակ եկել ենք, էլի մի երեք օր սպասենք։ Եթէ այս երեք օրն էլ ցամաքը չտեսնենք, կըվերադառնանք տուն»։

7.

Ապստամբները հպատակւեցին. Կոլումբոսը յոյս ունէր, որ երեք օրում անպատճառ կըհասնեն ցամաքին։ Շատ նշաններ կային. յատակը չափելով՝ նկատել էր, որ հետզհետէ խորութիւնը պակասում էր, թռչունները պտտում էին արդէն երամներով. կային և փոքրիկ թռչուններ, որոնք ծովափից հեռու թռչել չեն կարողանայ. Երեկոները փշում էր մի այնպիսի տաք քամի, որ երբէք ծովից չի փշում։

Էլի մի օր անցաւ, և դեռ ոչինչ չէր երևում։ Կոլումբոսն էլ յուզւում էր, բայց ցոյց չէր տալիս և նաւաստիներին խրախուսելու համար յայտարարեց, թէ երկու հազար հինգ հարիւր ըուբնի է նշանակւած նրան, ով ամենից առաջ կըտեսնի ցամաքը։ Ամբողջ գիշերը մարդիկ քնած չեին, շատերը կայմերի վրայ լուսացրին. Իսկ Կոլումբոսը մտատանջութեան մէջ ինքն իրան ասում էր. «Եթէ այսօր էլ ցամաքը չերեաց, ինչ պէտք է անեմ, նաւաստիները կապստամբւեն, և ամեն ինչ կորած է»։

Լուսաբացից առաջ Կոլումբոսը ելաւ տախտակամած և հեռւում մի կրակ նկատեց. իր աչքերին չհաւատալով՝ կանչեց մի

նաւաստու և ցոյց տւեց հեռուն: Եղկումն էլ սրտատրոփ նաշյում էին. կրակը շարժւում էր: Անկասկած՝ մի նաւակ էր, իսկ նաւակով ափից շատ հեռանալ ոչ ոք չէր վստահանայ: Կողումբոսի ուրսիսութեանը չափ չկար:

Լոյսը նոր էր բացւում, որ առաջաւոր նաւից ձայն տւին. «Յամաք, ցամաք»: Կողումբոսի նաւը ամենից յետեն էր. շուտով այնտեղից էլ նկատեցին: Բոլոր երեք նաւերի վրայ էլ սաստիկ ուրախութիւն բարձրացաւ: Նաւաստիները համբուրում էին Կողումբոսի ձեռները, ոտները, զգեստի ծայրերը: «Ներիք, ներիք, Կողումբոս, որ չէինք հաւատում քո խոստումներին ու ըմբոստանում էինք քո դէմ ովկիանոս չտեսած՝ սարսափել էինք»: Իսկ Կողումբոսը երջանիկ՝ կրկնում էր. «Ամեն ինչ մոռացւած է, ես չեմ բարկանում ձեզ վրայ»:

Երեք ամիս անծայր ջրերը նաւելուց յետոյ՝ վերջապէս հասնում էին ցանկալի նպատակի:

Կողումբոսը հրամայեց մակոյիներն իջեցնել ու իր օգնական նաւապետների հետ դիմեց դէպի ափը: Քանի աւելի մօտենում էին, այնքան աւելի էին զարմանում. ափին բարձրանում էր մի վիթխարի անտառ, որի ամեն մի հսկայական ծառը հազիւ չորս մարդ կարողանար գրկել, ամեն մի տերեր երեք մարդ կըծածկէր: Խոտերը, ծաղիկները, թռչունները՝ բոլորն էլ այնպէս չէին, ինչպէս Եւրոպայում: Անտառից դուրս վաղեցին վայրենի մարդկի, մորթը կարմիր, գլխի մազերը սև, երկար ու կոշտ, անմօրուք. ամբողջովին մերկ էին, միայն գլխին փետուրներ ու զարդեր. մարմինն ու երեսը նախշած էին բազմերանգ ներկերով, ականջներին ու ռունգներին օղակներ ու սսկու կտորներ: Նրանք ապշած նայում էին նորեկներին:

Ելնելով ծովափը, Կողումբոսը դրօշակ տնկեց և յայտարարեց.

— Այս երկիրն ու բոլոր այստեղ եղածը առնում եմ Սպանիայի թագաւորի իշխանութեան տակ:

Նաւերից որոստացին թնդանօթները, քահանան խաչ ու խաչ վառով առաջ անցաւ, բոլորն էլ ծունկ չոքեցին ու գոհութիւն տւին Աստծուն աջողութեան համար:

Այդ կղզին կոլումբոսը անւանեց Սահ-Սալւտոր, այսինքն՝
Սուբր Փրկիչ, ի յիշատակ իր գրկութեան։
Վայրենիները, տեսնելով սպիտակամորթներին ու խելով
թնդանօթների որոտը, կարծեցին, թէ սպանացիք առտաձներ
են ու երկնքի որդիք, որ եկել են փայտէ աներով և կարող են
փայլակ ու կայծակ հանել, և երկրպագում էին նրանց։

Ե.

Կոլումբոսն այնունեակ մի քանի ուրիշ կղզիներ եւ գտաւ
ու հաւատացած լինելով՝ թէ գտել է Հնդկաստանի մերձաւոր
կղզիները՝ երկիրը անւանեց Վեստ-Ինդիա, այսինքն Սրեմական
Հնդկաստան, իսկ վայրենիներին – Հնդիկներ։ Հիմնելով կղզիներից
մէկի վրայ մի ամրոց ու մարդկանց կէսն այնտեղ թողնելով, նա
փերազարձաւ Սպանիա։

Երբ կոլումբոսի հաւերը մտան Պալոսի նտւահանգիստը, քա-
ղաքի բոլոր եկեղեցիների գամսերը բարձրաձայն զօղանջում էին,
թնդանօթները որոտում էին և ժողովուրդը ցնծութեամբ դիմա-
ւորում էր։ Երբ նա ներկայացաւ թագաւորին ու թագուհուն,
առջելց գնում էին հետը բերած հնդիկները, տանելով նոր երկրի
բերելը՝ ոսկի, կարտոֆիլ, սիմինդը, պառղներ, թոչոններ և
այլն։ Կարտոֆիլն ու սիմինդը մինչև այդ ժամանակ անձանօթ
էին եւրոպացիներին։

Այժմ ամենքը խոնարհում էին կոլումբոսի առջև և աւելի
նրանք, ովքեր առաջ անմիտ էին անւանում նրան։ Թագաւորը
կոլումբոսին պարգևեց դրամ, պատիւներ, ազնւականութիւն,
փողոցներում թագաւորի կողքին էր գնում ձիով. դեռ ոչ ոք
այդպիսի պատուի չէր արժանացել։

Յաջորդ ճամպորդութիւններին կոլումբոսի հետ անցան նոր
աշխարհը բազմաթիւ դաղթականներ, որոնք որոնում էին ոսկի
աշխարհը բազմաթիւ առաջականներ, որոնք որոնում էին բացւում։
և անաշխատ հարստութիւն։ Նոր և նոր երկիրներ էին բացւում։
Հիմնեցին նոր քաղաքներ։ Կոլումբոսը պահանջում էր, որ գաղ-
թականները մեղմ վարւեն վայրենիների հետ և չկատաղեցնեն
նրանց, և իստ պատժում էր ոճրագործներին ու ծոյլերին։
Բայց դրանով բազմաթիւ թշնամիներ վաստակեց, որոնք գլուխին

թագավորին, որ նրա տեղ մէկ ուրիշ կառավարիչ նշանակէ: Այդ կառավարիչը հանեց կոլումբոսին պաշտօնից և շղթայակապ ուղարկեց Սպանիա: Թէև թագավորը հրամայեց շղթաներն իսկոյն հանել, բայց կոլումբոսը երբէք չէր մոռանում այդ աւպերախտութիւնն ու ասում էր իր ազգականներին.

«Երբ մեռնեմ, այս շրջթաներն էլ ինձ հետ որէք դագաղիս մէջ»:

Այնուհետև նորից մէկ անդամ կոլումբոսը փորձ արաւ արևմտեան ճամպով Հնդկաստան համելու և երկար շրջեց մի տնծանօթ մայր ցամաքի ափերի մօտ Նախանձու ու չարամիտ մը բգկանցով շրջապատւած, յոգնած՝ նա վերադարձաւ Սպանիա: Այս անգամ թագաւորն էլ երես դարձրեց նրանից և չուզեց նոյն իսկ

ընդունել իր մօտ: Վշտից, անաջողութիւնից սրտաբեկւած՝ կոլումբոսը հիւանդացաւ և մեռաւ: Նրա հետ թաղեցին և նրա շրջթաները-միակ պարզեց, որ մնացել էր իրան այնքան երախտիքների փոխարէն:

Նա մեռաւ, հաւատացած՝ որ գտել է Հնդկաստանի արևմտեան կողմերը: Բայց շուտով իմացւեց, որ նրա գտածը մի նոր Աշխարհ է: Այդ աշխարհին յետնորդները նոյն իսկ չտւին կոլումբոսի անունը: Նա կոչւեց Ամերիկա, մի երկրորդական ճամպորդի անունով, որ իր գրքի մէջ առաջին անգամ նկարագրեց այդ նորագիւտ երկիրները:

Ամերիկան ու աշխարհը նաև նախարար առջև և առաջ միջնադար գտնվութեանուան ու առաջ և առեւներու համար առաջ



Ք ի Ն Ա Ք ի Ն Ա Ա ն ա լ պ ա ն ի ա յ ի ք հ ե տ գ ն ե տ է տ ի ր ե ց ի ն Մ ի շ ի ն և Հ ա ր ա ւ ա յ ի ն Ա մ ե ր ի կ ա յ ի մ ե ծ մ ա ս ի ն ։ Շ ա ր ու ն ա կ ա հ ա գ ի ն ք ա ն ա կ ու թ ե ա մ բ բ ա զ գ ա խ ն դ ի ր մ ա ր դ ի կ դ ի մ ու մ է ի ն ա յ դ ն ո ր ա շ ի ա ր հ ն ե ր ը ո ւ կ ա յ ի ո ւ հ ա ր ս տ ո ւ թ ի ւ ն ձ ե ռ ք բ ե ր ե լ ո ւ յ ո ւ ս ո վ ։ Ե ւ Ա մ ե ր ի կ ա յ ո ւ մ ի ր ա ն ց ա յ դ ն պ ա տ ա կ ի ն շ ո ւ տ ո վ հ ա մ ն ե լ ո ւ հ ա մ ա ր ո չ մ ի բ ա ն ի ա ռ ա ջ կ ա ն դ չ է ի ն ա ռ ն ո ւ մ և շ ա տ վ ա տ է ի ն վ ա ր ւ ո ւ մ տ ե զ ա ց ի ժ ո ղ ո վ ր դ ն ե ր ի հ ե տ ։ ա շ խ ա տ ե ց ն ո ւ մ է ի ն ։ հ ա ր ս տ ա հ ա ր ո ւ մ ։ ա մ ե ն չ ն չ ի ն բ ա ն ի հ ա մ ա ր ձ ե ծ ո ւ մ ։ շ ա ր չ ա ր ո ւ մ ո ւ հ ա լ ա ծ ո ւ մ ։ Ե ւ բ ն ա կ ա ն ա ր ա ր տ ե զ ա ց ի ն ե ր ն է լ ա տ ե լ ո վ ա տ ո ւ մ է ի ն ի ր ա ն ց կ ե լ ե ք ո ղ ն ե ր ի ն ։ թ է կ մ ի շ ա ռ ա կ ւ ո ւ մ է ի ն ն ր ա ն ց ։ ծ ա ռ ա յ ո ւ մ և ա ր տ ա ք ո ւ ս տ ա մ ն ն կ ե ր ո լ ա շ ի ս տ ո ւ մ է ի ն հ ա ճ ո յ ա ն ա լ ։

Ա յ գ պ է ս է լ Պ ե ր ո ւ ի կ ա ռ ա վ ա ր ի չ ը 1640 թ ւ ի ն մ ի խ ի ս տ ա ն ս ի ր ա մ ա ր դ է ր ։ Շ ր ջ ա պ ա տ ն ե ր ը ն ր ա ն հ ա ճ ե լ ի լ ի ն ե լ ո ւ հ ա մ ա ր ի ն չ պ ա զ ա ն ո ւ թ ի ւ ն ն ե ր ա ս ե ս ։ ա ն ո ւ մ է ի ն ա տ ե զ ի ն ե ր ի գ լ ի ս ի ն ։ կ ա ռ ա վ ա ր ի չ ը յ ա ն կ ա ր ծ մ ե ա ն ո ւ մ է կ ա ր ճ մ ի ջ ո ց ո ւ մ ։ ո ւ մ ա ր ս ա վ ի շ ի տ ա ն ջ ա ն ք ն ե ր ո վ ։ Լ ո ւ ր է ա տ ա ծ ւ ո ւ մ ։ ո ր պ ե ր ո ւ ա ց ի ք ն ր ա ն փ ժ ո ւ ։ ն ա ւ ո ր ե լ ե ն ։

Ս պ ա ն ի ա յ ի թ ա զ ա ւ ո ր ը ն ր ա ա ե լ ը ա ւ զ ա լ կ ո ւ մ է մ ի ո ւ ր ի շ ի ն ։ Պ ե ր ո ւ ա ց ի ն ե ր ի ա կ ա ն ջ ի ն լ ո ւ ր է հ ա ս ն ո ւ մ ։ ո ր ն ո ր կ ա ռ ա վ ա ր ի չ ը յ ի շ ի ա ն թ ի խ ո ն ը մ ի մ ե լ մ ։ ա ր դ ա ր ո ւ բ ա ր ի մ ա ր դ է ։ բ ա յ ց ո չ ո ք հ ա ւ ա տ ո ւ մ ։ ա յ ն ք ա ն վ ա խ ե ց ա ծ է ր ն ր ա ն ց ա չ ը ը ե ր ո ւ պ ա լ ա ց ի ն ե ր ի ց ։

Ն ո ր կ ա ռ ա վ ա ր չ ի գ ա լ ո ւ ց մ ի ե ր կ ա ւ օ ր ա ռ ա ջ պ ե ր ո ւ ա ց ի ն ե ր ի ց ե ղ ա պ ե տ ը գ ի շ ե ր ո վ ծ ա ծ ո ւ կ կ ա ն չ ո ւ մ է ի ր բ ո լ ո ց ց ե ղ ա կ ի ց ն ե ր ի ն ա ն տ ա ս ի խ ո ր ք ը ք ի ն ա ր ի ն ա յ ի մ ի գ ե ղ ե ց ի կ ծ ա ս ի տ ա կ ։ ն ո ր հ ա ւ ա ք ւ ո ւ մ ե ն ։ ա յ ս պ է ս է խ օ ս ո ւ մ ։

Գ ի տ է ք ։ ո ր Ս պ ա ն ի ա յ ի ց գ ա լ ի ս է ն ո ր կ ա ռ ա վ ա ր ի չ կ ա ր ե լ ի է ։ ո ր ս ա ն ա խ ո ր դ ի ց է լ ա ւ ե լ ի մ ե զ ա տ ա ն ջ է ո ւ չ ա ր չ ա ր է ։ ե կ է ք ։ կ ր կ ս ե ն ք մ ե ր ե ր դ ո ւ մ ը ա յ ս ս ո ւ ր ք « ա ռ ո ղ ջ ո ւ թ ե ա ն ծ ա ռ ի » տ ա կ ։ ո ր ե ր բ է ք ։ ե ր բ է ք յ ա յ ա ն ե լ ո ւ չ ե ն ք ս պ ի ս տ ա կ ա մ ո ր թ ի ն ե ր ի ն ։ ո ր ա բ ո ւ ժ ի չ յ ա տ կ ո ւ թ ի ւ ն ը ։ Ս պ ի ս տ ա կ ն ե ր ի գ է մ մ ե ր մ ի ա կ գ ա ն ս ա կ ի ց ը

տենդն է, որից հաղարներով կոտորւում են նրանք, և միայն մի գանձ է մնում մեր ձեռքին, որ գեռ նրանք չեն խլել, և այդ գանձը այս ծառի բուժիչ կեղեն է: Երկնքի այս պարզել պահնենք մեզ: Վայ նրան, ով վախից կամ գութից յայտնէ մեր գաղտնիքը կեղեքիներին: մահ մատնիշին: Եթէ այդ տեսակ մի դաւան գտնուի մեր մէջ, սպանենք նրան էլ, կնոջն էլ, երեխաներին էլ, սրբենք նրա ամբողջ ցեղը աշխարհիս երեսից: Երդւենք: — Երդւում ենք, երդւում ենք, — կրկնեցին միաձայն պերուացիները — երդւում ենք՝ ամեն տանջանք ու մանացու չարչարանք կրենք, բայց մեր գաղանիքը երբէք չյայտնենք:

Երդւեցին ու իսկոյն ցըւեցին. վտանգաւոր էին այդ տեսակ ծածուկ հաւաքումները. սպիտակները կարող էին իմանալ կապել ու պատճառ դառնալ նոր հալածանքների:

Բ.

Եկաւ նոր կառավարիչը իր երիտասարդ կնոջ հետ: Պերուացիք գնացին նրանց դիմաւորելու և պերուացի կանայք ծաղիկներ սփոռեցին իշխանուհու առաջ. դրանց մէջ էր և Զուման, ցեղապետի գեղեցցիկ ու գեռատի հարսը:

Իշխանուհին որ տեսաւ Զումային, շատ հաւանեց և ուզեց, որ իր մօտ մնայ ծառայելու: Զուման մտաւ պալատ ծառայութեան և կարճ ժամանակի մէջ այնպէս սիրելի դարձաւ, որ իշխանուհին մի քայլ իրանից հեռանալ չէր թողնում: Իշխանուհու այդ սէրն, ինարկէ, պալատական տիկիններին շատ էլ դուք չէր գալիս, նախանձում էին նրան, յաճախ չարախօսում էին նրա մասին իշխանուհու առաջ, աշխատում էին կասկած գցել նրա սիրար, թէ Զումայի սէրը կեղծ է, թէ բոլոր տեղացիք ատում են սպանացիներին, նա կեղծում է, ով գիտէ, ինչ դաւնիւթելու համար. բայց տիկինը ոչ մի ուշք չէր գարձնում այդ փսփսուկներին:

Անցան ամիսներ և իշխանուհու առողջութիւնը խախտեց, հիւանդութիւնը օր-օրի աւելի էր սաստկանում: Սպանացի բժիշկը տալիս էր իր գիտած բոլոր գեղերը, ոչինչ չէր օգնում. հի-

ւանդը մէկ տաքացնում էր, մէկ դողացնում և թժիշկը վարս-
նումով շարժում էր զլուխը՝ «Թունաւորւած չինի»:

Թհյն, ով պիտի թունաւորէր, պալատում ամենքը վստահել
մարդիկ էին. օտարը միայն Զուման է, չինի նա...

Իսկ Զուման այդ միջոցին սաստիկ տանջւում էր. տանջ-
ւում էր, որովհետև խոր սիրում էր իր բարի տիրուհուն, և գի-
տէր նրան բուժելու դեղը, բայց յայտնել չէր կարող:

Չէ՞ որ երգւել էին ամբողջ ցեղով, չէ՞ որ դա վերջին գէնքն
էր տեղացիների ձեռքին, վերջին գանձր, քինաքինայի կեղեր...

Եւ Զուման լուռ տանջւում էր, իսկ իշխանուհու վիճակը օրէ
օր վատթարանում: Վերջապէս թժիշկը յայտնեց, որ մահը մօտ
է: Զուման յօւսահատ ինչ անելլ չէր իմանում: Յանկարծ մի
լոյս ընկաւ նրա հոգին. գեղը յայտնել չէր կարող, բայց գեղը
տալ այսպէս, որ ոչ ոք չիմանայ, հօ կարող էր:

Իսկոյն կանչել է տալիս իր ամուսնուն, ասում է՝ որ իրան
վատ է զգում, կարծես տեսդ ունի, իմսպաւմ է, որ ծածուկ իր
համար քինաքինայի փոշուց մի քիչ բերի:

Գալիս է գիշերը: Ամբողջ պալատը թաղւած է խոր քնի մէջ,
իսկ իշխանը իր սենեակում տարւած է իր աշխատանքով: Զու-
ման կամաց, ոտների ժամանելի վրայ, անց է կենում իշխանի
սենեակի առաջով, մտնում է կից՝ հիւանդի ննջարանը, զգոյշ
մօտենում է անկողնուն, որ հիւանդը չզարթնի, և դողոջուն ձեռ-
ուվ թափում է փոշին անկողնի կողը գըած խմիչքի մէջ...

Յանկարծ մի ուժեղ ձեռք բռնում է յետեից նրա թեր,
միւս ձեռքով փակում է նրա բերանը, որ ձայն չհանի հիւանդի
սենեակում ու քարշ է տալիս դուրս թուլացած ու ևելակորոյս
կնոջը:

— Ի՞նչ ցանեցիր խմիչքի մէջ, հարցնում իշխանը կատա-
ղած, առանց բաց թողնելու վախից քարացած կնոջ թեր:

Զուման լուռ է:

Իսկոյն ոտի է կանգնում ամբողջ պալատը, ծառաները կապ-
կում են թոյն խառնողի թեմերը ու տանում, գցում բանդ:

Ամեն կողմ տարածւում է լուրը, թէ Զուման թոյն է տւել:
Յուզւում են պերուացիները, գիտէին, որ խեղճ կնոջը տանջալի
մահ է սպասւոմ:

Դատարանի դահլիճը լիբն է բերնէ բերան. թէ եւրոպացի,
թէ տեղացի՝ ամենքն այնտեղ են:

Ներս են բերում պերուացի կնոջը շղթայակասղ և սկսում է
հարցաքննութիւնը:

— Դու էիր իշխանուհու խմիչքի մէջ փոշի ցանողը:

— Այս:

— Ո՞րտեղից գտար այդ փոշին:

— Ես տւի նրան, նաչում է յանկարծ բազմութեան միջից
մի ուժեղ առնական ձայն, և ցեղապետի տղան առաջ է գալիս:

— Ոչ, ոչ, նա յանցանք չունի, նա ոչինչ չէր իմանում,—

— Լոիր, կին, միթէ կարծում ես՝ թէ կարող եմ ապրել քեզ
նից յետոյ: Ինձ յանձնում եմ դատարանին:

— Այդ ի՞նչ փոշի էր, որ տւիր նրան, թոյն:

— Ո՞չ:

— Գուցէ մի բուժիչ դեղ տենդի դէմ:

Զուման յիշում է իրանց երգումը և սարսափած բացա-
կանչում.

— Ո՞չ, ոչ, տենդի դէմ ոչ մի դեղ չկայ:

— Որ դեղ չէ, ուրեմն թոյն, — եղրակացնում է դատաւորը.
— ուրեմն խոստովանում էք, որ այդ փոշին թոյն էր:

— Մենք ոչինչ չենք խոստովանում, — պատասխանում է
ամուսինը հպարտ:

— Ես միայն լոել կարող եմ, — աւելացնում է Զուման խո-
նար: Կանչում են բժշկին՝ հարցնելու:

— Շատ տարօրինակ բան է իշխանուհու հիւանդութիւնը, —
վկայում է բժիշկը. — ոչ մի դեղ չի օգնում. Ես կարծում եմ, որ
այդտեղ գործում է մի անծանօթ, զանդաղ թոյն:

Դատաւորները սարսափահար նայում են այդ երկու թունա-
ւորիչների վրայ, քիչ խորհրդակցում են ու վճռում.

— Վաղը, կէսօրին կայրւեն երկուսով խարոյկի վրայ։
Ու մի հառաջանք է դուրս թռչում գժբաղդ կնոջ կրծքից։
Քաջ եղիր, Զումա, մահը մեզ կազատէ այս ստոր սարը-
կութիւնից, — բացականչում է ամուսինը ոգևորւած։ — մեռնենք ու
լինինք աղատ։

7.

Սուտօտր բոլոր տեղացիներին հրաման գնաց, որ գան, ներ-
կայ լինին պատժին։ Երկուսի սոսկալի մահով ուշում էին ժողո-
վրդին վախ աղդել։ Մոտը ամբոխը հաւաքւեց արդէն վառւած
խարոյկի շուրջը, որ շղթայել էին սպանացի զինւորները։ Իսկ
կառավարիչը չէր ուզեցել ականատես լինել, թողել հեռացել էր
քաղաքից։

Շուտով երեայ հեռւից մի հարիւրա՛լ զինւոր, որոնք շըր-
ջապատճած բերում էին մահապարտներին։ Արևի պայծառ ճառա-
դայթները խաղում էին զինւորների սաղաւարտների, զէնքերի ու
զրահների վրայ։ Թմբուկներն սկսեցին որոտալ… Դունդը կանգ
առաւ խարոյկի առաջ։ Զումային ու ամուսնուն հազցրել էին
երկար շորեր, գլուխներին գյել էին մի-մի տուրակ՝ աչքերի աեղ
միայն ծա՛լ թողած ու թերը կադած յետեր։

Գունդը կանգ առաւ, թմբուկները լուեցին, տիրեց մի սար-
սափելի լուսթիւն, ահագին ամբոխը քարացել էր իր տեղը, ոչ
մի շնչիւն։ Եւ պաշտօնեան արդէն պատրաստում էր մահա-
պարտներին դէպի խարոյկն առաջնորդելու, երբ յանկարծ հեռ-
ւից ձիռ դոփիւն լսւեց և մի սպայ շնչասպառ մօտ վագեց ու
յայտնեց պաշտօնակատարներին, որ սպասեն, գալիս է ինքը՝ իշ-
խանուհին, և առանց նրան պատժի չձեռնարկեն։

«Ի՞նչ է...», «ով է գուլիս», «ի՞նչու», շշուկը ընկաւ բագ-
մութեան մէջ, և ծովի ալիքի պէս սկսեց շարժւել։

Եւ իրաւ. ահա իշխանուհու պատգարակը, որ չորս հոգի բե-
րում էին իրանց ուսին։ Զինւորնելն իսկոյն պատիւ տւին, Նա
դժւարութեամբ բարձրացաւ իր պառկած տեղից, յենւեց թեին
ու ասաց։

— Ես միայն այժմ իմացայ, ինչ որ պատահել է, այն էլ գրե-

թէ զոռով, ինձնից ծածկում էին: Մեղապարաններին ներելը իմ ըրաչունքից վեր է: Բայց նրանց համար թողութիւն խնդրել կատող եմ և յոյս ունիմ, որ ամուսինս չի մերժի իմ այս, գուցէ իերջին խնդիրս: Առ այժմ հանգրցէք այդ սարսափելի խարոյկը և արձակեցէք Զումայի ու իր ամուսնու. կապաճները Ես պատասխանատու եմ, նրանք չեն փախչի: Բերեք նրանց էլ ինձ հետ:

— Երկար կեանք և առողջութիւն մեր իշխանուհուն,— լսեց յանկաբծ մի բարձր ձայն ամբոխի միջից:

— Այն, կեանք և առողջութիւն, — որոտաց ցեղապետի ձայնը իբրև պատասխան. Նա պէտք է որ ապրի, նա պէտք է որ առողջանայ:

Եւ մի փսփսուկ ընկաւ տեղացիների մէջ. ականջ ականջի յայտնեցին իրար, որ մի ժամկց հաւաքւեն անտառը:

Ե.

Իշխանուհին գարձաւ պարատ բոլորովին ուժասպառ Հազիւ էր հանգստացել մի երկու ժամ, որ հրամայեց իր մօտ կանչել Զումային:

— Զումա, մօտ եկ, խօսեց նա մեծ ղժւարութեամբ: — Ես քեզ այնպէս սիրում էի. . և չեմ կարող քեզ կբայ բարկանալ...

Զուման յուսահատութիւնից չգիտէր՝ ինչ անէր... Իշխանուհին կասկածում էր նրա վրայ, թէև ներում լր. բայց նա անմեղ էր բոլորովին և այնքան տանջւել էր հէնց իշխանուհու սիրուն, իսկ այժմ պէտք է լոէր. ոչ մի բառ արդարանալու համար: Օ՛, խարոյկից աւելի ծանր էր այս բանը: Դժբաղդ կինը լուռ ընկաւ նրա ոտներն ու բարձր ձայնով հեծկլուալով իշխանուհու ձեռքը ուղարկեց իր շրթունքներին...

Բայց նոյն վայրկենին արագ քայլեր լսեցին զուրսը և ուրախ ձայներ, որսնց մէջ իշխանուհին ճանաչեց իր ամուսնու ձայնը:

— Քո անունով ես ներումն խոստացայ յանցաւորներին, ներիր բանց, — եղաւ հիւանդի առաջին խօսքը, հէնց որ ամուսինը շէմշէ ից ներս մտաւ:

— Յանցաւոր չկայ, որ ներեմ, — եղաւ կառավարչի գւարթ

պատասխանը: — Մտէք, մտէք, ներս մտէք, — դարձաւ նա դէպի
գուռը:

Ներս մտան ցեղապետն ու իր տղան՝ Զումայի ամուսինը:

— Զումա, — ասաւ ծերունի պերուացին. — ցեղի թոյլտւու-
թեամբ յայտնեցի ես իշխանին սուրբ ծասի գաղտնիքը: Յայտ-
նեցի, որ գու իշխանուհու խմիչքի մէջ բուժիչ դեղ էիր ցանել:

— Բուժիչ դեղ, — բացականչեց հիւանդն ապշած ու գորովան-
քով. — ապա էլ ինչո՞ւ էլլ լուս, Զումա:

— Երդումը կապել էր նրա շրթունքները, — բացականչեց կես-
ըարը. — Բայց իշխանուհին իր դժասրառութեամբ յաղթեց մեր
երդման ուժին: Ինքը կիսակենդան եկել էր ազատելու և ներե-
լու իր կարծեցեալ թունաւորիչներին: Նրա ազնիւ սիրար, ուրիշ-
ներին ազատելով, իրան ազատեց վերահաս մահից: Մենք, վայրե-
նիներս, յարգում ենք սրաի ազնւութիւնն ու հոգու վեհութիւնը:
Մենք մեր «առողջութեան ծառը» նւէր ենք բերում իշխա-
նուհուն:

Այդ օրից եւրոպացիք ծանօթացան քինաքինայի հետ, որ
մարդկութեան բարիքներից մէկն է: Եւ այնտեղ, ուր Զումայի
համար խարօյկ էին վառել, բարձրանում է այժմ մի արձան, որի
վրայ ոսկէ տառերով փայլում են հետեւեալ բառերը. «Զումայի
յիշատակին, որ վրկեց մահից սպիտակամորթների բարերար Դի-
խոն իշխանուհու, կեանքը»:

Առաջ մասնաւուն
պատճեն պատճենաւուն
և առաջ մասնաւուն
պատճեն պատճենաւուն




ուրիշ 1

Գերզույարաւան զոր մեծ զան զմ մարզով զմանաց
լուս զգի զմանաց մախացիքով լուս զմ զգի մաշցով զմ
հարթան խոցմաշմարյած և խոցմաշմարյած զմանաբոյք զոր
զմանաւան զմ ամսական զմանաց լուս զմ զմանաց
զմանաւան լուս զմ զմանաց լուս զմ զմանաց լուս զմ զմ

ԲՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՎՐԱՅ

Փոխ. Յովի. Արարտացիան



I. 181

ըաններ կըբացւեն ձեր առաջ, եթէ դուք ճանապարհորդէք
տաք երկրներից գէպի բենու: Տրոպիքական անտառներից յետոյ
դուք կըպատահէք խաղողիներով և ծիրանեներով ծածկւած
այգիների. յետոյ կըտեսնէք տերեալխիտ ծառերի անտառներ.
քիչ էլ այն կողմը՝ փշատերեների, իսկ գրանից յետոյ տունդրաներ
և վերջապէս բենուերի մշտնջենաւոր ծիւներ:

Բ.

Նշանաւոր է կլիմայի ազդեցութիւնը մարդու վրայ: Նայեցէք այս պատկերին (նկ. 2) և տեսէք, որքան մեծ տարբերութիւն կայ ցուրտ և տաք երկրների բնակիչների մէջ: Մէկը փաթաթւած է տաք մորթիներով, իսկ միւսը մերկ է բոլորովին: Մէկի մարմինի գոյնը սպիտակ է, միւսինը սև:



Մենք մեր սեպհան փորձով գիտենք, թէ ինչպէս լաւ է ազգութեան մեջ վրայ գեղեցիկ, արեգակային օրը, ինչպէս մենք մեզ ուրախ-գւարթ ենք զգում, իսկ, ընդհակառակը, ցուրտ, ամպամած օրերը մենք ախտուր, ջղային ենք: Ուստի դժւար չէ հասկանալ, թէ ինչու այդպէս միշտ մոայլ, միշտ բարկացկու են ցուրտ երկրների բնակիչները, իսկ տաք երկրների մարդիկ առոյդ են, ուրախ և գւարթ:

Ցուրտ երկրների բնակիչները միշտ զբաղւած են կերակուր ձեռք բերելու հսկով: Որքան ճարպ և ուրիշ կերակուր պէտք է ուտէ ցուրտ հիւսիսի բնակիչը, որպէսզի կարողանայ պահպանել իր մարմինի հարկաւոր տաքութիւնը: Եւ իրօք, ճանապարհորնդերը պատմում են, որ սամօնը մի անգամում կարող է ուտել մինչև 30 գրւանքայ ճարպ և միս: Այդ պատճառով էլ նրա վորն այդպէս մեծ է և ինքն էլ այնպէս հաստ ու գանդաղաշարժ: Նրա բոլորովին հակապատկերն է տաք և չոր երկրների բնակիչները: Արեգակի ջերմ ճառագայթների ասկ՝ նրանց հարկաւոր չեն տաք մուշտակներ՝ սամօնեների նման: բաւական է միայն մի հասարակ վերաբկու: Նրանց կարիք չկայ շատ ուտելու՝ մարմինի ջերմութիւնը պահպանելու համար: Ճանապարհորնդները հաշւել են, որ այսպիսի երկրի մի բնակիչն օրական ուտում է կէս-գրւան-

քից պակաս բուսեղէն և կենդանական կերակուր։ Ուրեմն սամօ-
եղի մի անգամ կերածը նրան 60 օր կըբաւականացնէ։

Դժւար չէ երևակայել, թէ ինչպէս է ներգործում մարդու
վրայ այդպիսի տաք երկրների բնութիւնը, որտեղ բաւականաչափ
խոնաւութիւն և ուրեմն սքանչելի բուսականութիւն կայ։ Այնտեղ
բաւական է իր խրճիթի առաջ երեք հացապտղի տնկել, որպէսզի
մի մարդն ամբողջ կեանքում կերակուրի կարիք չզգայ։ Հար-
կաւոր չէ աշխատել կամ մտածել կերակուրի մասին, երբ
այդպիսի հեշտութեամբ է ձեռք բերւում բոլորը, ինչ որ կարեսոր
է կեանքի համար։ Ահա այսպէս բնութիւնը իր զաւակներից մի
քանիսին երես է առլիս և գրանով սովորեցնում նրանց ծուլու-
թեան ու անհոգութեան։

Ուրեմն ցուրտ հիւսիսում բնութիւնը ժլատ է և խստապա-
հանջ դէպի մարդը, իսկ տաք երկրում՝ ընդհակառակը, չափա-
զանց բարի և առատաձեռն։ Այնտեղ մարդիկ աշխատանքից ու
հոգսից ուժապառ են լինում, այստեղ՝ նրանք ազատ են ֆիզի-
քական և մտաւոր աշխատանքից։

Սյս կողմից լաւ են բարեխաւն երկիրները, որտեղ բուսա-
կան և կենդանական թագաւորութիւնները ոչ այնքան առատ են
և ոչ էլ բոլորովին սուրդ։

Եւ իրաւ, այսպիսի աեղերում բնութիւնը հաւասար աչքով
է նայում բոլորին. մարդը բաւարար աշխատում է իր ապրուստը
հայթայթելու համար, — և աշխատանքը դարձնում է նրան ուժեղ,
հնարագէտ և գործունեայ։

7.

Ինչպէս յայտնի է, բոյսերի և կենդանիների համար բացի
տաքութիւնից անհրաժեշտ է նաև խոնաւութիւնը, անձրես, ջուրը
և այլն։ Եթէ օդի մէջ խոնաւութիւնը պակաս է, ինչպէս, օրի-
նակ, լինում է անապատներում, այդպիսի տեղերում բնակչու-
թիւնն էլ պակաս է լինում։ Եւ դա շատ հասկանալի է։ Միթէ
կարստ է շատ ժողովուրդ ապրել այն տարածութեան վրայ, որ
ամբողջովին ծածկւած է լերկ աւազով, կառով կամ քարով, և

համարեա գուրեկ է բուսականութիւնից: Եւ այն մի բուռն մարդիկ, որոնք սախաւած են լինում՝ ապրել այդպիսի տեղերում, մատնած են քաղցի ու ծարաւի: Այդ տեղերում համարեա անհնար է պարապել ոչ երկրագործութեամբ, և ոչ անառնապահութեամբ, և քաղցածութիւնը ոչ նրանց գէպի աւազակութիւն, թալան: Այս է նրանց ապրուստի միակ միջոցը: Ահա թէ ինչու անապատի բնակիչներին (նկ. 3) ծանօթ չէ մըշտական աշխատանքը. նրանք սիրում են վայրենի ազատութիւնը, սովորել են պատերազմական և աւազակային կետնքի: Այսպիսի կեանքը դարձրել է նրանց գիւրաբորսոք, վրէժինդիր և խստասիրտ և նրանց մէջ զարդարել սաստիկ ոյժ, կինդանութիւն և զարմանալի ճարպիկութիւն:



Նկար 3

Սակայն այնքան էլ գովելի չեն նաև չափազանց խոնաւերկիրները: Այսպիսի տեղերում էլ բնակիչների գլխաւոր հոգու անձրեսից ազատւելն է: Այդ երկրներում կան չափազանց պտղաբեր, ինչպէս նաև ոսկով ու թանկագին քարերով առատ տեղեր, որոնք սակայն բոլորովին անմարդաբնակ են, որովհետեւ ոչ ոք չի կտահանում գնալ այնտեղ—նրանց խանգարում են անընդհատ անձրեները: Բացի այդ՝ այդպիսի տեղերում վխտում են բազմաթիւ մոծակներ և ուրիշ միջատներ, որոնք ծծում են մարդու արիւնը և հեշտութեամբ տարածում տարափոխիկ հիւանդութիւններ: Իզուր չէ, որ մարդիկ չորացնում են ճանիձները, և գուցէ ապագայում կը յաջողւթ չորացնել բոլորը, վերջացնել վասակար միջատներին և այդպիսի տեղերը կեանքի համար անփտանդ և

յարմարաւոր դարձնել, իսկ այժմ միայն անհրաժեշտ կարիքն է ստիպում ապրել: Եւ այդպիսի խոնաւ տեղիբը սասափիկ ներգործում են մարդու վրայ: Նայեցէք



ճահճային երկրում ապրող այս ներգործում (նկ. 4): Երբ նա ամբողջ ժամերով կանգնում է ջրի մէջ մի ոտքի վրայ, իսկ միւսը ծալած՝ բոլորովին նման է արագիլի: Արագիլի նման՝ նա իր կեանքի կէսն անցկացնում է ջրում, ձուկ որսալու համար. նրա ոտները նոյնպէս երկար են, նա մերկ է բոլորովին, որովհետեւ հագուստը կըխանգարէր նրան ջրի մէջ ըրջելիս: Այդպիսի երկը ներում մենք մի տարի էլ չէինք կարողանայ ապրել և կըմեռնէինք տեղից կամ ուրիշ վտանգաւոր հետանդութիւնից:

Ո՞չ, լաւ չէ, երբ մի երկրում չափից գուրս խօնաւութիւն կայ,

վատ է նոյնպէս, եթէ նա բոլորովին զուրկ է խօնաւութիւնից:

Տաքութեան և խոնաւութեան չափից է կախւած երկրի պտղաբերութիւնը: Իսկ եթէ երկիրը պտղաբեր է, այն ժամանակ ապահով դրութեան մէջ են լինում նրա բնակիչները, — թէ երկրագործը, որովհետեւ այնտեղ առատ հաց է բուսնում, թէ անամնապահը, որովհետեւ հողը շատ խոտ և կանաչ է տալիս, թէ որսորդը, որովհետեւ այդպիսի երկրում առատ է լինում թուզունների ու գազանների կերակուրը, հետեւալիս, առատ է լինում նաև որսը, թէ վաճառականը, որովհետեւ այնտեղ առետուրի համար թէ ապրանք և թէ պահանջողներ շատ են լինում:

Պտղաբեր երկիրը մարդկանց առատ կերակուր է՝ բաշխում: Երբ մարդիկ ոշակում են երկիրը և հացը հաւաքում, վերջացնում են, նրանք ազատ ժամանակ են ունենում պարապելու կարգալու լույսից, նկարչութեամբ, երգեր յօրինելով և երգելով: Ահա թէ

ինչու գիտութիւնն ամենից առաջ մուտ գործեց պտղաբեր, հարստա երկրներում։ Հայոց ըստը նույն յազական պատճեն առաջ առաջ ու գ.

Դժւար չէ հասկանալ, որ լեռներն էլ մեծ ազդեցութիւն ունին մարդու նիստուկացի վրայ։ Լեռնականները մեծ մասամբ բնակութիւն են հաստատում կիրճերում, ձորերում։ Նրանք բանդարկեաների պէս փակւած են չորս կողմից, շրջապատւած ժայռերով ու ձիւնապատ սարերով։ Խւրաքանչեւր մի այսպիսի բնակավայր իրանից մի առանձին աշխարհ է ներկայացնում։ Սփրիկայում մի փոքրիկ լեռնոտ երկիր կայ, որտեղ, կիրճերի մէջ, ութունից աւել ջոկ-ջոկ հասարակապետութիւն են տեղաւորւած։ Դրանցից ամեն մէկը բռնում է մօտաւորապէս տասը քառակուսի վերստ տարածութիւն, իսկ բնակիչների թիւը մի փոքրիկ գիւղից էլ պակաս է, Այսոււմենայնիւ լեռներում կորած այս մանրիկ տէրութիւններից ամեն մէկն անկախ է միւսներից, ինչպէս անկախ են իրարից բոլոր մէծ պետութիւնները — Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան... Այսպէս է այդ ժայռերի և լեռնաշխանների ազդեցութիւնը, որոնք պատսպարում են մի ժողովուրդ միւսից։ Հասկանալի է, որ այդպիսի գիւղերի մէջ հաղորդակցութիւնը չափազանց դժւար է, երկրի այսպիսի անմատչելի սահմանները արգելում են լեռնաբնակներին հաղորդակցութիւն ունենալ միմեսնց հետ, թոյլ չեն տալիս ընդօրինակելու օտար սովորութիւններ, գործեր, բարքեր, հաւատալիք, գիտութիւններ, լեզու և մտքեր։ Անա թէ ինչու լեռնաբնակ ժողովուրդների մէջ անիստատ են մնացել նրանց հնաւանդ սովորութիւնները, բարքերն ու հաւատալիքը։

Նոյն լեռները՝ ինչպէս անմատչելի ամրոցներ, իրանց բնակիչներին պաշտպանում են թշնամիների յարձակումներից։ Այս է պատճառը, որ կովկասի նւաճումն այնպէս թանկ նոտեց ուռւսներին։ Կովկասի լեռնցիների անկախութիւնը պաշտպանում էին նրանց մայրենի լեռների սեպ, անմատչելի ժայռերը (կ. 5):

Ինչպէս յայտնի է, լեռնային օդը նօսր է։ Հարկաւոր չափով թթւածին ներշշելու համար, այստեղ հարկաւոր է մեծ քա-

Նակութեամբ օդ հաւաքել թռքերի մէջ: Եւ լեռնաբնակների կազմը լուսածքը յարմարւել է դրան: Նրանց կուրծքն աւելի դարձացած է ու լայն, քան դաշտավայրի բնակիչներինը:



Մենք գիտենք, թէ որքան դժւար է կեանքը լեռներում: Այսպիսի կեանքը տոկուն է գարձնում մարդուն, զօրեղացնում նրա բնաւորութիւնը, կամքը, վարժեցնում կուի, գիմադրութեան, համբերութեան, լեռնականներին դարձնում է քաջարի, յամառ, հալարտ, անկախ, անհնագանդ և ազատ:

Իրեւ հակապատկեր լեռներին՝ վեր առնենք դաշտավայրերը: Լեռնցիները ապրում են ժայռերով պարփակւած բանդանման ձորերում, իսկ դաշտավայրի բնակիչները ոչ մի բանով սահմանափակւած չեն և հարթ դաշտավայրերն ազատ ձգւում են դէպի անսահման հեռուն, ինչպէս ծովը: Շուրջդ բնդարձակ է, այստեղ մարդն իրան ազատ է զգում որպէս թռչունն օդում:

Դաշտավայրին տեղերում որսն առատ չէ, որ մարդ կարողանար որսորդութեամբ ապրել: Բայց դրա փոխարէն այնտեղ առատ է խոտը և բնական է, որ շատ դաշտավայրերում դարձացած էր և

աւելի ևս զարգանում է անասնապահութիւնը։ Սակայն, երբ մի անդ անասունները խստն ուտում, վերջացնում են, հովիւներն ստիպւած են անդափոխւել ուրիշ տեղեր, իսկ հարթ գաշտերը տեղափոխութեան կողմից շատ յարմար են։ Այստեղից ծագում է թափառաշրջիկ, վրանաբնակ կեանքը։ Դաշտային կլիման, մաքուր օդը և կումիսը^{*)} գաշտերի բնակիչներին ոյժ և առողջութիւն են տալիս։

Սակայն թափառաշրջիկ աղքերն իրանց ամբողջ կեանքն անց են կացնում կիսափայրենի անասունների մէջ, նրանք վարժում են անգութ միջացներով սանձահարել կենդանիներին, նրանց հարշկաւոր է սպանել, մորթել անասուններին՝ միտ ունենալու համար, և այս ամենը մարդուն դարձնում է կոպիտ և անգութ։

Միանման պարապմունքը, բարքերն ու կեանքի եղանակը կապում են իրար հովւական թափառաշրջիկ ցեղերը, իսկ լեռների և ուրիշ արգելքների բացակայութիւնն ու դաշտափայրերի միապաղաղութիւնը նպաստում են այդ կապին։ Կարեռը դէպքում թափառաշրջիկներն ահագին խմբերով հաւաքւում են մի տեղ։

Չնայելով անսահման լնդարձակութեանը՝ դաշտափայրերն աչքի են ընկնում իրանց միակերպութեամբ։ Ամեն տեղ համարեա նոյն բուռականութիւնը, միևնոյն կենդանիները, թռչունները, միջատները, բնութեան նոյն տեսարանները։ Այդպիսի միակերպութեան մէջ մարդու միաքը չի զարգանում, այլ ընդհակառակը, թմրում է։ Ահա, թէ ինչու թափառաշրջիկների մէջ այնքան փոքրաթիւ են նարագէտ մարդիկ. ահա պատճառը, որ նրանք անկիրթ են, բիրդ և նրանց անծանօթ են գիտութիւնն ու արեսարը։

Պ.

Բոլորովին այլ պատկեր են ներկայացնում անտաները, Ողքան հեշտ և յարմար է տեղափոխութիւնը դաշտափայրերում, նոյնքան դժւար է այդ բանը անտառներում։ Տաք երկրների անտառներում յաճախ անհնարին է ոչ միայն կառքով կամ ձիով,

^{*)} Զիտ. կաթից առանձին ձեռք պատրաստւած խմիչք։

այլեւ ոտքով անցնելը։ Այսպիսի գէպքերում մեծ ծառայութիւն են անում փղերի բաց արած նեղ շաւիղները։ Այդպիսի անտառների բնակիչները ծնւռում, աճում, ծերանում և մեւնում են, և պատահում է, որ իրանց ամբողջ կեանքում՝ ուրիշ ցեղի պատկանող մարդու երես անգամ չեն պետքում։

Այս անտառաբնակները բաժանուած են փոքրիկ խմբակների, փոքրաթիւ ընտանիքների, և պարագում են զլիաւորապէս պրտուղներ ժողովելով և որսորդութեամբ։ Իւրաքանչիւր մի այսպիսի խմբակ ունի իր առանձին լեզուն։ Եւ եթէ պատերազմի կամ ջրեղեղի ժամանակ ոչնչանում է մարդկանց մի այդպիսի ցեղ, նրա հետ միասին կորչում է նաև նրանց լեզուն։

Յայտնի է մի այսպիսի գէպք։ Այդպիսի մի ժողովուրդ իսպառ ոչնչացաւ, նրա հետ կըոչնչանար և նրա լեզուն, եթէ կենդանի չմնար մի խօսող թութակ, որը արտասանում էր այդ ժողովդի լեզւից մի քանի սովորած խօսքեր։

Այժմ հասկանալի է, թէ ինչու անտառաբնակ ցեղերն այդքան յետամեաց և անկիրթ են նրանք շատ քիչ բան են տեսնում և լուռմ իրանց կեանքում։ Եւ որպիսի մեծ տարբերութիւն կայ անտառաբնակ և դաշտաբնակ ազգերի նիստուկացի, բնակարանների, կերակուրների, հագուստների, բնաւորութեան, ընտանիքի և ընկերութիւնների կազմակերպութեան մէջ ևայլ։

Մեծ նշանակութիւն ունին մարդու համար նոյնպէս և գետերը։ Նրանք մարդուն ձուկ են մատակարարում։ Նաւագնաց գետերի վրայով, շոգենաւերի և առագաստանաւերի օդնութեամբ էժան և հեշտ տեղափոխում են մեծ քանակութեամբ ապրանքներ։ Նաւագնացութեան հետ սերտ կերպով կապւած է առևտուրը։ Իգուր չէ, որ գետերի ափերը ծածկւած են գիւղերով ու քաղաքներով։ Գետերի վրայ լողալով՝ մարդիկ ծանօթանում են օտար երկինների և ժողովուրդների հետ, նրանց նիստուկացին, կրօնին և լեզւին։ Նրանք շատ նորութիւններ են տեսնում ու լսում, սովորում են նոր արհեստներ, օգտակար գիտութիւններ, օտար լեզուներ և մտքեր։ Խոկ այս ամենը մարդուն


ստիպում է աւելի խորհել, ուսումնասիրել ամեն ինչ ուսանել, և նըան կրթում ու լուսաւորում է: Ի՞ացի այդ՝ նաւագնացութիւնը մարդուն դարձնում է դիմացկուն, համարձակ և հնարագէտ:

Նոյնապիսի նշանակութիւն, միայն աւելի մեծ չափով, ունի և ծովը: Ծովերի և ովկիանոսների վրայով մարդիկ աւելի հեռու երկիրներ են զնում, աւելի շատ բաներ են տեսնում ու լուսմ, մեծամեծ վատանգների յաղթահարում, քան գետերի մօտ բնակւողները: Ծովերից բացի ձուլը, ձեռք են բերում սպունդ, մարդարիտ և բուստեր: Ծովերի և ովկիանոսների շնորհիւ մարդիկ աշխարհաշուրջ ճանապարհորդութիւններ են կատարում և համաշխարհային առևտուրը զարգացնում: Այս է պատճառը, որ գէպի ծովափը դուրս գալու յարմաւոր նաւահանգիստներ ունենալու համար՝ ազգերը մըցում, կատաղի պատերազմներ են մղում իրարդէմ, շատ արիւն են թափում:

Ե.

Ո՞ւմ յայտնի չէ նոյնապէս, որ ստորերկրեայ հարստութիւններն էլ մեծ ազգեցութիւն են գործում մարդկանց վրայ: Սակայն այդ ազգեցութիւնը տարբեր է լինում: Օրինակ՝ ոսկու և քարածուխի հանքերի ազգեցութիւնները մարդու վրայ չափազանց տարբերութ են միմեանցից: Հէնց որ մի անմարդաբնակ, ամայի տեղում ոսկու հանքի հետք է գտնում, իսկոյն այնտեղ է դիմում ոսկեխոյզների մի ահազին բանակ: Նրանց հետեւում են վաճառականներ, արհեստաւորներ... եւ ամայի անապատն յանկարծ, ինչպէս հէքիաթների մէջ է լինում, ծածկւում է քաղաքներով, շրեղ հիւրանոցներով, թատրոններով և այն: Սակայն անցնում է մի քանի տարի, ոսկու հանքն սպառում է այդ տեղում, և մարդիկ թողնում, հեռանում են այդտեղից և նա դարձեալ տմայանում, անմարդաբնակ է դառնում: Սա մի տեսակ տենդային դրութիւն է, որ շուտով անցնում է: Սա մշտական յամառ աշխատանք չէ, այլ մի ինչ որ ժամանակաւոր, տաժանելի դործ: Այդպիսի ձեռնարկութիւնները գրաւում են զլխաւորապէս արագ հարստանալու ջերմ սիրահարներին, և նա չի կարող վարժեցնել մարդուն մշտական, կանոնաւոր աշխատանքի:

Բոլորովին այլ գրութիւն է վիճակւած այն տեղերին, որտեղ
գտնւում են քարածուխի կամ երկաթի շերտեր։ Սովորաբար
նրանց պաշարը շատ մեծ է լինում, երկար բաւականանում։
Աւստի այդ տեղերում շինուում են բազմաթիւ գործարաններ,
բնակութիւն են հաստատում հազարաւոր բանսորներ, վաճառա-
կաններ ու գործարանատէրեր։ Այդպիսի տեղերում հաստատում
են գաղութներ և ամբողջ քաղաքներ։ Այսպիսի արգիւնաբերու-
թիւնը սովորեցնում է մարդուն կանոնաւոր, մշտական և ան-
դուլ աշխատանքի։



ՅԱՆԿ

(Այբբենական կարգով)


Ամենամեծ աշխատաւորը	118	Գիշն ուսումնաբանում, Խ.		
*Ամպերի քարաւանը,	Դ.	Աբովեան 27		
Դէմիրջեան	129	Գործաբանում, Վախտե-		
*Անդրագէտ,	Յովհ.	լովից 109		
Հաննիսեան	6	Դարիալի ձորում, Գ. Բա-		
Անի, Ա. Անարոնեան	156	շինչաղեան 133		
*Անիւի տակ,	Ադա. Նեգրի	*Երազ,	Ս. Շահազիդ 49
Անվհատ վաստակաւորը	113	Երասխի վրայով.	Վ. Փա-	
Աշակերտի յիշատակարա-		փաղեան 147	
նից,	ըստ Դ. Ամիչ	Երկնքի զանգակը, Նարդոս	81	
Աշխատանքի երկրում,		*Երկնքից կախւած քարը,		
Վախտերովից	96	Սթ. Էնկոյեան 68	
* Աշխատաւորի մահը, Ադա-		*Ընտանիքից հեռու,	Զեխով	50
նեգրի	109	Թշւապին,	Ա. Ծատուրեան	25
* Աշուղ, Յովհ.	Յովհան-	*Թևաթափ բազէն,	Աթ.	
նիսեան	80	Խնկոյեան 71	
Արագած, Ա. Անարոնեան	130	*Իմ մայրը,	Յ. Ք. Սառի-	
Արաքս, Բաֆֆի	144	կեան 15	
* Արաքսի արտասուքը, Գա-		Լաց, պառաւ,	Լաց,	
մառ-Քաթիպա	146	Ահարոնեան 61	
Արցունքի աղբիւր, Գ.		Լուր-դալուր, Վ. Փափա-		
Աստւածարեան	42	զեան 88	
*Բլուլին,	Շ. Կուրղինեան	Խալիֆի դատաստանը, Մո-		
Բնութեան ազգեցութիւնը	65	րփեր 65	
մարդու վրայ,	փոխ.	Խորթ եղբայրս, Ա. Ահա-		
Յովհ.	Արաբաջեան	րոնեան 35	
Գարնան առաւօտ,	Յ.	Խորհրդաւոր միանձնուհի,		
Ճուղուրեան	125	Մուրացան 29	
*Գարուն,	Մ. Պէշիքթաշլեան	*Կաթսավար,	Յ. Յակոբեան	106
Գերի արագիլը,	Յովհ.	Կոյլ մանուկը,	Կորոլենկօ	72
Յովհաննիսեան	22	Կոյլ մանուկնիրի վարժա-		

- բանը, ըստ Դ. Ամիշխոսի 23
 *Կովկաս, Պուշկին . . . 132
 Կորւտած արդարութիւն,
 Վ. Փափազեան 85
 *Հալալ աշխատանք, Զու-
 լումեան 98
 *Հայ ուխտաւորին, Յովհ.
 Թումանեան 154
 *Հին օրնութիւն, Յովհ.
 Թումանեան 53
 Հիւանդ ուսուցչի մօտ,
 Հոստ. Դ. Ամիշխափ . . . 18
 Հրդեհ նաւթահանքում,
 Շիրւանգաղէ 101
 *Հրեշտակ, Լեռմոնտով . . 84
 Ղարա Խանում, Մ. Սի-
 բիրեակ 9
 *Մայրենի լեզու, Ա. Նա-
 զարեան 4
 *Մայրիկիս, Ա. Բահա-
 կիան 60
 Մասիսը, Ա. Ահարոնեան 127
 *Մհծը, Գամառ-Քաթիպա 17
 *Մի վհատիր, Ա. Ծատուրեան 117
 *Մըջիւններ ու խլուրդ,
 Ա. Ծատուրեան 28

- Նախնական մարդը, Փ. Յովհ.
 Որաբաջեան
 ա, Սրբազն կրտկը , , , 161
 ը, կրտկը հանգստ , , , 164
 գ, երբ և որտեղ է այս բո-
 լորը տեղի ունեցել 166
 դ, Առաջ և այժմ , , , , 169
 Նոր ուսուցիչը, ըստ Դ.
 Ամիշխոսի , , , , , 5
 *Ողորմած եղէք, Վ. Հիւզօ 41
 Ուսումնածարաւ բանդար-
 կեալը, Դոստոյևսկի . . . 20
 Պայթիւն համբում, Ն. Մելի-
 չայկաղեան , , , , , 106
 *Մարտոր, Վ. Միրաքեան 122
 *Վատ ընկեր, Ը. Խնկոյեան 44
 *Վարժուհի, Ագա-Նեգրի . . 34
 Տարաս-Բուլ բա, Տուրդենի 70
 *Փարւանա, Յովհ. Թումա-
 նեան , , , , , , 139
 Փոքրիկ հիւանդապահ, Դ.
 Ամիշխոսի , , , , , , 54
 Փոքրիկ գրագիւրը, Նոյն . . 45
 Քիսարինա, Ա. Լ 179
 Քոյր և եղայր, Ղ. Աղա-
 յեան 13
 Քրիստոփոր Կոլումբոս , . 172
 *Քրտինը, Ա. Ծատուրեան 95


ԵԱՑԿԱՍԻ
ՅՈՒՂԵՎՏԱՏԱ
ԽՈՎԱՐԱՐ

ԱՍՏՎԱՐ



—
—

卷之三





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0080272

[1n.]

ЦЕНА

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ Ա. տարի	182
2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ Բ.	»	
3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ Գ.	»	40
4. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ Դ.	»	70
5. ՈՍԿԻ ԱՅԲԵՆԱՐԱՆ	»	5

Պատրաստում է ապագրութեան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ Ե. և Զ. ՄԱՐԻՆ

- Գրքերն ուղարկում են կանխիկ փողով կամ վերադիր վճարով:
 - Պատէջները կատարում են ստացւած օրը:
 - Ճանապարհածախսը գնողների վրայ է:
 - Գումարով գնողներին լինում է բաւարար զեղչ:
 - Մեծ քանակութեամբ գնողներին աւելի ձեռնտու պայմաններ:
 - Ցանկացողներին գրքերն ուղարկում են և կազմւած, իւրաքանչիւր կազմի համար հաշվելով ութը կոպէկ:

q l h u u h n p q u z b u s u t r l

Ալէքսանդրապոլում՝ կազմողի մօտ:

Տիկիութեամ «Գուտենբերգ» գրավաճառանոցում:

(Тифлисъ, Книж. маг. «Гуттенбергъ»)

Կարսում՝ պ. Յ. Արարեանի մօտ

(Карсъ, О-во Взайм. Кредита, І. Арабяну)

Վաճառուում են նաև բոլոր քաղաքների յայտնի
գրավաճառանոցներում

Կազմողի հասցեն՝

Александриполь.

Овансесу Александровичу Арабаджяну.